VOL. XXIV NOVEMER-DECBEMBER No. 6 (257)

423



ՀԱՅՐԵՆԻՔ

HAIRENIK BIMONTHLY

24–ՐԴ ՏԱՐԻ

ՆՈՅ.–ԴԵԿՏ.

1946

ՊՈՍԹԸՆ

BOSTON, MASS.

© National Library of Armenia OCR by Portmind

HAIRENIK

BIMONTHLY

212 Stuart St., Boston 16, Mass.

U. S. A.

Entered as Second Class Matter January 31, 1923, at the Post Office
at Boston, Massachusetts, under the Act of March 3, 1879.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի եւ Արտասահմանի համար

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	$3·00
Վեցամսեայ	2·00

ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան	$9·00
Վեցամսեայ	5·00

SUBSCRIPTION

In U S of America and Foreign Rates

Bimonthly

Yearly	$3.00
Six months	2.00

HAIRENIK DAILY

Yearly	$9.00
Six months	5.00

ՊԱՏՐԱՍՏ Է

ՎԱՀՐԱՄ ՍՕՖԵԱՆԻ

ԵՐՐՈՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԳԵՂԱՏԻՊ ՀԱՏՈՐԸ

ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

ԱՒԵԼԻ ՔԱՆ ՀԱՐԻՒՐ ՆՈՐԱՀԻՒՍ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐՈՎ,
ԳԻՆ՝ ԵՐԵՔ ՏՈԼԱՐ

Հասցէ՝ V. SOFIAN,
1482 Armadale Ave., Los Angeles 42, Calif.

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

NEW YORK LIFE INSURANCE COMPANY

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՍԵԴՐԱԿ ԱԶԱՏԵԱՆ

SETRAK AZADIAN

75 FEDERAL STREET, BOSTON, MASS.

Room No. 612 TELEPHONE: HUBBARD 4900

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՄՍԱԳԻՐ

ԻԴ. ՏԱՐԻ, ԹԻՒ 6 (257)   ՆՈՅ.–ԴԵԿՏ.   NOV.-DEC.   Vol. XXIV, No. 6 (257)

ԲՈՂՈՔԱԳԻՐՆ ՈՒ ԴՈՒԱՆ ՇՂԹԱՆ

(ՎԻՊԱԿ)

Գրեց՝ ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ

— Ախպո՛ւնկ, ղախպո՛ւնկ,— ըսաւ պրն. Սիմոնեան ու խնդաց:

Ու ամէն մարդ կը խնդար, երբ ան խնդար: Անրանութիւնը կը յորդէր իր դէմքին առատ ու կարմիր մսերէն, ու ճաղատ ճակատին վրայ ցցուած երկու երեք ճերմակ թելերը կը յիշեցնէին միմոս մը: Կը սիրէր խնդացնել:

Ձմրան ցուրտ հովը կը սողար պատուհաններուն ապակիներուն վրայ, ներս մտնել կ'աշխատէր: Ի զուր: Պրն. Սիմոնեան առած էր ամէն պաշտպանողական միջոց: Կրկնակ վարագոյրներ ու սեւ, հաստ թուղթ մը՝ պատուհանին ամբողջ հասակին, որպէսզի իր տան լոյսէն ճառագայթ մը չիյնայ դիմացի տան վրայ: Պատերազմ էր: Կը պահանջուէր խաւար: Եւ ցուրտ էր: Վառարանը, պարուհիի մը պէս, իր մետաքսէ քղանցքը կը ծփացնէր, կը ճախրէր հոլի թաւալումով: Հարճ մը: Վասնզի պրն. Սիմոնեան ատեն ատեն կը նայէր անոր հպարտութեամբ՝ արեւելեան վեհապետի մը նման: Դիւրին չէր ածուխ ճարելը: Այդ կրակը իր հարստութեան ցոյցն ու բացառիկ վկայութիւնն էր: Սեղան կուտար եւ ուրախ էր: Եւ կ'ուզէր, որ խնդային շուրջինները: Հիւանդային իր երգիծական տաղանդին վրայ, ու կ'ըսէր դարձեալ.

— Ախպո՛ւնկ, ղախպո՛ւնկ, ա՛յնց, ցուա՛յ, տրա՛յթ. (դիտմամբ կը յեղաշրջէր գերմանական լեզուն՝ աւելի ուժեղ դարձնելու համար անոր կոպտութիւնը):

Պրն. Ծովիկեան խնդաց եւ ընդունեց թէ բարբարոս լեզու մըն էր: Պրն. Սիմոնեան շարունակեց: Չէր սիրեր այս միջամտութիւնը: Պէտք էր ինք ու միայն ինք խօսէր եւ շուրջինները ուշադրութեամբ լսէին զինքը:

— Փարիզի խալտրմները քակեցին իրենց ճիգմէններով երեք–չորս տարիներէ ի վեր: Կը քանդեն, կը փճացնեն մտած երկիրներին: Կը ցամքեցնեն: 1914–ին ալ տեսնել ըրին, երբ Պոլիս եկան: Աղած ձուկէն դատ բան չձգեցին: Աղքատ են: Առանց դրամի պատերազմ կ'ըլլա՞յ... քանի՞ փարայ կ'արժէ իրենց քաջութիւնը: Դրամով կը գանձուի աշխարհը: Կարելի չէ անօթի փորով կռուիլ...

— Փոր կուշտ մարդը թռիչք չունի,— նկատել տուաւ պրն. Ծովիկեան — զրկանքն է որ հրաշքներ գործել կուտայ: Հոգեկան զօրութիւնը...

Պրն. Սինամեան ընդհատեց մատուցականը՝ շանթիչ ու արհամարհական նայուածք մը նետելով անոր վրայ:

— Պարապ խօսքեր են ատոնք, չուտող մարդը ոչ մտածելու կարողութիւն կ'ունենայ ոչ գործելու: Իմ պէպէ՛քս, իմ պումպու՛լս, իմ զումպուլս... Հայրէ՛, թարգմանէ տեսնեմ սա Շէրիֆին խօսքերը,— ըսաւ ան՝ դառնալով կնոջը: Երկարեց հաստ թեւը եւ դարձուց կոճակը:

Ալ չէր վախնար բարձրացնելէ Լոնտոնէն եկող ձայնը: Ամերիկացիներն ու անգլիացիները ոտք դրած էին արդէն Ֆրանսական հողին վրայ եւ կը մօտենային Փարիզին: Պրն. Սինամեան, որ սպասած էր միշտ անոնց յաղթանակին, տարակոյս չունէր այլեւս թէ անոնք շուտով պիտի մտնէին մայրաքաղաք: Կրնային մեծ կռիւներ տեղի ունենալ տակաւին: Մեծ էր գերմանական ուժը: Գերմանացի զինուորը չէր վախնար մահէն: Պրն. Սինամեան կ'ընդունէր այդ ճշմարտութիւնը: Բայց որչափ ալ քաջ ըլլար ան, ալ չէր կրնար դիմանալ:

Ուրախ էր պրն. Սինամեան: Շուտով պիտի բացուէր կեանքի նոր շրջան մը: Պիտի կրնար ազատ ապրիլ, օդափոխութեան երթալ, փրկուիլ մանաւանդ ռմբակոծումներու սարսափէն: Կը ժպտէր: Ու կը փայլէին իր ճերմակ, մաքուր ու կայտառ ակռաները: Ու յանդըգնութիւն ու կորով կար իր աչքերուն մէջ: Գինով էր: Գինով՝ գալիք երջանիկ օրերու հեռանկարէն: Գինիէն ու օղիէն աւելի արբեցուցիչ էր կեանքի ապահովութիւնը: Ան ջուրէն զատ բան չէր խմեր արդէն եւ ոչ ալ կը ծխէր: Իր առողջութիւնը թանկագին բան մըն էր որուն հոգ կը տանէր միշտ:

Պումպուլը յիսունի մօտ կին մըն է, կլոր, հաստ ու կարճ, ինչպէս ամուսինը: Բայց անոր թոյլ միսերը չունին մարդուն յորդող առողջութիւնը: Ու թոյլ է անոր հոգին բաղդատմամբ միւսին, որ մարմնային անասնական կենդանութեան հետ ունի յամառ, կորովի եւ անպատկառ նկարագիր մը: Տժգոյն են անոր այտերը: Ու ներկին տակէն կ'երեւան անոնց ծալքերը: Նուազ կոկիկ, նուազ մաքուր քան ամուսինը, թէեւ շաբաթը քանի մը անգամ հագուստ կը փոխէ, կը հետեւի նորաձեւութեան եւ երիտասարդ կնոջ մը պէս մազերը կ'աշտարակէ գլխուն վրան: Այդ մազերը ամէն ամիս կը ներկուին, կ'օծուին սափրիչին մատներուն տակ: Տիկին Սինամեան կը կրէ կուրծքին ոսկիէ պրոշ մը: Իր մսոտ մատներուն կը փայլին երեք խոշոր ադամանդներ: Կը փայլին նաեւ եղունգները, կարմիր՝ ողբերգական՝ քանի որ տգեղ են մատները որ կը մատնեն իրենց չփայլող պչրանք մը: Յայտնի է որ այդ մատները ջուր չեն տեսներ, ոչ ալ աւել կը բռնեն: Բայց կոշտ ու անհաճոյ են: Կոշտ ու լայն նաեւ ոտքերը, որոնք իրենց հանգիստը կը գտնեն միայն տափակ կրունկներով կօշիկներու մէջ: Սրունքները վառարանի խողովակներ: Փորը՝ տիկի պէս: Կուրծքը՝ խոշոր ու կախ: Կը փայլին նոյնպէս աչքերը որոնց գեղեցկութեան վրայ մեծ համարում ունի Տիկին Սինամեան: Գեղեցիկ, արդարեւ, բայց շատ յաւակնոտ, օձային նոյն ատեն, խորամանկ ու ճնշիչ: Շագանակի գոյն, լուսաւոր, ժպտուն, բայց խէժի նման թաց ու կպչուն ու սրիկայ, սրիկայութեամբ մը որ կը բխի յաղեցումի անկարող ու ցեխի նման մառակոյտի մը մէջ խրած հոգիէ մը: Ամուսինը կը շփացնէր զինքը, կուտար երջանկութեան մը գլխաւոր պայմանները: Բայց ան, Տիկ. Սինամեան, ունի դժգոհ ու վերապահ երեւոյթ մը, կեղծ՝ ամուսինին հանդէպ իսկ որ, ընդհակառակն, անկեղծ ու սրտաբուխ է ու միամիտ ատեն ատեն:

Պրն. Սինամեան կը շփացնէր կինը: Անոր տրամադրութեան տակ դրած էր շէնքին բոլոր աղքատ վարձակալները: Ճամբու դնելով հետզհետէ պահանջկոտ ու անպատկառ դարձող հայ սպասուհին, պրն. Սինամեան դրամով գլխէ հանած էր վարի ու վրայի յարկերուն Ֆրանսացի վարձակալները: Ու անոնք կը հպատակէին, կը յարգէին զիրենք: Ու մեծ գոհունակութիւն մըն էր ասիկա հայ դրամատէրին համար որ կը տառապէր յարգուելու ծարաւէն: Մէկը ճաշը կը պատրաստէր: Միւսը ճերմակեղէններն ու պնակները կը լուար: Երրորդը կը զբաղէր երկու սենեակներուն զարդերուն ու կարասիներուն մաքրութեամբը: Չորրորդը խոհանոցի վերաբերեալ գնումները կ'ընէր:

Հինգերորդը պաշտօն ունէր խօսակցութեամբ զուարճացնել Տիկ. Սինամեանը: Եւ այսպէս, ամենքը, այր եւ կին, կ'իշխէին տան վրայ:

Պրն. Սինամեան կ'ուզէր գոհացնել բոլորն ալ, որպէսզի չնախանձին իրարմէ: Բայցէն նուէր մըն ալ կուտար միշտ դռնապանուհիին որ մաքուր պահէր տան սանդուխը, թէեւ ան միշտ աղտոտ կը մնար ու ճենճ կը հոտէր, ինչպէս եւ թշուառութիւն: Երկու երեք կատուներ ու շուն մը կը թափառէին միշտ անոր աստիճաններուն վրայ ու կ'աղտոտէին զանոնք:

Պր. Սինամեան, ինչպէս եւ կինը, կ'ատէին անասունները, կը վախնային նոյնիսկ կատուէն ու շունէն: Իրենց դրամը անկարող եղած էր սակայն հեռացնել զանոնք տունէն: Անկարելի եղած էր նոյնպէս խելքի բերել վարձակալ մը, որ իր խոհանոցին ծուխն ու շոգին կը թափէր միշտ սանդուխին վրայ: Պրն. Սինամեան, փորձելէ վերջ բոլոր անուշ խօսքերը, ուտելիք ու ծաղիկ նուիրելէ վերջ, յուսահատած կը զգուշանար զգուշանալիք այդ վարձակալէն որ կ'ատէր զինք: Բայց, հակառակ այս աղտոտութեան ու անհաճելի տնկլութեան, պրն. Սինամեան չէր մտածեր լքել այդ շէնքը եւ երթալ բնակիլ աւելի հարուստ ու մաքուր թաղ մը, ինչպէս կը ներէին իր պայմանները: Չէր ուզեր ցուցադրել իր արագ հարստացումը: Կը զգուշանար շռայլ մսխումներէ, չգիտնալով թէ ապագան ի՞նչ վերապահած էր իրեն: Չշատցնել տուրքերը: Նախանձ չարթընցնել անզգայի ժողովուրդին հոգիին մէջ: Բացի այդ՝ մեծ վստահութիւն մը ունէր իր բնակած շէնքին վրայ, որ, իրեն կը թուէր կրնար տոկալ օդային ռմբակոծումներու ցնցումին եւ որ կը գտնուէր ռմբակոծուելիք հաւանական դիրքերէն հեռու: Ոչ մէկ գործարան, ոչ մէկ կամուրջ, ոչ մէկ կայարան անոր շուրջ:

Տէր եւ Տիկին Սինամեանները կը գտնէին նոյնպէս այս շէնքին մէջ իրենց ունեցած ձըգտումներուն գոհացումը: Երբեմն կը նկատէին անկեղծութեան պակաս իրենց նուէրներէն օգտուողներուն մէջ ու հեգնանք: Բայց ո՞վ էր սպասողը: Իրե՞նք թէ անոնք, որ հեգնելով հանդերձ իրենց այդ դրամական մսխումը, գերիներու պէս կը դառնային իրենց շուրջ:

— Իմ պումպուլս, — կրկնեց պրն. Սինամեան, նկուր խաղ մը ընենք:

Կինը համակերպեցաւ: Ու ճակատ ճակատի եկան երկու խոշոր գլուխները: Սիրոյ արտայայտութիւն մըն էր ասիկա: Ցուցադրում մը: Անոնք փոխադարձ պայմանադրութեամբ մը կը յարգէին զիրար մարդոց ներկայութեամբ: Բայց, մինչ կինը կը մնար կեղծարար համեստութեան, ամչկոտութեան ու բարձր տիկինի մը պատշաճ գծին վրայ, պահելով նոյն ատեն միամիտ աղջիկի մը երեւոյթը, դէմքին բռնազբօսիկ ժպիտը, մարդը կը ռամկանէր: Ան կը գործածէր հաճելի ու կոպիտ որակումներ, փայփայանքներ ու խաղեր: Երբեմն չար էր երիտասարդ ամոլներու յատուկ այս խանդաղատանքը, որ այդ տարիքին՝ կը մատնէր թեթեւսոլիկութիւն մը, որուն չի յանձնուիր մեր ընտանեկան նկարագիրը: Բայց աւանդութիւնը տեղ չունէր Տէր եւ Տիկին Սինամեաններու հոգիին մէջ որոնց ձգտումն էր նմանիլ փարիզեան հասարակութեան: Այլասերումը երիտասարդներէն չէ որ կը սկսի:

Կրկնեցին անոնք քանի մը անգամ ճակատ ճակատի այդ բախումը՝ յուսալով նախանձ մը արթնցնել ամուրի պրն. Ծովիկեանի մէջ: Պրն. Սինամեան զղջում մը ունէր իր ամուսնութեան համար: Կինը անճարակ մըն էր: Զուրկ՝ ընտանեկան առաքինութիւններէ: Ան չէր կրցած զաւակ մը տալ իրեն, — զաւակ մը, որուն կարօտը կը քաշէր, պակաս չըլլալու զաւկի տէր իր բարեկամներէն եւ օգտուելու համար ընտանեկան օրէնքներէն: Բայց զոռով՝ ան կ'ուզէր մնալ բարձր՝ ամուրիներուն քով, նախանձելով հանդերձ անոնց ազատութեան: Անշուշտ զգալի էր կեղծիքը, եւ պրն. Ծովիկեան կը հրճուէր միայն այս տեսարանէն:

Տարբեր էր արդարեւ իրականութիւնը: Առանձնութեան մէջ, այր ու կին կը բախէին իրարու: Մարդը, նետելով վրայէն քաղաքակրթութեան պատեանը, կ'իջնէր իր հարազատ կոպտութեան: Կինը կը քննադատէր, կը դիմադրէր իր յամառութեամբ: Ու վէճը կը վերածուէր կռիւի մը, յաճախ բռունցք բռունցքի: Աւել ու գաւաթ, աթոռ ու պնակ կը թռչէին մէկ պատէն միւսը: Կը կոտրէին ապակիներն ու ելեկտրական լամպերը։ Մարդը կը պարպէր իր թոքերէն հայհոյանքները։ Կ՚ատէր կինը որուն մէջ կը տեսնէր հրէշ մը։ Ասիկա կ՚անարգէր, կը վարկաբեկէր, ոչնչութեան կը վերածէր մարդը, նկատի չունենալով անոր դիզած հարստութիւնն իսկ։ Բայց անոնք, իրենց սանձարձակ պոռթկումներուն մէջ իսկ, գիտէին, պիտի հաշտուէին իրարու հետ։ Այդ կռիւը պարպուելու պահանջ մըն էր։ Քաղաքակրթութեան բեռին տակ ճնշուած իրենց հոգիին ապստամբումը։ Ընդվզում մը կարգապահութեան դէմ։ Գիտէին թէ անոնք կապուած էին իրարու կազմելու համար ամբողջութիւն մը։ Մէկը միւսին մէջ կը տեսնէր վստահութիւն, տկարութիւն միութեան կապը փրցնելու եւ հետեւաբար մէկը միւսին վրայ իշխելու յաւակնութիւն մը։ Ու այսպէս, փոթորիկէն վերջ, երկուքն ալ խաղաղած, կը համբուրէին զիրար, կը փայփայէին։

Դժուար է զանազանութիւն մը դնել խածնելուն եւ համբուրելուն մէջ, հարուածին եւ փայփայանքին միջեւ, համբոյրն ու փայփայանքները ըլլալով քաղաքակրթուած եւ հետեւաբար այլասերած ձեւերը յօշոտումին եւ բռունցքի հարուածին։ Այլ խօսքով, սէրը բարբարոս է իր արմատէն ու այլադան։ Երբեմն խորունկ սէր մը կը լարէ դէմ դէմի երկու էակներ, կը զարնէ զանոնք իրարու։

Այս չէր, սակայն, պարագան քսան տարիներէ ի վեր ամուսնացած ու անկողնի հաճոյքէն պաղած, ցամքած Տէր եւ Տիկին Սինամեաններուն համար։ Այլ տիրապետելու հարց մը։ Մարդը արեւելքի ձեւով կ՚ըմբռնէր իր ամուսնական իշխանութիւնը։ Կինը պէտք չէ գիտնար թէ ի՞նչ կը շահէր եւ ի՞նչ կը ծախսէր։ Գնումները ինք պիտի ընէր։ Եւ ան, առանց կնոջը կարծիքը հարցնելու, կը բերէր անոր կօշիկները, գուլպաները, հագուստին կերպասը։ Հագուստին ձեւը իր կամքին համաձայն պէտք էր ըլլար։ Ինք էր որ կը դնէր կնոջ ճերմակեղէնները։ Կինը պէտք չէր որ առարկէր։

Ու Տիկ. Սինամեան կը համակերպէր։ Զգոյշ, վախկոտ ու խորամանկ, ան կը գործէր տակէն։ Եւ ան առած էր մարդը իր ենթարկութեան տակ՝ ձգելով անոր ազատութեան մը պատրանքը։ Ու այն Սինամեան, հովին տակ դարձող հողմացոյցի մը պէս կը դառնար կնոջ շունչին տակ։ Մարդը, որ տգէտ էր, արհամարհելով հանդերձ կնոջը զարգացումը, կ՚ընդունէր անոր մտային գերիշխանութիւնը։ Կը շարժէր անոր խրատներով։ Եւ այսպէս է որ կինը կրցած էր օգտակար դառնալ իր աղքատ ազգականներուն, ու ատելի դարձնել ամուսինին իր հարազատ ու չքաւոր քոյրը։

Տիկ. Սինամեան, որ ամուսնութենէն առաջ նկատի ունեցած էր մարդուն չեչոտուած ու ամբարտաւան անհատականութիւնը, եւ թեկնածու մը չգտնելով, համաձայնած էր անոր կինը դառնալ, կը ջանար տակաւին կրթել մարդը, քաղաքակրթութիւն ու նիստ ու կաց սորվեցնել անոր։

Այսպէս է որ մեծապէս գոհ էր ան ամուսինին այդ որոշակի երեւոյթէն Պրն. Ծովիկեանի ներկայութեամբ։ Ան անտեղեակ էր այս մտաւորականին արժանիքէն, բայց կարեւորը անոր անունն էր։ Ըսել ծանօթ շրջանակներու մէջ թէ Պրն. Ծովիկեան այցելած ու ճաշած էր իրենց սեղանէն։ Ասիկա ընդհանրական զգացում մըն է հայութեան նոր–հարուստ խաւին համար։ Ու կարգ մը մտաւորականներ կրցան ճարտարօրէն շահագործել զայն։ Տիկ. Սինամեան կը ձգտէր յարգել Պրն. Ծովիկեանը, քանի որ արժէք տալով անոր ցոյց տուած կ՚ըլլար մտաւորականութիւնը ըմբռնելու եւ գնահատելու գիտակցութիւն մը։

Ու սեւեռեց իր պաղ ու թելադրական նայուածքը ամուսինին աչքերուն մէջ, որովհետեւ ասիկա կոպտութեամբ մը կը լռեցնէր Պրն. Ծովիկեանը, լսելու համար անթելլին տուած տեղեկութիւնները։

— Հայտէ պէպէքս, Թարգմանէ՛, տեսնեմ։

Տիկին Սինամեան գոհ չէր նոյնպէս այս հրաւէրէն, թէեւ պիտի ուզէր փայլիլ իր լեզուագիտութեամբ։ Եւ հաւաքեց իր մտքին տարածուն թելերը։ Կեդրոնացուց ամբողջ մտածումը։ Պահեց միշտ իր ժպիտը։

Պրն. Ծովիկեան, գլուխը կախ, կը սպասէր։ Ան լաւ մը կերած ու կշտացած էր։ Պիտի ուզէր մեկնիլ։ Բայց քաղաքավարութեան պակաս մը պիտի ըլլար նման քայլ մը։ Չէր ուզեր դժգոհ ձգել անոնք, որ հիւրասիրած էին զինքը, թէեւ ինքն էր որ հեռաձայնով յայտնած էր ճաշելու իր փափաքը։ Ճաշին փոխարէն պէտք էր քիչ մը հաճոյք ու զուարճութիւն տալ։ Համակրելի դառնալ։ Ժողովրդականութիւն շահիլ։ Պրն. Ծավիկեան փղոսկրէ աշտարակի մտաւորական մը չէր։ Կը սիրէր յարաբերութիւններ մշակել ամէն հայրենակիցի հետ։

Փոքրակազմ, ջղային մարդ մը։ Միշտ ժպտալիր։ Խորամանկ ու միամիտ նոյն ատեն։ Գիլոնիոզեան կերպարանք մը։ Իր պեխերը կը յիշեցնեն սակայն Նափոլէոն Երրորդը։ Ու իր ծերացած դէմքը կ'առնէ միայն կայսերական վեհութիւն մը, որ արդիւնքն է երկար տարիներու դժգոհութեան մը։ Ասիկա բերուած է դէմքին խորքէ հակազդեցութիւն ստրկութեան մը, որուն ենթարկած է զինքը իր ժողովուրդը, որուն համար գործած ու պայքարած է յիսուն տարիներ։ Եղած է անոր բանբերն ու ջատագովը օտար շրջանակներու մէջ։

Պրն. Ծավիկեան կը յարգէր իր հանճարը։ Ու մարդիկ, որ գռեհիկ ու տգէտ էին, պէտք է յարգէին զինքը։ Անսահման էր իր փառասիրութիւնը եւ կը տառապէր յարգանքի պակասէն։ Անյագ էր իր փառասիրութիւնը, հակառակ անոր որ ծանօթ էր իր անունը շատերուն։ Կ'ուզէր կենալ միշտ ժողովուրդին գլուխը։ Ու կառչած կը մնար իր այդ դիրքին։ Ու ներկայ կ'ըլլար ամէն հաւաքոյթի, ազգային ամէն հանդէսի, կը գրաւէր առաջին աթոռը։ Կ'ընդունէր ամէն հրաւէր, եւ այս մեծ փառասէրը կը գոհանար ամէնէն խեղճ շրջանակներէն իսկ։ Կը ճառէր։ Խօսիլը դիւրին էր իր բերնին մէջ, ինչպէս դիւրութեամբ կը քալէր իր գրիչը։ Յորդառատ։ Քրոնիկ, քաղաքականութիւն, գրական քննադատութիւն, նկարչական տեսութիւն, երաժշտական վերլուծում, հին մատենագրութիւն, քիմիաբանութիւն, եւլն., եւլն.։ Իր միտքը կ'երկարէր ամէն ճիւղի։ Եւ իր միտքը առաձգական էր ձգախէժի նման։ Ու այդ միտքը հնավաճառի մը կրպակն էր ուր կարելի էր գտնել ամէն ինչ։ Հայ միջնադարեան ձեռագիրներէն մինչեւ Սփիւռքի նորելուկ տաղանդի մը գործը։

Պրն. Ծավիկեան կը նորոգուէր ամէն օր անսպառ։ Ան ինքզինքը կը զգար միշտ երիտասարդ։ Իր խանդավառութիւնը չէ հանգչած որեւէ ընկրկում։ Պզտիկ ու յաւիտենականօրէն թարմ աչքեր մը։ Շատեր ստացած են իր կառուցին հարուածները։ Անոնք որ փորձած են վնասել իր համբաւին կամ իր սխալները մատնանշել։ Բայց գտած են նաեւ անոր մէջ մեծ ներողամտութիւն, վեհանձնութիւն եւ բարութիւն։ Առատ զովեստ։

Պրն. Ծավիկեան ֆրանսացի է իր քաղաքավարութեամբ, ժպիտով, զարգացումին եւ համբաւին կէսովը։ Եւ ֆրանսացին ու հայը իր մէջ կ'ապրին համերաշխ, հաւասար, եղբայրաբար։ Ան պիտի կրնար ըլլալ Փարիզի մեր լաւագոյն դեսպանը։ Կը ձգտէր ատոր։

— Այո՛, — կրկնեց պրն. Սինամեան, թէեւ պրն. Ծավիկեան լռութիւն կը պահէր։

Տիկին Սինամեան ճիգեր կ'ընէր թարգմանելու համար։ Կը սեղմուէր կոկորդը։ Ու յուզում ու շուարում դէմքին։

— Այո՛, կ'ըսէ որ...

Բառերը չէին գար, սակայն ու պրն. Սինամեան, աչքերը անհոգօրէն յառած կնոջ վրայ, կարծէք դուրս կ'ուզէր քաշել զանոնք անոր բերնէն։ Կը հատնէր իր համբերութիւնը։ Սկսան շարժիլ իր յօնքերը։ Կինը կը տառապէր։ Կը պեղէր իր յիշողութիւնը։ Ան քանի մը սուտերով պիտի ջանար փրկել ինքզինքը հաւանաբար եթէ չըլլար պրն. Ծավիկեանի ներկայութիւնը։ Կը սեղմէր իր ուղեղին մկանները։ Ու կը զարմանար։ Ինք վստահ էր թէ գիտէր անգլիերէնը։ Բայց ինչո՞ւ չէր հասկնար։ Կակազեց քանի մը անկապ բառ.

— Այո՛, կ'ըսէ որ... կեցէ՛ք... կ'ըսէ որ կռիւ կայ...

— Ամէն մարդ ալ գիտէ, որ կռիւ կայ,— բացագանչեց ամուսինը։

Չէր կրցած զսպել իր յուսախաբութիւնը։ Կը սպասէր ամբողջ հոգիով ուրախացուցիչ լուրի մը եւ ահա... Գործէն վերջ, քաղաքականութիւնը իր միակ մտազբաղումն էր։ Տարիներէ ի վեր ուխտած էր Անգլիոյ յաղթանա-

կը։ Եւ եկած էր օրը, ուր իր խօսքը պիտի ըլլար, պիտի իրականանար իր մարգարէութիւնը։ Կ'ատէր աղքատ մարդիկը։ Կ'ատէր հետեւաբար գերմանացիները, թէեւ անոնց օրով էր որ դիզած էր իր հարստութիւնը։ Կը սիրէր հարուստ Անգլիան եւ Անգլիան միայն։ Դաշնակիցները՝ Ամերիկան ու Ռուսիա տեղ չունէին իր սրտին մէջ։ Երկու օրէ ի վեր վերցուցած էր պատը զարդարող Փէթէնի նկարները։ Փէթէնը, զոր կը սիրէր ժամանակին եւ կը նկատէր իբրեւ Ֆրանսայի եւ հետեւաբար իր փրկարարը, դադրած էր համակրելի ըլլալէ։ Դաւաճան մը, ինչպէս սկսած էր ըսել տեղական ժողովուրդը, որուն հետ համերաշխ կը քալէր միշտ պրն. Սիմոնեան, իր անձնական ապահովութեան համար իսկ։ Չէր մոռնար իր օտարական մը ըլլալը եւ կը ջանար ֆրանսացիէ մը աւելի ֆրանսացի երեւալ։ Օրերէ ի վեր կը սպասէր յաղթանակներու։ Եւ ահա, ահա...

— Լաւ, լաւ, լաւ՛,— աւելցուց ան կոշտութեամբ մը, մինչ կինը կը կծկուէր ամօթէն։

— Ղուկա՛ս,— բողոքեց այս վերջինը.— Սփիւռքը *շատ շուտ կը խօսի կոր...*

Ու գանգատեցաւ գլխու ցաւէ մը։

— Խօսնակը, կ'ըսեն հայերէն,— նկատել տուաւ պրն. Ծովիկեան։

Պրն. Սիմոնեան կարեւորութիւն չտուաւ կնոջ բացատրութեան եւ ցաւին եւ հրաժարելով իր փափաքէն փորձեց խաղաղեցնել իր բարկութիւնը ուրախ պատմութիւնով մը։ Տնկեց իր արտասովոր կերպով մեծ քիթը եւ իր անտառային նայուածքը, բացաւ իր ագահութեան թեւերը։ Քանի մը բառով եւ շարժումով ստեղծեց ծիծաղելի տեսարան մը շուկայէն առնուած։ Հեգնեց զայն։ Տուաւ անոր մտային մթնոլորտը։

Կը խնդար պրն. Ծովիկեան ուսերը շարժելով եւ մերթ ընդ մերթ կոկորդը բացած՝ աչքերը առաստաղին յառելով։

— Կեցէք,— ըսաւ պրն. Սիմոնեան.— ի՞նչպէս ըսիք. «խօսնակը», դէշ բառ չէ...

Կեցած՝ արջու մը պէս, ան կը փարատէր հնդկահաւին մնացած կտորները, խոշոր բաժին մը եւս տալու համար պրն. Ծովիկեանին, որ խիստ կերպով մերժեց.

— Խենթենալիք բան... իմ ստամոքսս չի վերցներ այդքան բան... ո՛չ, կուշտ եմ արդէն Մօն շէր, *փառաւորապէս կուշտ...*

Պրն. Սիմոնեան խորապէս գոհ մնաց պզտիկ այս մարմնին ատամներէն։ Ու սկսաւ ուտել՝ ցոյց տալու համար իր ստամոքսին տոկունութիւնը։ Ու սկսաւ խնդալ.

— Խօսնա՛կը... Սա հայերէն լեզուն ալ ամէն բանի կը հասնի...

Դուռը ծեծեցին յանկարծ բռունցքով մը։ Եւ ապառաժի կտոր մըն էր կարծէք այդ բռունցքը։ Վաճառականը ձգեց խոշոր միսի կտորը, վերցուց գլուխը, նայելու համար՝ բերանը բաց՝ եկող անակնկալին։ Ու անհետացաւ իր դէմքէն ուրախութիւնը։ Ու վախը յայտնուեցաւ անոր աչքերուն մէջ։

Ձայն մը պոռաց դուրսէն.

— Բացէ՛ք, ոստիկանութիւնն է։

— Հէ՞... գիշերուան այս ժամո՞ւն...

Պրն. Սիմոնեան տարածեց իր կարճ բազուկները թռչիլ ուզող սագի մը պէս։ Բարձրացուց իր յօնքին մէկը։ Երբեք չէր սպասեր այս բանին, թէեւ միշտ խորհած էր այդ մասին։ Ու դէպի դուռը երթալու փոխարէն, փախեց ննջասենեակ։ Բացաւ պատուհանը եւ կանչեց.

— Մաքօ Ժա՜ն...

Անհրաժեշտ կը տեսնէր վերի յարկէն վար կանչել իր ֆրանսացի բարեկամը, որ կ'օգտուէր իր առատաձեռնութենէն։ Մաքօ Ժան կ'աշխատէր պետական շէնքի մը մէջ, որով յոյժ օգտակար մըն էր պրն. Սիմոնեանի համար։

— Մաքօ Ժա՛ն,— պոռաց ան կրկին։

Ոչ մէկ պատասխան։ Պրն. Սիմոնեան երկարեց գլուխը պատուհանէն դուրս։ Ձիւնախառն հովը կը փչէր եւ փողոցին չոր ու սեւ ծառերը կը խշրտային ոսկորներու պէս։ Ոչ մէկ լոյս։ Բոլոր վարձակալներն ալ քունի մէջ էին։ Իր յուսահատութիւնը աճեցաւ։ Փակեց պատուհանը եւ վերադարձաւ ճաշարան մեծ աճապարանքով, ձեռքով ու ոտքով հասկցնելով թէ պէտք է լուռ մնալ եւ չբանալ դուռը։

Պրն. Ծովիկեան գայթակղեցաւ յանկարծ, լրջացաւ։

— Մօն շէր, կարելի բան չէ դուռ չբանալ ոստիկանութեան առջեւ։ Ի՞նչ պիտի խորհի Ֆրանսական կառավարութիւնը հայերուս մասին։ Պէտք է հպատակինք տեղւոյս օրէնքներուն։ Ես հոս եմ, վերջ ի վերջոյ, ի՞նչ բանէ կը վախնաք։

Հետզհետէ աւելի կը ջղայնանար տեսնելով պրն. Սինամեանի յամառութիւնը։ Կինը, դոյնը նետած՝ կախուած էր ամուսինին աչքերէն։ Վտանգի նման պարագաներու մէջ ան նախաձեռնութիւնը կը ձգէր մարդուն, վստահ անոր ճարպիկութեան։ Չէր ուզէր սխալ ու ամուսինին կամքին հակառակ քայլով մը պատասխանատու դառնալ անոր առջեւ։ Անդամալուծուած էր իր մտածումը։

— Ժամը տասնումէկն է — շշնջաց վաճառականը, աչքը նետելով ժամացոյցին վրայ որ միակ շքեղութիւնն էր ճաշասրահին, ուր ամէն ինչ հին էր։

Պրն. Սինամեան իր կարասիները գնած էր այն օրերուն, երբ աղքատ էր դեռ։ Հարստանալէ վերջ ալ կը պահէր զանոնք։

— Այս ժամուն ոստիկանութիւնը իրաւունք չունի տուները խուզարկելու, — աւելցուց ան։

— Բայց գոնէ մարդ ձայն մը կը հանէ, — կը հարցաքննէ։

— Ո՛չ, պրն. Ծովիկեան, ընդհակառակը, թո՛ղ այնպէս կարծեն թէ կը քնանանք…

— Ի՞նչ ըսել է իրաւունք ոստիկանութեան համար, եղբա՛յր, — բողոքեց մտաւորականը։

Բռունցքը որոտաց կրկին։ Եւ պրն. Սինամեան իր ահեղ նայուածքը նետեց պրն. Ծովիկեանի վրայ, որմէ կը պահանջէր բացարձակ լռութիւն մը։ Արմատախիլ՝ կը փրթէր վաճառականին սիրտը։ Ան, այդ պահուն, հեռու էր քաղաքավարութեան մասին մտածելէ։ Միամիտ կը գտնէր մտաւորականին խորհուրդը։ Իր բնազդը իրեն կ՚ըսէր թէ պէտք էր լռել։ Ան կ՚արհամարհէր նոյնիսկ պրն. Ծովիկեանը այդ միջոցին։ Անոր միջամտութիւնն ալ յոյս մը չէր ներշնչեր իրեն։ Իր վախը կրկնակ էր։ Կը վախնար պետութենէն իր ապօրինի գործունէութեան համար, որով հարստացած էր։ Կը վախնար աւազակներէ, որոնք ամէն գիշեր ոստիկանութեան անունով հարուստները կը կողոպտէին։ Պրն. Սինամեան ծայրայեղօրէն կասկածամիտ էր։ Զգոյշ։

— Բացէք, այլապէս կը կոտրեմ դուռը, — պոռաց դուրսէն ձայնը։

Ձեռք մը ուժգնօրէն կը ցնցէր փականքը։

Պրն. Ծովիկեան ալ չէր խօսեր։ Կը սպասէր գրան կոտրուելուն։ Լաւ դաս մը պիտի ըլլար իր հայրենակիցին։ Ի՞նչ կը կորսնցնէր ինք։ Իր թուղթերով կրնար հաստատել թէ մտաւորական մըն էր եւ նախագահը Ֆրանքօ-Արմէնիէն միութեան։ Բայց եւ այնպէս դէպքը հաճոյք չէր պատճառեր իրեն, քանի որ ինք ալ ներկայ էր։

Տիկ. Սինամեան շողի կ՚առնէր ու կուլար։ Կը նայէր աջ ու ձախ մորթելու տարուող անասունի մը պէս։ Հնչող զանգակը դաշոյնի հարուած մը տուաւ կարծէք իրեն։ Ոտքի՝ ու կը փնտռէր փախուստի ելք մը։

Տիրեց անդորրութիւն մը։ Բայց այդ լռութիւնը աւելի ահարկու բան մըն էր։ Ի՞նչ պիտի պատահէր։ Կինը չկրցաւ զսպել այլեւս իր տագնապը։ Ինկաւ քուրջի պէս.

— Ղուկաս… Զգացին, դուռին ետեւն են… պիտի կոտրեն…

Մարդը բարձրացուց բազուկը։ Պիտի ապտակէր կինը։ Առիկա հասկցաւ ու լռեց։ Պրն. Սինամեանի համար նախընտրելի էր, որ մեծ աղմուկով տեղի ունենար իր տունէն ներս ոստիկաններու խուժումը, թէեւ կրնար ծանր հետեւանքներ ունենալ։ Կ՚ուզէր որ դրացիները արթննային եւ հասնէին իրեն օգնութեան։ Բարեխօսէին, եթէ եկողները իրական ոստիկաններ էին։ Փախցնէին եթէ զինք կողոպտելու համար եկած էին։ Ու կը հաշուէր անցնող վայրկեանները։ Ականջները լարած, ռատիոյ ելեկտրական ալիքներ ստացող գործիքի մը պէս զգայուն, գլուխը ուսերէն վեր երկարած, կը սպասէր լռութիւն պատռտելով չուրջիններուն։

Ու լռութիւնը երկարեցաւ։ Ու պրն. Սինամեան հետզհետէ կը վերագտնէր իր կորովը։ Ի՞նչ կրնային ընել իրեն։ Սեւ շուկայ կ՚ընէ՞ր։

Ո՞վ չէր ըներ : Ի՞նչպէս պիտի հաստատէին : Թուղթերը կարգին էին : Ան հեռու մնացած էր միշտ վտանգաւոր գործառնութիւններէ : Եղած էր միշտ հեռատես : Վախկոտ՝ եթէ կ՚ուզէք : Պրն. Սիմոնեան չէր ամչնար վատութենէն : Ան իմաստութեան եւ ապահովութեան մայրն էր : Քաջութիւնն ու յանդգնութիւնը ապուշներու գործն է : Անգլիացին քաջութեամբ չէր, որ յաղթած ու շահած էր բոլոր պատերազմները, այլ խորամանկութեամբ եւ դրամին ուժովը : Երբեք գործ ունենալ չէր ուզեր կառավարութեան հետ : Կը սոսկար պաշտօնեաներէն : Պետական նամակ մը անգամ կը յուզէր զինքը : Ինչո՞ւ : Անիկա անբացատրելի է : Կը վախնար նոյնիսկ այն շրջանին, երբ պարզ ու պարկեշտ գործաւոր մըն էր : Չարութիւն կը տեսնէր միայն մարդոց մէջ :

Յանդգնեցաւ, ոտքերուն ծայրերուն վրայ կոխելով տախտակամածը ճռնչեցնելէ, առաջանալ մինչեւ ճաշարանին դուռը եւ սեմին վրայ կեցած՝ իր նայուածքը մխրճեց նրբանցքին խորը, ուր երկարեցաւ իր շուքը, գնաց, վերարկուներու կոյտին վրայէն սահելով, հասաւ դուռը :

Պրն. Ծովիկեան անհամբերութեամբ կը հետեւէր անոր, կը հառաչէր, կը ցնցէր իր ուսերը : Չէր ըմբռներ : Ամբողջովին հաւատք ու վստահութիւն էր ան մարդոց հանդէպ : Մարդկային անդունդին վրայ տարածուող մշուշ մը : Կը սիրէր մարդիկը : Օգտակար կը հանդիսանար անոնց ամէնէն աննշանին իսկ որ կը դիմէր իրեն : Չէր մոռնար զայն տարիներու ընթացքին : Կ՚օգտուէր նաեւ մարդիկներէն : Բազմաթիւ ծառայութիւններ տեսած էր անոնցմէ : Բոլորն ալ հաճոյակատար եղած էին իրեն հանդէպ : Տարբեր միջավայրի մարդ էր ան, ու չէր ըմբռներ այս պարագան : Գաղափար չունէր շուկայի գայլերուն մասին : Մեծ երեխայ մը : Հատաւ իր համբերութիւնը դարձեալ.

— Բացէք եղբայր, հիւրընկալեցէք եկողները... Անպատշաճ դրութեան մը մէջ կը ձգէք զիս ալ...

— Պրն. Ծովիկեան, բաւ. զայրացած, մօտենալով սեղանին.

— Պրն. Ծովիկեան, ինծի նայեցէ՛ք, այս տունին տէրը ես եմ... Աշխարհը ձեր գիտցած աշխարհը չէ... Գիրք միրք պարապ բաներ են...

— Ղուկա՛ս, — աղերսեց կինը ամուսինին այս ընթացքէն յուզուած, ու մոռնալով պահ մը իր վախը, զգայուն նայուածք մը կեղծեց, ներողութիւն խնդրելու պէս մտաւորականէն, որ չէր հանդուրժեր գրքի սրբութեան դէմ եղած այդ հայհոյանքին :

Պրն. Ծովիկեան, դառնացած թէեւ, կը զսպէր ինքզինքը : Կը գոհանար Տիկ. Սիմոնեանի փափկանկատ միջամտութեամբ : Կը խորհէր այդ պահուն թէ հսկայ տարբերութիւն մը կար այր եւ կնոջ միջեւ : Ու իր ամբողջ համակրանքը կ՚երթար վերջինին, որուն մէջ կը տեսնէր հոգեկան բարձրութիւն եւ իմացականութիւն, ինչպէս եւ ազնուութիւն :

Պատերուն խորէն եկող աղմուկ մը եկաւ յեղաշրջել պահը : Այդ աղմուկը կը յիշեցնէր պրն. Սիմոնեանին կազի մը հոսումը : Ո՞ւրկէ կուգար ան : Կը լսէր զայն նոյն տեղէն քանի մը կողմերէ : Եւ աներեւոյթ եւ մահացու այդ կազը կը խուժէր իր յարկաբաժինէն ներս : Սողունի մը պէս նենգ՝ այդ անյայտ աղմուկը կը սողար նրբանցքին կիսամութին մէջ, կը մօտենար : Պրն. Սիմոնեան յայտարարեց իր գուշակութիւնը մեծ յուզումով :

— Կազ կուտան... պիտի սէրսէմցնեն մեզ...

— Ղուկաս, ի՞նչ պիտի ընենք... Ղուկա՛ս, շունչս...

— Իրապէս որ յամառ էք, մօն շէր, — վրայ բերաւ պրն. Ծովիկեան մեծ վհատութեամբ :

Մեռնի՞լ, կը խորհէր ան, մեռնի՞լ ասանկ յիմար դրութեան մը մէջ, շնչահեղձ, անարժան ու ահաւոր մահով մը... Հայ ազգին պատիւ չէր բերեր իր այդ մահը : Ան երեւակայած էր զայն փառքի լոյսերու տակ : Արտասուող հայրենակիցներ, բոլոր գաղութներէն եկած ներկայացուցիչներ իր անկողնին քով : Ծաղիկներ : Ամբողջ փարիզահայութիւնը իր դագաղին շուրջ : Գրողներ ու քաղաքագէտներ նաեւ օտար զանազան ազգերէ : Հանդիսաւոր երգեցողութիւն եկեղեցիին մէջ : Երգչախումբ ու թափօր վարդապետներու, տէրտէրներու, սարկաւագներու, դպիրներու եւ մտաւորականներու: Ճառեր: Խնկարկում եւ լաց իր մարմնոյն վրայ: Զղջումի եկած կուսակցական հակառակորդներ նոյնիսկ: Պրն. Ծովիկեան ամբողջ կեանք մը նուիրած էր իր ազգին, որպէսզի կանգնէր իր շիրիմը յաւիտենականութեան ճամբուն վրայ, յիշուէր դարէ դար, ինչպէս Եղիշէն, Եզնիկն ու Նարեկացին: Այս երազը կ'ապրէր իր մէջ իր երիտասարդական օրերէն ի վեր: Եւ ան մահուան քերթուածներ գրել տուած էր իրեն: Եւ ան մղած էր զինքը: Բարձրանալ՝ փրկուելու համար մոռացումի ահաւոր ծովէն:

Որքա՜ն կեղծ կ'ապրինք: Շրջապատն ու անկէ եկող գաղափարական հոսանքները կ'այլակերպեն մեզ: Պրն. Ծովիկեան տարբեր էր էութեամբ: Վիպային շրջանէ եկող այս մարդը՝ վիպային իր մտածողութեան եւ արտայայտութեանց եւս ունէր կեանքը սիրող հոգի մը: Ջերմեռանդ այս քրիստոնեան աւելի կը հաւատար աշխարհիկ վայելքներուն քան երկինքին: Սկզբունքով ընդունած էր ան հոգիի յաւիտենականութեան գաղափարը եւ իր մտածումը երբեք չէր փորձած սրբագրել իր նախնիքներուն այդ հաւատքը, ոչ ալ պրպտել Աստուծոյ խորհուրդը, որուն կը հաւատար այնպէս ինչպէս աւանդած էին իրեն: Կարելի՞ էր երեւակայել Հայ մը առանց հաւատքի: Կարելի՞ էր երեւակայել Հայ ժողովուրդը՝ առանց իր եկեղեցիին, որ խորհուրդ ու գեղեցկութիւն էր եւ ազգային ոգիին ամէնէն հարազատ ու շքեղ արտայայտութիւնը, հոյակապ՝ ինչպէս պիտի ըսէր ինք, որ կը սիրէր մեծ ու լուսաւոր բառերը:

Պրն. Ծովիկեան կը պաշտէր Նարեկացին եւ իր մէջ կը զանէր անոր միսթիսիզմը: Իր կեանքը եղած էր նման այդ հնադարեան վանականին կեանքին: Անշուշտ ունեցած էր զանազան հաճոյքներ, բայց առհասարակ ապրած էր ճգնաւորի կեանք մը: Այսպէս կը հաւատար քառասուն տարիներէ ի վեր Փարիզէն բաժնուիլ չկրցող այս մարդը: Ամէն ոք իր մտածումներուն գինովն է: Եւ այդ գինովութիւնը կը ձուլէր ամէն գաղափար: Համայնավարութիւն, ռամկավարութիւն, միսթիսիզմ, նաթիւրալիզմ, միջազգայնականութիւն եւ ազգայնականութեանց հինը եւ նորը, նորը եւ հինը...

Պզտիկ ու ճղճիմ այս մարդը, որ տոկացեր էր երկաթի պէս եօթանասուն տարիներուն եւ որ ջիղ ու աշխուժութիւն էր տակաւին, կը զրկէր ինքզինքը շատ մը զեղխութիւններէ կարենալ ապրելու համար: Կը սիրէր կեանքը եւ կեանքը միայն: Բժիշկին առաջին թելադրութեան իսկ՝ դադրած էր ծխելէ:: Անտանելի պատկեր մըն էր մահը եւ կրկնապէս անտանելի՝ նման պարագայի մը մէջ: Ոտքի ելաւ տուփէ մը դուրս նետուող զսպանակաւոր խամաճիկի մը պէս: Ելեկտրական լոյսը կը ցոլացնէր իր ճաղատ ճակատը եւ մազերուն ճերմակ խուրձը, որ կը մնար դեռ առատ՝ իր ծոծրակին վրայ, յիշեցնելով երիտասարդական օրերու վիպական բաշերը: Որոշած էր բանալ դուռը:

Պրն. Սինամեան ըմբռնեց իսկոյն անոր այդ որոշումը: Մարեց անմիջապէս ելեկտրականութիւնը: Ուղղուեցաւ դէպի պատուհան: Զգուշութեամբ մը քաշեց վարագոյրը: Բացաւ պատուհանը: Մաքուր օդ: Պայծառ կաղին դէմ:

Պրն. Ծովիկեան, մութին մէջ՝ մնաց շուարած: Իր շուարումը աւելի մեծ եղաւ, երբ, զարնուելով սեղանին, շրջեց գաւաթներ եւ ջուր մը սկսաւ հոսիլ սեղանէն վար: Մնաց քարացած: Դուրսէն խուժող քամին կը հրահրէր վարագոյրը, հանդէպէն ներս մտնող աղուէսի մը պէս ու թեւատարած բոցերու լոյսը կը թաւալէր տախտակամածին վրայ:

Տիկ. Սինամեան մսոտ ձեռքերով կը ծածկէր իր հոյանի կուրծքը, չմրսելու համար միջը՝ քանի որ դուրկ էր անկէ: Հովը կը քաշէր սեղանին ծածկոցէն: Կը շարժէր առաստաղէն կախուած ելեկտրական լոյսին ապակիէ ափսէն:

Դուրսէն կուգար գերմանացի զինուորի մը ոտնաձայնը, այն, որմէ չէր ախորժեր, որմէ կը սոսկար պրն. Սինամեան՝ անոր մէջ տեսնելով բիրտ ուժը, բայց որ այդ պահուն յուսադրիչ կը թուէր իրեն: Գլուխը երկարեց պատուհանէն դուրս, բայց զինուորը հեռացած էր արդէն: Ներս անցնելով, պրն. Սիմոնեան ուղղուեցաւ դէպի խոհանոց եւ աւելին կոթովը զարկաւ տախտակամածին: Քրտինքը կը վազէր ճակտէն: Սրբիչ մը քաշելով սրբեց դէմքը: Մարեց լոյսը եւ վերադարձաւ ճաշարան:

Մինչ այդ՝ պրն. Ծովիկեան, խարխափելով, գտած էր ելեկտրականութեան կոճակը եւ լոյսը վառած: Պրն. Սիմոնեան, ահաբեկած՝ նետուեցաւ կոճակին վրայ: Արգիլուած էր այդ լոյսը պատերազմի սկիզբէն ի վեր ու պրն. Սիմոնեան հնազանդած էր միշտ օրէնքին:

— Խենթեցա՞ք... Պէլա՞յ մըն ալ աւելցնել կ'ուզէք գլխուս...

— Ձեզի պէտք է հարցնել,— պատասխանեց մտաւորականը հեգնական շեշտով մը:— Կարելի չէ երեւակայել այսքան յիմարութիւն...

Լսելի եղաւ սուլիչի մը ձայնը փողոցին հեռաւոր ծայրէն: Պահակը:

— Տեսա՞ք,— ըսաւ պրն. Սիմոնեան տխրաբար.— դուք ի՞նչ կ'ըսէք կոր եղբայր, ես գիտեմ բրածս: Խենթ չեմ որ ոստիկանութեան դէմ կենամ: Բայց խելքիս չի պառկիր այս ժամուն...

– Բարեկամ, ոստիկանութիւնը իրաւունք ունի ամէն ժամու ուզած դուռը բանալ տալու: Մանաւանդ որ պատերազմի մէջ ենք: Վառեցէք սա լոյսը: Եկողները մեկնած են արդէն, ձայն չկայ... Ջուր տեղը մսեցնել կուտաք մեզ... Ջուրի խողովակի աղմուկ է... Չէ՞ք լսեր...

— Ո՛չ, կը սխալիք, պրն. Ծովիկեան,— ըսաւ Տիկ. Սիմոնեան,— կեցած են դուռին ետեւ... Կազին հոտը չէ՞ք առներ...

Պրն. Սիմոնեան որոշեց փակել պատուհանը: Վերադարձաւ: Այսպէս աւելի լաւ էր: Հաստուրաց: Մտածեց բարձրաձայն: Ականջը լարեց.

— Կազի մազի հոտ չկայ...

Քիչ քիչ եկաւ այն համոզման թէ իրապէս ջուրի խողովակէ մը կուգար աղմուկը: Իր համոզումը կատարեալ եղաւ պահ մը վերջ: Կապարէ խողովակը ուժգնօրէն կը ցնցուէր, կը ճռնչար:

Անսահման յոյս մը շողաց պրն. Սիմոնեանի դէմքին: Շէնքին մէջ արթուն մէկը կար, ուրեմն: Հաւանաբար Մատամ Հանրիէթը: Աղմուկը կուգար երկու յարկ վերէն:

Իրաւունք ունէր պրն. Ծովիկեան: Ոչ մէկ շշուկ դրան ետեւ: Ոչ մէկ շարժում: Ոչ մէկ հոտ: Անմիջական անդորրութիւն մը ողողեց իր հոգին: Յայտարարեց.

— Նստեցէք, պրն. Ծովիկեան: Եկողները յոյսերնին կորած՝ գացին: Նստեցէք էֆէնտիս նայինք: Ազատեցանք...

Տիկ. Սիմոնեան երկար հառաչ մը արձակեց: Պարպեց թոքերուն մէջ կուտակուած վախը: Պարպեց սիրտը, որ սկսաւ բնական կերպով գործել: Իր վստահութիւնը կուգար ամուսինէն:

— Շատ վախցայ,— խոստովանեցաւ ան ժպտելով:

— Վախնալու բան մը չկար,— նկատել տուաւ ամուսինը,— այս տեղ օրէնք կայ: Պարտաւոր չէի դուռը բանալու: Ի՞նչ գիտնայի թէ ո՞վ էին եկողները: Անցեալները, Կարպիս կ'ըսեն մէկը կայ, դուռը բացեր է: Գողերը ներս մտեր են, եղածը չեղածը կողոպտեր են: Հախ է թէեւ... ճաշ չէր ուտեր որ դրամ չծախսէ... Անանկ հէրիֆ մըն էր, որ մարդու սանթիմի մը օգտակարութիւն չունէր: «Ծօ, Կարպիս, քանի մը հարիւր ֆրանք տուր, որբի մը համար է» կ'ըսէի... «Որբ մըն ալ ես եմ» կը պատասխանէր:

Պրն. Սիմոնեան սկսաւ հետզհետէ բարձրացնել ձայնը եւ խնդալ, եւ քաջութիւն ցոյց տալ եւ հանդարտեցնել կինը.

— Ես հոս կեցած եմ: Դուն ինծի նայէ: Ղուկաս կ'ըսեն ինծի: Անանկ, այդ եկողները գիտեն զիս: Թուրք ոստիկանները իմ հայխէս չեկան, ո՛ւր մնաց ֆրանսացի այս աէրաէմները: Շատ շատ քանի մը հազար ֆրանք պիտի դնէի ձեռքերնին եւ շնորհակալ ըլլալով պիտի երթային: Փարա ըսէ դուն այս երկրին մէջ: Մարդիկ իրենց կիներն ալ կը ծախեն...

Ու խնդաց: Ելաւ ածուխ լեցուց վառարանին մէջ: Փակեց խոհանոցին պատուհանը: Բուրդէ բաճկոն մը բերաւ որ կինը հագնի:

Տէր եւ Տիկին Սիմոնեանները ատենէ մը ի վեր չէին տոկար ցուրտին: Անոր համար ալ դուրս չէին ելլեր: Մարդը գործի չէր երթար ձիւն տեղալէն ի վեր: Փողոց չէր ելլեր: Ոչ ալ կինը: Տան վարձակալները կ'ընէին գնումները: Ածուխ ալ կը ճարէին: Պրն. Սինամեան բուռով դրամ կուտար: Ածուխի եւ ուտելիքի սակաւութեան այդ օրերուն կը գտնէր ամէն ինչ այդ դրամին շնորհիւ:

— Ժամը դեռ նոր տասնըմէկը զարկաւ,— ըսաւ ան,— նստեցէք պրն. Ծովիկեան, դեռ տաքն ունինք: Կը ցաւիմ որ այս խայտառակութիւնը պատահեցաւ: Տաք սուրճ մը խմենք...

Մտաւորականը, թէեւ մասամբ հանդարտեցած, բայց կը պահէր իր վրդոված դէմքը: Հեգնելու եւ դատապարտելու մեծ փափաք մը ունէր: Իր ջիղերը ցնցուելու կարօտ կը զգային, խաղաղելու համար: Բայց կը զսպէր ինքզինքը: Կը մնար միշտ քաղաքավար:

Պրն. Սինամեան կը ձգտէր բուժել իր ձգած դէշ տպաւորութիւնը: Արդարացնել իր գործառնութիւնը: Գովել երկիրը, որուն կը պարտէր իր երջանկութիւնը եւ որուն հանդէպ եղած էր միշտ առատաձեռն: Հարիւր հազար Ֆրանքի նուէր մը ըրած էր կառավարութեան: Պրն. Ծովիկեան կ'ընդունէր այդ բոլորը, բայց պէտք էր դուռը բանալ: Ոստիկանութիւնը շատ աւելի խիստ պիտի ըլլար իրեն հանդէպ, պրն. Սինամեան յախորդաց.

— Ես վաղը կը կարգադրեմ: Կոմիսարը իմ բարեկամս է, քիլօ մը կարագ կը տանիմ, կը դնեմ սեղանին վրայ, ամէն ինչ կը վերջանայ...

Պրն. Ծովիկեան նայեցաւ ապշութեամբ: Ֆրանսական կառավարութեան պաշտօնեայ մը կաշառե՞լ կարագով: Իրապէս որ տարօրինակ ժողովուրդ էր իր ժողովուրդը: Կը գռեհկացնէր ամէն գեղեցկութիւն:

Կը խօսէր պրն. Սինամեան: Կը ջանար ցոյց տալ հոգիի անդորրութիւն մը որ կը պակսէր իրեն: Վտանգը անցած կը համարէր, բայց գալիքը անորոշ էր: Տուրքի պաշտօնէութիւնը իր քիթը պիտի կոխէր: Առաւօտ կանուխ պէտք էր վազել իր հաշուակալին քով, բացատրել, հերքել հաշուետոմարները... Իսկ ձիւնը, ցուրտը... Այս ի՞նչ անտանելի պատուհաս էր...

Պրն. Սինամեան յոյսի ուրիշ աղբիւր մըն ալ ունէր՝ եկեղեցին: Այր եւ կին, երբ օդը լաւ կ'ընէր, անոնք կ'երթային ժամ մը վառել, աղօթել իրենց գործին յաջողութեան եւ երջանկութեան, խօսիլ քանի մը բարեկամներու հետ, ցոյց տալ իրենց գոյութիւնը: Պրն. Սինամեան կ'երեւար աջ ու ձախ նետած իր դրամովը: Կինը, որ կծծի էր, երբեմն կ'ուզէր իր արդուզարդովն ու գոհարներովը: Տէր եւ Տիկին կը յիշէին եւ կ'երգէին ատեն ատեն շարականի մը քանի մը տողերը: Կը համբուրէին խաչ ու աւետարան ու վարդապետի ձեռք: Այս էր իրենց հաւատքին հորիզոնը: Բայց Աստուած գոհ էր անոնցմէ, աւելին չէր ուզեր: Եւ միշտ բարի էր անոնց հանդէպ: Տէր եւ Տիկ. Սինամեանները գիտէին, որ ան պիտի փրկէր զիրենք միշտ ամէն նեղութենէ:

— Սուրճին ջուրը կազին վրայ դիր, հայտէ՛ պէպէքս,— պոռաց պրն. Սինամեան քաջաբար,— թէթեւ սուրճ մը դէշ չ'ըլլար խաւնաբին վրայէն... Սա հաստ մուճակներս ալ բեր, ոտքերուս մէջ պաղ մը կը զգամ... Սա խօսնակին ձայնը լսենք...

Շեշտը նետեց խաւնաբին վրայ, որովհետեւ հրաշք մըն էր ան անանկ օրերուն, երբ ամէն ինչ դժուար էր ճարելը: Պրն. Ծովիկեան պէտք չէ անտեսէր այդ կէտը: Հրաշալի ճաշ մը տուած էր իրեն: Թերեւս ան իրմէ շատ հարուստներու տունը անգամ տեսած չէր նման սեղան մը, ուր ոչ մէկ բան կը պակսէր: Հաւկիթ, ապուխտ, օղի, ձիթապտուղ, զանազան պանիրներ, հնդկահաւ, փիլաւ եւ հրաշալի նարինջներ: Բոլորն ալ անգտանելի եւ առատ... Խեղճ մտաւորականը կեանքին մէջ տեսած չէր այս բաները:

Եկաւ սուրճը: Տիկ. Սինամեան ափսէին մէջ բերաւ նաեւ բամբասանք: Կը սիրէր քննադատել: Իրենց սպասարկող Ֆրանսացի կիները սուրճ եփել չէին գիտեր եւ ինք էր ատոր մասնագէտը: Պիտի հաւնէ՞ք արդեօք պրն. Ծովիկեան: Տիկ. Սինամեան կ'ուզէր նոյն ատեն մնալ համեստ: Ամուսինը յարձակեցաւ կլոր ու խոշոր կարկանդակի մը վրայ: Դանակը խրեց անոր մէջ: Զայն վերածեց եռանկիւն շերտերու: Խոշոր կտոր մը դրաւ մտաւորականին առջեւ։ Ինք ալ առաւ մատներով մաս մը։ Կուլ տուաւ զայն երկու անգամէն։ Լզեց շրթները։ Կինը յուզուեցաւ.

— Ղուկա՛ս...

Մարդը հասկցաւ.

— Եթէ բժիշկին նայիմ, անօթի պիտի պառկիմ... Ո՞վ մտիկ կ'ընէ անոր...

Արգիլուած էր իրեն շատ ուտել։ Արիւնը առատ էր, կրնար խեղդել զինքը օր մը։ Նիհարնալու փոխարէն, անոնք, այր եւ կին ճարպ կապած էին պատերազմի ընթացքին։ Երբեք այսպէս կերած չէին։

Շատակերութիւնը ամօթ կը համարուէր պատերազմէն առաջ։ Բայց ուտելիքներու սակաւութենէն ի վեր ամէն մարդ ուտելու մասին կը խօսէր։ Ամէն ոք կարելի եղածին չափ կ'ուտէր։ Այր ու կին վարժուած էին այդ հոգեվիճակին։ Իրենց գլխաւոր հաճոյքն էր ուտելը։ Բայց տան բժիշկը օր մը արգիլած էր իրենց այդ որկրամոլութիւնը։ Որովհետեւ քանի մը ամիսներ առաջ վէրքեր յայտնուած էին պրն. Սինամեանի մարմնոյն ու դէմքին վրայ։

— Թո՛ղ, ըսած էր բժիշկը, Ֆօշօ՛Ա, ձեռքը զարնելով հայուն խոշոր փորին, քիչ մը քիչ չուտէ՞ք...

Թնդացած էր նաեւ ինքը այս յայտնութենէն, ինչպէս եւ կինը՝ որ կ'ընկերանար միշտ ամուսինին։

Ամուսին եւ կին միշտ միասին կ'երթային։ Մարդը նախանձոտ էր։ Երբեք կինը առանձին չէր ճամբեր բժիշկին։ Վախկոտ էր հիւանդութեանց առջեւ։ Կ'ուզէր միշտ, որ կինը ընկերանար իրեն։ Անոր քաջալերութիւնը անհրաժեշտութիւն մըն էր։ Այդ նախանձը չէր ծածկուեր։ Պրն. Սինամեան խիստ օրէնքներու կ'ենթարկէր կինը։ Օրինակ, դուռը պէտք չէր բանար երբ առանձին էր տան մէջ։ Փողոցը՝ այր մարդու պէտք չէր նայէր։ Առանձին սինեմա պէտք չէր երթար եւ, եթէ ընկերանար անոր, այնպէս մը կ'ընէր որ Տիկ. Մարգրիտը չնստէր այր մարդու մը քով։ Հակառակ պարագային ժապաւէնէն ալ կը հրաժարէր։ Ու չէր ծածկուեր նաեւ վախը։

Պրն. Սինամեան՝ գիշերները անպայման իր կնոջ ընկերակցութեամբ դուրս կ'ելլէր, թէեւ քիչ անգամ կը պատահէր ասիկա իրենց։ Սինեմա երթալու համար ան պէտքը կը զգար վարձակալի մը ընկերակցութեան եւս։ Երեքով աւելի ապահովութիւն կար։

Թնդացեր էր պրն. Սինամեան։ Ուտելը հպարտութեան աղբիւր մըն էր, ունեւորի նշան մը։ Կծծի չէր շատերուն պէս։ Կը ճարէր։ Ճարպիկ էր։ Պրն. Սինամեան կը ճարէր այդ բոլոր ուտելիքները առանց հերթի կենալու։ Հեռուէն աչք մը կը նետէր խանութպանին։ Ու ասիկա կը հասկնար։ Կը պատրաստէր իրեն ծրար մը։ Պրն. Սինամեան, երեկոյեան, մարդ չեղած ատեն կ'երթար կ'առնէր զայն։ Կը վճարէր առանց հաշուելու։ Ծրարը կը բռնէր բարձր, մանաւանդ երբ կ'անցնէր իր փողոցէն։ Կ'ուզէր ցոյց տալ զայն։

Պրն. Սինամեան վրէժ մըն էր, որ կը լուծէր կեանքին դէմ։ Մեծցած էր որբ, զրկուած հայրենական ժառանգէ անբարեխիղճ ազգականի մը կողմէ։ Չունենալով ուսման փափաք, երազած էր միշտ դուրս ելնալ որբանոցէն։ Օր մը վռնտած էին զինք։ Անառակ էր։ Տխմար չէր։ Կը պարծենար յիշելով իր անառակութիւնները։ Պրն. Սինամեան այդ օրէն գտած էր իր ճամբան, արհեստը։ Բայց հազիւ հազ կ'ապրէր։ Կուգայ Փարիզ։ Դարձեալ նեղ տարիներ։

Պրն. Սինամեան վրէժ կը լուծէր ուտելով։ Բայց մահուան վտանգը կեցած էր իր դէմ։ Սարսափեցաւ զոհել կէս գիշերի ընթրիքը, զոր անոնք, այր ու կին կ'ընէին քուն մը քաշելէ վերջ։ Սարսափեցաւ նաեւ հրաժարիլ միսէն...

— Պէպէքս, սա շիշը բեր տեսնենք, հարբուխին առաջքը առնենք։

Սրուակ մըն էր զոր Տէր եւ Տիկ. Սինամեան կը հաւատային ամէն անգամ որ պզտիկ պաղառութիւն մը կ'ունենային։ Հրամցուցին զայն նաեւ պրն. Ծովիկեանին որ, առ ի քաղաքավարութիւն, չմերժեց։ Տէր եւ Տիկ. Սինամեանները նկատեցին այդ պահուն թէ անոր օձիքին վրայ ինկած էր կարկանդակի փշուր։ Երկուքն ալ իրարու նայեցան։ Աղտոտ էր մտաւորականը։ Մաշած ու կեղտոտ էին անոր հագուստները։ Տիկ. Սինամեան իր կիսարաց աչքերով սկսաւ քննել անոր ձէթոտ բաճկոնը։

Խեղճ մարդ... Այդ պահուն քերուըռուք մը դղաց կոկորդին մէջ: Հիւանդութեան մը ազդանշա՞նը: Ամուսինը թելադրեց բան մը կապել կոկորդին: Կինը հաստատեցաւ: Չէր ուզեր հակառակիլ անոր կամքին մարդու ներկայութեամբ, վախնալով անոր անպատկառ արտայայտութիւններէն որոնք կրնային նսեմացնել զինքը:

Զգայուն էր Տիկ. Մարգրիտի կոկորդը: Երգչուհիի մը կոկորդն էր, թէեւ տասնըհինգ տարիներէ ի վեր դադրած էր երգելէ: Երիտասարդութեան՝ քանի մը անգամներ բեմ բարձրացեր էր: Երգած ու նուագած էր դաշնակի վրայ: Պահած էր տակաւին սուրբ մասունքներու պէս այն յայտագիրները որոնց մէջ տպագրուած էր իր անունը Ֆրանսերէն եւ Հայերէն խոշոր տառերով: Կը յիշէր տակաւին օփերայի կտորներ եւ զանազան էթիւտներ: Իր մատները կը փնտռէին երբեմն տակաւին դաշնակի մը ստեղները: Դաշնա՛կ...

Պրն. Սինամեան կ'ատէր երաժշտական այդ գործիքը: Դէմ էր նոյնպէս ջութակին: Մէկ խօսքով՝ դէմ էր եւրոպական երաժշտութեան: Ու ամուսնութենէն անմիջապէս վերջ ըսած էր.

— Ինծի նայէ, աղջիկս, ալ էրիկ գտար, դաշնակ մաշնակ ծալլէ մէկ կողմ դիր այլեւս... Վազ անցիր սա օփերաներէդ ալ, շարքի մը գիտես նէ ան երգէ, ատկէ համ կ'առնեմ...

Մեղք մը, սրբապղծութիւն մը համարած էր Տիկ. Մարգրիտ ամուսնոյն այս դիտողութիւնը: Լացած էր նոյնիսկ: Տգէտ մը որ ոտքի տակ կ'առնէր իր դաստիարակութիւնը: Տարիներով Սէօներու վարժարան գացած էր: Ամուսինը ատոր վրայ ալ վարագոյր մը նետած էր: Իր քաղաքավարութիւնն ալ ծաղրած: Վակնէրն ու Պէթհովէնն ալ հեղնած...

— Կնի՛կ, վազ անցիր սա խայլայֆ ձեւերէդ, ո՞ւրկէ սորվեցար... Հօ՞րդ, մօ՞րդ տանը...

Իր ծնողքին ուղղուած անարգանք մըն ալ կար բնական է այս խօսքին մէջ: Արդարեւ, Պոլսէն Փարիզ անանկացած այդ հարուստները արհամարհելի տարրեր եղած էին պրն. Սինամեանի համար, որովհետեւ անոնք չէին հանած իրեն եւ իրենց աղջկան աւելի լաւ ամուսին մը երազած էին: Բայց պրն. Սինամեան թաղած էր զանոնք ետեւէ ետեւ շուքով ու փառքով եւ ամէն տարի իր կնոջ հետ կ'այցելէր անոնց գերեզմանները:

Տիկ. Սինամեան, անցնելէ վերջ առաջին բախումները, համակերպած էր: Հրաժարած էր դաշնակէն եւ օփերայէն: Սորված էր քանի մը շարքիներ, հաճոյք պատճառելու համար ամուսինին: Ճկուն կին: Կը գոհանար ատեն ատեն ըսելով.

— Ղուկա՛ս, չես հասկնար. եթէ հասկընաս, պիտի սիրես եւրոպական երաժշտութիւնը...

Ամուսինը կը ցնցուէր: Ինչպէ՛ս թէ չէր հասկնար: Կնոջ այս դիտողութիւնը կը մղէր մարդը զայրանալ: Ու կնոջ շուքին տակ ան սորված էր կարգ մը անուններ — Վակնէր, Պէթհովէն, Շոփէն եւայլն... Երբեմն համարձակօրէն կը ճախրէր արուեստի ոլորտներուն մէջ, կարծիքներ կը յայտնէր: Մարդիկ պէտք է գիտնային թէ անբան հարուստ մը չէր ինք, այլ զարգացումի տէր նաեւ: Իրմէն կ'աւելցնէր որբանոցէն միտքը մնացած քանի մը Հայ եւ Ֆրանսացի գրագէտներու անուններ: Այո, այդ բոլորը գիտէր: Քանի մը տաղաւորներ ալ դոց գիտէր: Մեծ բա՞ն մըն էր զարգացումը: Քանի՛ գրողներ գրպանէն կը հանէր: Նոր Փարիզ հասած օրերուն երկու երեք բառ հազիւ Ֆրանսերէն գիտէր: Օրաթերթ եւ վէպեր կարդալով, հիմա կը խօսէր Ֆրանսերէնը եւ գրական լեզուն: Բառեր կը գործածէր զորս Ֆրանսացիներն անգամ չէին գիտեր:

Անշուշտ մեծ համարում մը: Մակերեսային: Որովհետեւ այդ բոլորին տակ կը մնար արթուն Պոլսոյ Ջրհանկիրը, անջնջելի: Դրամի պաշտպանութիւն էր: Գրող մը, մանաւանդ հայ գրող մը ողորմելի թշուառ մըն էր, երազող մը, անօթի մը: Եւ ազգին հարուստներուն ուսին բեռ մը: Ազգին դժբախտութեան պատճառը: Շատ հաւատք չունէր անոնց զարգացումին ու խելքին: Պրն. Սինամեան հայ առեւտրականները աւելի ողջամիտ կը գտնէր: Անոնք շատ աւելի յստակ կը տեսնէին ազգին վերելքը քաղաքականութիւնը քան թէ մտաւորականնեըր որոնք ժողովուրդը առաջնորդեցին դէպի ջարդ ու գաղթ: Ի՞նչ պէտք կար գլուխ յոգնեցընել եւ պարապ բաներու ետեւէ վազել: Կեանքը ուտել եւ զուարճանալ է:

Ասիկայ ամէնէն կարեւոր բանն է: Եւ պրն. Սիմոնեան, ինչպէս եւ կինը համաձայն էին այս կէտին վրայ: Կը սիրէին ուրախութիւնը: Չէին կարդար տխուր գիրքեր: Կը խուսափէին խրթին գրութիւններէ: Կը հետաքրքրուէին միայն ուրախ շարժանկարներով: Անտանելի էր ինչ որ տխուր էր: Մարդ խենթ պէտք ըլլայ լալու համար: Կը զգուշանային արցունք թափելէ: Ուրիշը թշուառ է եղեր: Իրենց ի՞նչ: Իրենք կ'երթային տեսնել միայն վօտըվիլներ: Պրն. Սիմոնեան մեծ հաճոյք կ'առնէր այդ ներկայացումներէն, ուր այրը կը խաբէր կինը: Հաճոյք կ'առնէր գռեհիկ սրամտութիւններէն: Անտանելի կը գտնէր ինչ որ խրթին էր ու ողբերգական: Ան կնոջ թեւէն բռնած ու զուրս քաշած էր օր մը Համլէթի ներկայացումէն:

— Աս ալ խաղ մէյի կը ներկայացնեն:

— Ղուկա՛ս, աշխարհի ամէնէն մեծ փիէսներէն մէկն է: Շէյքսփիրինն է...

— Շէյքսփիրը ո՞վ է...

Պրն. Սիմոնեան մեծ հաճոյք կ'առնէր նաեւ Արշին–Մալ Ալանէն, զոր կը ներկայացընէին հայ դերասաններ: Խաղը այդ էր: Դերասանները առոյգ էին: Հարազատ էին: Կը խօսէին իր սրտին: Ու ան այս վիժածները որ կը շահագործէին հայ հասարակութիւնը կը դասէր Ֆրանսացի դերասաններէն աւելի վեր:

Տէր եւ Տիկ. Սիմոնեան կը զգուշանային հիւանդանոցի առջեւէն անցնելէ: Եթէ մահ պատահէր իրենց տան քովերը, անոնք, քանի մը օրուան համար տարբեր թաղի մը մէջ սենեակ մը կը վարձէին, չտեսնելու համար այդ տխուր տեսարանը: Կը զգուշանային սրճարաններու գաւաթներէն: Կը ճամբորդէին միշտ առաջին կարգով: Կը կենային աղքատ մարդերէն հեռու: Յարաբերութիւն կը մշակէին միայն բարձր դասու հետ:

Կը սիրէին կեանքը ու կ'ուզէին մնալ երիտասարդ: Սուտին կը պարէին ու կ'երգէին: Իրենք զիրենք կը համարէին պատանիներ: Պիտի ապրէին կարծէք յաւիտենապէս: Կը ձգտէին ըլլալ ժամանակին ոգին. Կինը կը ջանար նմանիլ Փրանսուհիներուն: Մարդը էլէկանս մը կը դնէր իր շարժումներուն ու խօսքերուն մէջ: Կնամեծար: Քաղաքավար: Տիկ. Մարգըրիտ վարժած էր նոյնիսկ Ֆրանսերէն սիրային բառեր գործածել.

— Մօն շէր, մօն շէրի... Մօն փըթի:

Բայց մարդը հաճելի չէր գտած զանոնք կնոջ բերնին մէջ:

— Քեզի չեն վայլեր այդ խօսքերը,— ըսած էր ան կտրուկ կերպով:

Տիկ. Մարգըրիտ ամէն ճիգ կը թափէր՝ ամուսինը իրեն կապելու համար: Անոր շուրջ դարձող Փրանսուհիներ կ'երեւակայէր միշտ: Մարդը սնունդ կուտար անոր այդ երեւակայութեան ուզելով ինքզինքը անցընել կիները գլխէ հանողի մը տեղ, թէեւ, առանց ատոր ալ, Տիկ. Սիմոնեան պիտի չհրաժարէր իր երեւակայութենէն: Ամուսինին վերապահելով անպարկեշտութիւն մը, ան կը խորհէր քալել դարուն ոգիին հետ: Հարուստ ու բարձր տիկիններուն ճակատագիրն էր ընդունիլ իրենց ամուսնին հոմանուհիներու գոյութիւնը:

Պրն. Սիմոնեան, սակայն, սիրելով հանդերձ կիները, կանգ կ'առնէր մեղքի ճամբուն վրայ, եւ կամ կիներն էին որ կանգ առնել կուտային իրեն: Իր խոշոր փորն ու կարճ հասակը չէին համապատասխաներ իր Ժէօն փրըմիէի ձգտումներուն: Անոնք իր դրամը կ'ուզէին: Ու պրն. Սիմոնեան գիտէր, չէր տար այդ դրամը: Կին, թղթախաղ, ձիարշաւ դատապարտելի մոլութիւններ էին շատ մը բաներու մէջ առատօրէն ծախսող այս մարդուն համար: Կը վախնար նաեւ հիւանդութիւններէ: Այս մարդը բարդութիւն մըն էր այս կէտին վրայ: Կինը պահանջ մը չէր իրեն համար: Իր մարմինը խելօք էր: Բայց վաւաշը հանդիստ չէր ձգեր իր ուղեղը: Ցաւ մըն էր իրեն համար զրկուիլ այդ հաճոյքէն ու կը նախանձէր անոնց, որ կը վայլէին զայն: Իր փնտռածը արկածախնդրութիւն մըն էր: Բայց հազիւ ճամբայ ելած՝ կը նահանջէր եւ աւելի քան երբեք հաւատարիմ՝ կը վերադառնար իր պումպուլին քով, կը դրկէր զայն:

Մարտական երեւոյթով այս մարդը կակուղ մըն էր, փափկամիտ, կարօտ յենարանի մը: Տան մարդ եւ երազող՝ դրամ շահելու իր ուսանողական նկարագրին տակ: Երբեք անոնցմէ՝ որ կը վազեն արկածներու ետեւէ եւ կը վտանգեն իրենց գլուխն ու կեանքը:

Ան հարստացած էր պատերազմին շնորհիւ, ինչպէս շատ մը անմիտներ հարստացած էին: Ու պրն. Սինամեան կ'օրհնէր զայն, այդ պատերազմը, բացի այն ժամերէն, երբ թշնամի օդանաւերը կրակ կը թափէին երկինքէն: Աճապարանքով ու դողով, երբեմն ետեւ ձգելով դանդաղաշարժ ու սարսափահար կինը, որ կ'իյնար յաճախ երեսի վրայ, պրն. Սինամեան կը վազէր մառան, հայհոյելու համար գերմանացիներուն, որ պատճառ եղած էին այդ պատերազմին:

— Եղբա՛յր, խենթ է մարդկութիւնը, ի՞նչ պէտք ունի կռուելու... մարդիկ թող նստին, ուտեն հանգիստ մը...

— Գաղափարը հացէն կարեւոր է,— կ'առարկէր զարմեալ պրն. Ծովիկեան:

— Պարապ բան,— կ'ըսէր կրկին պրն. Սինամեան:

Ճաշած, կշտացած էր մտաւորականը: Կը խորհէր մեկնիլ: Ելաւ ոտքի, խոնարհեցաւ հեզ ժպիտով մը որ հեգնանք մըն էր նոյն ատեն.

— Խորին շնորհակալութիւններս, տիկին, ձեր հոյակապ սեղանին համար...

— Կը չափազանցէք պրն. Ծովիկեան, համեստ ճաշ մըն էր...

Ամուսինը յօնքերը շարժեց: Ի՞նչպէս թէ համեստ ճաշ մը: Ալ ի՞նչ կ'ուզէին: Բայց ըմբռնեց իսկոյն կնոջ նրբամտութիւնը: Այս՛ քաղաքավարութիւն: Աւելցուց իր կողմէ.

— Կը չափազանցէք, պրն. Ծովիկեան: Հայ մտաւորական մը եւ այն ալ ձեզի պէս մտաւորական մը շատ աւելիին արժանի է... Դարձեալ հրամեցէք... Դժբախտաբար, այդ հէրիֆները *խառնեցին մեր քէֆը...*

— Ընդհակառակ զմայլելի էր,— շարունակեց պրն. Ծովիկեան:

— Գոհութեան արժանի է,— վրայ բերաւ տանտէրը խնդալով... Ֆրանսացի մը խաբեցի, մէկ խօսքով՝ հինգ հարիւր Ֆրանք առի ձեռքէն: Հայերուս հետ չեն կրնար չափուիլ այս ակրաւմները (Ֆրանսացիները) վաճառականութեան մէջ: Թաճ էի *Հրեայ չկայ հրապարակին վրայ, Հայը աւելորդին աստուածն է:*

Պրն. Սինամեան կը սիրէր խօսիլ: Հպարտ էր ատով: Առիթը կը փաստէր իր խելքին մեծութիւնը:

— Մեկնեցա՞ն արդեօք,— հարցուց կինը կասկածով:

Հէլպէթ տէ՝ *մեկնեցան:*

— Կ'ենթադրեմ,— ըսաւ պրն. Ծովիկեան, բայց մտահոգութիւն մը տարածուեցաւ իր դէմքին վրայ:

Պրն. Սինամեան գուշակեց անոր վրդովումը եւ բացատրեց.

— Ի՞նչ կ'ըսէք, աղբար... քսանըդ ժամ անցաւ: Ես հաշուեցի: Եկողը խենթ չէ որ սպասէ դուռին ետեւ: Ձայն մը կը հանէր: Եկողը հասկցաւ թէ՝ որո՞ւ հետ է գործը... Ինծի Սինամեան կ'ըսեն...

— Արդեօք քանի՞ հոգի էին:

Կնոջ այս հարցումը լռութիւն մը առեղծեց: Պրն. Սինամեան քաջութեամբ պոռաց.

— Քանի հոգի կ'ուզեն՝ թո՛ղ ըլլան... Գացին, դուն անոր նայէ՛...

— Սխալ մը գործուեցաւ, պէտք է բանայիք դուռը,— նկատել տուաւ մտաւորականը, ու եթէ բան մը կար կարգադրէիք, աւելի լաւ կ'ըլլար որ իմ ներկայութեամբս ըլլար: Մսիօ Ժիլ, քաղաքապետը, իմ լաւագոյն բարեկամս է, ազնիւ Ֆրանսացի մը, զմայլելի մարդ մը եւ նոյն ատեն հայասէր անձնաւորութիւն մը, որ բազմաթիւ անգամներ, իմ խնդրանքովս, զոր երբեք չէ մերժեր, օգտակար հանդիսացած է մեր ժողովուրդին...

Այս խօսքերը յուսադրիչ էին տէր եւ տիկին Սինամեաններուն համար, որ մտահոգ էին իրենց հոգիին մէջ: Սիրով պիտի ուզէին պահել մտաւորականը, եթէ աւելորդ մահճակալ մը ունենային: Կը վախնային դուռը բանալ: Եւ պիտի վախնային անոր մեկնումէն վերջ ալ, չկրնալով քնանալ: Բայց պրն. Սինամեան չէր ուզեր այդքան տկարութիւն ցոյց տալ: Մտաւորականին ներկայութիւնը կը նեղէր զինք:

Եւ ահա, երբ անոնք նրրանցքին մէջ էին, բռունցքը իջաւ կրկին դուռին, ահաւոր, կատաղի, սպառնական: Արտերը փրթան: Դուրսէն լսելի եղան քանի մը ձայներ, զայրագին, անհական, բիրտ.

— Պիտի հպատակի՞ք, վերջապէս, ոստիկանութեան հրամանին:

— Անպարկեշտ օտարականներ... կեղտոտ մէթէքներ...

— Այստեղ Ֆրանսա է...

— Վաղն իսկ պիտի վտարուիք այս երկրէն...

Հողի առնելու նման բան մըն էր Ֆրանսայէն այս վտարումը: Այր եւ կին, թոյլ այդ երկու ամուսինները, ջլաթափ եղան իսկոյն: Այլեւս դիմադրելու ոչ մէկ կարողութիւն կը մնար իրենց մէջ: Սփիւռքի մղձաւանջն էր այդ վտարումը: Դառն այլ խոժոռ, բարկացած՝ պրն. Տովիկեան տուաւ վերջին հարուածը:

— Բացէք, մօն չէ՛ր,— պոռաց ան Ֆրանսերէն, պրկուած՝ ելեկտրական թելի մը պէս լեցուն զօրութեամբ մը, որ հաւատք էր, յոյս, կորով եւ ազգային արժանապատուութիւն...

Ու պրն. Սինամեան բացաւ դուռը մեքենաբար: Ոստիկան մը եւ քաղաքական հագուստով երկու հսկայ մարդեր ներս խուժեցին, զէնք ի ձեռին, փակեցին դուռը եւ հրամայեցին.

— Թեւերը վե՛ր:

— Ինչո՞ւ համար,— հարցուց պրն. Սինամեան՝ ապշահար ու դողդոջ:

— Ձեռքերը վե՛ր,— պոռաց կրկին ոստիկանը, զէնքը աւելի մօտեցնելով պրն. Սինամեանին, որ համակերպեցաւ:

Ու երբեք այսքան մօտ չէր եղած մահուան: Բայց եւ այնպէս, ան կ'ուզէր արդար երեւալ: Եւ ատոր համար պահեց իր ապշած մարդու արտայայտութիւնը: Վտանգի մէջ ապուշ ձեւանալը լաւ արդիւնքներ տուած էր մինչ իրեն: Կնոջ աչքերը դուրս կ'իյնային կոպերէն: Կը շողային վախէն:

— Պարոննե՛ր, քառասուն տարիներէ ի վեր Ֆրանսա կ'ապրիմ,— ըսաւ պրն. Տովիկեան,— երբեք չեմ հանդիպած նման պաշտօնեաներու...: Դուք սխալ կարծիք ունիք մեր հայերուս մասին: Ես եւ իմ հայրենակիցներս մեր հայրենիքին չափ կը սիրենք այս երկիրը: Խաչակրութեան օրերէն ի վեր Ֆրանսացի պատուական ժողովուրդը կը նկատենք մեր աւագ եղբայրները: Մեր վերջին թագաւորը, Լուսինեան, Ֆրանսացի մըն էր: Մենք մեր արիւնը տուած ենք այս երկրին պաշտպանութեան համար: 1914-ը եւ այս պատերազմը խլած են մենէ բազմաթիւ զոհեր, որոնք յօժարաբար ընդունած են մահը համաշխարհային լոյսը եղող այս ասպնջական Ֆրանսայի համար: Հարկ չկայ զէնք բարձրացնելու մեր վրայ: Մենք կը խոնարհինք առանց այլեւայլի անեղծոյն օրէնքներուն առջեւ... Թոյլ տուէք, որ ներկայացնեմ ես զիս: Նախագահը Ֆրանքօ-Արմէնիէն միութեան, որուն նպատակն է սերտ մերձեցում մը յառաջ բերել Արեւմուտքի եւ Արեւելքի այս երկու քաղաքակիրթ ժողովուրդներուն միջեւ: Ձեր այս վարուելակերպը վիրաւորական է եւ անվայել մեծ ազգի մը պաշտօնէութեան համար: Ֆրանսական ոստիկանութիւնը ճանչցուած է իբրեւ աշխարհի ամէնէն քաղաքավարը, ամէնէն բանիմացն ու մարդկայինը...

— Բաւակա՛ն է...

Մտաւորականը լռեց: Կախեց գլուխը: Չէր ըմբռներ այսքան անպատկառութիւն: Եկաւ այն համոզման թէ ոստիկանական մրուրին հետ էր իր գործը: Բայց այս քանի մը դահճիկ անձերը չէին որ պիտի փոխէին իր ամրախարիսխ կարծիքը երկրին հանդէպ:

Մարդուն սաստը, սակայն, սարսափեցուցած էր Տիկ. Սինամեանը: Փլած էր վերջին յոյսը: Սկսաւ ժպտիլ: Իր վախկոտ այդ ժպիտը թերեւս գործէր հրաշքը: Կնոջ մը ժպիտը կախարդանք մըն էր յաճախ, որուն կ'ենթարկուէին այրերը:

Պրն. Սինամեան կ'ըմբռնէր թէ գործը բիրտ մարդոց հետ էր: Առաջին փափաքն էր մեղմութիւն տեսնել անոնց մէջ:

— Ի՞նչ պէտք կայ խստութեան, պարոններ, եկէք, նստեցէք, գաւաթ մը գինի խմեցէք... ճաշեցէք...

— Ահա՛, փառաւոր սեղան,— նկատել տուաւ անծանօթ այցելուներէն մէկը՝ աչք մը նետելով ճաշասրահէն ներս — կ'երեւայ թէ բանէ մը չէք զրկուիր… Եւ այս բոլորը սեւ շուկայէն անշուշտ… Հայ մը անօթի չի կրնար մնալ, այնպէս չէ՞… Ֆրանսացի չէ հայը… Ամէն օր հաւ պէտք է ուտէ…

— Ոչ ամէն օր, ներողութիւն, ոչ ամէն օր… Օրեր կան որ անօթի կ'անցընենք բոլորին պէս: Այսօր հիւրընկալութեան օր մըն է: Ձեր հարուստ չկարծէք: Բայց կը սիրեմ հիւրընկալել… Հրամմեցէք, կերէք դուք ալ… Շատ գոհ պիտի ըլլամ… Եւ միշտ կը յայտնեմ երախտապարտութիւնս: Ամէն տարի մանաւոր գումար մը կուտամ ոստիկաններու որբերուն: Կ'ուզէ՞ք ցոյց տամ թուղթերս: Ի՞նչպէս կ'ուզէք որ ապրին այդ որբերը այս օգնութեան: Բացէն ալ նուէրներ կուտամ կառավարական պաշտօնեաներու: Ի՞նչպէս կ'ուզէք, որ ապրին այդ խեղճերը: Վաստակնին շատ քիչ է… Իրաւունք ունին տրտնջալու, բայց ոչ ինծի պէսներուն դէմ… Իմ դուռս միշտ բաց է անոնց առջեւ…

Պրն. Սինամեան կը խօսէր հեզ ու անուշ ձայնով մը: Դադարով:

— Իմ դուռս միշտ բաց է, հրամմեցէք,— աւելցուց:

— Կ'երեւայ,— պատասխանեց անտանային դէմքով ոստիկանը ու բաւական ապացոյցներ տուիք մեզ… Պատրաստուեցէք, մեզի հետ քոմիսարին պիտի գաք, հոն կը բացատրէք ձեր առեւտուրին մասին… Դուք ալ, տիկին…

— Բայց, մսիէօ՛, հիւանդ եմ… բժիշկը արգիլած է ինծի այս ցուրտին դուրս ելլել…

Տիկ. Սինամեան այնքան աղաչական շեշտով մը ըսաւ այս խօսքերը որ յուզուեցաւ ամուսինը:

— Կնոջս կեանքը կրնայ վտանգուիլ պզտիկ պաղառութեամբ մը: Կը նախընտրեմ պէտք եղած տուգանքը տալ… մեզ հանգիստ ձգեցէք այս գիշեր, վաղը ձեր ուզած ժամուն կը ներկայանանք… Խօսք կուտամ: Ես խօսքիս տէրը մարդ եմ: Մենք պատուաւոր եւ պարկեշտ առեւտրականներ ենք: Հարցուցէք դռնապանին: Վարձակալներէն ոչ մէկը գանգատ մը ունի մեր մասին…

— Ո՛չ, հագուեցէք անմիջապէս եւ դրամ, հաշուետետրակ, դրամատան վերաբերեալ թուղթեր, անցագիր, արժէթուղթեր եւ գոհարներ, ամէն ինչ… Շուտ… պէտք է գաք եւ բացատրութիւն տաք…

— Դուք գութ չունիք,— շշնջաց Տիկ. Սինամեան տխրութեամբ:

Պրն. Տոմիկեան ուշի ուշով կը հետեւէր խօսակցութեան, ձեռքերը վեր: Ու իրեն կը թուէր քիչ քիչ թէ եկողները իրաւունք ունէին: Իր հայրենակիցը հաւանաբար չափազանցութիւններ գործած էր իր գործառնութեանց մէջ: Մտածեց այլեւս միջամտել: Ի՞նչպէս պաշտպանել իր ժողովուրդին այս դասակարգը, որ ագահ ու անբարեխիղճ էր եւ որ կը կոտրէր Հայութեան վարկը: Պրն. Տոմիկեան, ահա, ինք ալ կը տուժէր իր ազգին այս աներես ու վաշխառու զաւակներէն: Ստիպուած ալ էր ահա, իրրեւ կասկածելի մարդ, բարձրացնել իր թեւերը: Մէկ ձեռքին գաւազանը, միւսին գիրք մը, իր հեղինակութիւնը, Օմաժ ա լա Ֆրանս փար լէ Վօլօնթէր Արմէնիէն, պրն. Տոմիկեան, գլուխը կախ՝ բանտարկուած թռչնիկի մը պէս, կը խոկար: Իր վրդովումը չէր հասներ վախին սահմանները: Վստահ էր թէ քիչ յետոյ, Քօմիսէրին առջեւ, այդ անպատկառ պաշտօնեաները ներողութիւն պիտի խնդրէին իրմէ: Շուտով յոգնեցան, սակայն, իր բազուկները եւ զայրոյթ մը ողողեց զինք կրկին.

— Պէտք է հաստատել նախ մարդոց յանցանքը եւ յետոյ՝ նման խստութեան դիմել: Վստահ եմ թէ Ֆրանսական իշխանութիւնը նման բռնութիւն մը չէ հրահանգած ոճրագործներուն հանդէպ իսկ: Մարդկային անհատական իրաւունքներու երկիրն է Ֆրանսան:

Իր լեզուն պերճ էր, սահուն ու խրոխտ: Եկողները գիտցան զանազանութիւն մը դնել անոր եւ իր հայրենակիցներուն միջեւ, որոնց Ֆրանսերէնը հազիւ ըմբռնելի էր:

— Մոնթէ, մսիէօ լը փրէզիտան,— ըսաւ ոստիկանը՝ բանալով կառքին դուռը, երբ քանի մը վայրկեան վերջ հաւաքելով տան մէջ գտնուած դրամներն ու գոհարները, եկողները առաջնորդեցին փողոց երեք հայերը միշտ զէնքին սպառնալիքին տակ, արգիլելով խօսիլ սանդուխներուն վրայ։ Հրեցին զանոնք կառքէն ներս։

«Փրէզիտան» բառը խորապէս զգացուց հայ մտաւորականը։ Ու իր խանդը թռիչք առաւ, երբ կառքը ճամբայ ելաւ։ Պրն. Ծովիկեանի մտածումը կը սուրար կառքէն առաջ դէպի արդարութեան տաճարը։ Նստած՝ գաղտնի ոստիկանի երեւոյթով մարդուն կողքին, երկու դժբախտ պաշտօնեաներու պէս իրարու սեղմուած Տէր եւ Տիկ. Սինամեաններու դէմ, պրն. Ծովիկեան, խոկուն ու տէր իր ամբողջական կորովին, կը պատրաստէր իր ճառը։ Առած էին նաեւ իր վրայի պզտիկ գումարը, որով տան վարձքը պիտի վճարէր։ Ինչո՞ւ։ Պրն. Ծովիկեան չէր ըմբռներ... բայց վստահ էր։ Ականջներուն մէջ կը հնչէր տակաւին.

— Մսէօ լը Փրէզիտան...

Ու կառքը անցաւ մութ ու ամայի փողոցներէ։ Պատերազմը այս լոյսերու քաղաքը վերածած էր խոր վիրապի մը։ Ձիւնը կը տեղար միշտ՝ տխուր, մորթուած բադէ մը թափող փետուրներու պէս։ Կառքին մերթ ընդ մերթ յորդող լոյսին մէջ՝ անոնք կը դառնային միլիառ ցեցերու նման։ Պաղ հով մը, սահելով կառքին ճեղքերէն ներս, դանակի պէս կը խրէր Տիկ. Սինամեանի վիզին։ Կը մսէր կինը։ Ճիգ կ'ընէր զսպելու համար կզակներուն սարսուռը։ Կ'աղօթէր մտքէն։ Կ'աղօթէր ու մոմ կը խոստանար նոյնիսկ ամուսինը, որ կը վախնար խօսք ուղղել կնոջը. կը մսէր ինք ալ։ Միակ բարեբախտութիւնը այն էր, որ կառքով կ'երթար։ Հապա եթէ քալե՞լ պէտք ըլլար... Սուզուած էր մտածումներու մէջ։ Պիտի փըրկուէ՞ր զոհելէ վերջ հարիւր հազար ֆրանքը եւ նոյն արժէքով զոհարները, զոր դրած էր եկողներուն ձեռքը։ Ի՞նչ պիտի պահանջէին տակաւին իրմէ։ Պրն. Սինամեան կը վախնար սխալ տեղեկութիւններով մատնել ինքզինք։ Պիտի հանդիպէ՞ր ազնիւ պաշտօնեայի մը։ Վերջ ի վերջոյ մեծ մեղք մը գործած չէր։ Շատեր իրմէ շատ աւելի կասկածելի գործեր ըրած էին։ Բայց անշուշտ անոնք ֆրանսացիներ էին ու եթէ ինք ալ օտարական չըլլար, վախնալու բան մը չունէր...։ Պրն. Սինամեան մերթ յոյսով իր նայուածքը կը նետէր պրն. Ծովիկեանին վրայ։ «Լեզուն բերնին մէջ կը դառնայ...»

Կառքը կը սուրար առանց կանգ առնելու, ձիւնին վրայէն՝ ջուրը ինկող կրակի ձայնով։ Վայրկեանները կ'անցնէին։ Պրն. Ծովիկեան, քանի մը անգամներ իր ճառին կտորը հասած եւ իջած, նկատեր էր յանկարծ թէ ժամանակը կ'երկարէր եւ երկարելով իր թափը պիտի կոտրէր։ Անհամբերութեան նշաններ ցոյց կուտար, դժգոհ նոյն ատեն արագավազ կառքին ցնցումներէն։

Պրն. Սինամեան, որ կ'ուզէր ժամ առաջ ճակատագրին լուծումը եւ գոհ էր նոյն ատեն անոր ուշացումէն, սեւեռեց աչքերը կառքէն դուրս։ Նեղ, մթին ու աղքատ փողոցներ։ Քանի մը վայրկեան եւս, եւ ահա, կառքը սուզուեցաւ անտառէ մը ներս։ Ճերմակ, ձիւնապատ ծառերուն ամբոխը կը ցցուէր փարոսներուն լոյսին մէջ։ Պրն. Սինամեան բացաւ աչքերը։ Կը յայտնուէր ճշմարտութիւնը։ Եւ այդ յայտնութիւնը այնքան խռովեց զինք, ու իր սարսափը այնքան մեծ եղաւ, որ ան դարձաւ աջ ու դարձաւ ձախ, կառքէն դուրս նետուիլ ուզող մարդու մը պէս։ Որոշ էր իրեն այլեւս, թէ ոստիկանապետի մը առջեւ չէր, որ կը տանէին զինքը, այլ դէպի աւելի անորոշ, աւելի ահաբեկիչ անծանօթ մը։ Այդ խորհելով էր արդէն որ դուռը չէր ուզած բանալ։ Գողե՞ր։ Կը փափաքէր խօսիլ այս մասին, բայց կը վախնար որ ան՝ ինքզինքէն ելած, պիտի զգացնէր ամէն ինչ։ Բայց չէր կրնար չըսել։ Շշնջաց.

— Զգացնես. առանց մեր գլխուն խաղ մը կը խաղան կոր...

— Ղուկաս...

Այս ըսելով ոտքի ելաւ կինը։ Ու կառքին ցնցումը նետեց զինք դիմացի անծանօթին վրայ, որ վայրկենաբար հրազէնը բարձրացուց։ Լսուեցաւ արագ պայթիւն մը։ Կառքը տատանեցաւ անգամ մըն ալ։ Բոլորը ինկան իրարու վրայ։

Ու երբ Պրն. Սինամեան, կնոջ թեւէն բռնելով, ինքզինքը նետեց նստարանին վրայ, այն համոզումը ունէր թէ զարնուած էր։ Մեծ եղաւ իր զարմանքը, երբ հետզհետէ վերադարձաւ իրականութեան։ Կ'ապրէր։ Ու կառքը կը քալէր։ Ու պրն. Ծովիկեան իր անկիւնն էր, տաւերային։ Անծանօթը կը շողացնէր իր զէնքը։ Տանելով ձեռքը ճակտին, պրն. Սինամեան կը փնտռէր մատներուն ծայրովը ու քրտինքը որ կ'ողողէր այդ պահուն իր դէմքը արեան մը տպաւորութիւնը ձգեց իր վրայ։

— Մարգրի՛տ, արի՛ւն...

— Սպաննեցի՛ք,— աղաղակեց շուարած կինը, որ ուշի ուշով կը հետեւէր ամուսինին շարժումներուն, դուրսէն եկող աղօտ լոյսի մը մէջէն։

Արձակեց քանի մը այլանդակ ճիչեր։ Առաւ ամուսինը թեւերուն մէջ։ Ու ասիկա կը ձգէր իր գլուխը անոր կուրծքին վրայ, ուժաթափ, մահուան արհաւիրքէն ապուշցած։

Կը սթափէր նաեւ պրն. Ծովիկեան, որ նոյնպէս կը տեսնէր այլեւս իրականութիւնը։ Բայց մարդասէր միշտ, գեղեցկապաշտ, չէր ուզեր հասարակ աւազակներ տեսնել իր շուրջը։ Անմիջապէս համոզուեցաւ թէ՝ տիրապետող ուժին դէմ ըմբոստացող ընդդիմադիրներու մէջ էր ինկած։ Բան մը որ չէր ներեր, ասիկա անարդար ոճիրն էր։ Կը գայթակղէր.

— Մօն շէր, չտեսնուած բան է ասիկա։ Մարդասպաններն անգամ այսպէս չեն գործեր։ Դուք անիրաւ կերպով ձեր զէնքը կը քաշէք խեղճ հայրենակիցիս վրայ, որ թշնամի մը չէ երբեք այս երկրին...

— Հանդարտեցէք, հանդարտեցէք,— ըսաւ մարդը խնդալով,— մեռած չէք... բան մը չունի... Հանգիստ կեցէք միայն, եթէ ոչ իրապէս կը սպաննեմ...

Պրն. Սինամեան լսեց այս խօսքերը եւ վերցուց յանկարծ գլուխը։ Ու կնոջ յուսահատ, հետաքրքիր, զարմացական ու կարեկից նայուածքին տակ՝ ան հաստատեց քիչ քիչ թէ իրապէս բան մը չունէր։ Մեռածի մը չափ սարսափած էր ան, սակայն, ու կորսնցուցած խօսելու կարողութիւնը։ Կը լսէր։ Պրն. Ծովիկեան կը խօսէր միշտ։ Կ'ատէր զայն այդ պահուն։ Ան էր, որ դուռը բանալ տուած էր իրեն։ Ան՝ այդ նէպմէն մտաւորականը, նման այն հայ մտաւորականներուն, որ բացած էին ազգին դուռը ոճրագործներուն առջեւ։ Կ'ատէր։ Ան պիտի պատմէր այս բոլորը, եթէ կրնար։ Հազիւ պզտիկ շունչ մը կար վրան։ Եւ ան այդ շունչը օգտագործեց՝ խաղաղեցնելու համար կինը, որ, գիտէր, կը տառապէր իրեն համար.

— Բան մը չունիմ, Աստուած ազատէ մեզ այս խենթերէն...

— –Բայց կ'ուզէի գիտնալ՝ թէ ո՞ւր կը տանիք մեզ այսպէս, կ'ըսէր պրն. Ծովիկեան։ Այս ո՞ր քոմիսարիան է որ կը տանիք մեզ։ Այսպէս կատա՞կ կ'ըլլայ։ Քաղաքակիրթ երկրի մը զաւակներն էք... Այս փոքր երկիրը օրինակ հանդիսացաւ ամէն դարու մէջ ընդհանուր մարդկութեան... Պէտք է գիտնաք թէ ազնիւ ու պարկեշտ հայերու հետ է ձեր գործը,— հայեր որ կը բաժնեն ձեր յեղափոխական ոգին, կ'ըմբռնեն ձեր ըմբոստութիւնը բռնակալութեան ու տիրապետութեան դէմ...

Տիկ. Սինամեան, համոզուելէ վերջ թէ ամուսինը փրկուած էր, կը շարունակէր կասկածիլ հիմա կասկածելի այդ մարդէն, որ նայուածքը կը սեւեռէր իր աչքերուն մէջ։ Եւ ան ոչ միայն անգթութիւն ու չարութիւն կը տեսնէր այդ նայուածքին մէջ, այլ եւ շնական ցանկութիւն...։ Եւ կը հաստատէր։ Քանի ծունկերը ետ կը քաշէր, այնքան աւելի դիմացի մարդը կը մօտեցնէր իր սրունքները։ Չկրցաւ պահել իր մէջ այս յուզումը.

— Ղուկա՛ս, մարդը ծունկերը ծունկիս կը քսէ...

— Ձայն մի՛ հաներ... Սպասենք... Չեն ձգեր, որ կարգին խօսինք, հասկնանք իրար...

Ուզեց որ լսէ նոյնպէս պրն. Ծովիկեանը։

— Ի՞նչ կ'ըսէք կոր, եղբայր... Դուք յիմա՞ր էք... Գիտէ՞ք թէ որու հետ է գործերնիդ։ Աւազակներուն մարդկութեան դա՞ս պիտի տաք։ Ձայներնիդ ձեզի քաշեցէք։ Ա՛լ աւելի մի կատղեցնէք զոնէ...

— Ի՞նչպէս թէ աւազակներ... կարելի՞ բան է... եղբա՛յր...

— Ես ինչ կ'ըսեմ նէ, անոր նայեցէք։ Աւազակներ են։

— Ընդդիմադիրներ են, եղբայր, Ֆրանսայի ազատագրութեան հերոսներ...

— Ի՞նչ ազատագրութիւն, ի՞նչ հերոս... Ֆրանսացին լաւութիւն պահանջեց՝ արդիլեզով հայերէն խօսակցութիւնը։ Ու եղաւ խոր լռութիւն։

Կառքը կանգ առաւ, վերջապէս։ Գողերը իջան եւ զէնքի սպառնալիքի տակ դուրս քաշեցին իրենց զոհերը։ Հրամայեցին հանուիլ։ Տէր եւ Տիկ. Սինամեանները հպատակեցան իսկոյն։ Պրն. Ծովիկեան կը խոկար։ Անըմբռնելի բան մըն էր պահանջուածը։ Մտաւորական մը երբեք չի մերկանար։ Վասնզի մարմինէ աւելի հոգի է ան։ Կը խոկար գլխիկոր։ Ծառերը կը շարժէին իր գլխուն վրայ եւ իր շուրջ ուրուականներու պէս։ Ձիւնը կը տեղար։ Կը մնար պրն. Ծովիկեան։

— Շապիկն ալ, շապիկն ալ, — կը պոռար հրամայողը։

Ու Տիկ. Սինամեան կը տատամսէր։ Մինչեւ շապիկը՝ ան յօժարութեամբ հանած էր այն բոլորը, որ կը ծածկէին իր միսերը։ Արդարութեամբ նոյնիսկ, փրկուելու համար, եթէ այդքանով պիտի փրկուէին։ Բայց շապիկը...

Ամուսինին համար, որ այլեւս ոճիր կը տեսնէր միայն, նշանակութենէ զուրկ էր կնոջ ամօթխածութիւնը։ Աւելորդ կը գտնէր աղաչել մարդոց, որ անասուններէ աւելի անզգայ էին։ Պրն. Սինամեան պատրաստ էր ամէն նուաստացում տանելու, յանուն կեանքին փրկութեան։ Ու կինը ըմբռնեց անոր այդ լռութիւնը։

Պրն. Ծովիկեան կը խոկար շշմած։ Աւազակները իրենց ձեռքի լապտերին լոյսը նետեցին այս փոքրակազմ, բայց յամառ ու ոլորկուած էակին վրայ։ Գոհացան անոնք անոր վերարկուն առնելով միայն։ Մնացեալը նկատեցին անպէտք, այնքան հին ու կեղտոտ էին անոնք։ Բնական է, որ պրն. Ծովիկեան անոնց այդ հրաժարումը նկատեց յարգանք մը իր անձին հանդէպ։ Եւ երբ զէնքերին սպառնալիքէն ազատեցաւ, պզտիկ կռունկի մը պէս շարժեց իր թեւերը։ Բողոքի ձայն մըն էր։ Քանի տարիներէ ի վեր չէր բաժնուած իր վերարկուէն։ Իր հոգիէն բան մը կը պակսէր։

Ծառերը կը դիտէին հանդիսականներու պէս։ Գողերուն լապտերներուն լոյսը կ'իյնար անոնց վրայ, կը կախուէր ճիւղերէն։ Շուքեր կ'երկարէին ձիւնին վրայ, կը խաչաձեւէին զիրար։ Գողերը հաւաքեցին, լեցուցին հագուստները կառքին մէջ։ Պրն. Սինամեան կը հետեւէր անոնց ամէն մէկ շարժումին։ Կը սպասէր ահաւորին։ Լոյսը ինկաւ պահ մը իր մերկ կնոջ վրայ։ Տիկ. Սինամեան դարձուց կռնակը։ Լոյսը կը յամառէր մնալ։ Եւ քննող նայուածք մըն էր ան։ Ան գնաց ու եկաւ քանի մը անգամ, եւ Տիկ. Սինամեան, որ չէր ուզեր աչքը հեռացնել ամուսինէն, կը դարձնէր միշտ կռնակը։ Նշանակութիւն մը ունէր այդ լոյսը։ Պատուի բռնաբարո՞ւմ...

Պրն. Սինամեան, նախանձոտ այդ մարդը, որ բժիշկներուն առջեւ իսկ պաշտպանած էր իր կնոջ մերկութիւնը, միշտ մահուան սարսափին տակ՝ կը նայէր օտարի մը պէս։ Ու զարմանալի էր։ Իր ամբողջ հոգւով կը մերժէր այդ միտք։ Ան չէր գտներ զայն ցանկայարոյց։ Ծառի կոճղի նման հաստ մսակոյտ մըն էր ան, անճոռնի ու անհաճելի։ Բայց կնոջ յանկարծակի ճիչը բաւական եղաւ, որ ինք ճանչնայ իր որսին կապուած ամէնէն հարազատ էակը, արթննայ իր այդ թմրութենէն եւ իր մէջ զգայ կիզիչ սիրոյ մը բռնկումը ինչպէս եւ զրութեան դառնութիւնը։

Այդ պահուն էր, որ պրն. Ծովիկեան, հանելով իր բաճկոնը, երկարեց զայն պրն. Սինամեանին, որ խենթի պէս խլեց զայն ու նետուելով լոյսին մէջ՝ ծածկեց կնոջ մերկութիւնը։ Հսկայական հերոսութիւն մըն էր ասիկա։ Ընելէ վերջ, կը սպասէր հակազդեցութիւն։ Եւ այդ հակազդեցութիւնը եղաւ իր սպասածէն տարբեր։ Գողերը չեկան քաշելու կինը իր թեւերուն մէջէն։ Անոնք երեքը արձակեցին քահքահ մը։ Եւ այդ ծիծաղը, որ կ'արձագանգէր անտառին լռութեան մէջ, ապահովցուց պրն. Սինամեանը։ Անոնք տգեղ կը գտնէին իր կինը։ Բարեբախտաբար։ Անոր շնորհիւ, կը փրկուէր զրութենէ մը, ու՝ անկարող որեւէ դիմադրութեան՝ խորապէս պիտի զգար իր վատութիւնը։

Պրն. Սինամեան միշտ իր մասին կը մտածէր։ Նկատի չունէր կնոջ չարչարանքը։ Արդիւնքը ջիղերու թուլացում մը բերաւ նաեւ Տիկ. Սինամեանին որ սկսաւ հեծկլտալ։ Շատ անգամներ երազած էր ամուսինէն չյարգուած իր մերկութեան կախարդանքին զօրութիւնը տեսնել ուրիշ այրերու վրայ։ Բայց երազ մըն էր ատիկա միայն։ Իրականութիւնը սարսափեցուցած էր զինք ահա։ Կը հեկեկար։ Ու պրն. Սինամեան կը մխիթարէր զայն։

— Պումպա՛ւլա...

Ու ներողամտութիւն ու գուրգուրանք կար անոր ձայնին մէջ եւ վախ ու դառնութիւն։ Եթէ միայն վերջանար այսքանով...

Եւ ահա հրամայուեցաւ իրենց քալել դէպի անտառին խորը։ Եւ ահա դաժան լրջութիւնը կրկին ոճրագործներուն։ Տամը կը հասնէր իր կատարին։ Հարստութիւն, հագուստ, կօշիկ, պատիւ, ամէն ինչ տրուած էր։ Կը մնար մահը։ Պրն. Սինամեան ծունկի ինկաւ։ Արձակեց աղաչական բառեր։ Ի զուր, Պէտք էր քալել։ Ու ան քալեց սարսափած։

Լոյսը կը հեռանէր անոնց, որոնք կասկածով կ'առնէին իրենց քայլերը՝ սպասելով միշտ փամփուշտներու սուլոցին։ Այր ու կին, ձեռք ձեռքի, երկու փէնկուէններու պէս, կ'առաջանային, խրելով մերթ ձիւնին մէջ, մերթ իրար բռնելով։ Պրն. Ծովիկեան կը հեռանէր անոնց, պեխերը հովին, ձեռքին՝ գաւազանն ու գիրքը։ Սպասուած փամփուշտները չէին գար, սակայն, եւ առնուած ամէն քայլ յոյս մըն էր որ կ'աւելնար։ Յոյս մըն էր նաեւ լոյսին տկարացումը։ Կը նշանակէր թէ՝ գողերը չէին շարժեր իրենց տեղէն։ Անգամ մը որ դուրս գացին անկէ, խաւարը պիտի պաշտպանէր զիրենք, պիտի առնէր իր մայրական ծոցին մէջ։ Ու պրն. Սինամեան կը մտածէր փախիլ։ Եւ այդ լոյսը ծրարուեցաւ, անհետացաւ յանկարծ։

Ու պատահեցաւ փլուզումի նման բան մը։ Տէր եւ Տիկին Սինամեան փռուեցան յանկարծ երեսի վրայ՝ ձիւնին մէջ, լսելով համազարկի մը հարուածները։ Քանի մը վայրկեաններու ուշադիր սպասում մը պէտք եղաւ անոնց որ ըմբռնեն թէ կառքին մեքենաներուն աղմուկն էր իրենց լսածը։ Հաստատուելէ վերջ ատիկա, շունչ առին անոնք։ Ազատութիւն մըն էր։ Պրն. Սինամեան գտաւ անմիջապէս իր կորովը.

— Ազատեցանք, կորսուեցան շուները, ե՛լ պէպէր, մնացար... Ալ մի՛ վախնար։ Ես հիմա կառք մը կը կեցնեմ, կը նստինք տուն կ'երթանք։ Դուն հոգդ մի ըներ...

Ան պարտք կը համարէր խօսիլ անուշութեամբ իր կնոջ, որուն առջեւ յանցաւոր ու անճարակ ու վատ կը զգար ինքզինքը։ Յաղթուած էր, թէեւ գլխաւոր պատասխանատուն պրն. Ծովիկեանն էր։ Յաղթուած էր եւ խաբուիլը իրեն համար մեծ նուաստացում մըն էր։ Բայց պէտք էր գոհ ըլլալ այսքանով։ Կրնային սպաննուիլ։ Ծունկի եկած էր։ Բայց ապրելու համար մարդ ի՞նչ չ'ըներ...

— Ո՞ւր է այդ աէրուէմը,— շարունակեց ան՝ յիշելով պրն. Ծովիկեանը։

Բայց չէր մոռցած թէ ան ճիշդ ժամանակին երկարած էր իրեն իր բաճկոնը մարդկային զգացումով մը։ Մուշտակաւորին այս օգնութիւնը կը կասեցնէր իր բարկութիւնը։ Նայեցաւ շուրջը։ Անհանդուրժելի էր անոր ներկայութիւնը բաճկոնին մէջ կծկուած իր մերկ կնոջ քով։ Բայց անտառին ամայութիւնը եւ վախը, զոր ունէր տակաւին այդ ամայութեան մէջ, մոռցնել կուտային իրեն իր այդ նախանձը։ Տեսաւ զայն ծառի մը ետեւ, անշարժ ներշնչուած կարծէք։ Ի՞նչ կ'ընէր։ Պրն. Սինամեան մօտեցաւ անոր արջի քայլերով, տարածելով իր կարճ թեւերը։

— Ի՞նչ կ'ընէք...

— Մօն շէ՛ր, աներեւակայելի է, իրապէս հասարակ աւազակներու հետ է եղեր մեր գործը։

— Հիմա՞ կ'արթննաք... Մեզ պիտի ըսպաննէին այդ շուները։

— Չեմ կարծեր, շահ մը չունէին մեր կեանքը առնելով։

Պրն Սինամեան պիտի հայհոյէր այսքան միամտութեան վրայ, բայց գոհացաւ մեղմ հեգնանքով մը.

— Ընդդիմադիրնե՛ր... Ֆրանսան ազատագրող հերոսներ... Ձեր ազնիւ, ասպնջական Ֆրանսան...

Մուշտակաւորը ձայն չհանեց։ Չէր ըմբռներ։ Տարիներու իր համոզումը կը ջախջախուէր։ Եւ ցաւալին այն էր, որ այս հասարակ դէպքը իրաւունք եւ լեզու կուտար ախմարի մը։

Ու քալեցին մոլար՝ անտառին մէջէն։ Ձիւնին պէս, բղիկ բղիկ կը քակուէր անոնց հոգին փրկութեան առաջին ուրախութենէն վերջ։ Անտառը տարբեր մղձաւանջ մըն էր հիմա, անսահման, ահաւոր՝ իր լռութեամբ խիտ եւ մերթ ընդ մերթ սարսռացող ճիւղերով։ Մահուան կախարդական աշխարհ մը։ Ցուրտը։ Այո, մոռցած էին զայն։ Տիկ. Սինամեան կը հազար արդէն։ Կոկորդը։ Կուրծքը։ Ոտքերը։ Սրունքները։ Ցուրտը իր ոսկորներուն մէջն էր։ Սառոյց մըն էր ամբողջ մարմինը։ Ամուսինը կը յուսադրէր զինքը, կը ստիպէր շարժիլ, քալել։ Անպայման կառքի մը պիտի հանդիպէին։ Պէտք էր հասնէին ու կենային ճամբու մը վրայ։

Այսպէս կը խորհէր նաեւ պրն. Ծուլիկեան։ Իրենց դէմ կ'ելլէր տաղնջական, հիւրընկալ բնակարան մը։

— Բայց ինչո՞ւ այս ուղղութեամբ կ'երթանք, — ըսաւ ան յանկարծ — կրնանք մոլորիլ։ Աւելի լաւ չէ՞ որ վերադառնանք եւ բռնենք այն ճամբան ուրկէ մեզ հոս բերին...

— Ո՛չ, ո՛չ, — բողոքեց Տիկ. Սինամեան այս առաջարկին դէմ։

Իրեն այնպէս կը թուէր թէ գողերը կեցած էին հոն տակաւին։ Սեղմեց փայտ կտրած մատներուն տակ պզտիկ ու կեղտոտ բաճկոնը, որ կը սահէր իր ուսերէն վար եւ որ չէր բաւեր ծածկելու համար իր կուրծքը, զոր կը ջանար ծածկել թեւերուն տակ։ Պաղ հովը, սակայն, միջոցը կը գտնէր խածնելու համար անոր թոռմած պտուկները եւ իր սառէ շրթները սեղմելու լայն ու միսի քանի մը ծալքերով օղակուած վիզին շուրջ։

Վտանգ մը անցընելէ վերջ է միայն, որ մարդ կ'անդրադառնայ անոր ահաւորութեան։ Բռնաբարումը եւ մահը, որոնց այնքան մօտ զգացած էր ինքզինքը Տիկ. Մարգրիտ։ Երբեք պիտի չմոռնար հսկայ այդ պահերը։ Իրապէս ահաւոր... Խորապէս կը զգար հիմա թէ ան կը պատկանէր իր ամուսինին եւ միայն անոր։ Եւ Աստուած ուզած էր որ ան մնար ու պատկանէր իր ամուսինին։

Տէր եւ Տիկ. Սինամեան կը քալէին պրն. Ծուլիկեանէն քանի մը քայլ հեռուէն։ Անշուշտ մտաւորականը տեսած էր լոյսին տակ կնոջ մերկութիւնը։ Բայց վտանգը ներկայ էր այդ պահուն։ Հիմա տարբեր էր։ Կեանքը որ կը վերադառնար, կը յիշեցնէր նաեւ իր բարքերն ու պատշաճութիւնները։ Մտաւորականը, իր կողմէ, կ'ըմբռնէր այս ճշմարտութիւնը։ Այս դէպքը պիտի ուրախացնէր իր չարաճճի ու ծերութեան սեմին վրայ մանկացած հոգին։ Կը խորհէր թէ պիտի ուրախացնէր։ Որովհետեւ ծիծաղելի բան մը կար այս բոլորին մէջ։ Բայց ան կը ջանար քալել հեռուէն փափկանկատութեամբ մը որ կը բխէր իր փառասիրութենէն։ Տէր եւ Տիկ. Սինամեան պէտք է լաւ կարծիք կազմէին իր մասին։ Ի վերջոյ, գլխաւոր յանցաւորն էր այս դրութեան։ Այո', ինք սխալած էր, ոչ պրն. Ղուկաս բանայ դուռը։ Զարաչար սխալուած՝ անորոշ տակաւին գալիքին մասին, հալածուած ցուրտէն, կը քալէր գլխիկոր։ Բանաստեղծական էր տեսարանը, ներշնչող։ Բայց տաղ ալ մտածելու սիրտ չունէր։

Մեծ գոհունակութիւն մը զգացին երեքն ալ, երբ վերջապէս ինկան ճամբու մը վրայ։ Ծառերով եզերուած այս ուղին կ'երկարէր նրբանցքի մը պէս։ Ձիւնը խճողած էր զայն։ Հովը աւելի սաստիկ էր հոս։ Աւելի պաղ։ Բայց խոստում մըն էր։ Զգայազիրկ էին պրն. Սինամեանի պաղած բոպիկ ոտքերը։ Բայց մեծ էր իր յոյսը։ Եւ իր յոյսը հայու անսպառ յոյսն էր։ Մեծ էր նաեւ իր կատաղութիւնը։ Արիւնը այնքան արագ կը շրջէր իր երակներուն մէջ որ դէմքը կ'այրէր եւ ձիւնի փաթիլները որ կ'իջնային անոր վրայ կը հալէին իսկոյն։

— Քալէ', պէպէքս, լաւ չէ անշարժ կենալը այս ցուրտին։ Ողջ մնացինք։ Աստուած այստեղէն ալ կ'ազատէ մեզ։ Մէյ մը տուն իջնայինք, լաւ կրակ մը կը վառեմ անմիջապէս... Տաք բան մը կը խմենք... բժիշկը կը կանչենք...

— Այո', Ղուկաս։

– Դուն հոգդ մի ըներ, պումպուլս, ես գիտեմ ընելիքս։ Ամէնէն առաջ հաստ շղթայ մը պիտի գնեմ, դուռին ետեւ պիտի զարնեմ։ Մէկը գալու ըլլայ նէ, դուռը կէս մը կը բանանք։ Ճեղքէն կը նայինք առաջ։ Շատ կարեւոր է այդ շղթան։ Եթէ ըլլար ան, այս բաները չէին պատասխաներ: Ձեռքէն նայելով կը հասկնայի թէ ո՞վ են եկողները: Դուռը բացի թէ չէ՝ արդէն հասկցայ, բայց ալ շատ ուշ էր: Զէնքին դէմ խաղալ չ'ըլլար... Փառք Աստուծոյ... Աս բոլորը կ'անցնին...

Պրն. Ծովիկեան լսեց այս խօսքերը: Յուզուեցաւ: Տխրեցաւ: Բարկացաւ: Իրեն ուղղուած ակնարկութիւն մը կար: Արձակեց իր վճիռը:

— Բողոքագիր մը պիտի գրեմ անմիջապէս եւ պիտի ներկայացնեմ ներքին գործոց նախարարութեան: Այս դէպքը կառավարութեան ուշադրութեան պիտի յանձնեմ: Յանցաւորները պէտք է պատժուին...

— Յանցաւորները այդչափ ապուշ չեն,— պատասխանեց պրն. Սինամեան: Ո՞ւրկէ ալ պիտի գտնեն անոնց հետքը...

— Մօտ չէ՞ր, արդարութիւն մը կայ վերջ ի վերջոյ աշխարհի վրայ...

Ու մինչ պարտասուն, Տիկ. Սինամեան կը դանդաղէր այլեւս, փափաք կը յայտնէր ձիւներուն վրայ երկարելու եւ ամուսինը կը բարկանար, կը ճչար կատաղի ձայնով մը, արեւին դէմ բացուող պատուհանի մը պէս, հայելիի մը նման լոյս մը հոլաց ծառերուն ետեւէն, անտառին խորէն: Մեծցաւ: Մօտեցաւ, տեղափոխելով ծառերուն շուքերը:

Կա՞ռքը: Դարձեալ գողե՞րը: Նոր, տարբեր աւազակնե՞ր: Մեր դժբախտ ուղեւորները արձանացան՝ իրենց աչքերը սեւեռած լոյսին կողմը: Հետզհետէ աւելի յստակ դարձաւ լռութեան վրայ մրճահարման պէս որոտացող կառքին աղմուկը: Ու լոյսը մօտեցաւ աւելի, ինկաւ Տէր եւ Տիկ. Սինամեաններուն ու պրն. Ծովիկեանի վրայ:

Եկաւ ու կանգ առաւ կառքը հսկայ անասունի մը պէս: Ու պրն. Սինամեան տեսաւ անկէ վար իջնող գերմանացի զինուոր մը: Հրամայեց կնոջ նստիլ ձիւնին վրայ որ չտեսնեն մերկութիւնը: Կը փայլէին լոյսին տակ՝ գլխուն սաղաւարտն ու կուրծքին շքադրամները: Կառքէն վար ցատքեցին նաեւ երկու զինուորներ եւ կեցան զէնքերը քաշելու պատրաստ դիրքի մը մէջ: Տեսիլը հրաշքի մը համեմատութիւնը ունէր պրն. Սինամեանի համար:

Ան բարձրացուց երկայն բազուկները եւ սկսաւ աղաղակել:

— Կամարա՛տ, քամարա՛տ... Փարի՛ (Հասկնալ Փարիզ):

Զինուորները մօտեցան, շրջապատեցին զիրենք, զինուորական բարեւ տուին: Խօսեցան: Պրն. Սինամեան բան չէր հասկնար, բայց կը գուշակէր: Անոնք կ'ուզէին կառքին մէջ առնել զիրենք: Գերմանացիները ֆրանսերէն չէին գիտեր: Բայց անոնցմէ մէկը կը կրկնէր շարունակ.

— Կամիո՛ն, քամիո՛ն, Փարի...

— Եա՛, եա՛,— բացագանչեց Տիկ. Սինամեան:

Այս բոլորը տեղի ունեցան արագութեամբ: Տէր եւ Տիկ. Սինամեան ստացան զինուորական լայնածաւալ մէյ մէկ վերարկու: Երրորդ մըն ալ տրուեցաւ պրն. Ծովիկեանին: Ու յետոյ բոլորը մտան կառքէն ներս: Ու կառքը տաք էր: Կային վրայէ վրայ դիզուած քանի մը պարկեր: Պրն. Ծովիկեան նստեցաւ անոնցմէ մէկուն վրայ: Տէր եւ Տիկ. Սինամեանները, ուժասպառ պառկեցան: Կծկուեցան վերարկուներու մէջ: Կառքը ճամբայ ելաւ: Ու ցընցումները ու հոգիի անդորրութիւնը գինովցուցին պրն. Սինամեանը:

— Հրաշալի մարդիկ են,— ըսաւ.— մա՛րդ են եղբայր...

— Այո,— կակազեց կինը:

Ան կը դողար: Եւ ուրախութիւնը կը ջլատէր անոր խօսելու կարողութիւնը:

Պրն. Ծովիկեան կը մտածէր իր բողոքագրին: Կառքին մեքենաները կը հնչէին կարծէք գրամեքենայի նման: Ու ձիւնը, ինչպէս եւ կառքին զարնուող ճիւղերը կը հանէին թուղթի խշրտուք մը: Իր աչքերը թրջած էին, բայց ան կը մտածէր իր բողոքագրին միայն: Եւ թուղթերը կը յաջորդէին իրարու: Կը լեցուէին: Մէկ կողմ կը դիզուէին: Անդադար՝ Պրն. Ծովիկեանի մտածումը կը յորդէր: Մահուան սպառնալիք: Կողոպուտ: Դէշ վերաբերում՝ հայ յարգելի տիկնոջ մը հանդէպ...

Պրն. Սինամեան ճիգ կ'ընէր բանալու համար աչքերը: Անուշ, հաճելի քուն մը թուլ-

ցուցած էր իր կամքը։ Երկարած էր ան կնոջ քով ու փաթթուելով անոր կը ջանար տաքցնել զայն։ Չէր խօսեր։ Իր մտածումը կը ծփար։ Եւ ատեն ատեն ան կը բանար իր աչքերը։ Կը լսէր շղթայի մը թաւալումը, կը տեսնէր զայն՝ ճերմակ, արծաթի գոյն, շողարձակ լերան մը կատարին պէս։

(ՎԵՐՋ)

ՅՈՒԼՈՒՆՔ

Բոլոր անցեալէն՝ մեռելի երազ
Հաւ՚քած ես քու մէջ, ով բանգող կարաս․
Ես քեզ կը խօսիմ՝ իբր ապրող էակ,
Մեռելի շունչ՝ դուն կը թափես վրաս։

*

Ես ի՛նչ որ ըսի, կրկնեցիր եւ դուն,
Կամ ինծմէ առաջ՝ ըսիր միեւնոյնն․—
Հէ՛յ, որքան ալ նոյն, ա՛յնքան զատ իմա՛ստ…
Խօսքն մարդէն կ՚առնէ իմաստն, հոտն ու
գոյնն։

*

Ես թութակն տեսած՝ լսած եմ մօտէն,
Զայն վանդակն դրած՝ կը կախեն պատէն,—
Ես վանդակ չունիմ, չեմ ուզեր պահել․—
Անցիր՝ հեռացիր, իմ շրջապատէն։

ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻ

ԱՆԴԱՐՁ ԳԱՐՈՒՆ

Կանգներ էր հոն, մարմնին թեթեւ ծանրութիւնը ձախ ոտքին յեցած, խոպոպաւոր վարսերուն ծփուն ալիքները հովէն տարուբեր,— հով մը որ խիստ էր այդ օրը: Մոխրագոյն ամպերով ծանրացած երկինքն ալ ցած կախուած ձեղունի մը պէս գրեթէ կը հպէր տուներու տանիքներուն:

Աղջկան սեւեռուն աչերը գամուեր էին ոտքերուն փռուած փոքրիկ պարտէզին, պարուրուած նոյեմբերեան տրտմասուք պատանքովը:

Չկային այլեւս պարտէզին քղանցքը եռիզաւորող երփներանգ ծաղիկները, որոնք գեղազմայլ տեսքով կը թուէին ըլլալ ծիածանը գետնին, որ առաւուան զեփիւռին երաժշտութեան հետ պարելով՝ անուշիկ ու քնքոյշ դէմքերնին կը դարձնէին զողտրիկ փսփսալու համար իրենց կեանքով օծուն բարի լոյսը:

Խե՜ղճ վարդի թփիկ, գահընկէց թագուհիի մը կը նմանէր գթութեան մուրացկան դարձած: Ա՛ն, որ կանաչ կանաչ ոստերով, ճերմակ ճերմակ կոկոններով անցնող դարձողին նախանձը կը գրգռէր, այժմ իր լերկ ճիւղերը ողորմութիւն աղերսող բազկատարած ափերու նման երկարած էին:

Իսկ պարտէզին փառքը, խաղողի որթատունկը, որ կատարեալ իշխանի մը պէս տարիներէ ի վեր կը հովանաւորէր այդ ափ մը տարածութիւնը՝ իբրեւ ծաղկաստան, հիմա կմախք մըն էր, որ կը դողդղար եւ իր տերեւաթափի ճիւղերը՝ ցրտաշունչ օդին մէջ չխրտոցով մը վայող ոսկորներ:

Այդ փոքրիկ հողի շերտը, որ բուրաստանի էր նման եւ որ միշտ ժպիտ մ'ունէր յատկապէս իրեն համար, այժմ խոպանացած, աւերակ է, կարծես վիշտէն ճեղք ճեղք բացուած, խորշ խորշ խորացած:

Ձմեռնամո՜ւտ...

Երկու կաթիլ արցունք սահեցան երկու կլորիկ այտերէն վար:

Օր մը ինք ալ պիտի հասնէր իր գեղեցկութիւններուն ձմեռնամուտին՝ առանց սակայն ունենալու բնութեան վառ յոյսը նորածա՜գ գարնան:

ԶԱՊԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՔԱՂՑՐԻ՛Կ ՀԱՅՐԵՆԻՔ…

Արտո՛յտն է եկեր, կ՚երգէ քաղցրաձայն,
Անո՛յշ հայրենիք, քո շունչով գարնան·
Եւ կարծես կրծքիս տակը երջանիկ,
Քընքո՛ւշ մի ծաղիկ կը փըթթի գողտրիկ։

Արտո՛յտն է եկեր, կ՚երգէ քա՛ղցր, անհո՛ւն,
Սըրտիդ լարերով, թըրթըռո՛ւն, հըմայո՛ւն,
Անցած է սարե՛ր, գետե՛ր ու ծովե՛ր,
Հիւսելով գովքըդ, բերած է հրաւէ՛ր։

«Դո՛ւն ալ միացիր երամին ըստուար,
Զըւա՛րթ կանչերով՝ որպէս մի ծիծառ·
Թօթափէ՛ փոշին օտար երկընքին,
Հայրենի՛ բոյնըդ թըռիր ցնծագի՛ն։

«Արդ բաց է դուռը մեր տա՛ք բունիկին·
Բուրաստանը մեր ծաղկա՛ծ է կըրկին·
Դարձէ՛ք, պանդուխտնե՛ր, մայրենի՛ գըրկին,
Հոն ձեզ կը սպասեն խանդաղատագի՛ն։

«Ա՛լ բա՛ւ է, հերի՛ք, որքան հեծեցիք,
Օտար դըռներուն դարձած մուրացի՛կ·

Ա՛լ բաւ է, որքան սի՛րտ. կեա՛նք մաշեցինք.
Դարձէք տո՛ւն դէպի, նժդե՛հ հայորդիք։

«Մայրենի կրծքին վըրան միմիայն
Ձեր խո՛ր վէրքերը շո՛ւտ կը սպիանան.
Դարձէ՛ք դէպի տուն՝ անո՛յշ հայրենիք,
Դէպի տո՛ւն, դէպի քաղցրի՛կ հայրենիք։

«Մեր տան մի մասը, ՔԱՄԻ՛Ն է քանդեր...
Լըքուա՛ծ... հէ՛ք... անտէր՝ աւերա՛կ է դեռ...
Երթա՛նք խուռներամ, երթա՛նք միասին,
Նորոգենք մեր բոյնն այն կողմ Մասիսին...

«Ջանքով յարատեւ, կեա՛նք տանք ու մարմին՝
Մեր յար փայփայած ոսկի երազին...
Հայրենիքը մեր վա՛ռ, չքնաղածին,
Կը սպասէ անքուն ձեր վերադարձին,

«Թըռէ՛ք դուք ուրա՛խ, երա՛մ առ երա՛մ,
Դէպի բոյնը ձեր, երգո՛վ, խուռներամ»...

Արտո՛յտն է եկեր, կ'երգէ քաղցրաձա՛յն,
Քո բոյրո՛վն օծուն, տո՛ւն եղեմական.
Եւ հոգիս՝ առած թեւեր թիթեռի,
Անհո՛ւն կարօտով դէպ՝ քեզ կը թռի...։

ՎԻԳԹՈՐԻԱ ԿՈՍՏԱՆԵԱՆ

ՊՈՒԼՔԸԼԷՅԻ*) ԲԱՐՏԻԻՆ

(ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ)

Հանրակառքին ճամբուն վրայ հասակովդ միշտ ազգուն,
Օտա՛ր շունչով կորսնցուցած գոյնդ ու գեղդ այնքա՛ն խոսուն,
Դեռ կը կանգնիս արծաթազօծ տերեւներէդ կողոպտուած,
Երկնասլաց ոստերուդ մէջ երազդ անոյշ՝ ուժգին գրկած:

Հայրենիքդ բերրի հողով ու քրքջան աղբիւրներով
Կեանք կը բաշխէ, լոյս կը ցօղէ ընկերներուդ ծիծաղելով.
Ամէն գարնան գեղահրաշ ծաղկէ պսակ անոնց ճակտին,
Եւ երգ ու պար, ջերմիկ համբոյր զեփիւռներուն դըրախտային:

Իսկ դո՛ւն լքեալ, կը սրտփա՛ս կարօտակէզ եւ անճանաչ,
Կ'արհամարհես վիշտդ հզօր՝ վտի՛տ եղբօրդ հոգին սրուած,
Որ քեզի պէս տառապեցաւ տարիներով անագորոյն,
Ու փռուեցաւ ոտքերուդ տակ՝ սիրտը դարձած երազի բոյն:

«Պէ՛տք է ապրիմ», մրմնջեցիր խո՛ր հաւատքով ծա՛ռ հայրենի,
Ու կուրծք տուիր փչող հովին, փոթորիկին աղէտալի.
Կեանքի գարունդ օրօրուեցաւ սին յոյսերով միշտ ցանուցիր,
Եւ ուղղաձիգ հասակովդ օտա՛ր պարտէզ զարդարեցիր...

Տարի մըն ալ օտար խորշակն այրե՛ց զքեզ, իմ հէ՛ք բարտի՛,
Ու տակաւին վեր կը բանես հպարտ գլուխդ, իմ սէ՛գ բարտի,
Անպարտելի կորովովդ կը պայքարիս, չե՛ս տապալիր,
Կ'ըղձաս լսել հայրենիքիդ քա՛ղցր կանչը միշտ սիրալիր:

Օտա՛ր ափին կը հասնի արդ մեղանոյշ ձայն հայրենիքին,
Որ դարերով անեղծ պահած՝ անմահութեան դրոշմը կուրծքին,
Հրաւէր կուտայ հայրենաբաղձ հոգիներու դառնալու տուն,
Ըմբոշխնելու անմահութեան դիւթիչ գինին խանդով անհուն:

ՄԱՐԻ Պ. ԳԱԼԱՅՃԵԱՆ

Յուլիս 20, 1946
Աղէքսանդրիա

---

*) Պուլքըլէյ.— Աղէքսանդրիոյ արուարձաններէն՝ Ռամլէյի հանրակառքին կայարաններէն մէկն:

ՆԱՂԻԿ ՀԱՐՍԸ

Գրեց՝ ԱՂ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ամէն օր մթնշաղին, երբ արեւելքը չառագունում էր եւ վաղորդեան զեփիւռը ծառերի տերեւներին հպելով դալար գգւում մարգերին ծլած ցողաթաթախ խոտերին, անդին արեւն էր կամացուկ բարձրանում երկնակամարի վրայ ու մեղմանոյշ ժպտում ամէնքին, ամէնքին: Այդ պահին էր, որ ցողաթաթախ բոյսերը նոր երազներով ու յոյսերով արթուն՝ ցնծագին փարւում էին արեւի յորդառատ ու ջերմ ճառագայթներին, մինչ անդին գիւղի աքաղաղները մէկը միւսի յետեւից մթնշաղի քօղն էին պատռում…

Ծո՛ւղրուղո՛ւ…

Գիւղի վարքին ու բարքին հազիւ ծանօթ մէկը պիտի իմանար, որ այդ ժամին բարձր չինարի ծառի թիկունքում, փոքրիկ տնակի կողքից վազող առուակի ափին պպզած՝ Նաղիկ հարսը իր լաթերն է լուանում:

— Քը՛շ, քը՛շ… կորի՛ր, անիրաւ, աստու կանուխ կռկռոց ես բերել գլխիս,— ու գետնից քարը վերցնելով՝ շպրտում է քիչ անդին կըռկռացող կաչաղակի վրայ:

Կաչաղակը թեւերը բաց արեց, սակայն կըրկին հաւաքեց ու ցատկոտելով մի քանի քայլ անդին, կորուած ծառի կոճղի վրայ պպզեց ու քթի տակ կռկռաց:

Լաթերից մէկը ընկաւ ջրի հոսանքի մէջ ու մերթ ջրի տակ, մերթ ջրի երես անցնելով՝ առաջացաւ:

Նաղիկը մի պահ թողեց գործը, ընկաւ լաթի յետեւից եւ, երբ լաթը ձեռքին վերադարձաւ իր տեղը, սապոնը անհետացած գտաւ:

«Կը՛ռ, կը՛ռ կը՛ռ»… սապոնը կտուցին ամուր բռնած՝ հրճւում էր կաչաղակը, ծառի կոճղին թառած:

— Բոյդ թաղե՛մ, գո՛ղ անզգամ… ցաւ էնի, բողազիդ կուլ գայ… իշալլա՛հ, խեղդուես… թո՛ւ, թո՛ւ…

— Ի՞նչ կայ, Նաղիկ, էլ ո՞ւմ հետ ես դալմաղալ սարքել…

Գիւղի դաշտապանն էր՝ Մաթօն, որ միաժամանակ աղուէսի լաւ որսորդ էր: Մաթօն որսած աղուէսները էշին բարձած՝ քաղաք էր տանում:

— Էն գող բոյղուշը, հարամը էնի, սապոնս գողացաւ… Է՛է ա, Մաթօ, լափում ա, էնա, քը՛շ… քը՛շ…

Մաթօն էշը կապ տուեց եւ գետնից մի քար վերցնելով՝ նետեց կաչաղակի նստած ճիւղին: Բայց անօգուտ: Կաչաղակը սապոնը կտցին ուժեղ պահած՝ թռաւ գնաց:

— Վնաս չունի, Նաղի՛կ, աղուէսներս որ ծախեմ, քեզի մէկ հատ նոր սապոն կը բերեմ,—ասաց Մաթօն ու էշը առաջը ձգած՝ երգը մռմռալով՝ քաղաքի ճամբէն բռնեց:

Նաղիկը լաթերը հաւաքեց ու տուն վերադառնալով՝ բարձրացաւ տանիքը: Բա՛հ, ի՞նչ տեսնէ… աշխարհը ինչո՞ւ չէր քանդւում… Հարեւանի երեխաները հաւաքւել էին տանիքի վրայ:

— Է՛յ, շան լակոտներ, հալա թողէք մէկ լուսը բացուի, յետոյ ճտերի նման թառէք կտուրը… Ձեր կտուրը տեղ չկա՞յ, ձեր տունը տեղ չկա՞յ: Աստուծու չոլը տեղ չկա՞յ…

Նաղիկ հարսը դեռ երկար պիտի աղաղակէր եւ Աստուծոյ անէծքը թափէր երեխաների գլխին, եթէ նրանք պատերից ու կտուրից ցած թռչելով՝ անմիջապէս չանհետանային:

— Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ,— քիչ վերջը կրկին բարձրացաւ Նաղիկի ձայնը, մինչ հաւերին փողոցից դէպի տուն էր քշում.— ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ… անտէր մնայ էն աքլորը, որ ձեզ հարցան մէկ չոլը չքաշի — ու Նաղիկը բարկացած՝ ձեռքի ճիպոտը նետեց դէպի հարեւանի աքլորը, որը շունչը բռնած՝ մէկ գլուխ թռաւ դէպի իրենց կտուրի եզրը ու ձայնը ձգեց.

— Ծո՛ւղրուղո՛ւ…

— Զահրումար… անտէր մնա՛ս, սատկոտրուի, որ մէկ էլ չգաս մեր հայեաթը, հաւերին թառատվառ չանես…

— Ի՞նչ կայ, Նա՛զիկ, է՛լ ի՞նչ եղաւ, ձէնդ սարը տուն անցաւ…

Սաթիկն էր, հարեւանը, որ այլեւս Նազիկի խօսքերը մարսել չկարողանալով՝ տանիքը բարձրացաւ խօսելու անզուսպ:

— Ի՞նչ պիտի էլնի… Հազար անգամ ասել եմ, էլի կ՚ասեմ… աքլորդ հարդան մէկ թըռնում ա էստեղ. էս ինչ ա՝ ցուիքը դուրս տըւաւ, էն ինչ ա՝ կտուրը սակենուեյրայ արաւ, էս ի՞նչ խմանում՝ հաւերին չոլը տարաւ… Ջա՛նըս, աքլոր չէք կարող պահէք՝ գլուխը կտրէք, թոնիրի մէջ նախնի էփէք, խմ գլխին փորձանք մի՛ սարքէք…

— Զարին անցար, Նազի՛կ, է՛լ հերիք ա, բերանս մի՛ բաց… ամէն օր մէկ բան ես սարքում, ձէնդ սարը տուն գցում… Մէկ օր երեխայ ա, մէկ օր ես ինչ իմանամ տաւարն ա, մէկ օր էշն ա, մէկ օր աքլորն ա… Հերիք ա, էլ համբերութիւն չմնաց… Տէր Աստուած, Սատանէն ասում ա…

— Ասա՛, ասա՛, չասողը հէնց սատանայ դառնայ… Երեխերքդ անտակ են, չուանից փախած…

— Լեզուդ քեզ քաշի՛, նախանձ…

— Կ՚ասեմ, հա՛, կ՚ասեմ… երեխերքդ անտակ են, անտակ…

Կռիւը պիտի սաստկանար ու անախորժ վերջաւորութեան յանգէր, եթէ նոյն միջոցին Օհան Ամին վրայ չհասնէր:

— Ա՛յ, ա՛յ… հայդէ՛ գնացէք, բա ամօթ չի՞… հաւ աքլորների պէս թառել էք կտուրի ծէրին ու ձէներդ չոլն էք գցել: Բա ամօթ չի՞:

Օհան Ամին էր, որ Սողոմոն Իմաստունի ձեւ առած՝ ներս մտաւ Նազիկենց բակը ու սաստեց կռւող կողմերին:

— Հա՛, կ՚ասեմ, հալբա՛թ կ՚ասեմ,— դատարկ ասպարէզ գտած զինուորի պէս պոռում էր Նազիկը, երբ թնդաց Օհան Ամիի ձայնը:

— Ղալա՛թ կ՚անես որ կ՚ասես… ցա՛ծ արի էդտեղից: Փէ՞, կնկան մի ասա հա՛… Ցած արի՛, ասում եմ…

Էհ, Օհան Ամին էր, գիւղի էն մեծ տարիքաւորներից մէկը: Ո՞վ կարող էր նրա խօսքը գետին ձգել: Եօթանասուն գարուններ անցել էին նրա գլխի վրայից: Գիտէր աշխարհի լաւն ու վատը, չարն ու բարին: Գիւղի տէրպապն ու Մըգին, Թեան ու Վարժապետը լսում էին նրան ու նրա խօսքերին մտիկ անում: Վերջապէս, Օհան Ամին էր, գիւղի ամէնից իմաստունը, չարն ու բարին տարբերողը, լաւ ու վատ օրեր տեսնողը…

Այո՛, Օհան Ամին ճիշտ էր ասում, ամօթ է: Եղածն ի՞նչ է որ, մտածում էր Նազիկը ու զգում, որ ինքը սխալ է, մեղքը իրենն է, այո… Բայց տեսա՞ր Սաթիկը ինչպէս սիրտը բացեց.— «Նախանձ»… Մի՞թէ ինքը նախանձում է Սաթիկի երեխաներին, մի՞թէ… Նազիկը զգաց, որ Սաթիկը իրաւացի էր…

— Ամօ՛թ ա, որդի,— խօսեց Օհան Ամին, երբ Նազիկը սանդուխից իջաւ ու մօտեցաւ նրան,— ամօ՛թ ա, որդի, գեղ գեղամէջ ձէներդ գլուխներդ էք առել: Ի՞նչ ա՝ հաւը էպէս էկաւ, աքլորը էնպէս գնաց, չոջուխը պատից բարձրացաւ… Ի՞նչ ա, բա ամօթ չի՞… Հալբա՛թ, աքլորը ցած կը թռնի, վերեւ էլ կ՚երթայ, չոջուխը պատից վեր կ՚ելնի, կտուրը կը թռնի, գուզին քար կը գցի… Բա, հարեւանութիւնը ինչի՞ համար ա… Հարեւան սածդ բարեկամից աւելի լաւ ա… Խաս հարեւանը՝ էլ ինչ ասես կ՚արժի:

Այսպէս խօսում էր, խրատում Օհան Ամին, մինչ Նազիկը մեղաւորի երեւոյթ առած՝ գլուխը կախ՝ լուռ լսում էր:

Այո, Օհան Ամին իրաւացի էր: Ձայնը գեղ–գեղամէջ էր ընկել… Օհան Ամիի խօսքերը պարզ էին, ինչպէս երկինքից ներս թափանցող արեւի շողշողուն ճառագայթները: Իրաւացի էր նաեւ Սաթիկը:

— Օհան Ամի, ներս համեցիր, մի չայ չինեմ՝ բերանդ քաղցրացրու… Ամի ջան, ախր ես էլ անտէր, անտիրական որբեւէրի կնիկ եմ. առաւօտից գիշեր լուանում եմ, կարում եմ, եփում–թխում… ո՞ւմս ունեմ, որ կտուրս քար քաշի, քանդուած պատը չոկի, տաւարին ու հաւերին նայիկ անի, չոլը գնայ, տանը նայի… ախր…

Նազիկի ձայնը երերաց: Եթէ մի քիչ էլ

շարունակէր, պէտք մոռնէր իր զգացումները... Օհան Ամին աշխարհ տեսած մարդ էր, սեւը սպիտակից, չարը բարուց տարբերող...

— Վա՛յ կողս, անտէր մնայ էս պառաւութիւնն էլ... Հա՛, Նազիկ, վատ չես ասում, որ մի չայ էլնի՝ կը խմենք,— ձեռքի փայտը շարժելով առաջ ընկաւ Օհան Ամին, մինչ մտքի մէջ նախօրօք մշակում էր Նազիկին ասելիք խօսքերը:

— Էս կողմ համեցէք, Օհան Ամի, էս կողմ... տոշակ եմ գցել, փափուկ ա...

— Հա՛, էս կողմը տոշակ կայ... պառաւութիւնն էլ փիս բան ա... Է՜խ, է՜խ, է՜խ... պառաւանք, Նազիկ, պառաւանք՝ գնացինք... աշխարհը ջահիլներին մնաց...

Նազիկը թէյ պատրաստեց ու մեծ գաւաթով հրամցրեց յարգելի հիւրին:

— Քաղցրացրո՛ւ, Ամի, թող բերանդ քաղցրանայ...

— Հա՛, քաղցրացնեմ... հալբաթ լաւ չայ պէտք էլնի,— ու Օհան Ամին մանրազէտի երեւոյթ առած՝ թէյի գաւաթը մօտեցրեց իրեն ու հոտոտեց.— Հա, լաւ չայ ա, լաւ էլ աթր ունի...

— Շնորհակալ եմ, Ամի, էլի չէմս ոտ ես դնում... Ոչ ոք իմ տունը չի գալիս, ինձանից երես են շուռ տալիս: Չեմ իմանում՝ ո՞ւմ էշին եմ չօշ ասել...

— Նազի՛կ, ո՛րդիս, ես քեզ բան ասեմ... սիրտդ բարի ա, լեզուդ՝ չար... ոչինչ բանի համար ամէնքի հետ կռիւ ես անում, զալմաղալ սարքում, յետոյ փոշմանում ես... էնպէս չի՞, ասա՛...

— Ի՞նչ անեմ, Ամի, մեղաւորը ես եմ, թող էդպէս էլնի...

Օհան Ամին այստեղ մի քիչ յապաղեց, ապա թեթեւակի հազաց ու այսպէս շարունակեց.

— Մեղաւորը թող սատանէն էլնի, ո՛րդի... Ինձ որ հարցնես՝ հէչ մեղաւոր չես... Հա՛, ասեմ էլի, մեղքը թո՛ղ սատանին մնայ... Հա՛, էն եմ ասում, մենակութիւն ասած բանը մարդուս լաւ բար չի բերում, հա՛, էն էլ կնիկ ցեղին... Մազերիս մտիկ՝ եօթանասուն ձմեռ եմ տեսել, հալա բալքի աւելի... Մենակութիւն ասածդ նէ՛ Աստծուն խօշ կը գայ, նէ՛ էլ մեր Տէր Յիսուս Քրիստոսին... Ախր, օրէնքը, ժամը, Սուրբ Աւետարանը, Նարօտը բա ինչի՞ համար են...

Նազիկը զգաց, որ այտերը կարմրել են ու սիրտը անկանոն կերպով հեւում է: Փորձեց բարձրանալ տեղից ու չայ լցնել ազիզ հիւրի համար...

— Չէ՛ չէ՛, չայը յետոյ էլ կ՚էլնի, ամա էս խօսքերը յետոյ էլ չի էլնի... Էս ա, կողս բռնելով, անքանքալով եկել եմ էստեղ... Էսա, մազերիս մտիկ՝ խօսքիս ականջ տուր... Ողորմած հոգի Դաւիթը — Աստուած իրա հոգին լուսաւորի — լաւ տղամարդ էր: Աստու կամքը օրհնած ա, ի՞նչ արած, մեռնողի յետեւից ողորմի կ՚ասեն... Ոչինչ չհասկացած՝ որբեւէրի մնացիր. էլ խոմ մինչեւ վերջը էսպէս չես մնալու... Աշխարհը էսպէս եղել ա, էսպէս էլ կը մնայ... Սամուէլի հետ խօսացել եմ, Նազիկ... էն էլ քեզ պէս աւարայ, քեզ պէս աղար, ցորեկը գիշեր ա անում... Խեղճի եզը՝ Ծիրանը, գործի էն տաք ժամանակ թալաֆ եղաւ: Ի՞նչ եզ էր, Նազիկ... տասը գոմից դուրս եկաւ՝ հէնց էն դուրս էլնելն էր... Սարի պէս հէյվանը վարի կէսին մէջքը ծռեց, բաթմրչեց... Ի՞նչ եզ էր. Նազիկ...

— Ամի, Օհա՛ն Ամի, բա գեղի ջահիլները ի՞նչ պիտի ասեն... չէ՛, չէ՛, սիրես Աստծուդ, ինձ մի խայտառակի...

Նազիկը ամբողջ մարմնով դողում էր, սիրտը ուժեղ հեւում ու կարծես շունչը կապ էր գալիս: Այս դրութիւնը, սակայն, երկար չտեւեց: Յորդառատ արցունքները, կ՚ասես մէկ տեղ կուտակուած, յանկարծ դուրս խուժեցին նրա աչքերից ու անարգել վար թափուեցին այտերի վրայ:

— Հէ՞ր ես լալիս, աղջիկս... Ես քո լաւն եմ ուզում... Շատոնց էր միտքս դրել իմ քեզի հետ խօսիմ, միամիտ էլնելով, որ խօսքս գետին չես գցի... Էհ, Օհան Ամին էսօր կայ՝ էգուց չկայ: Մարդս ի՞նչ ա որ... խողից եղել ա, խող էլ կը դառնայ: Մենակ ի՞նչ կը մնայ... լաւութիւն. սրտաւ գնաց, էլ ոչինչ... Հա՛, Նա՛զիկ, էգուց ողորմի կը տաս ինձ, կ՚ասես Օհան Ամին լաւ մարդ էր...

— Օհան Ամի, բա գեղի ջահիլները ի՞նչ պիտի անեն,— քիչ հանգստացած՝ փէշի պըռունկով աչքերը սրբելով մըմնջաց Նազիկը:

— Ի՞նչ պիտի անեն... մաղամ պսակուելը, տուն տեղ սարքելը ամօ՞թ ա... Հը՞, ասա տեսնեմ... Կէսը դէսից, կէսը դէնից, կեանքը երկնքից. կը խառնուէք իրար, մարդավարի տուն ու տեղի, կալ ու կուտի, ձագ ու ճուտի տէր կը դառնաք... Հա՛, Նազիկ, տուն ստանդ՝ մուխը պիտի բուխերիկի ծակից քուլա-քուլա դուրս գայ... Վա՜յ կողս...

Օհան Ամին տեղից բարձրացաւ եւ տնքընքալով ու ձեռքի փայտը շարժելով՝ ճանապարհ ընկաւ:

Նազիկը մինչեւ փողոցի դուռը հետեւեց հիւրին: Բայց ինչո՞ւ ոտքերը այնպէս դողում էին, կարծես երկար ճանապարհ ոտքով էր քայլել, կամ թէ կ'ասես նոր էր հիւանդութեան անկողնուց բարձրացել: Ինչո՞ւ այդպէս եղաւ. ուրախութի՞ւն, յուզո՞ւմ...

— Օհան Ամի...

Բայց Օհան Ամին արդէն հեռացել էր:

Այդ ե՞րբ հեռացաւ, որ ինքը չնկատեց: Ուզում էր նրան ասել, այո՛, ուզում էր ասել.

— Օհան Ամի, բա գեղի ջահիլները ի՞նչ պիտի անեն...

* * *

Ձմեռը մերթ տնքալով, մերթ հազալով ու փնչալով գալիս էր, հա՛ գալիս ու տեղ չէր հասնում:

Քամին փչում, խաղում էր եւ, յանկարծ, կ'ասես կատաղում՝ խենթի պէս թռչկոտում, սուլում ու փախչում գնում էր:

Դեկտեմբերը յոգնած երեւոյթով եկել էր արդէն: Անձրեւը մեղմիկ մաղում էր, բայց ձիւնն ուշանում էր...

— Ի՞նչ կ'ասես, Բուղա՛ղ,— Արամն էր խօսողը՝ Բուղաղի հարեւանը, որ յօնքերը կիտել ու լուրջ կերպարանք էր բռնել.— Հը՛, ի՞նչ կ'ասես, Բուղաղ, ձիւնը ուշանում ա...

— Հա՛, Արամ, ճիշտ ասացիր, ձիւնը ուշանում ա... Որ էսպէս էրթայ...

— Որ էսպէս էրթայ, լաւ չի, Բուղաղ, լաւ չի... Ձմեռ ասածդ առանց ձիւնի չի էլնի... Ձիւն որ չկայ, ասել ա՝ ձմեռ չկայ... Ախր ցանքըր չոլումը Աստու ումիդով գցած... Ձիւնը որ ուշանում ա՝ մարդու միտքը տեղը չի, գիշերը մարդու քունը չի տանում... Ձա՛նըս, ցանքըր չոլումը առանց ձիւնի... Չէ՛, Բուղա՛ղ, լաւ չի, որ ձիւնը ուշանում ա, լաւ չի...

Մի գիշեր էլ Արամը քնեց ու երազում կարծես ձիւնի փաթիլների սարսուռը զգաց իր մարմնի վրայ: Ցասպ վեր ցատկեց տեղից ու վերարկուն ուսերին գցած՝ վար իջաւ բակը:

— Ո՞ւր, ա՜յ մարդ... կէս գիշերին, ի՞նչ փչաւ խելքիդ,— կանչեց կինը նրա յետեւից:

Ի՞նչ խօսք, որ Արամը աւելորդ համարեց կնոջը պատասխանել: Էհ, կինն ի՞նչ պիտի հասկանար որ...

Եւ իրաւ: Ձիւնի առաջին փաթիլը օրօրուելով եկաւ: Եկաւ ու նստեց ուղիղ Արամի քթի ծայրին: Արամը թերահաւատօրէն ձեռքը մեկնեց դէպի քիթը եւ ձիւնի խոնաւութիւնը շօշափելով՝ երեխայի պէս հրճուեց: Ապա վերարկուի մէջ կծկուելով՝ մօտեցաւ փողոցի դրանը ու դուրս եկաւ մութին:

— Թը՛կ, թը՛կ, թը՛կ...

Կէս գիշերուայ այդ ժամին, հարեւանի դուռը թակողը Արամն էր:

— Բուղա՛ղ, է՜յ Բուղա՛ղ...

— Ո՞վ ա, ի՞նչ կայ էս ժամին...

— Ես եմ, Բուղաղ...

— Ի՞նչ կայ, Արա՛մ...

— Բա չասե՞ս, Բուղաղ, ձիւն ա գալիս:

Արամը ուրախ էր: Է՛հ, կինն ի՞նչ պիտի հասկանար որ... վերջապէս, ձիւնը եկաւ ու ինքը գիտէր իր անելիքը:

Արամը այնպէս հրճւում էր, որ կ'ասես ձիւնի հետ միաժամանակ պիտի գար իր բանականութիւնը, որովհետեւ ձիւնից առաջ «իր խելքին ոչինչ չէր նստում»:

Այդ օրը, առաւօտեան կանուխ, գիւղացիք արթնացան ու ի՞նչ տեսնեն՝ ձիւնը նստել է ամէն տեղ, ինչպէս աղօնը Ջրաղացպան Աւօի յօնքերին:

Այժմ գիւղացիք զգացին, որ իսկապէս ձմեռ է:

— Ձմեռն եկաւ, Բարիկենդանը յետեւից

ա, հի՜... ջան հարսանիք, ջա՛ն գինի, անո՛ւշ գինի, կարմի՛ր գինի...

Եւ Գիւօն էր, որ առաջին հերթին ձմրան աւարտը հաղորդեց, Բարիկենդանի գալուստը մաղթեց ու հարսանիքների ազդանշանը տուեց:

Գիւղացիք, կարծես մինչ այդ բոլորովին մոռացել էին, որ երբեւիցէ Բարիկենդան կայ, որ աղջիկ տղայ պիտի պսակեն, որ հարս պիտի բերեն, հարս տանեն եւ, վերջապէս, հարսանիքի պատրաստութիւն պիտի տեսնեն:

Գիւօի ձայնը փոթորիկի պէս անցաւ գիւղի մէկ ծայրից միւսը, փեսաների ականջներից դուրս գալով՝ հարսների սիրտը մտնելու համար... Փեսաները ուրախացան, ծնողները շփոթուեցին, մինչ հաճելի սարսուռը պատեց հարսնացուների ողջ էութիւնը...

Բայց, ըստ երեւոյթին, այդ յանկարծակի լուրը ոչ ոքի այնքան մեծ հաճոյք պատճառեց, որքան հէնց նոյն ինքն՝ Գիւօին:

Օհան Ամին, Արամին հասակակ, միտքը միշտ տեղն էր ու յիշողութիւնը՝ վառ: Նա գիտէր, որ Բարիկենդանին ամուսնանալու են նաեւ Սամուէլն ու Նազիկը:

Բարիկենդանը վրայ հասաւ: Նազիկի ամուսնութեան լուրը պայթեց գիւղի մէջ:

Առաջին լսողների թուին էր պատկանում Գիւօն, որ լուրն իմանալուն պէս շտապեց Նազիկի մօտ ու սրտէն աչքալուսանք՝ ինքն իրեն հարսանիքի կանչեց:

— Պետօին, Կակուլին, Զախուլին երթամ տեսնեմ, որ պատրաստ էլնեն:

— Գլուխդ թաղեմ, Գիւօ... Պետօ–Մետօ, Զախուլ–Մախուլ պէտք չի... Գլխիս փորձա՞նք եկար— խայտառակես պիտի... պէտք չի՛, պէտք չի՛...

— Բա՜հ,— զարմացած բացականչեց Գիւօն,— ո՞նց թէ պէտք չի... առանց դհօլ զուռնայի էլ հարսանիք կ՚էլնի՞... առանց դհօլ զուռնայի հէչ հարս կ՚էլնի՞, որ հարսնիք էլնի...

— Չէ՛, չէ՛, Գիւօ, պէտք չի, սիրես Աստծուդ, ոչ ոքի չես ասի... Գիւօ, էյ, Գիւօ...

Բայց Գիւօն չկար: Ո՞վ կարող էր իմանալ, թէ Գիւօն որտեղ աներեւութացաւ: Ո՞վ է իմանում, թերեւս այդ պահին Պետօին, Կակուլին, Զախուլին գտել ու նրանց հետ Նազիկի հարսանիքի «Ծարաչներին լուրջ նախահաշուով էր զբաղուած:

Հարսանիքի օրը եկաւ: Հարեւան կանայք հաւաքուեցին եւ Նազիկ հարսի գլուխը սարքեցին, նոր շորեր հագցրին: Հարեւան կանանց մէջ էր նաեւ Սաթիկը:

Զուռնայի ձայնը երկինք էր բարձրացել:

Գիւօն ծայր աստիճանի զուարթ՝ երգում էր, պարում, ու շաբա՜շ կանչում: Հարսնեւորները, կարգը չխանգարելու համար, ստիպուած, Գիւօին մի քանի անգամներ դուրս ձգեցին սենեակից: Բայց հնարամիտ Գիւօն մէկ դռնով չելած՝ միւսով ներս էր մտնում:

— Գիւօ, չափը անցար,— սրտնեղած մի քանի կողմից յանդիմանեցին նրան, երբ Գիւօն շփոթուած՝ կոխել էր փեսայի ոտը:

— Զուռնէն փչի՛ր, Պետօ... տօ՛ Զախուլ, զարկ դհոլին... Կակո՛ւլ, ա՜յ Կակուլ... շաբա՜շ... շաբա՜շ,— միանուագ ճչում էր Գիւօն, մինչ կողքից անցնող ափսէների միջից, առանց հրաւիրելու վերցնում էր գինով լեցուն բաժակները ու ներս գլտորում.— շաբա՜շ...

Այս թոհուբոհի մէջ, չգիտես ինչպէս, Գիւօի գլուխը պտտուեց ու դրո՛փ... ընկաւ հարսի գոգը:

— Դուրս, հայդէ՛...

Բռնեցին Գիւօի ականջից ու դուրս շպրտեցին սենեակից:

Զուռնայի դիլ ձայնը Գիւօի գիտակցութիւնը անմիջապէս տեղը բերեց: Գիւօն զգաց, որ ինքը պատժուած է, եւ սենեակ մտնելու այլեւս հնարաւորութիւն չկայ: Այսպէս բակի մէջ կանգնած մնալն էլ հօ միտք չունի, մինչ այնտեղ զուռնան փչում է, դհոլը զարկում ու գինին ջրի պէս հոսում...

Գիւօն բակի մէկ անկիւնում նստած՝ լուրջ խոհում էր ու ելք փնտռում, երբ փողոցի դռնից ներս մտաւ Օհան Ամին:

— Օհան Ամի՜ն, Օհան Ամի՜ն,— բացականչեց մի կին եւ ցածցնելով ձեռքի ափսէն՝ միջում երկու շիշ գինի ու տապակած մսի մեծ կտոր՝ ընդառաջ վազեց...

— Է՛ս կողմ, է՛ս կողմ համեցէք...

Այդ միջոցին մի քանի հոգիներ համախըմբուեցին Օհան Ամիի շուրջը ու նրա հրամցրին պատուական հիւրին։

Գեւօն սկզբում մտածեց այդ խուժանից օգտուել եւ նրան միանալով՝ ներս մտնել աննկատ, բայց ափսէն նկատելով՝ փոխեց մտադրութիւնը։ Ափսէի բովանդակութիւնը գրպանելով ու ափսէն էլ կտուրը շպրտելով՝ կամացուկ ծլկուեց, երեւի մտածելով՝ թէ սրանից աւել հօ իրեն չեն տալու…

Ներսում դհոլ-զուռնէն ու դուդուկը ձէն ձէնի էին տուել, մինչ դրսում քիչ առաջուայ կինը բակի մէջ սաքուի վրայ թողած ափսէն էր փնտռում։

— Խամե՛ղ դրամ, ջանի՛ս, այ խամե՛ղ… անտէրի պատռոցը տամ գլխամ կերել ա…

— Հայկուհի, բալքի ներս ես տարել, միտքդ չի…

– Չէ՛, ջա՛նըմ… այ հէնց խամեղ էր… ես ի՞նչ իմանամ, կ՚ասես թեւ ա առել՝ թռել ա…

Երկրորդ կինը յուսահատուած՝ թողեց հեռացաւ, մինչ Հայկուհին աննպատակ փընտռում էր ու ինքն իր մէջ մրթմրթում.

— Խամեղ էր, ջա՛նըս, խամեղ…

* * *

Կէս գիշերից անց հիւրերը կամաց-կամաց ցրուեցին։ Քիչ անց գնացին նաեւ ծանօթներն ու բարեկամները՝ հարս ու փեսային մենակ ձգելով։

Նազիկ հարսը իրեն երբեք այդպէս անհանգիստ չէր զգացել։ Կարծես թէ իր տանը չլինէր։ Առաստաղը ա՛յնպէս ցածր ու սենեակը ա՛յնպէս նեղ ու տձեւ թուացին իրեն… Ինչպէս մինչեւ այժմ չէր նկատել… Դռները փակ ու կրակը կողքին՝ ինչո՞ւ ինքը այսպէս մրսում էր…

— Ի՞նչ կայ, Նազիկ,— Սամուէլը մօտեցաւ նրան ու նստեց կողքին.— ո՞ւշ էլաւ էս գիշեր. չէնի՞ մրսում ես, Նա՛զիկ…

Սամուէլի խօսքերը ու մասնաւորապէս նրա հպումը մի արտակարգ սարսուռ ձգեցին Նազիկի էութեան մէջ…

— Ի՞նչ կայ, Նազիկ։

— Ոչինչ, Սամուէլ… գլուխս էնպէս պտըտուեց…

Սամուէլը առիթից օգտուելով՝ ձեռքը քաշեց Նազիկի գլխին ու գորովագութ կերպով շոյեց նրան։

— Նազիկ…

Նազիկի այտերը սաստիկ կարմրել էին, եւ շունչը կարծես պիտի կտրուէր։ Այս անհաճոյ դրութիւնից ազատուելու համար, Նազիկը ակամայից շրթունքները շարժել սկսեց,

— Սամուէլ…

— Ի՞նչ կայ, Նազիկ…

— Սամուէլ, Տիրանը որ մեռաւ՝ շա՞տ ղուսա արար…

— Էհ, Նազիկ ջան, դու ողջ էլնես… Հա՛լբաթ, Տիրանի համար մի քիչ ղուսա արամ, ամա փոխարէնը, երբ Օհան Ամին քո լուրը ինձ տուաւ շատ ուրախացամ… Նազիկ ջա՛ն, հիմա էլ հէչ ղուսա չունեմ…

Ամուսնու խօսքերի վրայ Նազիկը կարծես մի քիչ շունչ առաւ, ապա կամացուկ աւելացրեց.

— Սամուէլ, մի քիչ հաւաքած փող ունեմ… որ Տիրանի պէս մի եզ աչքըդ ընկնի…

Նազիկը դեռ խօսքերը չէր վերջացրել, երբ իր շունչին շատ մօտիկ Սամուէլի տաք շունչը զգաց…

Փոքրիկ համբոյր էր, որ Սամուէլը քաղեց Նազիկի այտից։

— Նազիկ…

— Սամուէլ…

Թեհրան

ՁՄՐԱՆ ՄԻ ԱՆՔՈՒՆ ԳԻՇԵՐ

Գրեց՝ ՄԱՔՐՈՒՀԻ ԱՂԱՄԵԱՆ

Զմրան ցուրտ գիշեր է, բքաշունչ, սառը գիշեր: Հեռուից, օդի մէջ խորհրդաւոր կերպով հնչեցին ժամացոյցի տասը ծանր հարուածները: Տա՜սն անգամ: Ո՜հ, որքան ճնշիչ է գիշերուայ այս ժամը, երբ սիրուց խոցուած սրտերը պէտք է բաժանուեն... ժամի 10–ն է...

Երկար լռութիւնից, սիրտս սեղմող լռութիւնից յետոյ, դու բարձրացար թափով, ինչպէս միշտ, եւ այս անգամ էլ տխուր, թախծոտ ու դժգոհութեամբ բարի գիշեր ասացիր, հեռացար յամրաքայլ: Եւ գրեթէ օրօրուելով իջար աստիճաններից:

Ես կանգնած մնացի աստիճանների վերեւում: Լուռ դիտում էի քեզ:

Դու կանգ առար վերջին աստիճանի վրայ եւ նայեցիր վեր: Մեր հայեացքները հանդիպեցին իրար· քո հայեացքը աղերսալից էր եւ խօսուն... Զգացմունք կար այնտեղ՝ քո տխուր աչքերի մէջ... սէր կար այնտեղ՝ թախծոտ եւ տենչալի:

Նայեցիր լուռ մի պահ եւ գլխիկոր անցար, հեռացար... Օ՜հ, քո այդ աչքերից թախծոտ արտայայտութիւնը, քո չարտասանած բառերը...

Վերադարձայ սենեակըս, որ քո մեհեանն էր:

Այդպէս ես ասել, այդպէս ես կրկնել:

Հոգիս, համակուած տխրութեամբ, հեծկլտում էր անվերջ եւ կանչում քեզ... յետ կանչում քեզ...

Իսկ դրսում սառը քամին ձիւնի խոշոր փաթիլների հետ պայքարի էր մտել: Իմ սրտում էլ պայքար կար:

Բքաշունչ դու քամի, արդեօ՞ք կարեկցելով ինձ, ձայնակցում ես իմ հեծկլտանքին...

Զմրան ցուրտ գիշեր է... սառն, անհրապոյր: Ձիւնի խոշոր փաթիլները հպւում են լուսամուտի ապակիներին եւ արցունքի կաթիլների նման հետք թողնում...

Ես մենակ նստած իմ սենեակում, յիշում եմ քո վերջին թախծոտ հայեացքը, ուր չարտասանուած բառեր էին թաքնուած, այնքա՜ն շողող–այնքա՜ն բերկրալից:

Ի՞նչու չասացիր այդ խօսքերը...

Դու նորից եկար եւ ասացիր·—

— Գո՞հ ես, որ եկայ:

— Այո՛,— պատասխանեցի:

Դու քնքշօրէն սեղմեցիր ձեռքս, բռնեցիր քո սովորական տեղը՝ սեղանի ծայրին եւ արտայայտեցիր քո հոգեկան բուռն ապրումները:

Ապա նստեցիր լուռ, մունջ... իսկ քո աչքերը խօսում էին անվերջ եւ իմ հոգին բերկրանքով լսում էր քո չարտասանած խօսքերը...

Կեանքիս ալեծուփ օրերին հանդիպեցիր ինձ… վիրաւոր էր սիրտս, եւ տառապալից ներաշխարհս:

Անձկութեան սեւ ժանիքները խորը խոցել էին իմ հոգին, ուր այլեւս դատարկութիւն եւ հիասթափութիւն էր տիրում· Էութիւնս քայլ առ քայլ կեանքի վերջին եզերքին էր մօտենում…

Բայց ահա դու որպէս մի լուսաստղ երեւացիր իմ հորիզոնի վրայ: Եւ ես սիրեցի քեզ:

Բայց ինչո՞ւ եկար…

Արդեօ՞ք կարեկցեցիր ինձ, իմ կեանքիս ամենադժբախտ օրերին, թէ սիրեցիր ինձ՝ որբիս, այս օտար երկնքի տակ:

Արդեօ՞ք սիրեցիր ինձ անկեղծօրէն: Եւ այդ սիրուց բխած քո քընքոյշ վերաբերմունքը գրաւեց իմ հիւանդ հոգին:

Ո՞րն է ճիշտը…

Ես սիրեցի քեզ այնպէս, ինչպէս երբեք եւ ոչ ոք…

Դու սիրեցիր իմ բեկուած սիրտը եւ աչքերիս թախծոտ հայեացքը:

Ես սիրեցի քո հոգին, որ այնքան քնքոյշ գորով, այնքան գուրգուրանք եւ բերկրանք էր արտայայտում…

Սիրեցի քեզ…

Բայց չգիտեմ, թէ ո՞ւր է տանում ինձ այդ սէրը, ո՞ր ուղիով է ընթանալու:

Արդեօ՞ք կեանքի փշոտ ճամբով դէպի անդունդ, թէ բարձրութիւնների վրայով դէպի երջանկութիւն…

Արդեօ՞ք պիտի աղօթեմ մեր հանդիպման ժամի համար, որ պայծառ օրեր պիտի բերի ինձ, թէ այս բոլորից յետոյ պիտի անիծեմ քեզ…

Ասա, պատասխանիր ինձ…

Օհ, պայքար կայ իմ սրտում·

Ինչ ցուրտ է դրսում… քամին կարծես պար բռնած հեգնում է ինձ, ծաղրում եւ պատասխանում·—

— Ունայնութիւն… Ունայնութիւն… ու…ու…

Ո՛չ, ո՛չ, ունայնութիւն չի… ո՛չ, պայծառ օրեր կան ինձ համար, կան երջանիկ օրեր, եւ այդ դու, դու ասացիր ինձ·—

«Մոռացիր քո անցեալ տառապանքը… Արեգակի ջերմութիւնը մեզ համար է շռայլում առատօրէն, մենք պիտի ապրենք եւ վայելենք…»

Այս քո բառերն են, բայց դու այժմ ինձ մօտ չես·

Ձիւնում է դրսում, լուսամուտիս առջեւ տարածուած տանիքները պատած են սպիտակ սփռոցով, հարթ ու անսահման:

Ցուրտ գիշեր է, ժամի 12ը· Քո մեհեան սենեակում նստած եմ մենակ՝ լուսամուտի առաջ եւ նայում եմ ձիւնի փաթիլներին, որոնք ընկնում են մեղմ հեծկլտանքով եւ արցունքներս թափւում են ակօսելով դէմքս:

Միտքս քեզ մօտ է թռչում: Ո՞րտեղ ես այժմ: Արթո՞ւն թէ քնած երազների գրկում· թերեւս ինձ ես երազում…

Յանկարծ ականջիս հընչեց դիւթիչ մի ձայն.

— Լաց մի լինիր, մի արտասուիր, դու իմն ես, ես քոնը. կեանքը մերն է...

Ընդոստ վեր կացայ եւ յետ նայեցի: Աւա՜ղ, ոչ ոք կար սենեակում... Ես կրկին մենակ էի. իմ մտքերիս հետ, գերի իմ տխուր մըտքերին... լուռ, անխօս:

Ձմրան ցուրտ գիշեր է... դրսում ձիւնում է...

Անքուն եմ ես...

ՏԵ՛Ս ԻՄ ՀՈԳԻՆ

Տե՛ս իմ հոգին՝ խո՜ր ու խռովուն ու փաղփաղուն վճիտ լճակ,
փակել եմ ես լազուր ու ջինջ քո աչքերի երկնքի տակ:
Սիրում եմ քո ծով աչքերի փայլը հեզիկ, խորհուրդը խոր,
Ու նրանց մէջ՝ թառած թախծոտ զոյգ շիթերը՝ յամր ու երեր,
Եւ կարթնաթոյր դալուկ դէմքից լուսինը հեզ՝ լո՜ւռ ու տխուր,
Ու վարսերից փունջերը սեւ՝ քնքոյշ ու թուխ ինչպէս գիշեր...
Տե՛ս իմ հոգին խո՜ր ու խռովուն, տխո՜ւր, տրտում, վճիտ լճակ,
Ծփծփում է քո հայեացքի, քո աչքերի երկնքի տակ...

ԱՐՄԱՆՏ

Թեհրան

ՄԵԾ ՔԱՂԱՔԻ ՄԸ ՄԷՋ

Գրեց՝ Ա. ԱՐՓԻՆԷ

Սիրելի Վարժուհիիս՝ Տիկ. Վերժին
Գալփաքեան-Ղազարեանի յիշատակին:

Ամէն անգամ որ կ՚անցնիմ սա փողոցէն, կը յիշեմ այն օրերը, երբ դեռ նոր էինք եկեր եւ այս մեծ քաղաքին երկնամբերձ շէնքերն ու լայն պողոտաները, լոյսերն ու պերճանքը, ինծի համար ոչ մէկ հրապոյր ունենալէ զատ՝ կը ճնշէին, կը խեղդէին զիս կարծես:

Քաղաք մըն էր ասիկա, ուր մարդիկ նիւթն ու անոր հաճոյքները հետապնդող մեքենաներ ըլլալ կը թուէին լոկ. խօսող, ժպտող մեքենաներ, առանց զգացումի, առանց սրտի: Եւ ես հիասթափուած ու պատրանաթափ՝ կը յիշէի բոլոր անոնք, որոնք ըսեր էին «[illegible]»: Զարմացած՝ դիտեր էի ես զանոնք. ինչո՞ւ. չքնաղ երկիր մը, ուր ամէն պատեհութիւն կար անվերջ ուսանելու, աշխատ ու անկախ ապրելու: Ու երազներ էի հիւսեր, առանց յետին կասկածն ունենալու, թէ լոկ երազ մնալու սահմանուած էին անոնք:

Դէպի փարք տանող այս փողոցը տարբեր էր սակայն միւսներէն. կարծես ան այս քաղաքին չէր պատկաներ, աւելի ճիշդ՝ փողոցի վերջաւորութեանը մօտ կառուցուած սա տունն էր տարբեր: Քաղաքէն հեռացած, առանձնացած, դէմքը հարաւին՝ փայտաշէն արեւոտ սա տունը, որ ցանկապատով շրջապատուած պարտէզ մըն ալ ունէր: Եւ ես գետեզերք երթալու, քաղաքի ապականութիւնը թօթափելու, մտքով հեռանալու համար միշտ կ՚ընտրէի այդ փողոցը, որ սալայատակուած իսկ չէր: Կօշիկներս քարերու կը զարնուէին, կը փոշոտէին եւ ես տեսակ մը հաճոյք կը զգայի, կը հրճուէի, քաղաքակրթութեան բարիքներէն պահ մը հեռացած զգալով ինքզինքս...

Այդ օրերուն՝ ես մէկ փափաք, մէկ մտածում ունէի այլեւս. կը թախանձէի ծնողքիս չհաստատուիլ հոս, հեռանալ հոսկէ, փոյթ չէր թէ ուր, բաւ էր որ չտեսնէի բիւրաւոր մարդոց խոլ վազքը մեծ պողոտաներուն վրայ, չզգայի ահաւոր ճնշումը երկնաբերձ շէնքերուն, անոնցմէ մէկուն քանդերորդ յարկէն չդիտէի հազարաւոր լուսաւոր պատուհանները, որոնք մութին մէջէն կարծես վայրի գազաններու փայլատակող աչքեր էին իմ վրաս յառած:

Որքա՜ն տարբեր էր սակայն սա տունը ու սա գետը, որուն հեղ ու հանդարտ ջուրերուն մէջ ամէն օր կը տեսնէի երազներուս մի առ մի անհետիլը ու կրկին ու կրկին կը յիշէի բոլոր անոնք, որոնք տրտում ժպիտով մը ըսեր էին «[illegible]»ը. օտար ուսուցչուհի մը, դասընկերուհիներ ու ամէնէն վերջ՝ բացառիկ ձիրքերով ու բարձր արժանիքներով օժտուած շատ սիրելի դասատուհի մը, որ Ռուսաստանէն կը գրէր. «Միայն կը վախնամ թէ, Ամերիկայի դրամականացած մթնոլորտը քիչ մը խաթար համեմատի հոգիիդ հետ»...

Բարեբախտաբար, կային սա համեստ գետն ու կանաչութիւնը. կային սա փոշոտ փողոցը, կապոյտ ներկուած սա միայնակ երկյարկանի տունը ու անոր պարտէզին ցանկապատին վրայէն լայնօրէն ժպտող արեւածաղիկներուն ոսկի դէմքերը:

Ու երեկոյ մը, աղուոր երեկոյ մը, դէպի փարք ճամբուս վրայ՝ քայլերս տակաւ դանդաղեցան ու հմայուած կանգ առի յանկարծ: Մէկը կը նուագէր, կը նուագէր հիանալիօրէն, լոկ թէքնիք չէր, մեքենայ մարդը չէր, այլ ջերմ ու խորունկ զգայուն հոգի մը, գորշ քաղաքի սա արեւոտ տնակի մէջ:

Ու ակամայ երեւակայութեանս մէջ պատկերներ փնտռել, տան պատերէն ներս թափանցել, անոր բնակիչները տեսնել:

Նուրբ ու սիրուն կին մըն էր նստած դաշնակին առջեւ. խարտեաշ մազերը ուսերուն ինկած, երազուն աչքերը ստուերներուն յառած՝ դեռ շատ երիտասարդ կին մը, որ այնքան լաւ կը նուագէր: Քիչ անդին՝ կրակոտ աչքերով միջահասակ մարդ մըն էր կանգնած պատկերակալի մը առջեւ, երանգապնակն ու վրձինները ձեռքը, ահա կնոջ կը մօտենար, կը հակէր վրան, «Տե՛ս,— կ՚ըսէր պատկերակալին վրայ դրուած կիսաւարտ խոշոր պաստառը ցոյց տալով,— «Դաշնակին Առջեւ» պիտի կոչեմ զայն ու գլուխ գործոց մը պիտի ըլլայ անիկա»: Եւ այր ու կին կը դիտէին նկարը, կը դիտէին զիրար. շատ լաւ գիտէին թէ գնող պիտի չըլլար զայն, ահաւոր տարիներ էին, տնտեսական տագնապին յաջորդող ահաւոր տարիներ...

Եւ ի զուր, ամէն անցնելուս, պատուհաններուն առջեւ կը փնտռէի արուեստագէտ զոյգը... Միայն յափշտակութեամբ կ՚ունկնդրէի երաժշտութիւնը. դասական կտորներ բոլորն ալ, նուագուած խոր ըմբռնումով, նուրբ զգայնութեամբ, բայց օրէ օր աւելի կը զգայի նուագողի ուժի պակասը, որ ամէնէն աւելի կը շեշտուէր Լիսթի ու Պէթհովէնի մէջ:

Տան բնակիչները տեսնելու փափաքս անակնկալօրէն կ՚աճէր, երբ օր մը, մինչ դանդաղ քայլերով կ՚անցնէի Շոփէնի մէկ ցայգերգին ամբողջութիւնը լսել ջանալով՝ տան պատուհաններէն մէկուն մէջ նշմարեցի «Վարձու Սենեակ» ազդը: Սիրտս կանգ առաւ կարծես. կարելի՞ էր աւելի յարմար առիթ երազել... Վարանեցայ ու քայլերս ակամայ հեռացան:

Գետեզերքը երկար պտոյտ մը ըրի եւ սակայն համբերել չուզէի. ամիսներ ամբողջ հետաքրքրութեանս առարկան եղող այդ տունը այժմ բաց էր իմ առջեւ եւ ես կը վարանէի... Մեքենաբար դարձեր էի ետ, ու զանգակը կը հնչէր...

Խոր ու թափանցող աչքերով, լայն ու հպարտ ճակատով, միջահասակ, երիտասարդ մարդ մը բացաւ դուռը: «Նկարիչը, խորհեցայ, այո, նկարիչը», ու սիրտս պահ մը արոփեց խիստ արագ:

— Կ՚ուզէի սենեակը տեսնել,— ըսի բարեւելէս վերջ:

— Սենեա՞կը,— հարցուց քաղաքավարօրէն, բայց կարծես զարմացած:

— Այո, վարձու սենեակը,— պատասխանեցի թեթեւ մը այլայլած ու ցոյց տուի պատուհանին մէջ զետեղուած ազդը:

Կարծես տժգունեցաւ յանկարծ, աչքերը մռայլեցան ու դէմքի մկանները պրկուեցան: Բոպէ մը չկրցաւ խօսիլ, յետոյ՝

— Վայրկեան մը,— ըսաւ, օտարականի ուժեղ շեշտով,— խնդրեմ, վայրկեան մը սպասեցէք:

Բակին դիմացը գտնուող դուռ մը յառաջացաւ ու մէկը կանչեց, յետոյ, քովնտի դռնէ մը անյայտացաւ: Կին մը երեւցաւ, տնային հագուստով ու գոգնոցով, միջին տարիքի կին մը, բաց շագանակագոյն մազերով, արեւէն այրած մորթով, առողջ գեղջուկ կին մը:

— Կը փափաքիմ վարձու սենեակը տեսնել,— ըսի ժպտելով:

— Օ՜, այո, անշուշտ,— ըսաւ ջերմօրէն,— խնդրեմ ներս եկէք, երկրորդ յարկին վրայ է...

Յանկարծ կանգ առաւ ու դիտեց զիս:

— Ուսանողուհի եմ,— ստեցի,— արձակուրդին տուն կը վերադառնամ դարձեալ... Գեղեցիկ է ձեր տան դիրքը, մեկուսացած, քաղաքին աղմուկէն հեռացած...

— Այո,— ըսաւ,— այո...

Միասին սկսանք բարձրանալ սանդուխներէն, ու վարէն լսուեցաւ ինծի բոլորովին անծանօթ երաժշտական կտոր մը. կարծես որոտ մըն էր, զսպուած փոթորիկ մը, որ յանկարծ պայթեցաւ ու տակաւ մեղմացաւ, մեղմացաւ ու տխուր հեկեկանքի մը վերածուեցաւ:

Պահ մը բազրիքին կռթնած մնացի, մինչ տանտիրուհին դուռ մը կը բանար:

— Կը սիրէ՞ք երաժշտութիւնը,— հարցուց ժպտելով:

— Չափազանց...

Միասին մտանք արեւի շողերով ողողուած սենեակ մը, ուր ամէն ինչ մաքուր էր ու կոկիկ․ մահճակալ, հայելի, դարակ, գրասեղան, քանի մը աթոռներ, զուարթ գոյներով հանգստաւէտ թիկնաթոռ մը ու նուրբ, սպիտակ վարագոյրներով զոյգ մը պատուհաններ՝ պարտէզին ու գետին վրայ նայող։

— Հիանալի է,— ըսի տեսարանէն ու սենեակի պայծառութենէն յափշտակուած։

Նոյն պահուն ակնարկս ինկաւ գրասեղանին վրայ դիզուած երաժշտատետրերուն ու պատէն կախուած մեծ երաժիշտներու նկարներուն վրայ։

— Ատոնք Պրն․ Վէզանինն են,— փութաց ըսել տանտիկինը,— երաժիշտ է եւ դէշ տարիներ են, շատ դէշ տարիներ...

Ակնթարթի մը մէջ շողիացաւ տրտմադէմ զոյգը... Պրն․ Վէզանն էր ուրեմն նուագողը... Այժմ կը հասկնայի, թէ դէմքը ինչու էր այդպէս մռայլէր... Որքա՛ն, որքա՜ն ուժեղ ու տխրական էր իր նուագը, որ տակաւին կը շարունակուէր եւ զարմանալի էր որ ես զգալիօրէն ուժի պակաս էի նկատեր, երբ ան ուրիշ անգամներ կը նուագէր։

— Ֆրանսացի՞ էք,— հարցուց տիկինը։

— Ոչ,— հայ եմ,— ըսի հպարտօրէն եւ իմ կարճ ժամանակուայ փորձառութենէս հետեւցնելով՝ խորհեցայ որ, թերեւս առաջին անգամ կը լսէր հայ անունը։

Տանտիկնոջ աչքերը սակայն, շողացին հրճուանքով․ քոյրը հայու հետ էր ամուսնացեր, երկուքն ալ օտարներու հետ էին ամուսնացեր եւ շատ երջանիկ էին։

— Եթէ միայն տնտեսական տագնապը չըլլար,— աւելցուց տրտում շեշտով,— ստիպուած իմ Պրն․ Վէզանի սենեակը վարձու տալ... Շաբաթը հինգ տոլար է վարձքը, շատ չէ...

— Ո՛չ, շատ չէ,— ըսի ժպտելով ու սկսայ մտածել, թէ այժմ ի՛նչ ձեւ պիտի բաժնուէի այնքան համակրելի այս տանտիկինէն։

Միասին իջանք սանդուխներէն, դաշնակը լռած էր այժմ։

— Յաջորդ երկուշաբթի կրնաք փոխադրուիլ եթէ փափաքիք... Վստահ եմ Պրն․ Վէզանը...

— Մամա, խնդրեմ, վայրկեան մը ներս եկէք,— լսուեցաւ աղջկան մը քաղցր երգող ձայնը։

— Լաւ է որ ծանօթանաք, խնդրեմ, եկէք,— ըսաւ տանտիրուհին։

Վերինին նման մաքուր ու կոկիկ էր նաեւ այս սենեակը․ պայծառ, զուարթ գոյներով ծածկոցներ ու վարագոյրներ, սիրուն լամպեր ու ծաղկամաններ։ Դաշնակին առջեւ կանգներ էր Պրն․ Վէզանը ու անկիւնը, թիկնաթոռի մը մէջ, դեռատի աղջիկ մըն էր նստեր․ աժգոյն, ձուաձեւ դէմքով աղջիկ մը, խոշոր երազուն աչքերով, շագանակագոյն փայլուն մազերով։ Ինչ որ հմայիչ էր սակայն, դէմքի արտայայտութիւնն էր․ թէ՛ քաղցր ժպիտ էր, թէ՛ տրտմութիւն, թէ՛ վերացում էր, թէ՛ երազ ու սէր։ Կարծես իրական, շնչող էակ չէր, այլ անուրջ մը, լուսաւոր պատկեր մը, որ յանկարծ կեանքի պիտի գար ու պիտի խօսէր։

Երբ մօտեցանք՝ շարժեցաւ․ այն ատեն տեսայ թէ սրունքները տխեղծ էին ու ծունկերուն վրայ բուրդէ շալ մը կար։

— Աղջիկս է,— ըսաւ տանտիկինը,— սրունքներէն կը տառապի, բայց բժիշկը կը վստահեցնէ, թէ օր մը ինձմէ աւելի առողջ պիտի ըլլայ։

— Մամա՛,— գոչեց աղջիկը պաղատագին,— մամա՛, Պրն․ Վէզանի սենեակը պէտք չէ վարձու տալ... խնդրեմ մամա... խնդրեմ... Գիտես որքան յառաջդիմեցի Պրն․ Վէզանի դասէն ի վեր, ուրիշ ի՞նչ ունիմ ես, միայն, միայն դաշնակը եւ միայն, միայն Պրն․ Վէզանը զիս կը հասկնայ...

Ու աժգոյն այտերն ի վար արցունքի խոշոր կաթիլներ սկսան գլորիլ։

Ակնարկ մը նետեցի Պրն․ Վէզանի վրայ․ լուռ ու դունատ կանգներ էր անշարժ, ունքերը թեթեւօրէն լայնցած ու շրթները բաժնուած։ Որքա՜ն արտայայտիչ էր դէմքը, արուեստագէտի դէմք, հոգիին խորութիւնն ու փոթորկոտ ապրումները աչքերուն մէջ։

— Շատ կը ցաւիմ,— ըսաւ տանտիկինը ինծի դառնալով։

* * *

Ժամանակ մը մենք հեռացանք այդ շրջակայքէն։ Տարիներու ընթացքին ես սորվեցայ համակրանքով ու տեսակ մը գորովով դիտել միօրինակ շէնքերն ու պողոտաները այս գորշ քաղաքին, բայց երբեք չմոռցայ ինծ սիրելի այդ փողոցը եւ երբ օր մը դարձեալ փոխադրուեցանք նոյն շրջակայքը՝ ես կրկին սկսայ անցնիլ հոնկէ: Գետինը սալայատակուեր էր այժմ ու քանի մը նոր տուներ էին շինուեր. սակայն, արեւոտ տան դաշնակը լռեր էր ու դրան քովէն երկարած ձողիկէ մը կախուեր էր «Վարձու Սենեակ»ը:

Տխուր կասկածներ ունեցայ եւ կարելի եղածին չափ յաճախակի անցայ հոնկէ, օր մը տանտիկինը տեսնելու յոյսով: Երեկոյ մը, կանգներ էր ան դրան առջեւ, մազերը կիսով ճերմկեր էին ու քիչ մը նիհարցած կ'երեւէր:

Մօտեցայ ու բարեւեցի:

— Սենեա՞կը կ'ուզէիք տեսնել,— հարցուց:

— Ո՛չ,— ըսի ժպտելով,— չեմ կարծեր որ ճանչցաք զիս, բայց, թերեւս յիշէք, մօտ...

— Այո՛, այո՛, անշուշտ կը յիշեմ... հայ ուսանողուհին...

— Ճիշտ է,— ըսի,— երբեք չեմ կրցած ձեզ մոռնալ, օրիորդը նոյնպէս, առողջացած պէտք է ըլլայ այժմ:

Ակնարկը հեռացուց պահ մը ու ես վախով համակուած դիտեցի զինքը:

— Ո՛չ բոլորովին,— ըսաւ,— բայց, երջանիկ է... շատ երջանիկ... Միայն թէ, Նիւ Եորքէն մեկնեցաւ եւ ես մինակ կը զգամ, շատ մինակ...

Կնոջ աչքերը պահ մը փայլեցան եւ ինծի ուղղուեցան.

— Դուք պէտք է յիշէք ամուսինն ալ... երաժիշտ Վէօնը... Շատ լաւ դիրք ունի այժմ...

Ահա դարձեալ կ'անցնիմ սա փողոցէն ու կը յիշեմ այս բոլորը, բոլորը: Կը յիշեմ Պրն. Վէօնի փոթորկոտ նուագն ու մռայլ թախծոտ աչքերը, կը յիշեմ հիւանդ աղջկան դէմքի լոյսն ու արցունքները... Այո, կ'ըսեմ մտովի, նոյնիսկ մեծ քաղաքի մը գորշ պատերուն մէջ, ուր մարդիկ առանց սրտի ու զգացումի, նիւթ ու սին հաճոյքներ հետապնդող մեքենաներ ըլլալ կը թուին լոկ՝ կան այսպիսի փողոցներ, փայտաշէն փոքր արեւոտ տուներ, ջերմ, զգայուն բաբախող սրտեր, խոր ու մաքուր աչքեր...

ԱՐՏԸ

Գրեց՝ ՍՕՍ–ՎԱՆԻ

Առտուն՝ կանուխ: Շուրթիս բանիրին ծուխ: Ցոյսով, խանդով, ես արտ կ'երթամ արօրն ուսիս, զոյգ եզներուս դունչերն ուղղած դէպի հիւսիս...: Մայրս կը քալէ ճամբու եզրէն, ինծի ընկեր. մօր ու տղու սիրոյ բոցէն՝ ճամբան կարծես լուսաւորուեր:

Որբեւայրի, ոչ ոք ունի, բացի ինձմէ, անոր համար՝ ես արեւն եմ որ իր սրտին լոյս կը ձօնէ: Մերթ կը խօսինք, մերթ կը խնդանք, ու արտ կ'երթանք. մայրս կը պատմէ իր երէկի արեւոտ կեանքը...: Ջո՞վ է, զո՞վ է :Արտերու մէջ, գիրգ ու խնդուն՝ երկինք, երկիր բերան բերնի՝ կը փրփրեն գաղտնիքները դաշտի մարդուն: Խորընդատի թուփը հպարտ եւ իմաստուն՝ կ'արձանագրէ ԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ դիւցազնութիւն...:

Բլրակին ծայր, թառած պուրակն՝ բախտ կը նայի որպէս ջատուկ. մինչ հեղեղատն զայն կը ծաղրէ՝ արձակելով թունոտ խընդուք...: Ժամուն յոգնած ու ալեւոր կոչնակն տխա՛, լոյսն կը կանչէ, որպէս քարի, գրոտ արքայ..., եւ ժամկոչի աչքերուն մէջ, յանկարծօրէն՝ Լոյսի մը շող կ'իյնայ նորոգ Արշալոյսէն...:

Օրհնեա՜լ ես ԼՈՅՍ, իջի՛ր գետին, իջի՛ր ուսիս եւ արօրիս..., իջի՛ր գլխուն, ա՛յնքան խոհուն եւ բարեգութ իմ մայրիկիս...: Իջի՛ր Նուսին, Արապ եզին, մենք միասին՝ պէտք է երթանք արտը ցանել..., ո՛վ Լոյս, գիտցի՛ր, լաւ է արտը լոյսով ցանել, ու սերմին հետ սրբազնագոյն՝ քանի մը ափ արեւ խառնել...:

* * *

Օ՜խ, մեր արտին վերի ճորթին՝ հասաւ համբոյրն տաք արեւին: Այնտեղ, կարծես, բերկրութիւն կայ, խնդուք ու պար, ճիչ ցընծագին, ուր գիտես թէ հաւաքուեր են յաւերժահարսեր, կը տօնեն պահն արեւծագին...:

Բլրի մէջքին հասակ ցըցած մեր ճշենին՝ ծաղիկ բացեր ու ճերմըկեր ամբողջովին, մեղուներուն հետ կը խօսի մտերմօրէն, կ'առնէ լուրեր ձմրան, գարնան ռազմ ու խազմէն...: Անոր շուրջը, սարեակները համախմբուած եւ խանդավառ՝ դաշտահանդէս կուտան կարծես, նոր ժամանող գարնան համար...:

Բազէն թըռա՜ւ, վեր բարձրացաւ, արեւ-քաղեց իր կտուցով, ժամու ժայռին աղաւնիները երկինք ըրին ալեկոծ ծով...: Ահա՛ Թէսը, նստած է էջ, վազվազակի կ'երթայ իր արտ բանջարքաղի: Օրհնեա՜լ ես գիւղ, ուր տեղ խրտիր չկայ երբե՛ք, ո՛չ հարուստի, ո՛չ աղքատի, ամէնք՝ մարդ են, եւ հող ունին, իսկ հողին տէրն պէտք է երթայ աշխատանքի..., այս է պատգամն յաւերժական Հայոց երկրի. ով չաշխատիր՝ խիղճ ու Աստուած ըրնաւ չունի...:

Դէ՜հ, մայրիկըս, քըշե՛նք եզներ, արտը մտնենք արեւոտած... ուսիս վրայ՝ արօրին հետ կը սիրուըտի Բարի Աստուած...:

* * *

Ահա՛ մեր արտ:

Քունէն դեռ նոր զարթնած տըղու մը կը նմանի, կը յօրանջէ, թեւ կը լարէ, եւ կը շնչէ շողն արեւի:

Ես կը կենամ արեւմուտ-կողմ, ձեռքըս բռնած մաճն արօրին: Եզներս պատրաստ՝ մըտիկ կ'ընեն ձայնը հողին...:

Մայրս՝ կեցած է արեւելք-կողմ, սիրտը ըրած անբիծ բագին, սարեակները կը ներքողեն սըրբութիւնը անոր թուխսին...:

Մայրս ըսաւ.

— Արե՛ւ Աստուած, հողը տաքցո՛ւր, անոր մէն մի փշրանքը ու գուղձ՝ դուն զօրացո՛ւր, ըրէ՛ որ հողն՝ սերմն ընդունի յօժարաբար, ու մեզ դարձնէ բազմապատիկ, բազմահազար:

Ես՝ ըսի.

— Երկնի, երկրի տէ՛ր. թագաւոր, անվրէպ արքայ, քու գթութիւնդ թափէ՛ այս մեր արտին վըրայ... անոր լուսեղ ակօսներէն որպէս հեղեղ՝ հոս ան թո՛ղ տայ ՍՐՍՈՒԹ ցորեան, լեցնէ տուներն, պարկն ու ամբար, ամէն մի տեղ...։

Մայրս բսաւ.

— Ողորմա՛ծ տէր, պահպանէ՛ մեր արտն ու ցանքը հեղեղներէն, ե՛ւ երաշտէն ե՛ւ մարախէն, յայտնի, անյայտ փորձանքներէն։

Ես՝ բսի.

— Գոհութիւն քե՛զ։ Ցորենին հետ՝ քրտինքս տաք պիտի ցանեմ, թո՛ղ որ քրտինքս ծաղկի փարթամ։ Ու թո՛ղ որ ես՝ աշխատանքիս համար խնդամ, տուներս լեցուի բերք-բարիքով, տուներս դառնայ բարութեան ծով. տամ ամէնուն թէ գիշերով, թէ ցերեկով. գիտցի՛ր հայ եմ, ու կ'ապրիմ ես լոկ հաւատքով...։

Մեր աղօթքէն, արտը կարծես, զուարճանքի լարեց հանդէս, մինչ եզներս աշխուժացան, ուժուորեցան վագրերու պէս..., խոփն՝ փայլեցաւ, հողը՝ խոփին համբոյր տուաւ։ Մայրս գինով արտին սէրէն, անոր հպարտ մայրութենէն՝ իր մայրութեան վէպը պատմեց գեղեցկօրէն։

— Հրաշափառ գեղեցկութիւն կայ այս կնկան մայրութեան մէջ՝ ինչպէս մարգրիտ ոստրէին մէջ, հռհռացին ագռաւները թեւածելէն։

— Ի՞նչ զուգադէպ պատկերացում, հերոսական ի՞նչ ինքնիշխան զոհողութիւն, չկայ բան մը որ մայրութեան հանգամանքին հաւասարի. աշխարհս ցած է, խե՛ղճ ու նկուն, մինչ Մայրութիւնն՝ Արարատէն վեր կը թռի...։ Մեղուները տզտզացին հովիտներէն։

— Հօրօվէլ հօ՜։ Ձայներս փրթաւ ժայռէն թափող ջրվէժին պէս, ու եզներս վահագնազօր՝ հուժկու ձայնէս, թաւ բաշերնին թօթուեցին, արօրը մեր ձիգ քաշեցին։

— Հօրօվէլ հօ՛։ Ակօսի քով՝ ուրիշ ակօս. մինչեւ իրկուն՝ խոփս կը պեղէ կուրծքը հողին, դուրս կը քաշէ անոր ծոցէն՝ դիւթը ՈՒԺԻՆ։ Մայրամուտին, երբ մօրըս հետ տուն կուգայի՝ տեսայ երկու արագիլներ, որոնք արտին մէկ ծայրէն միւս՝ կը պտըտէին հնապաշտիկ ու իմաստուն մարդերու պէս։

* * *

Արտըս, դարձիր կանաչի ծո՛վ։

Թռչունները անոր համար՝ համերգ կուտան հպարտանքով։ Մայրըս եկած տանիքը մեր, բուրդ կը մանէ արագօրէն. թելն՝ կը հոսի, ու շողի պէս՝ վար կը ծորի առատօրէն...։ Ես կեցած եմ սեմին վըրայ. կը դիտեմ դաշտն ու բուրաստան, ուրկէ կ'անցնի գարունը մեր՝ ձեռքը բռնած ծիլ մը ցորեան։

Հեռուէն կ'ուզեմ տեսնել արտըս. տեսնել անոր վէտվէտումներն հեզաճկուն, հեռուներէն կ'ուզեմ վայլել անոր կորովն ու մայրութիւն։ Աչքս կ'իյնայ— առաջին հեղ— Պանիրեանի ցորենարտին, անկէ կ'իջնէ, կը հանդիպի հեղեղատին. քիչ մը անդին, դէպի հարաւ՝ Ջորենց արտն է, որուն մօտիկ՝ Այմոյենցը դէմըս կ'ելլէ. քիչ մը, հեռու, ահա՛ մեր արտ, ե՛ւ պարմանի եւ խանդավառ, որուն հողին մէջ քրտինքըս ՀԱՅ կը բանի ջղաձգաբար...։

Ես՝ պարծենքով. Աշխատանքի ես կամակոր տէր ու իշխա՛ն, կ'ուրուագծեմ մեր իսկ արտին կենդանագիրն, եւ ակօսին մէջէն անոր՝ կ'աստուածանայ հացը ցորեան...։

— Մա՛յրիկ։

— Ի՞նչ է։

— Մեր արտը տե՛ս, մարտին ծընած գառնուկին պէս՝ կը ճապկըտի արեւուն տակ, զիս կը լեցնէ յոյսովը տաք, կարծես ըլլայ հարուստ մարդու երես առած աղջիկ — տըղայ, գլուխն վեր է, պարծ ու հպարտ, խօսք կը նետէ արտէ ի արտ...։

— Մա՛յրիկ։

— Ի՞նչ է։

— Մեր արտը տե՛ս. հաւփալներու կուրծքին նըման, ծիլերն ունին՝ ցորենծաղկի փառքը վաղուան...։ Օր մը անոր մէջէն պիտի յառնէ ՀԱՅԸ Ցիուսարոյր, ու ես, ու դուն՝ անոր առջեւ պիտի ելլենք, հնչեցնելով ԱՇԽԱՏԱՆՔԻ պղինձը կուռ...։

— Մա՛յրիկ։

— Ի՞նչ է։

— Ես՝ մեր արտին սըլսըլոցէն քաղցրահնչիւն, ձայնը կ'առնեմ մեր բարեպաշտ պապիկներուն..., կը պատկերեմ մեր մամիկները աստուածընտիր եւ ըզգայուն՝ որոնք մէն մի ժամ ու վայրկեան, կ'օգնէին մեր աղքատներուն, լոյսի ճամբով՝ սուրբ կ'ըլլային, սուրբերուն հետ կը մըրցէին...։

— Մայրի՞կ։

— Ի՞նչ է։

— Մա՛յրիկ, ձըգէ՛ ձեռքիդ իլիկն, մենք միասին՝ երկրպագենք Հայոց երկրի հրաշքհողին...։ Մայր ու տղու անմեղութեամբ, հիւսենք մէկ նոր Յաղթերգութիւն, եւ երգենք փառքն՝ հազար անգամ աստուածացած հայ հողերուն...։

ԱՅՍ ԼՈՒՌ ԳԻՇԵՐԻՆ...

Այս լուռ գիշերին, խաղաղ, անվրդով՝
Գուրգուրանքի տակ քնքուշ մշուշի—
Ես տուն չեմ գնում եւ յոգնած սրտով
Քայլում եմ առանց երազի, յուշի։

Համր են եւ կոյր դուռ ու լուսամուտ,
Ձե՛մ էլ ցանկանում ես մէկը թակել...
Քամում է հոգիս խեղդող, թանձր, մութ,
Եւ կուրծքս մշուշ լցւում անարգել։

Տրջում եմ մոլոր եւ ամէն անգամ
Սարսուռ եմ զգում պատուհանից դէմ.
Ու կանգնում, նորից քայլում եմ դժկամ,
Թէ ո՞ւր, կամ ինչո՞ւ ես էլ չգիտեմ։

Դու գուցէ վաղուց քնել ես անուշ՝
Տարտամ, աներազ մշուշի նման...
Ես ման եմ գալիս յամրաքայլ, անուժ՝
Մահուան ծանրութիւն իմ կրծքի վրան։

Լուռով հանդիպեմ — քեզ չե՛մ էլ նայի
Թո՛ղ միշտ դեգերիմ կեանքիս մշուշում...
— Ա՜խ, սիրտ իմ թշուառ, սիրտ իմ ամայի,
— Ինչո՞ւ ես զգում... ինչո՞ւ ես յիշում։

Գ. ՔԵԱՂԱՇԵԱՆ

ՄԱՐԻ - ՄԱԴԼԷՆ

Գրեց՝ ԺԵՆՆԵԱ ԱՐԻՍՏԱԿԵԱՆ–ՊՕԼԵԱԿԻՆ

ԱՐԱՐ II

Արսինեանների տանը : Վերժինի աշխատանոցը, ճաշակով կահաւորուած : Պատի վրայ զանազան յայտնի նկարիչների եւ երաժիշտների դիմանկարները, գլուխներ կաւաքարից շինուած · զոր օրինակ՝ Պէթովէնի, Ռոտէնի, Լիսթի, Շօփէնի կիսարձանները : Անկիւնում, բարձրութեան վրայ՝ «Վենիւս»ի արձանը, կապոյտ վարագոյրի առջեւ : Միւս անկիւնում «Երեք Շնորհները» (Լէ թրուա կրաս) : Խորքում՝ մի մեծ սեղան, որու վրայ նոյնպէս զանազան արձանիկներ : Ամբողջ սենեակը կրում է գեղարուեստի դրոշմը : Առաջին պլանի վրայ դէպի յառաջաբեմ եւ ձախ կողմը՝ երկու խոշոր փափուկ բազկաթոռներ : Նրանց մէջտեղը՝ ցած սեղան, հայելիով ծածկուած : վրան, գեղարի մէջ՝ ծաղիկներ, իսկ քովը՝ Ալէկօի բանաստեղծութիւնների գրքոյկը : Դիմացը, դէպի աջ, գեղեցիկ բազմոց :

Վարագոյրը բացուած ժամանակ Ալէկօն բեմի վրայ է, նստած փոքրիկ սեղանի մօտ՝ գրում է :

ՏԵՍԻԼ 1

(Ալէկօ եւ Վերժին)

ՎԵՐԺԻՆ (Ներս է մտնում եւ զգեստի վրայ հագած է կապոյտ գոգնոց, վերարկուի ձեւով, թեւերը կարճ, յատուկ գործի համար) — *Ա՜, մուսաներդ, վերջապէս, եկան : Շնորհաւորում եմ : Երկար ժամանակէ ի վեր ոչինչ չես գրած :*

ԱԼԷԿՕ — Ներշնչումը շատ քմահաճ է · կամ ոչինչ, կամ շատ առատ :

ՎԵՐԺԻՆ — Դու եւս մեծ գրագէտների նման արդէն ունես քո նախապատուութիւնները :

ԱԼԷԿՕ — Մեծ գրագէտ չեմ, բայց խոշոր սենեակի մէջ երբեք չեմ կարող գրել : Միայն փոքրիկ թերթիկները, առհասարակ, ներշնչում են ինձ :

ՎԵՐԺԻՆ — (Նստում է նրա բազկաթոռի թեւի վրայ եւ ձեռքը դնում ուսին :) *Այս գիշեր, երբ տեսայ մութի մէջ փայլող աչքերդ՝ մէկ կէտի անթարթ յառած, հասկացայ, որ ստեղծում ես յիշողութեանդ մէջ, եւ որ այսօր այս փոքր թերթիկների վրայ պիտի գրես, ո՞վ գիտէ, ինչ սիրուն խօսքեր : Կարդա՛, կ'ուզեմ լսել :*

ԱԼԷԿՕ — Մութի եւ լռութեան մէջ ամէն ինչ աւելի գեղեցիկ է ու խորհրդաւոր : Այդպէս էի զգում գիշերով, իսկ այժմ, երբ գրեցի, չեմ գտնում այլեւս այդ խորհուրդը :

ՎԵՐԺԻՆ — Դու միշտ չափից աւելի պահանջկոտ ես : Կարդա՛, կարդա՛, անհամբեր եմ ։

Մարի Մադլէն

ԱԼԷԿՕ (կարդում է) —

«Ոսկեվառ մազերով
Սրբեցիր «նրան» ոտքերը·
Անսահման խղճալով
«Նա» ներեց քո մեղքերը·
Բայց ինչո՞ւ շատ այդպէս
Փոխեցիր քո կեանքը,
Եւ նորից կուռքի պէս
Պաշտեցիր պատրանքը :
Դու գնում ես խնդալով՝
Մէկից միւսի գիրկը,
Փրփրուն ալիքով
Ողողում է քեզ կիրքը·
Արտասուեն պիտ՝ կրկին
Քո ծիծղուն աչքերը,
Կը կախուեն մինչ գետին
Ոսկեվառ մազերը·
Պիտ՝ նետէ ամէն ոք
Քեզ դարձեալ քարը,
Չէ՞ որ չար ու անողոք
Է ամբողջ աշխարհը...»

ՎԵՐԺԻՆ — Օհօ՜... Ուղղութիւնդ փոխում ես, Ալէկօ : Առաջինը՝ երկնքից, այսինքն՝ երեւակայութեան եւ երազանքի աշխարհից իջնում ես երկիր : Եւ երկրորդը՝ մի շատ կըն-

ուտ հարց ես շօշափում։ (Թեթեւ) Վայ թէ հօրաքոյրդ կարդայ այդ տողերը, հուր ու կրակ կը թափի գլխիդ։

ԱԼԷԿՕ — Բայց ինչո՞ւ։ Գրեցի այն, ինչ որ զգում եմ։

ՎԵՐԺԻՆ —Որքա՜ն ուրախ եմ, որ դու, վերջապէս, խղճացիր այդ կնոջը, «Ոսկեվարս մազերով տիկին Մագլէնին»։

ԱԼԷԿՕ —Արդեօք նա արժանի՞ է այդ զգացմունքին։ Պէ՞տք է նրան խղճալ։

ՎԵՐԺԻՆ — Մի՛ սկսիր նորից պրպտել։ Չեմ սիրում այդ քո «արդեօք» խօսքը։ Եղիր ինքնակամ, անկեղծ։

ԱԼԷԿՕ — Մի՞թէ կասկածում ես իմ անկեղծութեան վրայ։

ՎԵՐԺԻՆ — Եթէ կասկածէի, դրած բանաստեղծութիւնդ կը փարատէր կասկածս։ Ալէկօ, գիտես թէ ես որչա՜փ սիրում եմ եւ յարգում հօրաքրոջդ՝ Մարթային, բայց կայ մի պարագայ, որ ինձ հակակրանք է պատճառում։ Այդ՝ նրա խիստ, մինչեւ անգամ չար վերաբերմունքն է դէպի ճամբից շեղուած կիները։ Նա ինձ յիշեցնում է միջնադարեան անողոք դատաւորները, որոնք անխղճօրէն այրել էին տալիս խարոյկի բոցերի մէջ անթիւ զոհեր։ Հաւատացած եմ, որ հօրաքոյրդ, եթէ կարողութիւն ունենար, անմիջապէս այրել կը տար աշխարհի բոլոր սայթաքած կիները, առանց անդրադառնալու, առանց փնտռելու նրանց անբախտութեան գրգիչ պատճառը։ Որքա՜ն լաւ է ներողամիտ լինել, Ալէկօ։ Միայն այն ժամանակ մարդ ինքնիրեն երջանիկ կը զգայ։

ԱԼԷԿՕ — Դու խօսում ես փիլիսոփայօրէն։

ՎԵՐԺԻՆ — Ոչ փիլիսոփայօրէն, այլ Նրա խօսքերով, Նրա օրինակով, որ «անսահման խղճալով ներեց մեղքերը»։ Ես կարծում եմ, Ալէկօ, թէ միայն նա, որ բոլորովին որբ է մնում աշխարհի վրայ, ինչպէս ես մնացի, կարող է զգալ խղճմտանքի եւ ներումի արժէքը։ Գիտես թէ ի՞նչ դաժան օրեր եմ ապրել փոքրիկ եղած ժամանակ — անօթի, ծարաւ, ինձ պէս խեղճ դրացիների հոգածութեան տակ։ Եւ միայն այդ խեղճութեան մեծութիւնը փրկեց իմ հոգին ու կեանքը։ Ես շատ կանուխ հասկացայ, թէ խեղճը աւելի բարձր է հոգիով քան հարուստը, աւելի ներողամիտ է եւ վեհանձն է, թէեւ ճիշդ հակառակը պիտի լինէր։ Այնպէս չէ՞։

ԱԼԷԿՕ — Գիտեմ քո քաշած տառապանքը, հոգիս, բայց չէ՞ որ ես էլ քեզ պէս որբ եմ եղած։

ՎԵՐԺԻՆ — Դո՛ւ։ Ո՛չ, դու հարուստ որբ էիր այդ տեսակէտից։ Դու երբեք չես զգացել կարիք ո՛ւ ոչ մէկ բանում։ Քու հօրաքրոջ գուրգուրանքը եւ սէրը երբեք չեն պակասած քեզ։

ԱԼԷԿՕ — Սակայն, դրանք հարազատ մօր գուրգուրանքը, նրա քնքոյշ համբոյրները, նրա կարօտը չեն։

ՎԵՐԺԻՆ —Դու նման ես այն հարուստին, որը որոշեց անձնասպան լինել, որովհետեւ ամէն ինչ ունի եւ իր ոչ մէկ ցանկութիւնը մնում է անկատար, աւելորդ է դառնում ապրել։

ԱԼԷԿՕ (Զուարթ) — Գէշ գաղափար ես կազմել իմ մասին։ Ես երբեք անձնասպան չեմ լինի, որովհետեւ ցանկութիւններս անսահման են, որովհետեւ քեզ պէս խելօք կին ունեմ եւ, վերջապէս, ինչպէս քիչ առաջ նկատեցիր, երկնքից իջնում եմ երկիր եւ գտնում եմ այդ երկիրը շատ հետաքրքրական եւ լեցուն պէսպէս հակապատկերներով։ Ճիշտ ինչպէս շարժապատկերի մէջ, թանձր մթութիւնը յանկարծ փոխուեց հազար ու մէկ գոյներով փայլող ճամբայի։

ՎԵՐԺԻՆ — «Եւ այդ ճամբայով գնում է Նոր մեղքեր գործելով Մարի Մագլէնը։»

ԱԼԷԿՕ — Մաղթո՞ւմ ես։ Բայց պիտի խոստովանեմ, Վերժին, որ շատ ցաւալի կը լինի, եթէ տիկին Մագլէնը իսկապէս նոր մեղքեր գործէ։

ՎԵՐԺԻՆ —Ա, իրա՞ւ խղճում ես նրան։

ԱԼԷԿՕ — Ոչ միայն խղճում եմ, այլ փափաքում, որ նա վարէր հանդիստ, պատուաւոր կեանք… եւ երջանիկ լինէր։

ՎԵՐԺԻՆ (զուարթ կատակով) — Ըհը՛, հիմա արդէն պիտի բարկանամ։ Շատ ես զբաղւում այդ տիկինով, Ալէկ. ապագան վտանգաւոր եմ տեսնում։ Կարծեմ, նա մեր անհամաձայնութեան պատճառը պիտի դառնայ եւ պա-

տերազմ պիտի պայթի, ինչպէս մի ժամանակ, մի խնձորի պատճառով: «Հեղինէ Գեղեցիկի» պատմութիւնը յիշո՞ւմ ես:

ԱԼԷԿՕ — Անամօթ, խնձորը ո՞րտեղից մէջտեղ բերիր: Այ, դու տանձ: (Յարձակւում է վրան, վերժինը փախչում է:)

ՎԵՐԺԻՆ (Ծիծաղելով) — *Աստուածները մի բարկացնի. տե՛ս, յանկարծ կը պատժեն քեզ:*

ԱԼԷԿՕ — Աստուածները ինձ պատժեցին արդէն այն օրը, երբ քեզ հետ պատահեցի:

ՎԵՐԺԻՆ — Ա՛, այդպէ՞ս: Վա՜յ անպատկառ:

ԱԼԷԿՕ — Անպատկա՞ռ: Ո՞վ է այդ անպատկառը, տեսնեմ: (Մինչեւ այդ, վերժինը բազկաթոռի ետեւ է պատսպարուած: Ալէկօն մօտենում է նրան, նա փախչում է, բայց Ալէկօն կտրում է ճամբան եւ գրկում նրան:)

ՎԵՐԺԻՆ (Նրա գրկում) — *Իրաւ որ, անպատկառ ես, հապա եթէ մէկը ներս մտնի, ի՞նչ կ՚ասի:*

ՏԵՍԻԼ 2

Նոյնք եւ Սամուէլ

ՍԱՄՈՒԷԼ (Ներս է մտել մի քանի վայրկեան առաջ եւ լսել է վերժինի վերջին խօսքերը) — *Ի՞նչ պիտի ասի. կ՚ասէ որ մարդ ու կնիկ իրար հետ «ախլի-բիլի» են անում:*

(Ալէկօ եւ վերժին շփոթած՝ իրարից բաժանւում են:)

ՎԵՐԺԻՆ — Տեսա՞ր, ես չասացի՞:

ՍԱՄՈՒԷԼ — Կը ներէք, եթէ խանգարեցի ձեզ: Բայց կարծեմ թէ մեղքը ձերն է: Ինձ պաշտօնական հրաւէր էք ուղարկած... (փընտռելով գրպաններում) *Ահա՛: «Յարգելի պարոն Սամուէլ, խնդրում ենք ձեզ, վաղը (այսինքն՝ այսօր) ժամը 5ի ատեններում մեզի գալ: Ալէկ, Վերժին:» Տարօրինակ հրաւէր. Մարդս ստիպել, որ իր հանգստեան ժամը զոհէ գայ ձեզ մօտ՝ այր եւ կին իրար գրկում տեսնելու համար: Շա՜տ տարօրինակ հրաւէր է: Ուրիշ անգամ չէք խաբի:*

ՎԵՐԺԻՆ (խնդալով) — *Ամբողջ Ալէկի մեղքն է: Բացատրիր:*

ԱԼԷԿՕ — Իմ մեղքը ո՞ւր է: Քո խնձորն է մեղաւոր, ոչ թէ ես: Երկպառակութեան խնձորը:

ՍԱՄՈՒԷԼ — Ի՞նչ, խնձո՞րը:

ՎԵՐԺԻՆ — Իմ խնձորը չէ, այլ պատմական խնձորը:

ՍԱՄՈՒԷԼ — Դուք երկուքդ էլ չինարէն էք խօսում:

ՎԵՐԺԻՆ (խնդալով) — *Չինացիք չէ, այլ յոյները:*

ՍԱՄՈՒԷԼ (Ձեռքը ճակատին տանելով) — *Արդեօք ձեր վերնատունը պարպուե՞լ է:*

ԱԼԷԿ (խնդալով) — *Վերժին, ձգիր, որ ես բացատրեմ...*

ՎԵՐԺԻՆ (Յանկարծ անդրադառնալով) — *Օ՜, արձանիկը մինչեւ հիմա ջուրի տակն է, մարդիկ շուտով պիտի գան, իսկ ես դեռ հագուած չեմ: Ախ, Ալէկ, այս ամբողջը քո մեղքն է: Պայ, պա՜յ:*

ՏԵՍԻԼ 3

Ալէկօ, Սամուէլ

ՍԱՄՈՒԷԼ — Խնձոր, արձանիկ, մարդիկ... Ոչինչ չեմ հասկանում: Այն գիտեմ, որ սոսկալի քուն ունեմ: Ճաշից յետոյ չքնանալ շատ մեծ զոհողութիւն է իմ կողմից, եւ դուք էլ կ՚արծես թէ ինձ ծաղրելով էք զբաղուած:

ԱԼԷԿՕ — Քաւ լիցի, ինչո՞ւ պիտի ծաղրենք ձեզ: Վերժինը ասաց, թէ մենք պիտի կռուինք իրար հետ, ինչպէս հին ժամանակները, երբ Պարիսի կողմից Հեղինէ Գեղեցիկին նուիրուած խնձորի պատճառով կռիւ ծագեց:

ՍԱՄՈՒԷԼ (Կտրելով նրա խօսքը) — *Սիրելիս ձգիր այդ պատմութիւնը: Խնձորը առհասարակ շատ վտանգաւոր պտուղ է, ամէն չարիքի պատճառն է: Եթէ դրախտում խնձորը յանկարծ մէջտեղ չգար, մենք էլ հիմա գոյութիւն չէինք ունենայ այս փուչ աշխարհում:*

ԱԼԷԿՕ — Ես իմ կողմից շատ գոհ եմ որ գոյութիւն ունեմ... (Նայելով ձեռքի ժամացոյցին) *Իսկ մեր հիւրերը ուր որ է կը գան:*

ՍԱՄՈՒԷԼ — Ի՞նչ հիւրեր:

ԱԼԷԿՕ — Վերժինը տիկ. Մադլէնի արձանը վերջացրեց, եւ այսօր պիտի ցուցադրի: Այդ պատճառով է որ ձեզ այս ժամին հրաւիրած ենք:

ՍԱՄՈՒԷԼ — Ա՜... Ուրիշ ո՞վ պիտի գայ:

ԱԼԷԿՕ — Անշուշտ, տիկ. Մադլէնը, Մր. Ստատունը եւ Պատրիկը:

ՍԱՄՈՒԷԼ — Հօրաքոյրդ գիտէ՞, որ նրանք պիտի գան:

ԱԼԷԿՕ — Այդ ի՞նչ հարց է: Հարկաւ գիտէ:

ՍԱՄՈՒԷԼ — Եւ... եւ ներկա՞յ պիտի լինի:

ԱԼԷԿՕ — Անշուշտ. ուր որ է նա էլ կը գայ:

ՍԱՄՈՒԷԼ — Ի՞նչպէս, Մարթան տունը չէ՞:

ԱԼԷԿՕ — Ոչ, այսօր Տիկնանց Միութեան ժողովի օրն է: Բայց Հօրաքոյրը պիտի ջանայ շուտով վերադառնալ:

ՍԱՄՈՒԷԼ (վեր կենալով) — Գիտե՞ս՝ ինչ, կը ներես ինձ, ես շատ յոգնած եմ, մինչեւ քո հիւրերից գալը, ես ճաշարանի բազմոցի վրայ մի քիչ կը հանգստանամ: Նրանց գալուն պէս ինձ լուր կը տաս:

ԱԼԷԿՕ — Օ՜, դուք պատկերու պէս կը քնանաք, եւ Վերժինը կը բարկանայ:

ՍԱՄՈՒԷԼ — Երանի՜ թէ միայն Վերժինը բարկանար: Այդ երկպառակութեան խնձորը վտանգաւոր չէ:

ԱԼԷԿՕ — Հապա ուրի՞շ ո՞վ: Հօրաքո՞յրը:

ՍԱՄՈՒԷԼ — Այո՛... հօրաքոյրը:

ԱԼԷԿՕ — Դուք նրանից չէ՞ք վախենում:

ՍԱՄՈՒԷԼ — Այս անգամ շատ եմ վախենում, շատ. ուղղակի դողում եմ: Օ՜, երկպառակութեան խնձոր:

ԱԼԷԿՕ — Կ'ուզէի հասկանալ թէ դուք երբեք լուրջ խօսո՞ւմ էք, պ. Սամուէլ. չարունակ կատակում էք:

ՍԱՄՈՒԷԼ — Քեզ պէս բեբեկները դեռ չգիտեն թէ յաճախ լուրջ բաները կատակով են ասում:

ԱԼԷԿՕ — Ի՞նչպէս, չեմ հասկանում...

ՍԱՄՈՒԷԼ — Ի՞նչ պէտք ունես հասկանալու, դեռ շատ կանուխ է քեզ համար: Հասկանալ կը նշանակէ հիասթափուել, կը նշանակէ ներել, կը նշանակէ... ծերանալ: Երիտասարդը շատ չի հիասթափուի, որովհետեւ նրա աչքերը լեցուն են գեղեցկութեան պատկերով, սիրտը՝ սիրոյ հրապոյրով, հոգին՝ հաւատով. երիտասարդը չի կարող ներել, որովհետեւ դեռ ինքն իրեն է սիրում, իսկ ներելու համար պէտք է արար աշխարհը սիրել, իսկ արար աշխարհը սիրելու համար՝ անհրաժեշտ է կեանքի ճամբան անցնել, կանգնել էն վերջի ծայրին եւ դիտել այդ անցած ճամբան անաչառ աչքով... այսինքն՝ պէտք է ծերանալ:

ԱԼԷԿՕ — Հիասթափուել... ներել... ծերանալ... Թարսունկ են ձեր խօսքերը, սակայն ես կը նախընտրեմ ապրել, սիրել եւ գրել... գրել...

ՍԱՄՈՒԷԼ — Երբ հիասթափուես, աւելի լաւ կը գրես, որովհետեւ մելանով չէ որ կը թրջուի գրչիդ ծայրը, այլ սրտիդ ու գլխացումիդ արիւնով:

ԱԼԷԿՕ — Դուք այսօր բանաստեղծօրէն էք խօսում:

ՍԱՄՈՒԷԼ — Հա՞, տարօրինակ է: Այդ ահա ծերութեան նշան է: Միշտ քունս եկած ատեն շատախօս, ծակ փիլիսոփայ եմ դառնում: Գնանք ներս, ապա թէ ոչ՝ այստեղ կը քնանամ:

ԱԼԷԿՕ — Ոչ, ոչ, սպասեցէք մի քիչ:

ՍԱՄՈՒԷԼ — Գնանք, շատ խօսելը վտանգաւոր է: Ամենախելացի մարդը, երբ շատ խօսի, վերջ ի վերջոյ մի անմիտ բան կ'ասի: Գնանք, ասում եմ քեզ: (Ձեռքից քաշելով՝ գնում է ձախ:)

ՏԵՍԻԼ 4

Մարի–Մադլէն, շատ մեծ ճաշակով հագուած. գեղեցիկ «բայլէօր», ուսերի վրայ մուշտակ, գլխարկով եւ ձեռքին պայուսակ: Ներս է գալիս, շուրջը նայում, մօտենում արձաններին, սեղանին, յետոյ մօտենում է փոքր սեղանին, նստում է բազկաթոռի մէջ, դանդաղ հանում է իր ձեռնոցները, յանկարծ նկատում է Ալէկօի գրքոյկը, սկսում է թերթել ու կարդում է բարձրաձայն:

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Ահա այս է նրա առաջին բանաստեղծութիւնը... (կարդում է)

Ո՞ւր են, մայր, քո տաք բազուկները,
Քո կուրծքը ճերմակ ու փափուկ,
Այն երգը, այն քաղցր խօսքերը,
Որ սիրում է ամէն մանուկ:
Ո՞ւր է քո նուրբ, նազելի ստուերը,

Փնտռում եմ ես քեզ, բայց ի զուր…
Փակած ես ընդմիշտ քո աչերը,
Ո՞ւր ես, մայր, ո՞ւր…»

Ահ, որչա՜փ կը սիրէ ինձ… (Շարունակում է կարդալ)․

«Մայր իմ անբիծ,
Քաղցրահնչուն անուն…
Լի կարօտով անհուն,
Քեզ պաշտեցի ընդմիշտ,
Դու իմ սրտումն ես միշտ,
Ինչպէս Աստուածամայր,
Սուրբ եւ անբիծ իմ մայր…»

Ո՜հ, դաժան խօսքեր, սուր դանակի պէս կտրտում էք սիրտս, կրակի պէս այրում էք հոգիս, թոյն էք լցնում արեանս մէջ։ Գիտեմ որ մեղաւոր եմ, այո, բայց զգում եմ, թէ ի՞նչպէս մի տաք ալիք մաքրում է հոգիս եւ յոյսի կաթիլներ վազում են երակներիս մէջ։ Պիտի ներես ինձ, զաւակս, այո՛, պիտի ներես ինձ…

ՏԵՍԻԼ 5

Ալէկօ եւ Մարի-Մադլէն

ԱԼԷԿՕ (ներս գալով) — Բարեւ, տիկին, կը ներէք, որ ձեզ մենակ ենք թողած։ Չգիտէի թէ եկած էք։

ՄԱՐ-ՄԱԴԼԷՆ — Ես մենակ չէի։

ԱԼԷԿՕ — Ինչպէ՞ս։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Մենակ չէի, քանի որ ձեր բանաստեղծութիւնների տաք շունչը քովս էր։

ԱԼԷԿՕ — Այդ շատ մեծ գովասանք է ինձ համար։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Ճշմարտութիւն է։ Որքա՜ն խոր պիտի զգայ բանաստեղծը՝ այսպէս արտայայտուելու ոյժը ունենալու համար։

ԱԼԷԿՕ — Այս գիրքը իմ կեանքս է, իմ բաղձանքը, իմ վաղամեռ մօրս կարօտը։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Վաղամե՞ռ։

ԱԼԷԿՕ — Այո՛, ես երբեք չեմ տեսած մայրս։ Միայն մի պատկեր ունեմ նրա հետ միասին նկարուած, երբ ես հազիւ մէկ տարու էի։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Եւ, սակայն, դուք նրան այնպէս էք պաշտում, ինչպէս մի էակ, որի գուրգուրանքը զգացած էք, վայելած էք եւ զրկուած։ Ձեր սէրը նման է պաշտամունքի։

ԱԼԷԿՕ — Այո՛… ինձ թւում է թէ ես արտայայտում եմ բոլոր որբ մնացած փոքրիկների իղձը, նրանց արցունքները, նրանց կարօտը։ Երբ ես գրում էի այդ խօսքերը, ինձ թւում էր թէ մօրս նազելի շուքը երերում է ուսերիս ետեւ, նրա քաղցր շունչը փաղաքշում է այտերս։ Լսեցէք, ահա, այս մի քանի տողերը կարդամ ձեզ համար։ (Թերթում է գրքոյկը եւ կարդում)

«Մայրիկը իր բալիկին

«Բալիկս չը պիտի լայ․
Մայրիկը հիմա կուգայ
Օրօր, մեղեդի կ'երգէ,
Բալիկս հանգիստ կը ննջէ։
Նորա անմեղ աչերում,
Հրեշտակը արեւ է վառում,
Օրհնում լուսինը հոգին,
Մայրիկը մատաղ բալիկին․
Աստուած միշտը թող ինձ տայ,
Բալիկս չը պիտի լայ։»

(Ալէկի կարդալու ժամանակ Մարի-Մադլէնի աչքերը լցւում են արտասուքով․ նա հազիւ է զսպում ինքնիրեն։)

ԱԼԷԿՕ (Նկատելով նրա յուզումը) — Լալի՞ս էք։ Օ, ներեցէք ինձ, ես չուզեցի ձեզ յուզել, թէեւ բանաստեղծի համար աւելի մեծ վարձատրութիւն չի կարող լինել։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Թողէք որ լամ… ամէն կին, ամէն մայր կուլայ այդ պարզ խօսքերի արձագանքից։

ԱԼԷԿՕ (Նոյնպէս յուզուած) — Ներեցէք ինձ… Ես իրաւունք չունեմ… քննադատելու համար չէ… հաւատացէք… բայց, բայց… չեմ հասկանում… ձեզ պէս զգայուն կին ի՞նչպէս է կարողանում, ի՞նչպէս է հանդուրժում… այդ տեսակ… Օ՛, ոչ, չեմ համարձակւում… Այդ հարցերը շատ փափուկ են… Ինձ համար այդ մի գոց գիրք է, որը ես երբեք յանդգնութիւն չեմ ունեցել կարդալ մինչեւ վերջ… Ախ, ի՞նչպէս շարունակել…

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Մի շարունակէք, մի։ Ես ձեզ հասկանում եմ․ հասկանում եմ այն ամէնը, ինչ որ չէք կարող, ինչ որ խուսափում *էք առել։ Հաւատացած եղէք միայն, որ կեանքի գրքի էջերի վրայ տպուած են յաճախ այնպիսի տխուր պատմութիւններ, դաժան անակնկալներ եւ թարդ հոգեբանութիւն, որ անկարելի է մնալ պաղ կամ անտարբեր։ Երիտասարդը կարդալով այդ էջերը՝ կը ծերանայ, իսկ ծերը կ'անիծէ այն ոյժը, որը գոյութիւն է տալիս այդ տեսակ դիպուածների։*

ԱԼԷԿՕ — Սարսափելի՜ է... Բայց եթէ մէկը կը գայ, կը հասկանայ այդ բոլորը, ի՞նչն է նրան ստիպում շարունակել։ Ինչո՞ւ չապաշխարել, չփախչել։ Ինչո՞ւմն է պակասը։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ (Ոգեւորուած) *— Պակա՞սը։ Դրդիչ պատճառն է։ Երկինքը պէտք է բացուի եւ կայծակը լուսաւորէ ուղիղ ճամբան· փառաւոր, շքեղ մի տուն պէտք է փլի ու այդ փլատակների փոշին պէտք է ծածկէ բոլոր վատ յիշատակները· անդունդի մէջ ճերմակ վարդ պէտք է ծաղկի, ու պէտք է քաշէ դէպի այդ անդունդը, ուր սպասում է կամ մահ կամ վերանորոգում։*

ԱԼԷԿՕ — Այն, որ կ'ուզէ ապրել, կ'ապրի նոր կեանքով, նոր բարեկամներով շրջապատուած։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Այո՞։ Իրա՞ւ։ Ճի՞շդ էք ասում։ Նոր կեանք, նոր բարեկամներով։ Օ՜, ովասիս անապատի մէջ, անձրեւի պաղ կաթիլնե՜ր ծարաւից մեռնողի համար։ Յոյս, յոյս, յո՜յս անհաւատի համար։ Պիտի ապրեմ։ Այո, պիտի ապրեմ նոր կեանքով։ Հաւատո՞ւմ էք ինձ։

ԱԼԷԿՕ (շատ յուզուած) *— Հաւատում եմ։*

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Շնորհակալ եմ։ (Ձեռք է առաջարկում նրան։ Ալէկօն սեղմում է նրա ձեռքը։) *Իսկ հիմա մի բան պիտի խնդրեմ ձեզնից։ Կը կատարէ՞ք արդեօք։*

ԱԼԷԿՕ — Պատրաստ եմ, ամէն ինչ որ պահանջէք։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ (Շատ քնքոյշ) *— Պահանջել... Ձեզնի՞ց... Ոչ, միայն խնդրել կարող եմ... Ձեր գիրքը, այս բանաստեղծութիւնները կը տա՞ք ինձ։ Փափաքեցի գնել, շատ փնտռեցի, ամբողջը սպառած է արդէն...*

ԱԼԷԿՕ — Օ՜, մեծ հաճոյքով, տիկին, մեծ հաճոյքով։ Միայն թէ՝ փոքր ինչ ժամանակ կ'առնէ։ Երկրորդ տպագրութիւնը այս առաւօտ բերին տպարանից, եւ ծրարը դեռ չեմ բացած։ Կը ներէք, եթէ մի քանի վայրկեան ձեզ մենակ թողեմ։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Խնդրեմ, խնդրեմ։ Կրկնում եմ, ես մենակ չեմ լինի։ Այս փոքրիկ գիրքը մի հէքեաթ է, որը կարդալով չեմ կշտանայ։ Գնացէք, մի՛ մտահոգուէք իմ մասին։

(Ալէկօն գնում է ձախ։)

ՏԵՍԻԼ 6

Մադլէն՝ մենակ։ Քիչ յետոյ՝ Մարթա։

ՄԱԴԼԷՆ — (Նստած է բազմոցի վրայ ձախ։ Գիրքը բացած է դէմքի առջեւ, կարդում է։ Մարթայի ոտքի ձայնից յանկարծ անդրադառնում է՝ գիրքը դնելով ծունկերին։)

ՄԱՐԹԱ — (Ներս է գալիս աջակողմեան դռնից ու գնում է դէպի ձախ՝ շտապով հանելով գլխարկը։ Յանկարծ տեսնում է Մադլէնին, որ այդ վայրկեանին գիրքը վար է դնում։ Ապշած, սաստիկ յուզուած։) *— Դո՞ւ, դո՞ւ այստեղ... Մադլէ՜ն...*(առանց անդրադառնալու՝ իր գլխարկը ձգում է սեղանի վրայ։)

ՄԱԴԼԷՆ (Շատ հանգիստ, մինչեւ անգամ պաղ արհամարհանքով) *— Այո, ես եմ, Մադլէնը, ուրի՞շ։*

ՄԱՐԹԱ — Այդ դո՞ւ էիր, ուրեմն։ Ի՞նչպէս ես համարձակուել... Աստուած իմ, եթէ Ալէկօն իմանայ... Հեռացիր այստեղից, հեռացիր անմիջապէս...

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Եթէ չես կամենում, որ նա իմանայ, աւելորդ է յուզուել եւ դողալ։

ՄԱՐԹԱ — Ի՞նչպէս չյուզուեմ, ի՞նչպէս չդողամ։ Նախազգացումս չխաբեց ինձ։ Դու էիր, դու, և այդ արձանը միայն մի պատրուակ էր քո կողմից։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Այո՛, չես սխալւում, մի պատրուակ էր, մի միջոց՝ զաւակս տեսնելու համար։

ՄԱՐԹԱ — Լռիր, լռիր, դու զաւակ չունես։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Դու լռիր, եթէ չես կամենում, որ կանչեմ նրան, որպէսզի դու տեսնես թէ զաւակ ունե՞մ թէ ոչ։ Խաբեցիր նրան, ինձ մեռած յայտարարեցիր, իմ տեղս բանեցիր, ի՞նչ ես ուզում այլեւս, ի՞նչ…

ՄԱՐԹԱ.— Ուզում եմ որ հեռանաս, ամաչես, չհամարձակուես ոչ մէկ ակնարկով բարձրացնել այն քողը, որով ծածկուած է քո զազրելի, քո աղտոտ ընթացքը:

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ (կարծես թէ հարուած է ստանում) — Զզուելի, աղտոտ… Իսկ ո՞վ նետեց ինձ աղբի մէջ, ո՞վ բաց արաւ իմ տան դռները եւ ասեց ինձ՝ «դուրս»: Ոչ, Մարթա, դու պիտի տուժես հիմա: Ես քանի տարի կրեցի քո չարութեան կնիքը, հիմա դու պիտի տառապես:

ՄԱՐԹԱ.— Ողորմելի՛: Ինձ հետ միասին նա եւս պիտի տառապի: Դու չմտածեցիր նրա մասին, երբ նա դեռ մատաղ մանուկ էր, չես մտածում ե՛ւ այժմ, երբ նա մարդ է եւ կարող է խելագարուել քո անակնկալ յայտնութիւնից: Մագլէն, չարիք ես դու, չարիք:

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — Ոչ մի զաւակ իր մայրը վերագտնելու ուրախութիւնից չի կարող խելագարուել:

ՄԱՐԹԱ.— Մի՛ զայրացնի ինձ: Դու մայր բառն անգամ իրաւունք չունես արտասանելու, կորցրած ես այդ պատիւը, գնա՛ այստեղից:

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — Կամաց… մի վրդովուիր: Կ՚ուզե՞ս տեսնել, թէ ի՞նչ մեծ ուրախութեամբ զաւակս հիմա պիտի նուիրէ ինձ իր բանաստեղծութիւնների գիրքը:

ՄԱՐԹԱ.— Դու հրէշ ես, հրէշ: Գիտես փաղաքշել, տիրապետել այր մարդոց հոգին եւ վաւաշոտ մարմինը: Սակայն, այս անգամ, այստեղ չես յաջողի: Քո զաւակը, քո արեան ոչ մէկ կաթիլ ունի իր մէջ. նա իմ զաւակն է, իր անարատ հօր զաւակն է: Նրա նմանները կեղտից կը զարշեն, ինչպէս անմեղ թռչունը զարշում է օձից:

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ (ծիծաղելով) — Հա, հա, հա, հիմա կը տեսնենք:

ՏԵՍԻԼ 7

Մարի-Մագլէն, Մարթա եւ Պատրիկ

ՊԱՏՐԻԿ (ներս մտնելով) — Բարեւ ձեզ:

ՄԱՐԹԱ (ջղային) — Բարեւ. (Պատրիկը համբուրում է Մարի-Մագլէնի ձեռքը: Մարթան նայում է նրան, նայում է Մագլէնին արհամարհանքով եւ, հազիւ զսպելով կատաղութիւնը, վճռական քայլերով գնում է ձախ:)

ՊԱՏՐԻԿ (Զարմացած) — Հը, նորէն ինչ որ թունաւոր ճանճ խայթեց հօրաքոյր Մարթային: Ցաւում եմ, որ դուք չէք նրա բարկութեան պատճառը:

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — Այդ տեսակ ճանճերի խայթոց յաճախ է ունենում այդ… հօրաքոյր Մարթան:

ՊԱՏՐԻԿ — Օ՜, ձեզ կարող եմ խոստովանել որ նա ամբողջովին թոյն է: Նրա ներկայութեամբ մարդ իր լեզուն կարճ պիտի պահէ եւ սուրբ ձեւանայ, ապա թէ ոչ՝ այս տան դռները դրախտի դռների նման յաւիտեան կը գոցուեն խեղճ անթիւ մեղաւորների առջեւ, որոնց թւում կը պատկանեմ ես… եւ կը յուսամ դուք եւս:

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — Հա, հա, հա՜… չեմ հաւատում ձեր անել դրութեանը: Այդ ձեր սուր, չար լեզուն շատ դժուար պիտի լինի սանձել:

ՊԱՏՐԻԿ — Բայց իմ չար լեզուն գիտէ արտայայտել ե՛ւ փաղաքշանքով լի խօսքեր: Ճիշտ ասած՝ ես անսահման գոհ եմ, որ հօրաքոյր Մարթան մեզ մենակ ձգեց: Ի՞նչ հրաշք, ի՞նչ երջանկութիւն:

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — Ողեւորուելու ե՛ւ ոչ մէկ պատճառ ունէք:

ՊԱՏՐԻԿ — Սխալւում էք: Երկու հոյակապ պատճառ ունեմ: Առաջինը՝ հրաւիրուած եմ այսօր այստեղ ինչպէս ե՛ւ ուրիշները անշուշտ, ներկայ գտնուելու ձեր արձանի ցուցադրութեան: Իսկ երկրորդը, օ՜, երկրորդը… ես միշտ նախընտրել եմ գեղեցիկ մարմինը ամենասքանչելի մարմարին: Մի՞թէ կարելի է կաւից, պղինձից կամ անշունչ քարի կոյտից արտայայտել ձեր աչքերի վառվռուն ցոլքը, ձեր արդիական մարմնի տաքութիւնը, ձեր կարմիր շրթունքների մագնիսական, հարբեցուցիչ ույժը:

ՄԱՐԻ – ՄԱԳԼԷՆ (արհամարհական). — Հարբեցուցիչը գինին է, եւ դուք արդէն գինով էք:

ՊԱՏՐԻԿ (իրեն հետզհետէ կորցնելով) — Այո, գինով եմ ձեզ հետ պատահած իսկ առաջին վայրկեանից: Գինին այլեւս ոչ մի ազդեցութիւն չունի վրաս: Խմում եմ, որպէսզի մոռնամ ձեզ, թաղեմ ալկոհոլի մէջ ձեր յիշատակը եւ իմ պատրանքը: Բայց ի զուր է, ի զուր. որքան խմում եմ, այնքան աւելի եմ հարբում ձեզ ունենալու ցանկութիւնից:

ՄԱՐԻ–ՄԱԴԼԷՆ (ոտքի ելած) — Դուք ցնդե՞լ էք:

ՊԱՏՐԻԿ — Ցնդել եմ, այո, գինով եմ... Ասացէք՝ ինչ որ կ'ուզէք, միայն յոյս տուէք, որ իմս պիտի լինէք: Ինչո՞վ է այդ ամերիկացին ինձնից բարձր կամ հաճելի: Իր զէր մարմինո՞վ թէ լեցուն գրպանով:

ՄԱՐԻ–ՄԱԴԼԷՆ — Լռեցէք... Դուք զզուելի էք:

ՊԱՏՐԻԿ — Զզուելի՞: Հը, այդ դեռ ե՛ւ ոչ մի կին չէ ասած ինձ: Փորձեցէք առաջ...

ՄԱՐԻ–ՄԱԴԼԷՆ — Հեռացէք այստեղից:

ՊԱՏՐԻԿ — Հեռանա՞մ... Օ՛, ոչ. ես այս վայրկեանը փնտռում եմ երկու շաբաթէ ի վեր, եւ այդ երկու շաբաթը երկու տարիների չափ երկար է եղել ինձ համար:

ՄԱՐԻ–ՄԱԴԼԷՆ — Կրկնում եմ, զզուելի էք:

ՊԱՏՐԻԿ (յանկարծ յարձակւում է վրան եւ ամուր գրկում:) — Իսկ դուք ցանկալի էք: Օ, որքան ցանկալի:

ՄԱՐԻ–ՄԱԴԼԷՆ — Ի սէր Աստծոյ, թողէք ինձ, թողէք...

ՊԱՏՐԻԿ — Մէկ համբոյր այդ շրթունքներից, որ ինձ հանգիստ չեն տալիս...

ՄԱԴԼԷՆ — Թողէ՛ք... թողէ՛ք... (Պատրիկը համբուրում է նրան. այդ վայրկեանին ներս է մտնում Ալէկոն:)

ՏԵՍԻԼ 8

Մարի–Մադլէն, Պատրիկ եւ Ալէկո

ԱԼԷԿՕ (վրդովուած) — Սրիկայ, ի՞նչպէս ես համարձակւում...

ՊԱՏՐԻԿ (այլայլած, գինովի պէս) — Ի՞նչ ես խառնւում, միջնադարեան ասպետ... քո ի՞նչ գործն է:

ԱԼԷԿՕ (Հազիւ է զսպում իրեն) — Դուրս այստեղից, անմիջապէս, դուրս:

ՊԱՏՐԻԿ — Լաւ... լաւ... գնում եմ: (Դէպի Մարի–Մադլէն) Տիկին, յարգանքներս: (Գնում է ձախ:)

ՏԵՍԻԼ 9

ԱԼԷԿՕ — Դուք եւս անմիջապէս հեռացէք այս տեղից:

ՄԱՐԻ–ՄԱԴԼԷՆ (ժողվում է իր պայուսակը, որը վար է ընկել Պատրիկի հետ գրկախառնուած ժամանակ) — Բայց... հաւատացէք, որ ես ոչ մի խօսքով, ոչ մի շարժումով նրան թոյլ չեմ տուած այդպէս գռեհիկ կերպով վարուելու ինձ հետ: Նա գինով էր...

ԱԼԷԿՕ — Ես միայն այս վայրկեանին հասկացայ որ ձեզ պէս կիների հետ այդ տեսակ վարուելու համար բնաւ անհրաժեշտ չէ գինով լինել:

ՄԱՐԻ–ՄԱԴԼԷՆ — Մի՛ անպատուէք ինձ, աղաչում եմ:

ԱԼԷԿՕ — Մի՞թէ այդ իրականութիւն չէ. մի՞թէ իմ խօսքերը անպատւում են ձեզ. մի՞թէ նա կը համարձակուէր այդ տեսակ վարուել ձեզ հետ, եթէ դուք չլինէիք այն, ինչ որ էք:

ՄԱՐԻ–ՄԱԴԼԷՆ — Օ, որքա՜ն անգութ էք եւ անողոք:

ԱԼԷԿՕ (Այստեղից սկսեալ նրա խօսքը պիտի լինի շատ ջղային եւ գնալով պիտի ուժեղանայ: Դատափարակութիւն, սկզբունք, դառնութիւն, ամբողջը լուծւում է զարշանքի, հակակրանքի եւ հիասթափման մէջ: Նա, ինքնիրեն հետզհետէ բոլորովին կորցնում է:) Անգութը դուք էք: Դուք եկաք եւ յեղաշրջեցիք իմ հայեացքները, իմ սկզբունքները: Աշխարհիկ կիների կեանքը կարդացած ժամանակ ամբողջ մարմինս փշաքաղւում էր: Եթէ որեւէ կնոջ մատնանիշ էին անում՝ ակնարկելով նրա ապականուած բնոյթը, ես զարշում էի այդ տեսակ էակից: Ես անքուն գիշերներ էի անցընում մի ելք գտնելու, մի միջոց՝ ոչնչացնելու համար այն արատը, որը ցեխի հետ է հաւասարեցնում պատուաւոր մարդկութիւնը: Բայց ի՞նչ կարող էի անել ես, մի փոքրիկ, մի ոչինչ արարած՝ աշխարհի դէմ: Ես միայն մէկ միջոց ունէի՝ ինձ պարգեւուած գրիչը, եւ նրա ուժով ջանացի չարի դէմ բողոքել, անկեղծութեան դէմ քարոզել գեղեցկութիւն, որպէսզի ապականու-

Խիղճը մաքրուի մաքրութեան սուրբ ջրով: Հոգիս հանդիստ էր, այլեւս գտած էի ուղիս... Եւ յանկարծ, եկաք դուք, գեղեցիկ, հեզ, բարի... Ես երբեք մօտէն չէի տեսած աշխարհիկ կին: Մի՞թէ ձեզ նման է նա, մտածեցի: Ի զուր փնտռեցի հոգիիս մէջ զարշանք, սրտիս մէջ ատելութիւն... Ընդհակառակը, դուք քաշում էիք դէպի ձեզ անհասկանալի, տարօրինակ կերպով եւ թմրեցնում էիք կամքս... Իսկ ձեր քոյրիկը մի անուշ արձագանգ էր գտնում սրտիս մէջ...

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ (Արտասուքը հագիւ զսպելով) — *Տանջում էք ինձ... տանջում էք...*

ԱԼԷԿՕ — *Ոչ միայն տանջել, ես կ'ուզէի ձեզ համար այնպիսի մի պատիժ, որը յաւիտեան այրէր եւ մոխիր դարձնէր ձեր սիրտը:*

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — *Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ:*

ԱԼԷԿՕ — *Որովհետեւ, եթէ փոքր յոյս ունէի, դուք կոխոտեցիք այսօր. եթէ հաւատ էր մնացել հոգիիս մէջ, դուք ինձ հեթանոս դարձրիք... Մի՞թէ չէք կարող ապրել ուրիշների պէս: Մի՞թէ այդ գնի կեանքի հաճոյքը այդ աստիճան թունաւորել է ձեզ, որ դուք թոյլ տուիք այստեղ ահա, մի քիչ առաջ լպիրշ երիտասարդի լպիրշ վերաբերմունքը: Մի՞թէ ընդմիշտ մեռած է ձեր մէջ պարկեշտութեան փափաքը:*

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — *Պիտի փոխուեմ, պատուոյ խօսք եմ տալիս ձեզ, պիտի փոխեմ հիմնովին կեանքիս ընթացքը:*

ԱԼԷԿՕ — *Պատուոյ խօ՞սք: Մի քիչ առաջ ձեզ գրկող պարոնի բազուկների մէջ ձգեցիք ձեր թեթեւ պատիւը:*

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — *Օ՜, մի՛ դատապարտէք ինձ. թող ամբողջ աշխարհը դատապարտէ, բայց ոչ դուք... ոչ դուք... Խղճացէք ինձ, թողէք, որ պատմեմ ձեզ թէ ի՞նչ է եղել իմ կեանքը...*

ԱԼԷԿՕ — *Ձեզ պէս կիները կեանքի հազար տեսակ նմոյշ ունեն պահած իրենց երեւակայութեան մէջ: Չեմ հաւատում ձեզ այլեւս: Խղճացի ձեզ, այո, բայց այժմ խղճահարութիւնը փոխուեց ատելութեան: Մի՛ խօսէք, աւելորդ է:*

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — *Պիտի խօսեմ, պիտի բանամ սիրտս. դուք այն ժամանակ միայն կը հասկանաք, թէ իմ կեանքի բաժակը սկզբից եղել է լեցուած թոյնով: Պիտի խօսեմ:*

ԱԼԷԿՕ (այլայլած) — *Կ'ուզէք նորի՞ց իշխել մտքիս վրայ, նորի՞ց կաշկանդել կամքս: Ո՛չ, ո՛չ. գնացէք այստեղից, գնացէք:*

ՏԵՍԻԼ 10

Նոյնք եւ վերժին

ՎԵՐԺԻՆ (Ներս է մտնում ձեռքին արձանը) — *Ահա եւ ձեր արձանիկը:* (Դնում է սեղանի վրայ:)

ԱԼԷԿՕ (ինքնիրեն կորցրած) — *Այդ արձանն է արդէն ամբողջ չարիքի պատճառը: Թող փոշի դառնայ, թող ոչնչանայ...* (Յափշտակում է արձանը եւ ուզում է գետին նետել:)

ՎԵՐԺԻՆ — *Ալէկօ՜...*

(Միաժամանակ)

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — *Ո՛չ... ո՛չ...*

(Վերժինը առնում է Ալէկօի ձեռքից արձանը:)

ԱԼԷԿՕ (Ուժասպառ, ցած ձայնով) — *Հեռացէ՛ք... հեռացէ՛ք...*

ՎԵՐԺԻՆ — *Ալէկօ՜...*

ՏԵՍԻԼ 11

Մարի-Մագլէն, Ալէկօ, Վերժին, Վիլլի Ստաուն

ՎԻԼԼԻ ՍՏԱՈՒՆ (Ներս մտնելով) — Ուէլ, ուէլ, *ամէն ինչ կատարեա՞լ է: Հասա՞ւ, վերջապէս, այս հաշտութեան օրը, երբ արձանը պատրաստ է:* (Յանկարծ անդրադառնալով ընդհանուր լռութեանը), Հուաթ իզ տը մէթըր, *ի՞նչ է պատահել:*

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — *Գնա՛նք, Մր. Ստաուն:*

ՎԻԼԼԻ — *Ինչպէս թէ գնանք, հապա արձա՞նը. դեռ չէ՞ վերջացած:*

ՎԵՐԺԻՆ — *Ոչ բոլորովին, Մր. Ստաուն, դեռ մէկ երկու գիծ պիտի շտկեմ... Ես կ'ուղարկեմ պանդոկը...*

ՎԻԼԼԻ — *Ուրեմն, անճապաղեցէք, տիկին, որովհետեւ մենք կարող ենք յանկարծ մեկնել:*

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — *Խօսեցէք եղակի:*

ՎԻԼԼԻ — *Եղակին ի՞նչ է... դրամա՞ր է:*

ՄԱՐԻ-ՄԱԳԼԷՆ — *Դուք կարող էք մեկնել, ուր որ կ'ուզէք, ես պիտի մնամ այստեղ:*

ՎԻԼԼԻ — Ոչինչ չեմ հասկանում։

ԱԼԷԿՕ (հեգնանքով) — Աւելորդ զոհաբերութիւն, տիկին, լայն բացուած քամկը նախընտրելի է։ Մտէք նորէն ոսկէ վանդակը։

ՄԱՐԻ-ՄԱԴԼԷՆ — Մնաք բարեաւ։ Գնանք Մր. Սասուն։

ՎԵՐԺԻՆ (Ընկերանալով նրանց մինչեւ դուռը, ձախ) — Գնաք բարեաւ։

ՎԻԼԼԻ — Ոչինչ չեմ հասկանում։ Արդեօք պարոնը նոր բանաստեղծութի՞ւն է շարադրում։ Տիս իզ քրայսիս…

ՏԵՍԻԼ 12

Ալէկօ եւ վերժին

(Ալէկօն, ընկճուած նստել է բազկաթոռի մէջ, գլուխը առել ձեռքերի մէջ։ Փոքր լռութիւն։)

ՎԵՐԺԻՆ — Մի՞թէ այդ դու էիր, Ալէկ, ի՞նչ պատահեց քեզ։

ԱԼԷԿՕ — Ներիր ինձ, Վերժին, ես էլ չգիտեմ, թէ ի՞նչպէս այդ աստիճան կարողացայ ինքս ինձ մոռանալ։ (Նորէն յուզուելով) Օ՜, կար վայրկեան, երբ կ՚ուզէի խեղդել նրան։

ՎԵՐԺԻՆ — Ալէկօ, խելքի եկ. ի՞նչ պիտի խեղդէիր։

ԱԼԷԿՕ — Այդ կինը… օձի չափ նենգ եւ կատուի պէս քուռ ու փաղաքշող… Ո՛չ, ոչ… աւելորդ է յիշել, աւելորդ է բարձրացնել այն քողը, որով ծածկուած է մի այլանդակ պատկեր։ Վերջացաւ, վերջացաւ… Բայց ի՞նչպէս մոռանալ… Անցնում էի մի լայն փողոցով, Վերժին, եւ յանկարծ մի գեղեցիկ նժոյգ արագ սլանալով փոշիի ու ցեխի հետքեր ձգեց հագուստիս ու ձեռքերիս վրայ… Մի՞թէ ջուրը չի մաքրի այդ հետքերը… Իսկ եթէ այդ հետքերը ձեռքերի վրայ չեն միայն, այլ սրտի մէջ են, հոգիի մէջ…

ՎԵՐԺԻՆ — Այլաբանօրէն ես խօսում, Ալէկ. չեմ կարողանում ըմբռնել թէ ինչո՞ւ ես այդ աստիճան վրդովուել։

ԱԼԷԿՕ — Ահա թէ ինչու։ Այդ կինը, որին խղճացի, կարծելով թէ նա կարող է փոխուել, թէ նրա հոգին դեռ ապականուած չէ, այդ կինը, Վերժին, մի քանի վայրկեան առաջ ահա այստեղ տեսայ Պատրիկի գրկում։

ՎԵՐԺԻՆ — Անպիտան Պատրիկ։ Անշուշտ բարկացար եւ վռնդեցիր նրան։

ԱԼԷԿՕ — Վռնդեցի, բայց ի՞նչ օգուտ. հոգիս նորէն եւ աւելի թունաւորուեց։

ՎԵՐԺԻՆ — Խե՜ղճ տիկին Մադլէն, որքա՜ն անպատուած պիտի զգայ ինքն իրեն։

ԱԼԷԿՕ — Անպատուա՞ծ։ Դու դեռ խաբում ես ինքդ քեզ. նա մի պոռնիկ կին է, ուրիշ ոչինչ։

ՎԵՐԺԻՆ — Ամօթ է, Ալէկ։

ԱԼԷԿՕ (Զգաստ) — Ամօ՞թ է… այո՛… Ներիր ինձ, Վերժին։

ՎԵՐԺԻՆ — Դու մի շատ մեծ պակաս ունես, Ալէկ։ Վերին աստիճան դիւրագրգիռ ես։ Աշխարհը կամենում ես միշտ վարդագոյն տեսնել։ Ահա թէ ինչո՛ւ յաճախ հիասթափւում ես։ Բայց միեւնոյն ժամանակ առաւելութիւնդ էլ դրա մէջն է։ Եթէ այդչափ զգայուն չլինէիր, չպիտի գրէիր քո գեղեցիկ բանաստեղծութիւնները։ Շատ մի՛ մտածիր ցեխի հետքերի մասին։ Մի՞թէ ցեխի մէջ աղամանդ չի գտնւում յանկարծ։

ԱԼԷԿՕ — Ես եւս այդպէս կարծեցի. կարծեցի թէ աղամանդ եմ գտած… Հա, հա, հա…

ՎԵՐԺԻՆ — Բաւական է, մի՛ խնդա այդպէս։ Սադայէլի խնդուքն ես յիշեցնում։

ԱԼԷԿՕ — Իրաւունք ունես յանդիմանելու ինձ։ Որքա՜ն զուարթ պիտի անցնէր այս օրուան օրը։ Ես ամէն ինչ փչացրի։

ՎԵՐԺԻՆ — Ինձ ցաւ է պատճառում միայն քո այդ ջղային վիճակը եւ մի կնոջ պատճառով, որ այսօր այստեղ է, իսկ վաղը, ո՜վ գիտէ, ուր պիտի լինի։ Ալէկ, մտածիր, մի՞թէ արժէ մի օտար կնոջ համար այդքան չարչարել միտքդ։

ԱԼԷԿ (Յանկարծ սթափուածի պէս) — Օտա՛ր, իրաւ է, օտար…

ՎԵՐԺԻՆ — Տեսնո՞ւմ ես, որ ի զուր ես վրդովւում։ Սիգարէ՞թ կ՚ուզես։ (Խօսելով վառում է նրա համար սիգարէթ)։ Ահա, ծխիր, հանդարտացիր եւ մոռացիր այդ բոլորը, ինչպէս մի չար երազ։ Իսկ հիմա մնում է այս արձանիկը փաթաթել եւ ուղարկել պանդոկ։ (Գնում է դէպի սեղանը. յանկարծ…) Այս ի՞նչ է։

(Կռանալով յատակի վրայից առնում է ոսկէ ապարանջանը։) Ոսկէ ապարանջան... Ա՜, տիկին Մադլէնինն է. նրա թեւին յաճախ եմ տեսած։ Ա՜, տես, բացուեց յանկարծ եւ մէջը մի պատկեր...

ԱԼԷԿՕ — Օ՜, իր հազար եւ մէկերորդ սիրահարի պատկերը լինելու է։

ՎԵՐԺԻՆ — Ոչ, ոչ, սխալւում ես. մի սիրունիկ կին եւ մի բուբուլիկ բեբեք... Բայց... այս պատկերը... ինձ ծանօթ է...

ԱԼԷԿՕ (հետաքրքրուելով) — Տեսնեմ։ (Ցնցուելով) Ի՞նչպէս, ի՞նչ է այս։ Ինչո՞ւ է այս պատկերը նրա մօտ։

ՎԵՐԺԻՆ — Բայց... Ալէկ...

ԱԼԷԿՕ — Աստուա՜ծ իմ, պիտի խելագարուեմ... (Պոռալով) Ինչո՞ւ, ինչո՞ւ այս պատկերը պիտի լինի նրա մօտ... Հօրաքոյր, հօրաքոյր...

ՏԵՍԻԼ 13

Մարթա, Վերժին, Ալէկօ եւ Սամուէլ

ՄԱՐԹԱ — Ի՞նչ է, ի՞նչ է պատահել։

ԱԼԷԿՕ — Տե՛ս, տե՛ս... այս ապարանջանը... այս պատկերը ինչո՞ւ պիտի լինի տիկին Մադլէնի մօտ։

ՄԱՐԹԱ — Ի՞նչ պատկեր։

ԱԼԷԿՕ — Իմ մօր եւ իմ պատկերը։ Նայի՛ր։

ՎԵՐԺԻՆ — Քո մօր պատկերը... Ա՜, այո՛...

ՄԱՐԹԱ — Ինչո՞ւ քո մօր պատկերը պիտի լինի, սիրելիս։ Այդ տեսակ պատկերներ շատ կան...

ԱԼԷԿՕ — Ոչ, ոչ, մի՛ խաբէք ինձ։ Կը բերեմ եւ կը համեմատեմ... Հիմա, անմիջապէս։ (Շտապով գնում է աջ։)

ՄԱՐԹԱ (Շատ յուզուած՝ առնում է իր գլխարկը, որ ձգած էր բազկաթոռի վրայ) — Ջանացէք ամէն գնով այստեղ պահել Ալէկօին։ Ձգեցէք որ գայ ետեւից։

ՎԵՐԺԻՆ — Բայց, ո՞ւր...

ՄԱՐԹԱ (Շտապ գնալով աջ) — Ախ Սամուէլ, Սամուէլ, դուք ամէն ինչ գիտէիք եւ խաբեցիք ինձ։

ՏԵՍԻԼ 14

ՎԵՐԺԻՆ — Ոչինչ չեմ հասկանում։

ՍԱՄՈՒԷԼ — Էհ, մարդ որքան քիչ հասկանայ, այնքան աւելի երջանիկ կը լինի։

ՏԵՍԻԼ 15

Վերժին, Ալէկօ, Սամուէլ

ԱԼԷԿՕ (Ներս գալով) — Նայեցէ՛ք, նայեցէք։ Ահա իմ մայրիկի միակ պատկերը՝ ինձ հետ միասին նկարուած, եւ այս ապարանջանի միջինը նոյնն են, նոյնը։ Ո՞ւր է հօրաքոյրը։ Պ. Սամուէլ, համեմատեցէք։ Արդեօք իմ աչքերը կո՞յր են։ Իմ մայրը... Ինչո՞ւ իմ մօր պատկերը պիտի լինի այդ կնոջ ապարանջանի մէջ։ Մի՞թէ... Օ՜, ոչ, ոչ... անկարելի է... իմ մայրը մեռած է... մեռած... Խօսեցէք, պատասխանեցէք։

ՍԱՄՈՒԷԼ — Բայց ի՞նչ կարիք կայ այդ աստիճան վրդովուելու։ Եթէ այդ նոյն պատկերն է, անշուշտ որեւէ ձեւով կարող է անցած լինել մի ուրիշի ձեռքը։ Կարելի է՝ իրար ճանաչել են. կարելի է՝ դպրոցական ընկերուհիներ են եղած։ Քո մայրը երիտասարդ էր, կարող էր հազար տեսակ ծանօթներ ունենալ, բարեկամական կապեր հաստատել... Որեւէ քաղաքում, ամառանոցում կարող էին պատահած լինել իրար... Ի՞նչ գիտեմ, հազար տեսակ ենթադրութիւն կարելի է անել։ Ի՞նչ կասկած, ի՞նչ միտք կարող է այդ աստիճան յուզել քեզ։ Չեմ հասկանում՝ ինչո՞ւ ես ուզում մի պարզ զուգադիպութիւն մեծացնել եւ հասցնել մինչեւ ողբերգութիւն։

ԱԼԷԿՕ — Աւելորդ խօսքեր. իմ մայրը եւ այդ տեսակ մի ապարած ընկերուհինե՞ր, բարեկամուհինե՞ր։ Ոչ, ոչ, սուտ է, սուտ։ Այդ տեսակ զուգադիպութիւններ միայն վէպերի մէջ են լինում, իսկ այստեղ կեանք է, այո՛, իմ կեանքն է որ խորտակւում է։ Մի՞թէ չէք տեսնում։ Դուք ուզում էք ինձ խաբել, բայց ես պիտի թափանցեմ ճշմարտութեան, պիտի ստիպեմ նրան խոստովանել, պիտի հասկանամ թէ ո՞վ է նա։

(Գնում է ձախ։)

ՎԵՐԺԻՆ (Ետեւից) — Ալէկ, սպասիր, Ալէկ, մի՛ գնա։

ՏԵՍԻԼ 15

Վերժին եւ Սամուէլ

ՎԵՐԺԻՆ — Գնաց: Ինչո՞ւ ձգեցիք, չէ՞ որ հօրաքոյրը խնդրեց...

ՍԱՄՈՒԷԼ — Կեանքի անիւը այլեւս դարձել է, Վերժին. մենք մեր անզօր ձեռքերով անկարող ենք փոխել նրա վազքը: Ուրեմն, ձգենք ամէն ինչ Նախախնամութեան:

ՎԵՐԺԻՆ — Բայց ի՞նչ է կատարւում այսօր, չեմ կարող ըմբռնել: Ալէկի յուզումը, այդ պատկերը... Ինչո՞ւ հօրաքոյրը գնաց տիկին Մադլէնի մօտ... Պ. Սամուէլ ասացէք՝ ո՞վ է տիկին Մադլէնը:

ՍԱՄՈՒԷԼ — Այս տան արեւի ճառագայթն էր մի ժամանակ Մարի-Մադլէնը. անհոգ թռչնիկ, երգ ու քրքիջ էր Մարի-Մադլէնը: Բայց մի սխալ քայլ, մի անմիտ սայթաքում, եւ վանդակը բացին ու թռչնիկը ազատութեան հովին ձգեցին. իսկ այդ հովը թէ՛ անուշ է, թէ՛ մահացու: Եւ կարծում եմ թէ այսօր արդէն հնչեց ահազանգը: Դուն չհասկացա՞ր թէ ով է Մարի-Մադլէնը: Ալէկօի մայրն է:

ՎԵՐԺԻՆ (Շատ յուզուած) *— Ալէկօի մա՞յրը, Աստուա՜ծ իմ: Խե՜ղճ Ալէկ, խե՜ղճ...*

(Վարագոյր)

ՔՈ ՀԱՅԵԱՑՔԸ ՊԱՂ…

Քո հայեացքը պաղ, աչքերդ մարած,
Որպէս յուշերը տխուր անցեալի.
Երբ ինձ ես նայում այդպէս շուարած,
Օ՛, ես զգում եմ, որ սիրտդ է լալիս:

Ես մի բնաւեր թռչուն եմ անտէր,
Հաւքերն երամիս բուքերում կորան.
Բայց հոգիս խորունկ զգալ գիտէ դեռ,
Քեզ կը ջերմացնէ, հաւատա՛ նրան:

Դու ասում ես ինձ.— ամէն ինչ կորաւ,
Որպէս հեքեաթը մանուկ օրերի,
Լսի՛ր, իմ հոգին բախտի է ծարաւ,
Քո տանջանքը մեծ կը զգա՞յ, կը սիրի:

Մի լոյս հեքեաթում խնձորենիք կան,
Որ աշնան են լոկ ծաղիկներ տալիս.—
Լսի՛ր, մեր դէմ կայ նո՛ր կեանք դիւթական,
Իմ կեանք, ի՛մ երազ, ինչո՞ւ ես լալիս:

Գ. ՔԵՍԼԱՇԵԱՆ

ԵՐԳ ՆԵՐԳԱՂԹԻ

Ծափ տուին ամպերը հրճուած,
Ուսերից կախեցին ծիրանի.
Որ կրծքից կակաչը ժպտաց,
Հոգուդ մէջ արեւները բարի:

Բացել ես կանաչ քո գօտին,
Կանչել ես արբեցած հարսերից
Ու նստել նամբէքի եզերքին,
Շուրջը քո պարում են երգ ու խինդ:

Ու մենք բորբ Արեւդ գրկել ենք.
Էլ ցուրտ չէ, գինով ենք մենք հիմի,
Կարօտի քո կանչին գալիս ենք,
Հարսանիք է նամբէքին Նայրի:

Ս. ՎԷՑԼՈՒՆԻ

Իրան, 1946

ԲԱԽՏԻՆ

Բարձրը նստած՝ դէզին վրայ Դարերու,—
Հոն բարդուած· ու խառն կապած մաս առ մաս,
Ալիք՝ ալիք հին ժանգոտած ժամերէն.—
Մահկանացուն կը դիտես միշտ դուն վերէն,
Եւ իր ցաւին, անկման վրայ կը խնդա՛ս...

Կը թողուս՝ որ ան ճաշակէ ամբրոսիան,
Եւ տաճարին մէջ իր՝ դնէ ջահեր վառ.
Իսկ՝ Ցաւոյ աստղն երբ հոգւոյն մէջ կը մարի՝
Եւ իր ոտքին տակ աս Մեծ Գունտն կ'օրօրի,
Ո՛վ ալեւոր, դուն կը խօսիս ոչ մէկ բառ...

Դուն կը հակես կարաւանին՝ առաւօտ,
Եւ կը դրկես զայն անվրէպ՝ իրիկուան.—
Ետին թագչած ամբարտակին յոռութեան՝
Ոգեվարին՝ ծիծաղ մ'ունիս հեգնական,
Մինչ աղերսներն ականջներէդ 'բա՛ց կ'երթան:

Ըմբոստ հոգին՝ վատութենէդ խենթեցած՝
Մարդու համար անկարելին կ'որոնայ.—
Եւ անիծեալ կապոյտ միջոցն կը չափէ՝
Որ ահաւոր աքիլեսեան մէկ նետով,
Թէ՝ կարելի, քու փառոտիքն վա՛ր թափէ:

ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻ

ԱՅԳԵՏՕՆԸ

(«ՀԱՅՐԵՆԻՔ» Ամսագրի 25-րդ տարեմուտին առթիւ)

Խաղողն է կախուեր որթատունկերէն,
Ողկոյզ առ ողկոյզ.
Կը խայտայ Այգին թռչնոց երգերէն,
Այնքա՛ն սրտայոյզ...

Գեղջուկ կոյսերը այգի կը կըրեն,
Զամբիւղն է ոսկի.
Մանկանն անուշ է մեղրէն ու կաթէն,
Նըման նոր խօսքի...

Նոր Այգն է ծագեր, կարմիր, ոսկեզէն,
Յաջորդեր հինին.
Հնձաններէն ներս, հին օրհնութեան պէս
Կը հոսի գինին...:

—Էյ — Հէ՜յ, գեղջուկներ, գեղօն ողկոյզներ
Ձեր ծոցերուն մէջ,
Շրջենք այս հողը, տողենք ակօսներ,
Այգեկութէն վերջ:

Ողջո՜յն ձեր ջանքին, ձեր աշխատանքին,
Մրշակներ անգին.
Մշակենք Այգին, նուիրենք Ազգին
Եւ Հայրենիքին...::

Յ. Ա. ԼԵՒՈՆԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

(ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Գրեց՝ ՄԱՐԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Բ.

ԱՆՀԱՆԴՈՒՐԺԵԼԻ՛ է խենթի մը ներկայութիւնը տանը կամ փողոցը. իսկ բանտի անձուկ շրջափակին մէջ, հարիւրի մօտ բանտարկեալներու քով՝ դժոխային։ «Տէլի» Աննայի առջեւ ամէնքը կը դողային, նոյնիսկ ոճրագործ թրքուհիներ ու քրդուհիներ, որոնք բանտարկուած էին արդարակորով կառավարութենէն՝ հայ հարսեր խեղդամահ ընելու յանցանքով։ Ան փորձանքն էր բանտին։ Երբ մէկը կերակուր ուտէր, կը յափշտակէր պնակը անոր առջեւէն եւ լեցուն փճանակով իսկ՝ գնդակի նման վեր կը նետէր ու կը բռնէր։ Երբ մէկը սանտրուէր, անոր թափուած մազերը ձիու սանձի նման բռնած՝ վրան կը հեծնէր ու կը քշէր։ Յաճախ կը մերկանար ու կը պարէր շատ խայտառակ շարժումներով։ Երբեմն սենեակին շուրջը դառնալով պատերը կը հարուածէր ու կը պոռար. «Բացուեցէ՛ք, բացուեցէ՛ք, թափուեցէ՛ք, նեղ է աշխարհը»։

Երեկոները, երբ բոլորը պառկած ըլլային, առանց աչք, քիթ, բերան նայելու կը վազվըռտէր վրանին, եւ փրթած աղաղակներուն վրայ կը ծիծաղէր բարձրաձայն։ Յոգնած պահերուն՝ երեսի վրայ ինկած մազերը կը փետտէր եւ կուլար շարունակ՝ կրկնելով բանտապետուհին սրտաճմլիկ երգը, զոր երգած էր իրենց բանտ մտնելու առաջին պահուն։

Այսպէս ոչ ոք կրնար աչքը գոցել, կամ հանգիստ վայրկեան մը ունենալ բանտին մէջ. խեղճը բոլորին հետ գործ ունէր հաւասարապէս։

Ալմաս խաթունը, հակառակ իր խիստ վարմունքին Աննիկի հետ, սրտով գոհ էր։ Դերը լաւ կը կատարուէր։

Վերջապէս, բանտարկեալներու արդարացի տրտունջներուն ու բողոքներուն վրայ՝ բանտապետուհին ստիպուեցաւ լուր տալ զինուորական ատեանին, թէ փոխադրականներուն մէջ խենթի մը ներկայութիւնը կը խանգարէ բանտին կարգապահութիւնը, եւ պէտք է շուտով ճարը նայիլ։

Շուքրի պէյն ալ Ալմաս Խաթունի ձերբակալուած օրն իսկ իր բողոքագիրը ներկայացուցած եւ խնդրած էր իր պաշտօնակիցներէն, որ զոքանչին ամբաստանուիլը խենթի մը կողմէն ըլլալու պարագան նկատի առնուի։ Այնպէս որ, երկու դիմումները զիրար կ՚ընդգրկէին։ Երրորդ պարագայ մըն ալ չուշացաւ իր բարեբար ազդեցութիւնը միացնել անոնց։

Եփրատ Գոլէճի երաժշտութեան դասատու փրոֆ. Ս. Կ. Խաչատուրեան այն օրերուն դաշնակի դասեր կու տար կուսակալին կնոջ։ Մեծ երեկոյթի մը հրաւիրուեցաւ նուագելու պաշտօնական շրջանակի մը մէջ։ Կուսակալը գնահատեց զինք եւ խոստացաւ կատարել անոր մէկ փափաքը։ Փրոֆեսորը չվարանեցաւ ամբողջապէս խնդրելու Տէրսիմ փախչող խումբին ազատ արձակումը, մանաւանդ որ իր աշակերտուհիներէն մէկ քանին ալ անոր մէջն էին։

Քանի մը օր հազիւ անցած էր, երբ առաւօտ մը շատ կանուխ բանտապետուհին մտաւ բանտարկեալներու խուցը եւ հրամայեց պատրաստուիլ դատարան երթալու համար։ Կարդաց անունները, ճշդեց թիւը։

Խե՛ղճ Սարիկի սիրտը պայթելու աստիճան արագ կը բաբախէր. անոր ամբողջ մտածումը կեդրոնացած էր Գարդեւի վրայ։

«Աստուա՛ծ, խնայէ մեզի. գութդ անգամ մըն ալ ցոլէ մեր վրայ», մրմնջեց Սարիկ եւ ենթադրեալ քրոջը հետ խառնուեցաւ խումրին, որ զոյգ–զոյգ շարուած աշակերտներու նման կը յառաջանար սուինաւոր կամուրջի մը տակէն, բանտէն մինչեւ դատարան։ Ճամբուն երկու կողմը քով–քովի կեցած հարիւրաւոր զինուորները իրենց վեր բարձրացուցած եւ դէմ–դիմաց միացուցած սուիներով կազմած էին այդ կամուրջը՝ անհնարացնելու համար փախչելու ամէն հաւանականութիւն։ Խիստ հսկողութիւն կար վախով ու տագնապով մեղրամոմի գոյն առած, քալելու անկարող դժբախտներուն շուրջը։

Ձերբակալող հարիւրապետը կ՚ընկերակցէր դարձեալ...

Դատարանի հոյակապ շէնքին ներքնակողմը հասած էին եւ մէկիկ–մէկիկ կ՚ընդունուէին զինուորական ատեանի կողմէն։ Կանաչ, թաւշապատ, խոշոր սեղանի մը բոլորտիքը շարուած էին տասնեւչորս զինուորականներ։ Մէկն անոնցմէ հազարապետ Շուքրի պէյ սպան էր։ Երկու գրագիրներ՝ թուղթի դէզեր առջեւնին՝ անհամբեր կը սպասէին հարցաքննութեան։

Գրեթէ նոյնն էին ամէնուն եղած հարցումները եւ անոնցմէ ստացուած պատասխանները։

Ներս բերուեցաւ «Լաթօն»։ Հարիւրապետը դարձեալ փութաց միջամտելու. թէ համր եւ խուլ աղջիկ մըն է, թէ բնաւ չարժեր անով զբաղիլը, թէ «Ալլահ» պատժած է արդէն, թէ մենք ձեռքերնիս քաշելու ենք ատկէ։

Ներկաները կրկին հրմշտկեցին «Լաթօ»ն, խղճացին վրան.

«Էհ, «Լաթօ»ներուն մնացեր է հերոսներուն միանալը» (Մուրատի կ՚ակնարկէին) ըսին, եւ դուրս հանեցին դժբախտ Պարգեւը։

Ընդունելութեան սրահը՝ փախստականներուն մէջ ահագին աղմուկ կար եւ իրարանցում։ Երբեմն գազանային ոռնումներ, երբեմն սրտակեղէք ճիչեր, մերթ արտակարգ ճռինչներ, մերթ ալ լիրբ հայհոյանքներ կը լսուէին եւ կը խանգարէին հարցաքննութիւնը։ Ատեանը տեղի տուաւ «տէլի» Աննային եւ ներս կանչեց զայն։

Երկու կողմէն, երկու սուինաւոր զինուորներով բերուեցաւ բանտին խենթը, որ իր բազուկները ազատելով զինուորներուն կաշկանդումէն եւ մէկ–մէկ ապտակ իջեցնելով իւրաքանչիւրին, պոռաց.—

«Զէ՞ք ամչնար, թեւս մաշած էք, էտէպսիզներ, լեռը չենք եա, մարդու մէջ կ՚ապրինք. հեռացէ՛ք ինձմէ՝ տեսնեմ»։

Ցետոյ սկսաւ աջ ու ձախ դառնալ, ատեանի անդամներուն գլուխները համբուրել եւ զինուորականի մը թեւէն քաշելով՝ ստիպեց որ պարէ իրեն հետ։

Հանդարտեցուցին զինքը, համոզեցին որ եթէ իրեն եղած հարցումներուն ճիշդ պատասխանէ, այդ վայրկեանին իսկ ազատ պիտի արձակուի։ Աննօ հի՛, հի՛, հի՛, խնդաց ու պոռաց՝ ականջ խլացնող ձայնով.

«Մարդասպանները մարդուն ազատութիւն պիտի տան եղեր, ո՞ւր գրուած է այդ, ըսէք, նայիմ. ո՞վ կը վստահի ձեզի. գայլե՛ր, վագրեր. մոռցա՞ք ըրածնիդ. լեռներուն, ձորերուն նայեցէք. բիւրաւոր գլուխներ կան հոն, եւ որքան կարմիր է ջուրը Եփրատի»...

Ցետոյ սկսաւ երգել.—

«Ա՜խ, մի խնդաք զիս, մե՜ղք եմ, էֆէնտիներ. ջուրը զիս կը քշէ. ազատեցէ՛ք, ազատեցէք, աղուոր եմ, սիրուն եմ»...

Ատեանը համբերութեամբ ականջ դրաւ խենթին խօսքերուն եւ ջանաց դարձեալ անուշութեամբ վերսկսիլ հարցափորձը։

«Է՜հ, Աննօ ճան, ըսէ՛, նայինք, ինչո՞ւ Տերսիմ կը փախչէիր. ամուսինդ Մուրատին խումբին մէ՞ջն էր, քեզի՞ կը սպասէր»։

«Հարիւր անգամ ըսած եմ, նորէն կրկնեմ. ջուրէն անդին մարդիկ հաց կը բաժնեն, մեզ անօթի չեն մեռցներ, կը լսէ՞ք, ձեզի պէս քարսիրտ չեն»։

«Աղէկ, Աննօ ճան, հասկցանք, հացի համար կ՚երթայիր, բայց դեռ չըսիր թէ՝ ո՞վ դրկեց քեզ»։

«Այդ ալ ըսեմ որ հանդարտանաք։ Իրապէս բոլորդ ալ կոյրեր էք եւ չէք տեսներ քաղաքին մէջ շրջող հազարաւոր աղաւնի պէս քիւրտերը։ Անոնց ճակատը համբուրեցի, վիզերնին ինկայ։ Անոնք ալ զրկեցին զիս ու տարին, տարին հեռո՜ւն, լեռներէն անդին։ Հասկցա՞ք հիմա», ըսաւ եւ մէկէն ի մէկ ցատքեց սեղանին վրայ, տարածեց թեւերը եւ սկսաւ պարել ու կանչուըռտել.

«Հարսանիքս է այսօր, մի՛ խնդրէք զիս, ձգեցէ՛ք որ պարս դառնամ լուսին աչքերով Արամիս դիմաց»...

Ցնցուեցան ատեանին բոլոր անդամները։ Իւրաքանչիւրը կախ գլուխով կը մտածէր։ Արիւնո՞տ էր բոլորին ձեռքը։ «Նիստը փակուած յայտարարեցին եւ հրամայեցին «Տէյլի» Աննոյին շղթայ զարնել, որպէսզի վտանգ մը չհասցնէ շուրջիններուն։ Բանտին մէջ սիւնի մը կապուած պէտք էր մնար քաջ Աննիկը, որ իր սխալը դարմանելու համար՝ այնչա՞փ լրջօրէն կը խաղար իր ողբերգական դերը։

Սուինաւոր կամուրջը քակուած չէր տակաւին։ Փախստականները կրկին անցան անոր տակէն եւ բանտ մտան յուսալքեալ ու ընկճուած...

Հազարապետ Շուքրի պէյը արհամարհանքի մռայլ դէմքին՝ գոհունակութեամբ տուն վերադարձաւ։ Աղջիկն իրեն կը սպասէր։

* * *

Մէկ ամսուան միջոցին երեք անգամ տեղի ունեցաւ դատավարութիւնը։ Խստօրէն պատուիրուած էր բանտապետուհիին, որպէսզի մանրակրկիտ ուշադրութիւն դարձնէ «տէյլի» Աննոյի ամէն մէկ շարժումին։ Որչափ որ անոր իրական խենթ մը ըլլալը ստուգուած էր ատեանէն, սակայն կասկածէ բոլորովին զուրկ չէր տակաւին։

Աննոն երբեմն քանի մը օր շարունակ կը մերժէր պատառ մը բան դնել բերանը եւ իր քով դրուած ջուրին կուժը կը գլտորէր հոս-հոն՝ ոտքով հարուածելով զայն։ Նիհարցած եւ ուժաթափ էր ու ժամանակին մեծ մասը նուաղկոտ ձայներ կը հանէր, կը խածկռտէր այն սիւնը, որուն կապուած էր ցորեկ-գիշեր։

Վերջին հարցաքննութեան առաւօտն էր։ Միեւնոյն պայմաններուն տակ խումբը փոխադրուեցաւ դատարան։ Մինչ այդ՝ զինուորական ատեանը ոեւէ ստուգութիւն քաղած չէր անոնցմէ, եւ գրգռուած թուրք խուժանը օրը օրին կը սպասէր տրուելիք վճիռին՝ կախաղանի բարձրացման...

Առաջին ներս կանչուողը «տէյլի» Աննոն եղաւ։ Այս անգամ փորձեցին վախցնել զայն եւ յիսուն գաւազանի հարուած իջեցուցին։ Աննոն լսած էր թէ խենթերը ցաւ չէին զգար։ Ջանաց արիաբար ոտքի ելլել՝ առանց տագնապի ոեւէ արտայայտութեան։ Իբրեւ թէ ծեծ կերած չըլլար, թեւերը բացաւ դարձեալ պարելու համար, քիչ յետոյ մօտեցաւ նախագահին, ականջին բան մը փսփսալու շարժումն ըրաւ։ Ներկաները լարուած ուշադրութեամբ կը դիտէին անոր իւրաքանչիւր քայլը։ Ցանկարծ այնչա՞փ սաստիկ ապտակ մը փրթաւ նախագահէն, որ նոյն իսկ փողոցը լսելի եղաւ։

«Տէյլի» Աննոն խածած էր ականջը, եւ արեան կաթիլները կ'աղարտէին անոր առջեւը դրուած թուղթերը։ Անմիջապէս խենթը դուրս հանուեցաւ, եւ ատեանը դռնփակ նիստ գումարեց։

Ոտքի ելաւ ատեանի նախագահը եւ կարդալ տուաւ ամսուան մը տեղեկագիրը Տերսիմ փախչողներուն տուած պատճառաբանութեանց շուրջ։ Վայրկեան մը լռութիւն տիրեց, յետոյ մաքրեց կոկորդը եւ սկսաւ ծանր-ծանր արտայայտուիլ։

«Ջուրը ինկող մէկը ձեռքը փրփուրին կ'երկարէ։ Ինչպէս կը տեսնուի, ասոնց պարագան ալ նոյնն է։ Լրտեսութեան եւ ո՛չ մէկ ապացոյց գտանք անոնց վրայ, եւ բոլորս ալ կը ցաւինք, որ խենթի մը խօսքով անտեղի անհանգստութիւն պատճառեցինք մեր յարգելի պաշտօնակիցին՝ Հազարապետ Շուքրի պէյին՝ իր իսկ տունէն ձերբակալել տալով իր կնոջ մայրը, որ այս խնդրոյն մէջ բոլորովին անպարտ կը հռչակեմ։ Այս վայրկեանէն՝ իբրեւ արդարադատ ատեանի մը նախագահը կը վճռեմ Տերսիմ փախչողներու ազատ արձակումը՝ նկատելով անոնց ծով թշուառութենէն ծնած, ոչ կանխամտածուած անխոհեմ քայլը իբրեւ ողբալական եւ մեղմացուցիչ պարագայ։ Կը հաւատանք Ալմաս Խաթունի անմեղ ըլլալը, եւ բոլորիս կողմէն ցաւ կը յայտնեմ իրեն տրուած տառապանքին համար։ Ան ազատ է»։

Վճիռը գրուեցաւ եւ տրուեցաւ բանտարկեալներու առաջնորդ յիսնապետի մը, որպէսզի ան ալ իր կարգին յանձնէ զայն բանտապետուհիին՝ թուլատրելու համար անոնց մեկնումը բանտէն, ուր քաւարանի օրեր անցուցած էին ամբողջ երեսուն օրեր։

Երբ փախստականներու կտորտակուած խումբը կը հեռանար աղտեղութեան, ոջիլներու եւ գրկանքի բոյնէն, հոն գտնուող թուրք ու քրդուհիները իրենց պայրոյթի ու նախանձի թոյնը կը պարպէին անէծքներու մէջ։ Մէկը միայն ի սրտէ երջանիկ էր անոնց անպարտ արձակուելուն համար։ Քրդուհի Մէջուճանն էր, որ իր եղբայրներուն հայ կիներու բարի ազդեցութեան տակ՝ ուրախութեան արցունք կը թափէր եւ իր համբոյրը կը դրկէր անոնց, որոնք ո՛վ գիտէր թէ աշխարհի ո՛ր մռայլ անկիւնը պիտի փճացնէին իրենց խաչեալ կեանքը...

Մեծ բարերախտութիւն էր անշուշտ Սարիկի համար, որ իր ազատ արձակման օրը զինք հետապնդող հարիւրապետը իր դունդով դրկուած էր հեռու, եւ հազիւ շաբաթէ մը պիտի կարենար վերադառնալ։

Սարիկ, օգտուելով առիթէն, անմիջական մտածումն ունեցաւ ձգելու Խարբերդը, որուն կապուած էր այնքա՛ն խորունկ յիշատակներով։ Շատ բան պիտի թողուր իր ետեւ՝ իր ընտանիքէն, գիւղէն, դպրոցէն, փրոֆէսորներէն, ընկերուհիներէն եւ Պարգեւի մտերմիկ կեանքէն։ Իր փոքրիկ սրտին մէջ սեղմեց աշխարհը թունդ հանող աղաղակը յուշերու, եւ Պարգեւի հետ, Պարգեւի համար որոշեց դուրս գալ արիւնաթօյր քաղաքէն։ Հալէպ մեկնելու գաղափարը ճառագայթեց իր ամպամած կեանքին վրայ։

Սարիկի հօրեղբօր աղջիկը՝ Կիւլիւզար Հանըմ, կինն էր Ֆէհմի էֆէնտիին, որ Մէզրէի մէջ օճառի մեծ վաճառական էր եւ մեծ ազդեցութիւն ունէր քիւրտերու կարաւանի մը վրայ։ Անոնք իրեն համար օճառ կը փոխադրէին Հալէպէն եւ զանազան արտածումներով կը մեկնէին Մէզրէէն. երբեմն նոյն իսկ ճամբորդ ալ կ՚առնէին Ֆէհմի էֆէնտիի խօսքը չկոտրելու համար։

Կարաւանը ճամբայ պիտի ելլէր երկու օրէն, երբ տակաւին բացակայ պիտի ըլլար հարիւրապետ աղան։ Սարիկ այս անակնկալ ու փրկարար լուրին վրայ նետուեցաւ վիզը հօրեղբօր աղջկան, եւ արցունքներու մէջ աղաչեց, որ միջնորդէ իր ամուսնոյն եւ զինք խառնէ կարաւանին։

Իրիկուն էր։ Կիւլիւզար «հանըմ» հազար ու մէկ փաղաքշանքներով մօտեցաւ Ֆէհմի «էֆէնտի»ին, համբոյրներով ողողեց անոր դէմքը եւ խնդրեց, որ իր երկու ազգականուհիները Հալէպ ղրկուին։ Ամուսինը յօժարեցաւ այդ կարգադրութիւնը ընել, նախ՝ կնոջ սիրոյն, երկրորդ՝ համր ազգականի մը ծանր լուծէն ազատուելու համար, եւ խոստացաւ ճանապարհածախսն ալ իր վրայ առնել, որ պիտի վճարէր, երբ ստանար անոնց ապահով հասնելուն նամակը, գրուած՝ Սարիկէն։ Արդէն մտադիր էր նաեւ դրկել իր հայ ծառային մօրաքոյրը, փոքր աղջկան հետ, որով այս երկուքն ալ կարելի պիտի ըլլար միացնել անոնց։

Կարաւանը իր հարիւր յիսուն ջորիներով կը պատկանէր երկու ազդեցիկ եղբայրներու՝ Տավուտ աղային, որ եօթանասունամեայ բարի ծերուկ մըն էր եւ իր ձիուն վրայ կը կրէր խուրճինով դեղին ոսկին, եւ Սիլօ աղային, որ հազիւ երեսունը անց արիւնարբու երիտասարդ մըն էր եւ տէրն էր կարաւանին հեկողչան՝ Զիլոյի։

Սարիկ, մեկնելէ առաջ, Մերտինի միսիոնարութեան գրուած յանձնարարական մը առաւ ամերիկացի Միս Ճէյքըպսընէն, որպէսզի օգտուին անոնց օժանդակութենէն շոգեկառք առնելու համար Մերտինէն Հալէպ, եւ համր քրոջ հետ, որ միշտ ծպտեալ կը մնար, ընկերացաւ կարաւանին՝ Սիլօ աղային աչքն ու ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացած։

Ճամբորդութեան երկրորդ առաւօտն էր։ Հեռուն կը փայլփլէր Ծովքի կապուտակ հայելին։

Կարաւանը կը յառաջանար յամր գնացքով եւ իր հետ կը տանէր տանջուած հոգիներու մռմռունքներ...

Արշալոյսը դեռ նոր սկսած էր մաղել իր ոսկի շողերը անդորր բնութեան ծոցը եւ լոյսով ողողած չորս դին։ Լռութիւն կը տիրէր ամէն կողմ, եւ միայն կարաւանի զանգակներուն ղօղանջիւնը լսելի էր։ Կապոյտ ու ջինջ Ծովքի ափերուն վրայ եւ զանոնք շրջապատող խորխո լեռներու՝ ծերպերուն մէջ կը պաղպաջին սպիտակ ոսկորներու հսկայ կոյտեր եւ իրենց բողոքը կը խառնէին տակաւին բողոքող ալիքներուն, որոնք մեծ ճիգերով մաքրած էին Ծովակը՝ զինքը ճնշող բիւրաւոր զոհերէն:

Հեռուն՝ միայնակ կղզին իր հինաւուրց վանքի փլատակներով կը կենար որպէս ճշմարիտ վկայ կատարուած խժդժութիւններուն: Անխռով կարապներ զով օդին իրենց առաջին պարը կը դառնային արեւի առաւօտեան ճաճանչներուն մէջ:

Յանկարծ գնդակներու պայթիւններ վրդովեցին այս բոլորը եւ ցնցեցին տարաբախտները: «Արդեօք դարձեա՞լ»... Եւ ահա բարձրացան քիւրտերու կատակախառն քրքիջները անոնց ահաբեկումին առջեւ, եւ սպիտակ կարապներ գլխիկոր՝ կարմիր երիզներ գծեցին կապոյտ ջուրերու երեսին...

Սարիկն ու Պարգեւը, քարացած կենդանիներու քամակին, մտքով կտրեցին քանի մը տարուան շրջանը եւ իրենց աչքին առջեւ գտան արիւնոտ նկարը խողխողուած սրբազան ցեղին՝ սահմռկեցուցիչ տեսարաններու մէջ, որոնց դիւային ազդեցութեամբ կը պատռէր հեւքոտ կուրծքը Ծովակին:

Երբ իրենց ետեւ ձգեցին մօտիկ անցեալին դիակներով ծանրաբեռնուած Ծովակը, Միսօ աղան մտածեց թէ այլեւս եկած էր ժամանակը իր դիւային ծրագիրներու գործադրութեան: Շատ դիւրին էր իրագործել զանոնք, քանի որ դժբախտ Սարիկի համար վարձուած էր իր ջորիներէն մին:

Միսօ աղան կարաւանին խառնուիլ չէր ուզեր: Չորրորդ առաւօտուն, երբ բեռները կը կապուէին ու կը բեռցուէին, Սարիկ փոխադրուեցաւ իր ձիուն վրայ: Կենդանին սկսաւ կամաց-կամաց դանդաղիլ եւ ետ մնալ: Պարգեւ, թէեւ զգուշաւոր նայուածքներով կը չափէր վտանգին խորութիւնը, բայց չէր յանդգներ ոեւէ միջամտութիւն ընել:

Սարիկ թափանցեց Միսօ աղայի դժոխային նպատակին. փայլակնաբար հանեց կօշիկները, թեւին տակ դրաւ ու վար ցատկեց ձիէն: Ու այդ եղաւ այնչափ անակնկալ կերպով, որ Միսօ աղան ժամանակ չունեցաւ անդրադառնալու պատահածին: Տառապած աղջիկը սողոսկեցաւ ջորիներու փորին տակէն, վազեց հարիւր յիսուն կենդանիի կողքէն, կտրեց ճամբան, հասաւ կարաւանին գլուխը եւ ընչասպառ փռուեցաւ Տավուս աղայի ձիուն ոտքերուն առջեւ:

Սո՛ւր սուլում մը արձագանգեց լեռներուն մէջ: Կարաւանը կանգ առաւ: Ծերուկը հայհոյելով եւ անիծելով վար իջաւ ձիէն: Կը ճանչնար իր սրիկայ եղբայրը, բացատրութեան պէտք չկար: Գետնէն վերցուց Սարիկը, որ կայնելու ուժ չունէր: Պոռաց, կանչեց, թքեց Միսօյի հասցէին, եւ նստեցուց յոգնած աղջիկը իրեն պատկանած ջորիի մը վրայ, բերել տուաւ նաեւ անոր քոյրը եւ չորս հայ տանջուածներու խմբակին առաւ իր հսկողութեան տակ: Երբ դարձեալ իր ձին պիտի հեծնէր, տեսաւ, որ իր գանձը հետը չէր, եւ կը պակսէր նաեւ կարաւանին շունը:

Անմիջապէս երկու ծառայ վերադարձան այն ձորը, ուր գիշերած էր կարաւանը: Հոն՝ խուրձերուն վրայ պառկած գտան հաւատարիմ Զիլոն, որ կը պաշտպանէր իր տիրոջ հարստութիւնը: Ջորիի մը վրայ դրին ոսկիներու պարկը, վրան նստեցուցին շունը եւ վերադարձան:

Տավուս աղան ինքզինք վարձատրուած զգաց Սարիկի հանդէպ ցոյց տուած գուրգուրանքին համար եւ նոյն երեկոյին երկու ոչխար մորթեց ու կերակրեց բոլորն ալ: Չըլլար Սարիկի փախուստը, չպիտի գտնուէր նաեւ իր գանձը, որով ծերուկը սկսաւ նայիլ անոր՝ իբր «ուղուրլու» մէկը: Ան մտածեց նաեւ Սարիկի եւ անոր ընկերուհիներուն անցընելիք գիշերներու մասին: Երեկոյեան, երբ հակերը մէկմէկու վրայ շարուելով պարիսպը կը շինուէր, իր քով տեղ բռնեցին անոնք, եւ երկու ծառայ փոխն ի փոխ կը հսկէին անոնց վրայ, ինչ որ կը կատղեցնէր Միսօ աղան:

Այսպէս լման շաբաթ մը տաժանելի պայմաններով ճամբորդելէ վերջ, կարաւանը կը հասնէր Մերտին, ժայռերու կատարին հիւսուած արծիւներու բոյնը, որ իր անառիկ դիրքով կարծես կը հեգնէր մարդ ու բնութիւն: Քաղաքը տանող շատ նեղ եւ օձապտոյտ ուղի մը կ՚երկարէր վար՝ լերան ստորոտը, ուր հաստատուած էր շոգեկառքի կայարանը, Թուրք, վայրագ պաշտօնէութեան մը խնամքին ներքեւ։

Սարգիս, երկրորդ անգամն ալ կրակ փորձանքէն ազատուած ըլլալով, իր ձեռքի յանձնարարականը ներկայացուց ամերիկեան հաստատութեան։ Անոր վարիչները վհատուած չէին Խարբերդի ամերիկացիներուն նման եւ կը շարունակէին իրենց գործը։ Շատ սիրալիր կերպով ընդունեցին զինք, լոգանք, սնունդ, անկողին հայթայթեցին մինչեւ շոգեկառքին ժամանումը։

Քանի մը օր յետոյ, շոգեկառքին մեկնելու նախորդ երեկոյին, կայարան զրկուեցան՝ հոն գիշերելու համար, որպէսզի առաւօտ կանուխ կարող ըլլային տեղ բռնել։ Կայարանապետին ուշադրութենէն չվրիպեցան դժբախտները, եւ հազիւ մէկ չարիքէն դուրս եկած՝ կ՚իյնային ուրիշի մը գիրկը։ Սարգիսի առաջարկուեցաւ իբրեւ խոհարարուհի ներկայանալ կայարանապետին բնակարանը։

Միշտ խոհեմ շարժող Սարգիսը շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած գործի առաջարկին համար. խոստացաւ երթալ, բայց խնդրեց, որ թոյլ տրուի ճամբու դնելու իր համր քոյրը մեկնող շոգեկառքին հետ դէպի Հալէպ, ուր մօրեղբայրը կը սպասէր իրենց։

Չընդդիմացաւ կայարանապետը, ինքն ալ ուզեց ազատուիլ համրի մը բեռէն, լռեցուց իր ձեւական գլացումները եւ նոյնիսկ կերակուր զրկեց անոնց, Սարգիսի վստահութիւնը գրաւելու համար։

Սարգիս չէր խաբուած։ Կեանքի դաժան փորձառութիւններէն շատ բան սորված էր։ Գիտէր թէ խոհարարուհի անուան տակ՝ ի՛նչ կը սպասէր իրեն։ Պէտք էր կոխատէր, պէտք էր յաղթահարէր այդ խոչընդոտն ալ, որ թերեւս վերջինը պիտի ըլլար։

Գիշեր էր, լռութիւն ամէն կողմ։ Որոշեց դարձեալ լեռ բարձրանալ իրեններուն հետ եւ ամերիկեան օժանդակութիւնը խնդրել։ Իր ընկերակից տիկինը կռնակը առաւ փոքրիկ աղջնակը, Սարգիս բռնեց ձեռքը Պարզեւին, եւ չորսը մէկ շուլլուեցան անտանելի Գողգոթան։

Սարսափազդեցիկ էր ճանապարհը՝ քիւրտերու բնակավայրերուն այնչա՛փ մօտ։ Աննուաճ կամքով էր որ միայն կը մղուէին վեր, դէպի արծիւներու բոյնը։

Կէս ճամբան հազիւ կտրած էին, երբ հրացաններու պայթիւններ լսուեցան, գնդակներ սուրացին իրենց շատ մօտէն։ Իրենք կծկուած մնացին ժայռերուն ետեւ, ու դրեթէ մէկ ժամ չհամարձակեցան շարժիլ։ Յետոյ՝ դարձեալ ծանր լռութիւն, դարձեալ հեւ ի հեւ բարձրացում, մինչեւ որ բոլորովին ուժաթափ՝ երկրորդ անգամ ինկան ամերիկեան գթառատ շողերուն ներքեւ։

Արշալոյսին ամերիկուհի մը անձամբ ընկերացաւ անոնց։ Իջան կայարան այն պահուն, երբ շոգեկառքը կը ֆշշար, ծուխ կ՚արձակէր, մեկնելու կը պատրաստուէր։ Իրարու կապուած, քառանկիւն սեւ սնտուկներու մէջ լեցուած էին եօթանասունի մօտ անհատներ, մեծ մասամբ զինուորներէ բաղկացած։

Ամերիկուհին հազիւ կրցաւ անկիւն մը ճարել Սարգիսի խմբակին համար։ Ոչ ոք համարձակեցաւ մօտենալ անոնց։ Սուրաց կառաշարը՝ իր ետեւ ձգելով կայարանապետը։

Շոգեկառքը կը սուրար եւ արիւնո՛տ երկրէն կը հեռացնէր ազատատենչ հոգիները…

* * *

Առաջին գիշերն էր Մերտինէն Հալէպ։ Բաց դաշտերուն մէջ կանգ առաւ վայրաշարժը։ Դուրս խուժեց շնչահեղձ ամբոխը։ Սարգիս չէր ուզեր շարժիլ՝ տեղը կորսնցնելու վախէն։ Յանկարծ իր ականջին հասաւ մայրենի լեզուով քաղցրահնչիւն ձայն մը.—

«Հայ կա՞յ ներսը, հայ կա՞յ ներսը»։

Կարծես երկնային մեղեդի մը ըլլար, որ փշրուած սրտերու յոյս կը բերէր։ Ցատքեց տեղէն, ճեղքեց խճողեալ բազմութիւնը, հասաւ դրան եւ ուժը ներածին չափով՝ պոռաց բարձրաձայն.

«Այո, այո, չորս ենք հոս»…

Հնդիկ զինուորներու խառնուած հայ կամաւոր մըն էր Խարբերդէն, կը փնտռէր իրենները, իր ցեղին խլեակները։ Ինքն ալ իր կարգին՝ արեան հոսանքին խառնուած էր կին ու զաւակներ: Մեծ կարօտով հառաչանք մը արձակեց, վար առաւ Սարիկն ու իր ընկերուհիները եւ ուզեց փոխադրել զանոնք իր վրանը: Ի՞նչպէս կրնար գիշերել տալ անոնց այդ հրէշային խուժանին մէջ:

Վրանին տակ հարազատ եղբօր մը խանդաղատանքով փարեցաւ անոնց: Իր քաղաքին օդն ու ջուրը վայելած սրտահատորներ էին: Մանուկի մը նման լացաւ անոնց առջեւ, պարպեց թարախոտ սիրտը ու բաւ.

«Հոգեակներս, նախ խրատս ըլլայ ձեզի, երբեք չվստահիլ այս սեւամորթներուն. հեռու կեցէք անոնցմէ: Քոյրիկնե՛րս, այս է զինուորի մը կեանքը: Բան մը չունիմ ձեզ հիւրասիրելու, բացի այս ձմերուկէն, որ հազիւ կրցայ ձեռք ձգել»:

Որքա՜ն համեղ, որքա՜ն քաղցր էր այդ զինուոր եղբօր նուէրը, որուն մէջ լուծուած էր սէրը, գուրգուրանքը, կեանքը հարազատի մը:

Շաբաթներէ ի վեր առաջին անգամն ըլլալով՝ այնչափ անոյշ քուն քաշեցին՝ Խարբերդէն—Հալէպ մեկնող առաջին փոխադրականները: Հայրենակիցի մը սփոփարար հովանաւորութեան տակ էին: Հայ կամաւորի մը սիրոյ շողերը կը ճառագայթէին անոնց դէմքին վրայ, եւ երկնային անդորրութիւնն ու վստահութիւնը կը խառնուէին անոնց մա՜յլ երազներուն...

* * *

Կառախումբը, վերջապէս, հասաւ Հալէպ՝ ընդարձակ դաշտավայրի մը վրայ անփութօրէն տարածուած այդ լայնանիստ քաղաքը: Անոր հնաւուրց, մեծ մասամբ միայարկ տուներու սենեակները կը բացուէին քառանկիւն բակերու վրայ, որոնցմէ նաեւ կը ստանային իրենց լոյսը: Փողոցին վրայ նայող ոեւէ պատուհան չկար: Հաւանաբար նախնիք մտածած էին այս կերպ շինել տուները՝ թշնամիներէն պահպանուելու համար:

Սարիկը եւ Պարզեւը ցաւով բաժնուեցան իրենց ընկերակից տիկինէն, որուն հետ կիսած էին ճամբորդութեան տաժանքը եւ որուն մայրական շունչին տակ՝ ապահով հասած էին Հալէպ: Երախտագիտական արցունքներով զինք ղրկեցին իր փոքրիկ Անահիտին հետ միանալու իր մէկ ազգականին:

Բոլորովին անծանօթ քաղաքին՝ մինչեւ ցորեկ շրջեցան փողոցէ փողոց եւ, վերջապէս, մեծ մտատանջութեամբ ու երկիւղով զարկին դուռը բակի մը:

Ներսէն մարած ձայն մը հարցուց.

«Ո՞վ էք, ի՞նչ կ'ուզէք: Եթէ պարապ սենեակ կը փնտռէք, ձագուկներս, ուրիշ տեղ նայեցէք. հոս իւրաքանչիւր սենեակ իր տասնեհինգէն—քսան հոգինոց բեռն ունի արդէն»:

Թշուառ, կիսամերկ ու կմախացած կին մըն էր խօսողը, կարծես գերեզմանէն դուրս քաշուած մեռել մը ըլլար. չկրցաւ զսպել իր հետաքրքրութիւնը եւ, վերջապէս, դուռը բացաւ:

Երբ տեսաւ իրեն բախտակից երիտասարդ զոյգը՝ իր կորուսեալ աղջկան հասակով, փղձկեցաւ, մայրական կարօտի խանդաղատանքով ներս քաշեց զանոնք, փաթթուեցաւ վիզերնին ու լացաւ.

«Մեզմէ են, մեզմէ են: Նեղ կ'ըլլանք, տեղ կ'ընենք. փողոց ձգելու չե՞նք եա, այս ճահիլները:»

Սենեակներէն դուրս խուժեցին մեծ ու պզտիկ, կարեկցութեամբ ու հետաքրքրութեամբ շրջապատեցին զանոնք. ժամ առաջ կը փափաքէին լսել անոնց պատմութիւնը:

Սարիկ յարմար ժամանակը նկատեց քակելու Պարզեւի շրթներն ու ծպտումը իր հարազատներուն մէջ:

Մեծ էր յուզումը բոլորին, երբ լսեցին երկու երիտասարդ հոգիներու եղերական պատմութիւնը. հիացան անոնց յանդգնութեան ու կորովի քայլերուն վրայ, եւ միահամուռ ծունկի եկան անոնց առջեւ կրկնելով.

«Փա՜ռք քեզ, Աստուած, փա՜ռք քեզ, որ սէր ու գութ ունիս եղեր»...

Պարզեւի առնական գեղատեսիլ կերպարանքը իր երկայն մօրուքով Յիսուսի տպաւորութիւնը ձգեց բոլորին վրայ: Չէին հաւատար անոր մարդ ըլլալուն եւ նոյնիսկ ոմանք Թովմասի պէս մօտեցան անոր ու շօշափեցին զինքը։ Տարիներէ ի վեր զուրկ էին հայ աղամարդու տեսիլքէն...

Նոյն պահուն սալայատակուած բակը վերածուեցաւ մատուռի մը և բոլորը միահամուռ մրմնջեցին.

«Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա»...

Տիրող խանդավառութենէն ոգեւորուած՝ ութսունամեայ ծերունի քահանայ մը հաւաքեց ուժերը եւ իր պատառատուն ծածկոցին տակէն դուրս գալով միացաւ աղօթող ամբոխին։

Հայր Վարդան, արցունքը աչքերուն, իր դողդողուն բազուկներուն մէջ առաւ Սարիկն ու Գարգենը, սեղմեց զանոնք իր կուրծքին, համբուրեց ճակատնին եւ տուաւ իր հայրական քաղցր օրհնութիւնը.

«Զաւակնե՛րս, հոգեակնե՛րս, կը բաւէ մեր տեսածն ու քաշածը. Աստուա՜ծ ձեզ երջանիկ ընէ, ալ արիւն չտեսնէք»...

Բոլորը միասին կրկնեցին.

«Ամէ՜ն, ամէ՜ն»...

Յանկարծ ձայն մը բարձրացաւ անոնց մէջէն.

«Տէր Հա՛յր, ալ ի՞նչ կը սպասես, մէկ անգամ օրհնէ անոնց պսակն ալ, եւ տար մեզ մեր հին, անոյշ օրերուն, եւ մեր աչքերը թո՛ղ տեսնեն հայ օճախի մը հիմնարկութիւնը՝ բացուած աւերակներու վրայ։

Քահանան վտիտ ձեռքերով հանեց իր ծոցէն խաչը, զոր անգին գանձի մը պէս կը պահէր եւ օրհնեց Սարիկի ու Գարգենի պսակը։

Յետոյ ծերունի Սիմէոնի նման բազուկները տարածած՝ գոչեց ցնծութեամբ—

«Արդ արձակես զծառայս քո, Տէ՛ր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո»։

Վերէն բիւրաւո՞ր նահատակներու օրհնութիւնը կ'իջնէր նորապսակ զոյգին վրայ, եւ մահուան ճամբուն՝ կեանքի յաղթանակի դափնին կը հիւսուէր անոնց ճակտին...

(ՎԵՐՋ)

Աղեքսանդրիա

«ԿԱՐՕՏՆԵՐ ԵՒ ԹԱԽԻԾՆԵՐ» ԳՐՔԻՑ

Նուէր՝ Տ. Շաքմազեանին

I
ՍԳԱՒՈՐ ԵՄ

Երէկ գիշեր՝ քե՛զ թաղեցի,
— Մի շիրիմ կայ իմ սըրտում...
Մենութեան մէջ արտասուեցի,
— Սըգաւոր եմ ու տըրտում...

Օրօ՛ր քեզի իմ մեռա՛ծ Սէր,
— Սիրտըս շիրի՛մ քե՛զ համար—
Մըղկըտում է հոգիս աւե՛ր
— Քե՛զ եմ ողբում անդադար...

II
ՉԵՄ ՈՒԶՈՒՄ

Չեմ ուզում կանգնել քո ճամբի վըրայ.
— Անցի՛ր դու, գընա՛...
Հոգ չէ թէ սիրտըս իմ արիւնլուայ,
— Յաւիտեան կուլա՛յ ...
Երջանկութիւն եմ քեզի ցանկանում,
— Ի՛մ սըրտի հատոր...
Ուրախ եմ, որ դու ուրիշն ես սիրում,
— Եղի՛ր բախտաւո՛ր...
Քեզանից միայն մի բան եմ խընդրում՝
— Տըրտում ժամերիդ,
Յիշի՛ր ինձ, անգի՛ն, յիշի՛ր քո մըտքում,
— Քո որբ ընկերիդ...

III
ԲԱԺԱՆՈՒՄ

Դողում է հոգիս անորոշ վըշտից,
— Թւում է որ էլ քեզ չեմ տեսնելու...
Հեռաւոր իմ սէ՛ր, դու անուշ թախիծ,
— Ասա՛, հոգի՛ ջան, դու ե՞րբ ես գալու...

Երբ բաժանուեցայ ճամբի եզերքին,
— Մի մո՛ւթ կասկածից ընկլուեց հոգիս—
Զգացի, խորթ էր, խորթ էր քո հոգին,
— Իմ ձըգտումների՛ս, իմ երազների՛ս...

Շատերի հետ ես քո սէրը խաղում,
—Մեղք ես, անո՛ւշ ջան, տե՛ս, կը խորտակուի՛ս
Շատերն են քեզ մօտ ժամանց որոնում,
—Ափսոս ես, հոգի՛ս, յաւէտ կը կորչի՛ս...

IV
ԳԷԹ ԻՄ ԵՐԱԶՈՒՄ...

Հաւատացի ես, թէ կարող էիր
սիրել ինձ նըման,
— Բայց, սըխալուեցա՛յ...
Ու բաժանուեցայ յաւիտենապէս
մեր կեանքի ճամբան՝
— Քեզնից հեռացա՛յ...
Հիմա նըստած ես քո սենեակիդ մէջ՝
ճամբիս ես նայում,
— Աչքերդ՝ արցունք...
Է՛լ ինչո՞ւ ես դու սըրանից յետոյ
ինձ մօտըդ կանչում,
— Եղի՛ր մոռացմո՛ւնք...
Թո՛ղ որ սըրտիս մէջ դըրոշմուած մընայ
պատկերդ նըրբին,
— Եղի՛ր յո՛ւշ, երա՛զ...
Մի քըրոջ նըման գուրգուրա վըրաս,
անուշ, կարոգի՛ն,
— Մեղմիկ, հեզանա՛զ...
Թոյլ տուր, անուշ ջան,
գէթ իմ երազում քեզի այցելեմ,
— Սրտումըս՝ կարօ՛տ—
Պատուհանիդ տակ անյոյս,
վարանոտ, մենաւոր նըստեմ,
— Գէթ լինեմ քեզ մօ՛տ...

V
ՍՐՏԻՍ ԴՌՆԵՐԸ

Սըրտիս դըռները ես բացի մէկից՝
— Քեզի ներս առի—
Հիմա մաշւում եմ քո հո՛ւր կարօտից՝
— Անուշ ջան, արի՛...
Աշնան այս տըրտում միգում անթափանց,
— Հոգիս է մըրսում —
Ողբում եմ անյոյս օրերըս վաղանց
— Ու քե՛զ որոնում...
Իմ մանկութեան սէ՛ր — չըքացա՛ծ երազ —
ինչո՞ւ չես գալիս,
Ե՛կ, անո՛ւշ աղջիկ, արտասուի՛ր վըրաս
— Թաղում եմ հոգի՛ս . . .

Ս. ԹԱՓԱՌԱԿԱՆ

Ֆօքսբօրօ, Մէսս.

ՀԱՅԱԶԳԻ ԴԻԿՏԱՏՈՐԸ

(ԿՈՄՍ Մ. ԼՕՐԻՍ–ՄԵԼԻՔԵԱՆ)

Գրեց՝ ՌՈՒԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Ճակատագիր շարքէ դուրս.— Լ. Մ.-ի անուան հետ կապուած առասպելներ.— Անունը մշուշի մէջ.— Ծերակուտական Լ. Քօնիի պատմածներից.— Կոմսի կեանքի առաջին շրջանը.— Հռչակաւոր զօրավար.— Նրա վարչական առաջնակարգ ընդունակութիւնները.— Ռուսաց պետական բարենորոգումների շրջանը եւ քաղաքական պայմանները:

Կան ճակատագիրներ, որոնք շարքէ դուրս են:

Համեստ վաճառականի որդի, ծնողքը վճռած էին, որ իրենց տղան բժիշկ դառնայ, բայց նա դարձաւ զինուորական: Երկու անգամ Կարսի բերդը առաւ: Կարսի ու Էրզրումի մօտ ջարդեց եռապատիկ աւելի ուժով թուրք զօրքը: Մասամբ բացատրեցին «հրաշքով», մասամբ «յաջողութիւններով»: Միայն հետագային համոզուեցան, որ հայ զինուորականը հանճարեղ ռազմագէտ է:

Քիչ ժամանակ անցած, հայ զօրավարին յանձնեցին դժուարին եւ պատասխանատու վարչական պաշտօններ: Այդ տեղ էլ նա ցուցադրեց եզակի ընդունակութիւններ ու վարչական թափ: Եւրոպան, որ դիտում էր ու հետեւում ռուսաց գործերին, նշեց Լօրիս–Մելիքեանին, որպէս հանճարեղ զօրավար եւ ո՛չ նուազ հանճարեղ վարչական մեծ մարդ: Ու ահա նահանգների հայազգի բարձր վարիչը կամ նահանգապետը հրաւիրուեց ցարի կողմից, որպէս դիկտատոր համայն Ռուսաստանի՝ վարչական անսահման *իրաւունքներով:*

Հայ դիկտատորը պատրաստում է բարենորոգութիւնների մեծ ծրագիր, ա՛յն, որ «Լօրիս–Մելիքեան Սահմանադրութիւն» անունը ստացաւ ռուս եւ եւրոպական պատմական մամուլի մէջ:

Ռուսաստանը պատրաստւում էր նոր արշալոյսի: Բայց դէպքերը դահավէժ ընթացք առան: Ցար Ալեքսանդր Բ.-ի սպանութիւնը, թագաժառանգի (նոր ցար Ալեքսանդր Գ.-ի) յետադիմական քաղաքականութիւնը, դիկտատոր Լօրիս–Մելիքեանի անկումը, նրա կամաւոր աքսորութիւնը, հիւանդութիւնը ու նրա մահը, որից յետոյ երկար տարիների ընթացքում դիկտատորի գործունէութեան ու նրա անուան հետ յիշատակումների արգելումը, նրա վարչական շրջանի վերաբերեալ փաստաթղթերի ոչնչացումը եւ Ռուսաստանի ընկղմումը խոր յետադիմութեան մէջ…

Արդարեւ, ճակատագիրը շարքից դուրս էր եւ անողոք: Նման սլացող մոլորակի, իր աւարտումով նա մի պահ լուսաւորեց ռուսաց քաղաքական մութ երկնակամարը: Վազքը մեծ էր ու լուսափայլ: Բայց սուր լոյսը կուրացրեց դիկտատորի ժամանակակիցների աչքերը եւ ծնեցրեց նրանց սրտում նախանձ ու օձի շչոց։

Լոյսից պաշտպանուելու համար կար յարմար միջոց՝ ձգել թանձր վարագոյր նրա անուան ու նրա ծրագիրների վրայ։ Պատմական մեծ դէմքերի ճակատագիրը միշտ էլ հետաքրքրական է, երբ պրպտելով նրանց հոգեկան մղումները՝ գտնում ես փոշիացած շիրիմի խորքում կենդանի մարդը իր մտահոգութիւններով ու տենչերով, իր հեռանկարներով ու ապրումներով։ Զգում ես որոշ համակրանք այդ դէմքերի հանդէպ, երբ նրանք, չնայած իրենց բերած մեծ ծառայութեան, եղել են թերագնահատուած, ընկած են մոռացութեան մէջ եւ կամ լուտանքի ու հալածանքի են եղել ենթարկուած։

Այդ պատմական մեծ դէմքերը առանձնապէս գրաւում են մեր ուշադրութիւնը, երբ նրանց կեանքը ու գործունէութիւնը ծնեցրել են առասպելներ, լեգէնդաներ։

Իմ հասակակից հայերից թերեւս մի քանիսը յիշում են եօթանասնական թուերի վերջերում եւ ութսունականների սկզբներում տարածուած առասպելական պատմութիւնները նշանաւոր զօրավար Լօրիս-Մելիքեանի մասին։

Պատմում էին, թէ իբր թէ հայ զօրավարը վարժեցրել էր իր զինուորներին մի հարուածով երկու թուրք գլուխներ կտրել. թէ Կարսի բերդում թուրքերը 100 հազար զօրք են ունեցել, մինչդեռ Լօրիս-Մելիքեանը 10 հազար զինուորով է բերդն առել. թէ Հիւսիսային Կովկասի Ինկուշ եւ այլ ապստամբ մահմեդական ցեղերը՝ «աման» են խնդրել ցարից, երբ լսել են, որ զօրավար Լօրիս-Մելիքեանն է գալիս նրանց զսպելու համար։

Պատմում էին մի առանձին խորհրդաւոր շեշտով, որ իբր թէ ցարը հրաւիրել էր պալատ հայ զօրավարին ու ասել.

«Յոգնած եմ իշխելուց. նստի՛ր այս ոսկի գահի վրայ ու թագաւորէ՛»։

Բերնէ բերան պատմում էին հազիւ լսելի ձայնով, թէ ահաբեկիչներ սպանեցին ցարին, որովհետեւ ցարը, թէեւ բարի մարդ էր, բայց, հակառակ ռուսական օրէնքին, գաղտնի պսակուած էր մի ռուս իշխանուհիի հետ, որը արքայական արիւն չունէր։

Կարծում էին թէ «դիկտատոր Լօրիս-Մելիքովը» մի այնպիսի օրէնք էր հնարել, որի հիման վրայ ցարերը թատրոնի սրահում երկրորդ կարգը պիտի նստէին, իսկ դիկտատորը՝ առաջին կարգը...

Այնուհետեւ շատ էր տարածուած և՛ այն «պատմութիւնը», որ իբր թէ նոր ցարը, իր հօր մահից յետոյ, «հրամայել էր Լօրիս-Մելիքովին թողնել Ռուսաստանը ու գնալ ապրել արտասահմանում անհաւատների հետ եւ չվերադառնալ այլեւս Ռուսաստան»։

Բերնէ բերան պատմուած ու տարածուած այս առասպելները, նման գլորուած ձիւնագնդակի, յաճախ անհեթեթ բովանդակութիւն էին ստանում, թէեւ նրանց բոլորի մէջ էլ գտնում էին իրական դէպքերի բարակ հետքերը։ Պէտք էր փնտռել, գտնել ու զանազանել ճշմարտութիւնը ստից, փաստը առասպելից, իրականը հեքիաթից։

Կային նոյնիսկ որոշ փաստեր, որոնք ժամանակի ընթացքում կորցրել էին իրենց պարզութիւնը ու ամբողջովին մթագնել էին թանձր քօղի ետեւը: Մինչեւ իսկ ութսունական թուականների վերջերում պատահում էր կարդալ ռուս պահպանողական մամուլում հետեւեալ տողերը — «... այն չար յիշատակի Լոռիս-Մելիքեանի 1880-81 թուականները պէտք է դուրս պոկուին ռուս պատմութիւնից»:

Սակայն ի՞նչ էր պատահել, ի՞նչ էր արած կոմս Լոռիս-Մելիքեանը, հարց էինք տալիս պատանիներս միմեանց:

Ազատամիտ մամուլը լռած էր, որովհետեւ արգիլուած էր խօսել հայ զօրավարի մասին, մանաւանդ բարեացակամ շեշտով ու հոգով:

Ռուս քաղաքական ռէժիմը գնալով խստանում էր: Առօրեան աւելի հրատապ էր եւ հրամայողական իր հարցերի համար: Եւ ո՞ւմ հոգուն էր մօտ պատմական անցեալով զբաղուելը, քանի որ առօրեան աւելի «վսեմ էր ու հրամայական»...

Պատահմունքը, բարեբախտաբար, ինձ օգնեց ի մօտոյ ծանօթանալու կոմս Լոռիս-Մելիքեանի կեանքի ու գործունէութեան հետ:

Մի օր, 1910 թուականներին, Պետերբուրգում մօտ ազգական ընտանիքում ծանօթացրին ինձ մի փոքրահասակ, աժգոյն, լիմոնի դէմքով, լղար, ածիլած երեսով, բայց խորաթափանց աչքերով ծերունիի հետ: Ազգանունը չասացին կամ ես չլսեցի: Երկու վայրկեանից՝ ես արդէն մոռացել էի այդ ծերունուն, երբ մի բան աչքիս ընկաւ: Ընդհանուր խօսակցութեան մէջ, հէնց որ այդ լուռ նստած ծերունին խօսք էր առնում, բոլորը յանկարծ լռում էին եւ ուշադրութեամբ հետեւում նրա ասածներին:

Մօտս նստած պարոնից իմացայ, որ ծերունու ազգանունը Քոնի է: Իմ սերունդի մտաւորականի մը համար այդ անունը հռչակ էր ստացած իբրեւ մասնագէտ իրաւաբանական-քրէական հարցերի, իսկ այժմ իբրեւ յարգուած Ծերակուտական, որը ամբողջ կեանքում անկախ եւ անվախ դիրք էր բռնել ռուս կառավարութեան հանդէպ: Յայտնի էր այդ մարդը նաեւ իբրեւ տաղանդաւոր հրապարակագիր, իբրեւ Ռուսաստանի փոքր ազգերի ազատամիտ պաշտպան, հրէական «փոկրոմ»-ների դէմ բողոքող եւ այլն:

Անշուշտ, Ռուսաստանը միշտ էլ հարուստ էր եղած մտաւորական դասով: Բայց Քոնին պատկանում էր այն բարձր որակի մտաւորականութեան, որի գլխաւոր յատկութիւններն էին՝ լրջութիւն, մարդկայնութեան իտէալը, անշահախնդրութիւն, հաստատ պաշար իր մասնագիտութեան մէջ, նաեւ բազմակողմանի մտաւոր զարգացում ու լայն աշխարհայեացք, սէր դէպի հանրային գործունէութիւնը: Այդ մտաւորականութիւնը թշնամի էր շատախօսութեան, խուսափում էր բիւզանդական ապարդիւն վէճերից, որոնցից գործը համարեա միշտ տուժում է: Աւելին. այդ մտաւորականութիւնը հանրային հարցերի մէջ համարեա միշտ գործնական ելք էր փնտռում եւ ցոյց տալիս. ճշմարտասէր էր ու կարգապահ անձնական յարաբերութիւնների եւ մտային աշխատանքների մէջ:

«Քոնիի ուսերի վրայ, ասում էր մի օր պրոֆ. Մեչնիքովը Փարի-

դում,— ոչ թէ գլուխ է, այլ միշտ վառ ու կենդանի հանրագիտարան»:

Այսու հանդերձ Քօնին բարեկիրթ էր և խիստ համեստ: Այդ տեսակ մարդկանց կարելի է որակել անգլիացիների խօսքով՝ «է փըրփէքթ ճէնթլմէն»:

Իրաւաբանը նրան յիշում էր, իբրև արդարադատութեան քաջ ծառայող. դատաստանական գործիչը յանձին Քօնիի գտնում էր օրէնքների նրբութիւնները բացատրող ու օրէնքի սառն ձևերի տակ նրա հոգին գտնող. պետական գործիչը լի յարգանքով էր վերաբերւում Քօնիի անկախ մտքի ու անկեղծ հայասիրութեան հանդէպ. մամուլի աչքումը Քօնին նախ ու առաջ հանրային շահերի, ապա մտքի անկաշկանդ ծառայութեան նուիրուած գիտնական էր, որը դեռ եօթանասնական թուականներից կրում էր անբիծ անուն ու իր ազատախոհ գաղափարներից, բարձր խղճից երբեք չհրաժարուող:

Բայց Քօնին մի այլ տեսակի, թերևս եզակի իր դէպքում, հռչակ էր ստացել հետևեալ դէպքի առթիւ:

Երբ 1874–5 թուականներին ռուս ահաբեկիչ–յեղափոխական խըմբակի անդամ օր. Վերա Զասուլիչը ատրճանակ էր արձակել ոստիկանապետ Տրեպովի վրայ, ձերբակալուել էր ու դատի ենթարկուել, դատաստանում նախագահում էր Քօնին: Դատավարութեան միջոցին նախագահը ոչ միայն կատարեալ ազատութիւն էր տալիս պաշտպան–փաստաբանին ազատօրէն խօսելու, այլ և՛ թոյլ էր տալիս նրան մինչև իսկ խօսելու ռուս ոստիկանութեան մէջ տիրող բռնութիւնների ու կամայականութիւնների մասին: Ռուս քաղաքական դատարանների համար դա անսովոր երևոյթ էր:

Աւելին. երբ դատարանի նախագահ Քօնին իր «եզրակացնող» ճառն էր ասելու, երկարօրէն խօսել էր «մեղմացուցիչ պարագաների» մասին, յանցաւորի (օր. Զասուլիչի) երիտասարդ տարիքն էր մէջ բերել, ակնարկել էր ջահիլներին յատուկ իդէալիստ թէև անփորձ քայլերի մասին: Կարճ. սրահում ստեղծուել էր յանցաւորի համար բարեյաջող մթնոլորտ, և դատաւորները արդարացրել էին օր. Վ. Զասուլիչին:

Դատարանական վճիռը անսպասելի էր ռուս հասարակութեան համար, և ազատամիտ մամուլը իր մեծ գոհունակութիւնն էր ցոյց տալիս: Բայց կանխածից դուրս էր, որ այդ վճիռը և այդ «գործի» հետ կապուած աղմուկը՝ անսպասելի բարոյական հարուած էր ցարական կառավարութեան հեղինակութեան: Ու առաջին բանը, որ արեց կառավարութիւնը, իր վրէժը լուծեց նախագահից՝ Քօնիից, այն է՝ հրաժարեցրեց նրան նախագահի բարձր պաշտօնից և տուաւ նրան մի փոքրիկ դատարանական պաշտօն գաւառական խուլ քաղաքներից մէկում:

Տարիներ յետոյ, Քօնին թողեց իր պաշտօնը և սկսեց դասախօսել Պետերբուրգի Ալէքսանդրեան Լիցէյում քրէական իրաւագիտութեան մասին: Իմ ծանօթութիւնից մի քանի ժամանակ առաջ էր որ նա նշանակուած էր Սենատի քրէական բաժնի անդամ:

Եթէ այսքան կանգ առայ Քօնիի անձնաւորութեան վրայ, կային երկու պատճառներ: Նախ՝ որովհետեւ կոմս Լօրիս–Մելիքեանը նրան սիրում էր եւ ամբողջովին հաւատում, հետեւաբար նրանք մեծ, անկեղծ մտերմութեամբ էին կապուած միմեանց հետ: Ապա՝ ցոյց տալու համար, որ Բօնին իբրեւ բարձր ռանգի կրող մարդու պատմածներին՝ ոեւէ պատճառ չկայ չհաւատալու:

Արդէն գաղտնի չէր, որ ծերունի Բօնին կոմս Լօրիս–Մելիքեանի կեանքի վերջին 7–8 տարիների ամենայարգուած եւ ամենամտերիմ բարեկամներից էր եղել. յաճախել էր նրան տարագրութեան տարիներին արտասահմանում ու երկարօրէն տեսնուել ու ապրել էր նրա հետ:

Փորձեցի օգտուել իմ նոր ծանօթութիւնից եւ խնդրեցի՝ արդեօք չի՞ հաճի մի օր ընդունել ինձ եւ պարզել կամ բացատրել ինձ Լօրիս–Մելիքեանի հետ կապուած դէպքերը, ինչպէս եւ՝ բնութագծել թէ՛ կոմսին եւ թէ՛ նրա շրջապատ դէմքերը:

Բօնին ամենայն սիրով ընդ առաջ գնաց իմ խնդիրքին եւ ժամադրութիւն նշանակեց ինձ հետագայ երեք հինգշաբթի օրերը երեկոեան ժամը 8–ից յետոյ իր բնակարանում: Իր նամակում նա աւելացրել էր.

«Հաճոյքով պիտի խօսեմ նրա մասին ձեզ հետ, որովհետեւ նա ձեր մեծ հայրենակիցն էր: Բացի դրանից, արդէն միշտ ինձ համար մեծ հաճոյք է եղած կոմսի մասին յիշելը, խօսելը կամ, եթէ կարելի է՝ գրելը, որովհետեւ այդ մարդը ամենաանարդար կերպով մոռացութեան է տրուած: Մի տեսակ սփոփանք է ինձ համար, որ գտնւում են նոր սերունդի անհատներ, որոնք հետաքրքրութիւն են ցոյց տալիս այդ ազնիւ, վեհանձն եւ տաղանդաւոր պետական մեծ մարդու հանդէպ:

* * *

Երբ նշանակուած ժամին գնացի Բօնիի մօտ, նա այսպէս սկսեց իր պատմութիւնը —

«Շատերը չգիտեն, որ Միքայէլ Թարիէլովիչ Լօրիս–Մելիքովը ծնուած է Թիֆլիսում 1826 թ. մի հասարակ հայ վաճառականի ընտանիքում, որը ո՛չ կոմս էր, ո՛չ էլ ազնուական: Ահա թէ ինչպէս էր պատմում իր կեանքի առաջին շրջանի մասին ինքը հանգուցեալը.—

«Հայրս կիսավայրենի մարդ էր. հազիւ կարողանում էր իր անունը ստորագրել, այն էլ հայերէն: Չգիտէր ռուսերէն գրել կարդալ: Տանը խօսում էինք հայերէն, բայց խառն բազմաթիւ ռուսերէն, վրացերէն, մասամբ եւ թաթարերէն դարձուածքներով: Կրթւում էի տանը ազատ, դասերս սովորում էի ուզածիս չափ: Այն ժամանակները նոր էր հիմնուած Մոսկուայում Լազարեան ճեմարանը: Ու ինձ տասնեւմէկ տարեկան հասակումս ուղարկեցին այդ ճեմարանը: Հայրս դրկելով ինձ ասում էր. 'լաւ սովորէ ու լաւ բժիշկ վերադարձիր: Եթէ ծուլանաս, վանք կ'ուղարկեմ ու վարդապետ կը դառնաս'...

«Լազարեանը աւարտելուց յետոյ պէտք է մտնէի Մոսկուայի բժշկական ֆակուլտէն: Բայց չգիտեմ՝ ի՞նչ պատահեց եւ ի՞նչպէս եղաւ, որ ինքս ինձ գտայ Պետերբուրգի մեծ Ախ–ի մէջ (այդպէս էինք կոչել հեծելազօրային դպրոցների դպրոցը): Մայրաքաղաքում մօտ մէկ տարի ապրեցի միեւնոյն սենեակում ռուս երիտասարդ բանաստեղծ Նեկրասովի հետ, որի հետ շատ մտերմացանք»:

Հայ զինուորական ուսանողի ռուս բարեկամը, ինչպէս յայտնի է, հետագայում հռչակուեց որպէս «բանաստեղծ–քաղաքացի» եւ խմբագիր ռուս արմատական ամսագրի «Սովրեմեննիկ»ի, որը մի ամբողջ դարաշրջան կազմեց ռուս քաղաքական–հրապարակագրութեան պատմութեան մէջ: Կասկածից դուրս է, որ ուսանողական տարիների շրջանակը իր դրոշմը պիտի դնէր երիտասարդ զինուորականի հայեացքների վրայ:

Փայլուն կերպով աւարտելով զինուորական դպրոցը՝ նորաբողբոջ սպայ Լօրիս–Մելիքեանը վերադառնում է Թիֆլիս եւ պաշտօն է ստանում Թիֆլիսի փոխարքայի մօտ:

«Շուրջս, բոլորը լաւ կրթուած էին,— պատմել է Լօրիս–Մելիքեանը Բօնիին,— ու ես համոզուեցի, որ թերի է զարգացումս: Սկսայ ինքնակրթութեամբ պակասս լրացնել: Շատ կարդացի, շատ մտածեցի: Ուրիշներից յետ չէի ուզում մնալ»:

Երիտասարդ եւ ապագայ խոստացող հայ սպան ամուսնանում է իշխանուհի օր. Նինա Արղութեանի հետ (Նշանաւոր Յովսէփ Կաթող. Արղութեանի եւ զօրավար Արղութեանի ազգական), մասնակցում է 1854 թ. Ղրիմի պատերազմին, ռուս–տաճկական ռազմաճակատում: Եւ մինչ Ղրիմի ճակատում ռուս զօրքը պարտութիւններ էր կրում, Անդրկովկասեան ճակատում— յաղթութիւններ էր տանում: Այդ ամիսներին էր, որ երիտասարդ Լօրիս–Մելիքեանը փայլուն կերպով առնում է Կարսի բերդը եւ 28 տարեկան հասակում ստանում է գնդապետի աստիճան: Այլեւս փայլուն զինուորական ապագայ ճամբան բացուած էր նրա առաջ, մանաւանդ որ կառավարութիւնը նրան նշանակեց Կարսի հրամանատար:

Բայց անակնկալօրէն կառավարութիւնը (փոխարքան) առաջարկեց հայ գնդապետին թողնել Կարսը, գնալ Դաղստան, ստանձնել Դաղստանի նահանգապետի պաշտօնը եւ հանդարտեցնել մահմետական լեռնականներին ու նահանգը «մի քիչ կարգի բերել»:

Անցնում են տաս տարիներ: Հայ նահանգապետը ցուցադրում է վարչական զարմանալի ընդունակութիւններ: Այն լեռնագիւղերը, որոնց մոլեռանդ մահմեդական ցեղերը տասնեակ տարիներ սպանում, ջարդում, կողոպտում էին հարեւան ազգաբնակչութիւնը եւ ապստամբում ռուս կառավարութեան դէմ, իսկապէս որ «հանդարտւում են»: Լօրիս–Մելիքեանը սովորել էր նրանց լեզուն, ծանօթացել էր այդ ցեղերի մոլլաների ու «ծերերի» հետ եւ մեծ տակտ էր ցուցադրել նահանգապետի իր լայն իշխանութեան սահմաններում:

Բնութիւնը յաճախ զրկել է հային տակտից, բայց երբեմն էլ առատօրէն օժտել է նրան տակտով, որը ո՜րքան անհրաժեշտ է վարչական ասպարէզում:

Ռուս–տաճկական պատերազմի տարիներին (1876–77), Լօրիս–Մելիքեանը ցուցադրում է միաժամանակ թէ՛ զինուորական եւ թէ՛ վարչական մեծ ընդունակութիւններ:

Կովկասեան ճակատի ընդհանուր հրամանատարն էր պաշտօնապէս ցարի եղբայրը, բայց փաստօրէն ամենադժուար ճակատը՝ Կարսը Լօռիս-Մելիքեանի հրամանատարութեան տակ էր։

Նախ եւ առաջ՝ նրան յաջողւում է «լեզու գտնել» սահմանակից եւ Թուրքիայում ապրող քիւրտերի հետ, որոնք այնքան էլ պատճառ չունէին գոհ լինելու Թուրք կառավարութիւնից եւ նրան օգնելու։ Քիւրտ շէյխերը խոստանում են օգնել Լօռիս-Մելիքեանի բանակին թէ՛ պարէնով, թէ՛ լրտեսութեամբ եւ թէ՛ այլ կերպով։ Լօռիս-Մելիքեանին յաջողւում է այնպիսի անխախտ հաւատ հաստատել ռուս-կովկասեան ծայրագաւառներում ու մինչեւ իսկ Թրքական գիւղերում հանդէպ ռուս պետական ոյժի եւ արուած խոստումներին, որ տեղական ժողովուրդը մատակարարում է ռուս բանակին անհրաժեշտ պարէնը՝ գոհանալով ռուսաց թղթադրամով եւ չպահանջելով հնչուն ոսկի դրամ,— մի բան, որ բալկանեան սլաւ գիւղացիք անգամ չէին անում. որոնք չէին ընդունում ռուսաց թղթադրամը եւ ռուս զօրքի հրամանատարից պահանջում էին հնչուն ոսկի։

Ռուս կառավարութիւնը հարուստ չէր ոսկի դրամով եւ այդ հանգամանքը շատ էր նեղում ռուս պետական գանձարանը։ Ցար Ալեքսանդր Բ-ը զարմացած հարցնում էր. «Այդ ի՞նչպէս է յաջողուել հայ զօրավարին համոզել կամ ստիպել Թուրք սահմանակից գիւղացիներին, որ ընդունեն մեր թղթադրամը, իսկ միեւնոյն ժամանակ բալկանեան ճակատի մեր ռուս զօրավարներին չի յաջողւում նոյնը անել ուղղափառ սլաւ ժողովրդի վերաբերմամբ»։

Կովկասեան ճակատում ռուս զօրքը քանակի տեսակէտից շատ յետ էր մնում Թուրքերից։ Զօրքի մի մասը ցրուած էր կովկասեան մահմեդական ծայրագաւառներում, որտեղ խմորւում էր ապստամբութիւն ռուսաց դէմ։

Թէեւ Կարսն ու Էրզրումը լաւ էին պաշտպանուած ու շատ աւելի զօրք ու թնդանօթներ ունէին, բայց եւ այնպէս ընկան։ Կարսի կռւում մասնակցել էր ինքը՝ Լօռիս-Մելիքեանը։ Էրզրումի յաղթութիւնը պարտական էր թէ նրան եւ թէ նրա օգնականներին՝ հայ զօրավարներ Տէր-Ղուկասեանին եւ Շելքովնիկեանին։ Այդ յաղթութիւնները, մանաւանդ Կարսի բերդի փայլուն առումը, անմոռանալի էին թէ՛ ցարի եւ թէ՛ եւրոպական զինուորական շրջանների համար։

Էրզրումը գրաւելուց յետոյ, Լօռիս-Մելիքեանը հրամայում է Շելքովնիկեանին յետ մղել Թուրքերին եւ դէպի Փոքր Ասիայի խորքերը գնալ։ Յաղթութիւնը կատարեալ էր։ Ռուս յաղթական զօրքի առաջ բացւում էին Փոքր Ասիայի արեւմտեան եւ հարաւային գաւառները։ Ցար Ալէքսանդր Բ-ը հեռագրում է Լօռիս-Մելիքեանին. «Իմ քաջ զօրավար Լօռիս-Մելիքեանին տալիս եմ Կոմսի տիտղոսը»։

Եւրոպական մամուլը երկարօրէն անդրադառնում է Լօռիս-Մելիքեանի յաղթութիւններին։

Ահա թէ ինչպէս ինքը՝ Լօռիս-Մելիքեանը իրեն յատուկ հիւթեղ ոճով պատմել էր իր բարեկամ Քօնիին Կարսի բերդի անկման մասին.—

«Ոչ ես, ոչ էլ իմ հրամանատարութեան տակ գտնուած զօրքը վախենում էինք Թուրքերից։ Մի քիչ արհամարհում էինք նրանց, թէեւ թշնամին մեզնից 3 անգամ աւելի էր թւով ու վատ էլ չէր զինուած։ Թուրքերի ձեռքից առինք Արտահանը, Բայազէթը, որը 90 մեծ թնդանօթներով էր զինուած։ Սուլթանը, զարմացած ու ապշած, դրկեց մեր դէմ Մուխթար փաշային, որը Փոքր Ասիայի ամենախոր վայրերից բերեց—հաւաքեց մեր դէմ 20-ից մինչեւ 60 տարեկան զինուորներ... Իր այդ մեծաքանակ բանակները նա բաժնեց իրարից երեք ամրացած գօտիներով կամ գծերով, 150 վէրստ (քիլոմէթրից մի քիչ աւելի) միմեանցից հեռացող թմբերով։ Մեր զօրքը փոքր էր թւով, բայց իմ զինուորները 'գոչախ տղերք էին'։ Ասեմ այս էլ, որ մեր թիկունքում՝ Կովկասում խլրտումներ ծայր առած էին չէչէնների, չերքէզների, խոյպաշների, ինգուշների եւ այլ մահմեդական 'գլուխ կտրողների' (աւազակներ)։ Սրանք ամէն րոպէ կարող էին թիկունքից մեզ հարուածել։ Դժուար պահեր ապրեցինք, բայց... խիզախ էինք։ Սպասում էի օգնական զօրքերի, որոնք խոստացուած էին։ Բայց, ջահանդա՛մը, չէին գալիս։ Մուխթարը ամէն րոպէ կարող էր յարձակուել վրաս։ Պէտք էր դիմել պատերազմական խաղի։ Սկսեցի անդադար անհանգստացնել նրան։ Մերթ մէկ կողքից, մերթ միւս կողքից զինուորական խմբերի յարձակումներ էի բանեցնում։ Շարժեցնում էի բանակը, իբրեւ թէ շուտով Մուխթարի վրայ եմ յարձակուելու, եւ ամրացնում էի նրա մէջ այն համոզմունքը, թէ վաղը միւս օր մեծ ճակատամարտը պայթելու է։ Այդպէս կրցայ ամիսներ Մուխթարփաշային իր կանգնած տեղը գամել—անշարժացնել, մինչեւ որ Ռուսաստանից սպասուած զօրաբաժինները եկան միացան ինձ։ Երբ տեսայ, որ մեր զօրքի քանակը շատ էլ չի տարբերում Թուրք բանակից, ու համոզուած էի, որ մեր ուժերի որակը բարձր է Թուրքից, նորէն սկսայ իմ յարձակումները, բայց այս անգամ արդէն լուրջ եւ հիմնովին կերպով։ Եւ երկու դժուարին, ծանր շարժումներով պարտուելու սխալի տակ՝ կրցանք Մուխթարի վիզը ճկել Ալաճայի մօտ. իսկ երբ 'անյաղթելի' Կարսն էլ առինք, այն ժամանակ մեր առաջ բացուեց գործունէութեան մեծ ասպարէզ։ Կարսի մեր «գործը» այսպէս էր։ Նախօրօք երկար պատրաստութիւնից յետոյ, մի մութ գիշեր առինք մեծ գրոհ Կարսի անառիկ բերդին։ Ձմռանը (ասել էր Լ. Մ. Բոնինին), որ Կարսում կար 20,000-ից աւելի Թուրք զօրք եւ թշնամին պաշտպանուած էր 300 թնդանօթներով, մինչդեռ իմ յարձակողների թիւը հազիւ տաս հազար էր։ Հետագայում լսեցի, որ եւրոպական զինուորական շրջաններում ապշած մնացած էին ու 'պատերազմական օրինակ' էին անուանում այդ գրոհը։ Իմ կարծիքով՝ Կարսի առումը 'օրինակ' կարող է լինել միայն այն մասով, որ նա ցոյց է տալիս, թէ ինչպէս բազմաձեւ, բայց նախօրօք լրջօրէն մտածուած ու ճշդօրէն գործադրուած պատերազմական գործօն միջոցները կարող են յաղթել կրաւորական, թէեւ մեծ ուժերին։

Ռուս-տաճկական ռազմաճակատի մասին պատմելու ժամանակ՝ Լօրիս-Մելիքեանը շատ գունաւոր լեզուով բնութագծել էր Բոնինին Թրքահայ ժողովրդի դժուարին վիճակը, որա կրած տառապանքները։

«Գիտնալով, որ ռուս բանակի մէջ կան հայ զօրավարներ ու զինուորներ, սոված ու սարսափած թրքահայ գիւղացիք իրենց օլուխ ջօճուխով կախուել էին մեր փէշից: Ի՞նչ խօսք, որ նրանք շատ էին դժուարացնում մեր զօրքերի շարժումները, վտանգի էին ենթարկում իրենց էլ, մեր զինուորներին էլ, դժուարացնում էին մեր շարժումներն ու դրոհները: Համոզում էինք քիչ հեռու մնալ ու սպասել, բայց անդադար լսում էինք. 'Զէնք տուէք. առէք ձեզ հետ, տարէք դժոխք, բայց ազատեցէք անհաւատէն':»

Լօրիս-Մելիքեանը այս մասին պատմելուց յետոյ, մի պահ լռել էր ու շարունակել աւելի տխուր ձայնով.

«Մի օր մեր բանակը եկած լցուած էր սոված ու ահաբեկուած հայ գիւղացի մի զանգուած, մի ծերունի, ալեհեր, երկար մօրուքով քահանայի առաջնորդութեամբ: Պնդացել էր մարդը, որ գայ ինձ ներկայանայ: 'Թողէք, որ գայ' ասացի ու քահանան կէս Թուրքերէնով, կէս Հայերէնով հաղորդեց ինձ, որ երէկ գիշեր երեք մանչ երեխայ ծնուել են հայ փախստականների ընտանիքում ու քահանան երեքին էլ կնքել է «Լօրիս-Մելիքով» անունով: Ու աւելացրեց. 'Աստուած օրհնէ զանոնք ու զձեզ, ով հրեշտակապետ Միքայէլ':

«Ասացի. 'Ինձ աւելի մեծ ուրախացրած պիտի լինէիք, եթէ ձեր ջահելներից 100—200 մարդ տայիք, որ օգնեն մեզ իբրեւ զինուորներ: Հետեւրդ սուր ու հրացան տուած չէք, որ ես ալ կրնամ մեր ցարին ասել թէ՝ հայ ժողովուրդը մեզ հետ մէկտեղ կը պաշտպանէ իր պապական հողն ու տունը':

«Չէ՛, զօրավարս,— պատասխանեց գիւղացին,— մերոնք հրացանէ կը վախնան ու անոր քաշելն ալ չգիտեն':

«Մեր մէջ ասած,— ասել է Լօրիս-Մելիքեանը Քօնիին— մեր յառաջընթաց յաղթական օրերին ես մի քիչ երազում էի, որ Թուրքերից ազատուած հայկական գաւառներում մենք պիտի պատահենք զինուած, կամ զէնքի դէմ մի քիչ վարժ հայերի, ինչպէս այդ տեսանք բալկանեան ճակատում բուլղար, սերբ, սեւ լեռնցի գիւղացիների մէջ: Բայց աւաղ, հայ գիւղացին ո՛չ զէնք ունէր, ո՛չ զէնք կարող էր գործածել, ո՛չ էլ տար մասին մտածած էր նախօրօք:»

Կովկասեան ճակատի փայլուն յաղթութիւնները, Կարսի ու Էրզրումի արտակարգ յաջողութիւնները, «Կոմաջի» տխուր սառնալը, եւրոպական եւ ռուս մամուլի գովասանքները, Աղեքսանդր Բ.-ի առանձին ուշադրութիւնը, ի հարկէ, պիտի ծնեցնէին ռուս որոշ վարչական-զինուորական բարձր խաւերում նախանձ դէպի հայ զօրավար-հերոսը:

19-րդ դարում բոլոր ռուս պատերազմներում հայ զօրավարները միշտ էլ ցուցադրած էին եւ զինուորական քաջութիւն եւ ռազմագիտական հմտութիւն: Օրինակները շատ էին՝ Մադաթեանը, Լազարեանը, Արղութեանը, Ալխազեանը եւ ուրիշներ, իսկ այժմ էլ՝ Շելքովնիկեանը, Տէր-Ղուկասեանը եւ մանաւանդ Լօրիս-Մելիքեանը: Զարմանալին այն էր, որ հայ տարրը, ռուս անհամար թիւ կազմող ազգերի ու զօրավարների մէջ չնչին տոկոս կազմելով հանդերձ, միշտ էլ «լաւ ռազմիկ»ի անուան արժանացած էր մանաւանդ ռուս-տաճկական ճակատում, բայց այնքան էլ համակրանքի չէր արժանացած կայսեր մի քանի ազգական-զինուորականների, նոյն իսկ Թագաժառանգի կողմից:

Նախանձողների շրջանում, ինչպէս եւ միշտ պատահում է, անպատասխանատու մարդիկ ու կարծիքներ եւ փսփսուքներ էին արտայայտում այն իմաստով թէ՝ ցարը իր «յափշտակութեան մէջ» կարող է կոմս-զօրավարին փոխարքայ նշանակել նոր գրաւուած հայկական նահանգների համար:

Յայտնի չէ թէ ունեցե՞լ է արդեօք ցար Աղէքսանդր Բ.-ը այդ տեսակ ծրագիրներ... Լօրիս-Մելիքեանն ինք ոչինչ գիտէր այդ մասին: Ոչ նա (ինչպէս ինքը պատմել էր Քօնիին), ոչ էլ Տէր-Ղուկասեանը կամ մէկ ուրիշ հայ զօրավար երբեք զբաղուած չէին եղել այդ տեսակ քաղաքական բնոյթ կրող հարցերով: Բայց նախանձող ռուս զինուորականներին այդ փսփսուքները օգնում էին, որովհետեւ կոմս Լօրիս-Մելիքեանի անձնաւորութեան շուրջը առհասարակ էնտրիկներ էին նիւթում:

Այսպէս թէ այնպէս, կոմս Լօրիս-Մելիքեանին (բոլորովին անսպասելի նրա համար) ցարը առաջարկում է թողնել Անդրկովկասեան ծայրագաւառները ու գնալ ստանձնել Թերեք նահանգի «պատերազմական- նահանգապետութիւնը՝ լայնացրած վարչական իրաւունքներով»:

Թերեք նահանգը գտնւում էր Հիւսիսային Կովկասում եւ ընդգրկում լայնածաւալ հողամասեր, որոնց ազգաբնակչութիւնը կազմում էին անհամեմատ մահմեդական բազմաթիւ ցեղեր՝ «չեչենականներ», «ինգուշներ», «քաբարտիններ», «լեզգիներ», «չէչէններ», «չէրքէզներ» եւ այլ կիսավայրենի, ուստաեաց «գլուխ կտրողներ», որոնք վերջին երեք-չորս տասնեակ տարիները ըմբոստ վիճակի մէջ էին ընդդէմ «ռուս-քրիստոնեայ վարչութեան»:

Անշուշտ, այդ կիսավայրենի ցեղերը որոշ պատճառներ ունէին թշնամաբար վերաբերուելու ռուս վարչութեան, որովհետեւ պետական մանր ու միջին, յաճախ եւ բարձր, պաշտօնեաները ծոյլ էին ու ապիկար, սայց՝ մեծ մասամբ կաշառակեր, կեղեքիչ: Նրանք վերից վայր էին նայում, արհամարհանքով ու ծիծաղով վերաբերւում Թերեքի մահմեդական կիսանախնական ցեղերի հաւատքին, սովորութիւններին, կենցաղին ու կոկորդային լեզուին:

Հիւսիսային Կովկասի մահմեդական ցեղերի (թւով մօտ 2 միլիոն) եւ կառավարութեան միջեւ տարիներ շարունակւող կռիւները, թաքուն կամ բաց հակամարտութիւնները ծանրօրէն անդրադառնում էին Հ. Կովկասի միւս խառը ազգաբնակչութեան՝ հայերի, կոզակների, ռուս գիւղացիների, վրացիների վրայ: Վաճառականութիւնը եւ հողագործութիւնը ընկած էր: Արհեստաւորները անապահովութեան էին ենթարկուած: Դպրոցներ չէին բացւում: Դեղարաններն ու հիւանդանոցները պակասում էին: Ճանապարհների ու կամուրջների շինութեան վրայ պետութիւնը ծախսում էր մեծ գումարներ, բայց նրանց կառուցումը կամ ձգձգում էր եւ կամ, դրամը ծախսուելուց յետոյ, յայտնի չէր թէ՝ ո՞ւր էին «կորսուած» կամուրջները։

Մի խօսքով՝ Թերեքի լայնածաւալ նահանգը (աւելի մեծ քան Բելժիքան, Հոլլանդան, Դանիմարքը եւ Զուիցերիան միասին) խիստ մեծ մտահոգութիւններ էր պատճառում ռուս կառավարութեան։ Յիշենք, որ միեւնոյն ժամանակ այդ հողամասերը աշխարհագրականօրէն, ռազմագիտականօրէն եւ տնտեսապէս կապում էին Ռուսաստանը Անդրկովկասի եւ Հարաւ արեւելեան Ռուսաստանի հետ։

Պէտք էր գտնել վարչական մեծ ընդունակութիւններով օժտուած փորձառու, միաժամանակ քաջ ռազմիկի համբաւ ունեցող պետական մի մարդ, որին կարելի լինէր ամենայն հանգստութեամբ յանձնել այդ կարեւոր նահանգի իշխանութիւնը։ Ցարը եւ կառավարութեան ազատամիտ 2–3 անդամները կանգ էին առել կոմս Լօրիս–Մելիքեանի վրայ։ Ու երբ նրան առաջարկուեց ստանձնել Թերեքի նահանգապետի պաշտօնը, անսպասելի կերպով գոհ մնացին հայ զօրավարի թաքուն հակառակորդները, որովհետեւ նրանք համոզուած էին, որ կոմսը այդ դժուարին եւ պատասխանատու գործում «իր վիզը պիտի կոտրէր»։ Բայց հայ զօրավարը Թերեքի նահանգապետութեան պաշտօնում ցուցաբերեց խելացի, մտածուած ու փորձառու կառավարիչի ընդունակութիւններ։

Նախ եւ առաջ՝ նա հեռացրեց կամ պատժեց կաշառակեր եւ ծոյլ պաշտօնեաներին. ցուցաբերեց մեծ թաքտ եւ յարգանք մահմեդականների կրօնական եւ կենցաղային հարցերում, թէեւ միւս կողմից էլ՝ ամէն րոպէ յիշեցրեց կիսավայրենի ցեղերին իր ուժեղ բռունցքը, իր համարձակութիւնը եւ վճռականութիւնը։ Միաժամանակ նա վերաքննեց պատժի եւ բանտարկութեան ենթարկուած շատ մահմեդականների գործը եւ ազատեց անմեղներին կամ քիչ չափով մեղաւորներին։ Յետոյ իր մօտ առանձին առանձին հրաւիրեց մահմեդական ուրոյն ցեղերի մոլլաներին ու «հոճա»ներին, նստեցրեց նրանց իր մօտ, բարեկամաբար խօսեց նրանց հետ։ Խոստացաւ նրանց նիւթական օգնութիւն։ Խոստացաւ դպրոցներ բանալ նրանց զաւակների համար։ Առաջարկեց մահմեդականների ընդունակ զաւակներին ձրի կրթութիւն տալ ռուս միջնակարգ դպրոցներում։ Նշանակեց շրջիկ բժիշկներ գիւղերում եւ համաճարակ հիւանդութիւնների ժամանակ տուաւ ձրի դեղ եւ դարմանում։

Սրա հետ միասին նա մշտապէս կրկնում էր, որ ինքը անողոք պիտի վերաբերուի, եթէ տեսնէ որեւէ կողոպուտ, աւազակութիւն, նենգութիւն մահմեդականների կամ քրիստոնեաների կողմից։

«Ես խօսքիս տէրն եմ,— ասել է կոմսը մոլլաներին,— կատարելու եմ խոստումս։ Լաւ բան խոստացայ, կը կատարեմ։ Բայց եթէ սպառնացի, որ աւազակին կը կախեմ, այդ խոստումս էլ կը կատարեմ։ Հաղորդեցէք ձեր կրօնակից եւ բարեկամ ցեղերին, որ եթէ շարունակեն խլրտումները, յարձակումները ու աւազակութիւնները, գիւղերը փոշիի կը վերածեմ։ Եթէ զբաղուին խաշնարածութեամբ, հողագործութեամբ, կամ այլ ազնիւ գործով, կը շինեմ ձեզ պէտք եղած կամուրճները, ճամբաներ կը բանամ ձեզ համար, գիւղական շուկաներ կը հաստատեմ ու ձեր քաջ երիտասարդներին էլ ինձ ծառայութեան կ՚առնեմ։ Ինձ համար անկարելի բաներ չկան վարչական գործերում։ Գիտեմ որ լսած էք եւ իրազեկ՝ թէ ինչպէս քաջ Մուխթար փաշային յաղթեցի եւ Կարսը առի։ Դէ՛, գնացէք ու Ալլահի օգնութեամբ խնդէք ու խրատ տարածեցէք ձերոնց մէջ»։

Ու երբ վերջին խօսքերը թուրքերէն էր արտասանում, մօլլաներն ու պէկերը ծունկ էին չոքել ու ձեռքն էին ուզել համբուրել։

Շատ ժամանակ չանցած, Թերեքի նահանգում բացուել էին արդէն հարիւրաւոր նախնական դպրոցներ, այլ եւ մի քանի արհեստաւորական վարժարաններ։ Շուտով մայրաքաղաքների ռուս ազատամիտ մամուլը սկսել էր «Թերեքի հրաշքի» մասին խօսել. չէ՞ որ ամիսների ընթացքում չէր լսւում այլեւս «կովկասեան աւազակութիւնների եւ խլրտումների» մասին։

Այս ծայրագաւառների մասին կառավարութիւնը եւ հասարակութիւնը սկսել էին արդէն հանգստանալ, երբ պետութեան մի այլ ծայրամասում երեւացել էր մի մեծ աղէտ, որի մասին թէ՛ ռուս եւ թէ՛ արտասահմանեան մամուլը սկզբում անհանգստութիւն, ապա շուտով եւ ահազանգ էր բարձրացրել։

Ի՞նչ էր կատարուել։

Ահա թէ ինչ էր ինքը՝ կոմս Լօրիս-Մելիքովը պատմել Բօնիին —

«Ճաշի էի պատրաստւում, որից յետոյ մտադիր էի իմ օգնականների հետ աշխատակցութեան վերաբերեալ նոր նախագծերիս մասին խորհրդակցել։ Սիրած էի Թերեքի անտառոտ, լեռնոտ եւ հանքերով հարուստ նահանգը, մինչեւ իսկ նրա խայտաբղէտ ազգութիւնների կենցաղը։ Այդ ցեղերն էլ արդէն իմ վրայ նայում էին իբրեւ «պապաշայի» (հօր) վրայ։ Յարգում էին եւ գլխաւորը, համոզուած էին, որ թշնամի եմ անարդարութեան, կեղեքման ու կաշառակերութեան... Յանկարծ, բո՛ւմ, բո՛ւմ... Հեռագիր հեռագրի ետեւից... Վարչապետն էր հեռագրում ցարի անունից «յոյժ կարեւոր եւ շուտափոյթ»... Վա՛յ, ի՞նչ է պատահել... երեսս եմ խաչակնքում... Չլինի՞ թէ ահաբեկչական փորձ կայսեր կամ նրա ընտանիքի դէմ... Բայց չէ՛, «ա՛յլ աղէտս լուարուք»։ Վարչապետը հաղորդում էր, որ Վոլգա գետի շրջակայ գիւղերում, ու մանաւանդ Աստրախանի մօտ Վեթլեանքա գիւղից սկսել է տարածուել ժանտախտի համաճարակ՝ հնձելով հարիւրաւոր ու հազարաւոր կեանքեր՝ առանց խտրութեան սեռի, հասակի ու դաւանանքի... Եւ առաջարկւում էր ինձ անմիջապէս յանձնել Թերեքը իմ օգնականին եւ ուղեւորուել Սարատովի նահանգը, ստանձնել այդ նահանգի եւ շրջակայ գաւառների նահանգապետութիւնը արտակարգ եւ անսահման իրաւունքներով եւ կռուել համաճարակի դէմ՝ դիմելով արմատական եւ շուտափոյթ ծայրագոյն միջոցների, նիւթական, վարչական եւ քաղաքական, ինչպէս որ ինձ թելադրէր խիղճս եւ վարչական ու պատերազմական փորձառութիւնս։

«Սա ի՞նչ է, մտածում էի,— պատմել է կոմսը — ասել է գնա՛, եւ ինչ որ կամիս, արա։ Կ՚ուզե՞ս, անփորձ գաւառապետին արտաքսէ.

կ՚ուզե՛ս, ոստիկանապետին կախէ. կ՚ուզե՛ս, ծոյլ եւ հարբած պաշտօնեաներին կախաղան բարձրացուր. վերջապէս, կ՚ուզե՛ս, գիւղեր ու քաղաքներ այրէ ու մոխրի վերածիր, միայն թէ ժանտախտի ոտքը կտրէ, որ չմտնէ ու չտարածուի շրջակայ նահանգների մէջ ու չհասնի մինչեւ մայրաքաղաք, այդտեղից էլ, արտասահման:

«Այս բոլորը կայսեր հրամանն էր... Ի՞նչ արած, պէտք էր հպատակուել: Թողի Թերեքի գործերը, Թայ, գնացի դէպի ժանտախտի վայրերը: Մարդիկ մեռնում էին ճանճի պէս: Սարսափը տիրած էր չորս դին: Ժողովուրդը, ահաբեկուած հարիւրաւոր ընկած դիակներից, փախչում էր գիւղերից քաղաք, քաղաքներից անտառ: Ամէն մարդ ժանտախտի առաջն էր առնում ըստ իր փանթազիին: Մէկը սպանում էր իր դրացին, միւսը այրում էր իր տունը: Ամենասարսափելին ոչ թէ ժանտախտն էր, այլ գիւղացու տգիտութիւնը, նրա վայրենի բնազդները, որոնք դուրս էին եկած իրենց կեղեւից»:

Արդարեւ, մարդկային ուժից բարձր էր Լօրիս-Մելիքեանին յանձնուած գործը՝ «կտրել ժանտախտի ոտքերը, որպէսզի համաճարակը չտարածուի մինչեւ մայրաքաղաք»:

Եւրոպական մամուլը կշտամբանքով հարցնում էր. «Մի՞թէ լայնածաւալ մեծ պետութեան մէջ պակասում են համարձակ եւ վճռական միջոցներ: Մի՞թէ քաղաքակիրթ Եւրոպան մի անգամ եւս պիտի զոհուի Ասիային»...

Հասնելով իր գործունէութեան այս նոր վայրը՝ Լօրիս-Մելիքեանը, նախ եւ առաջ, շրջապատում է իրեն տեղային հանրային գործիչներից առած օգնականներով, հեռացնում է անփոյթ ու ապիկար չինովնիկներին: Ապա անցնում է քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, ի մօտոյ ծանօթանում է կացութեան, անձամբ հրամաններ է արձակում բերանացի կամ թռուցիկներով, ժանտախտով վարակուած գիւղերից հեռացնում է առողջ ժողովուրդը, հիւանդներին մեկուսացնում է եւ վարակուած խրճիթները մոխրի ենթարկում:

Քանի՛ քանի՛ անգամ կոմս Լօրիս-Մելիքեանը միայն հրաշքով է ազատւում վարակուելուց: Իր մերձաւոր աշխատակիցներից մի քանիսը զոհ են գնում համաճարակին:

Վոլգայի ափերին ձգուած Վէթլեանքա գիւղումն էր բուն դրած ժանտախտը: Նրա գիւղացիները հոգեւոր մթութեամբ ու վայրենի նախապաշարմունքներով խարխափած՝ սպանում էին բժիշկներին, համոզուած, որ բժիշկներն են տարածում հիւանդութիւնը: Պէտք էր Ալէքսանդր Մակեդոնացու վճռողականութիւնը ու Նապոլէոնի համարձակութիւնը: Հայազգի նահանգապետը ի յայտ է բերում այդ յատկութիւնները:

Մոսկուայի պահպանողական «Մոսկովսքիա Վեդոմոստի» թերթը թէեւ չէր համարձակւում ուղղակի յարձակումներ անել կոմսի վրայ, քանի որ նա ցարի կողմից գերագոյն իրաւունքներով լիազօր էր նշանակուած Վոլգայի նահանգների վրայ, բայց քարեր էր ձգում յաճախ Լօրիս-Մելիքեանի կողմը: Օրինակ, «արդեօք ժանտախտը անասուն ուղտից մի քիչ աւելի դժուա՞ր է մէջքը կոտրելու համար: Նրանք հաւատացողներին ու կարծողներին, որ հասարակ մահկանացու ուժը անսահման է,» գրում էր թերթը:

Բայց կատարուեց հրաշքը, «Լօրիս–Մելիքեան հրաշքը»:

Իր պաշտօնը ստանձնած օրից հազիւ 80 օր յետոյ արդէն պարզուեց որ վարակուածների ու հիւանդների թիւը իջած էր զգալի: Յիրաւի, ձեռք առնուած արտակարգ միջոցների ու գերագոյն եռանդի շնորհիւ, ժանտախտի «տաքը» կտրած էր, համաճարակը չէր տարածուած մինչեւ մայրաքաղաք: Այդ առթիւ Պերլինի օրաթերթերը գրում էին. «Կոմս Լօրիս–Մելիքեանի վարչական մեծ հանճարը մեծ սփոփանք է վիթխարի պետութեան համար...»

* * *

Երբ Քօնին հարցրել էր կոմսին, թէ ինչո՞վ է բացատրում նա իր յաջողութիւնները իր բոլոր գործերում, Լօրիս–Մելիքեանը այսպէս էր պատասխանել.

«Թէ՛ Կարսի, թէ՛ Դաղստանի, թէ՛ Թերեքի, թէ՛ ժանտախտի դէպքերում ղեկավարը պէտք է ունենար մտածուած ծրագիր եւ վճռողականութեան կատարեալ համարձակութիւնը եւ ամբողջական պատասխանատուութիւն, այդ ծրագիրը իրականացնելու համար: Պէտք է գիտնաս շրջապատել քեզ անշահախնդիր օգնականներով: Երբ ղեկավարում ես, պէտք չէ երբեք ցոյց տաս Համլէթութիւն, այսինքն՝ վարանում, երկմտութիւն: Պէտք է ցուցաբերես վեհանձնութիւն, արդարութիւն: Չորս կողմդ, լինի վերը, լինի վարը, պէտք է մարդիկ համոզուած լինեն, որ դու անկախ ես ու անվախ եւ ասում ես վրադ ծրագրածիդ ու արածիդ պատասխանատուութիւնը»:

Թէեւ ժանտախտի հետ կապուած հոգսերը արդէն վերջացած էին, բայց ռուսաց հասարակութիւնը, ոչ միայն նրա գիտակից, այլ եւ ժողովրդի համեստ խաւերը, մտահոգուած էին մի ուրիշ երեւոյթով, որ արիւնոտ տեսիլքի կերպարանք էր ստանում եւ որը պիտի կապուէր Լօրիս–Մելիքեանի հետագայ գործունէութեան հետ:

«Նոր էի հանգստացել ժանտախտային աշխատանքներից,— շարունակել էր Լօրիս–Մելիքեանը իր պատմութիւնը Քօնիին,— ու իմ նոր յանձնուած «Թագաւորութեան» տեղային ապիկար վարչական գործերը բարենորոգչական ճամբու վրայ էին դնում, երբ յանկարծ նորից բո՜ւմ բո՜ւմ, հեռագիր: Այս անգամ ոչ թէ կառավարութեան վարչապետից, այլ հեռագիր ցարից. 'Առաջարկում եմ անմիջապէս յանձնել նահանգի եւ երկրամասի գործերը ձեր օգնականին, իսկ ձեզ, առանց յապաղման, ճամբայ ելնել դէպի Պետերբուրգ. Ալեքսանդր:'

«Մտածում էի, ի՞նչ է նորից պատահել. արդեօք ցարը դժգո՞հ է իմ գործունէութիւնից, թէ՞ սուտ ու կեղծ տեղեկութիւնների վրայ հիմնուած, ուզում է անձամբ ստուգում կատարել: Բայց չէ՛, այս անգամ հեռագիր ղրկողը ինքը՝ Նորին Մեծութիւնն էր եւ ոչ թէ վարչապետը: Բացի դրանից, ռուս մամուլը առանց խտրութեան գոհ էր «ժանտախտային–վարչական» իմ գործունէութիւնից, գովքեր էր շռայլում ու չափազանցնում իմ վարչական յաջողութիւնները: Զգայուն ցարի համար դա միայն գոհացուած ինքնասիրութեան հարց կա–

րող էր լինել, չէ՞ որ ինքն էր ընտրել 'յաջող նահանգապետը': Մինչեւ որ գնացի հասայ Պետերբուրգ, ճանապարհին ինձ գրաւեցին «առանց յապաղման» հեռագրի բառերը...»

Մայրաքաղաքում, ինչպէս եւ առ հասարակ ռուս մեծ քաղաքներում տարածուած էր մի նոր անհանդիստ մթնոլորտ: Տեղի էր ունենում այն, ինչ որ կարելի էր կոչել «ռուս պետութեան կառավարչական մեծ տագնապ»: Ցարի կեանքը վտանգի էր ենթարկուած: Կառավարութիւնը անզօր էր վերջ դնելու այդ կացութեան: Իսկ հասարակութիւնը ծայր աստիճան դժգոհ էր կառավարութեան վարչական-ոստիկանական որդեգրած միջոցներից: Սաստկացել էին ռուս յեղափոխական ահաբեկչական դէպքերը ոչ միայն ժանտարմական բարձր պաշտօնեաների դէմ, այլ եւ՛ իրեն՝ ցար Աղէքսանդր Բ-ի կեանքի դէմ:

Եւրոպական մամուլը յաճախ հայեացքներ էր յայտնում ռուս կառավարութեան ապիկարութեան մասին: Վարչական մեթոդները,— ասում էր օտար մամուլը,— անընդհատ «զիկզակ»ի ու պտոյտի մէջ են, առանց մի վայրկեան կրնալու կանգ առնել, յստականալ ու բիւրեղանալ:

Ռուս մամուլը, իր կողմից, բողոքելով հանդերձ ահաբեկչութեան դէմ, պահանջում էր «պարզ մթնոլորտ», «ուժեղ կամք դէպի այս կամ այն կողմը թեքուած»: Ռուս հասարակութեան գիտակից խաւերը ասում էին, իսկ մամուլը արտայայտում.

«Անկայուն մթնոլորտը անզօր է ստեղծելու ուժեղ կամքի, համարձակ վճիռների, անվախ պատասխանատուութիւնների եւ անխռով գործունէութեան մի կառավարութիւն, որ կրնար կռուել ահաբեկչական– անիշխանական խմբակների խելառ բռնութիւնների դէմ: Եթէ պէտք են երկրին արմատական բարենորոգումներ, թող կառավարութիւնն անէ: Բայց, ի սէր Աստուծոյ, վտանգից հեռու պահեցէք ցարի ու նրա ընտանիքի օծեալ եւ օգոստափառ կեանքը...» ասում էր մամուլը:

Ուրեմն, ռուս քաղաքական շփոթը կայանում էր այն բանում, որ դժգոհութիւնը տիրում էր ազգաբնակութեան զանազան շերտերում: Բայց դժգոհութեան պատճառները տարբեր էին եւ այդ դժգոհութեան դէմ ձեռք առնուած միջոցներն էլ միմեանց էին հակասում:

Եթէ այդ այդպէս էր, հապա ի՞նչ կապ կարող էր ունենալ կառավարական տագնապի հետ կոմս Լօրիս-Մելիքեանի Պետերբուրգ հրաւիրուելը: Չէ՞ որ կոմսը երբեք քաղաքական հարցերով չէր զբաղուած, եղել էր միշտ, ինչպէս ինքն էր ասում, իր մասին՝ «ես մի համեստ պաշտօնեայ եմ եղած, ու միշտ այդ ռազմական· իմ գործը — պատերազմի զօրավարի ու հրամանատարի գործն է եղած. Նահանգներ կառավարելը միայն ժամանակաւոր ու 'խաթեր համար' ընդունուած բան էր, այս կամ այն նահանգը մի քիչ կարգի բերելու համար»:

Ըստ ամենայնի ցարը, ինչպէս եւ կառավարութիւնը յանձին նրա ազատամիտ, բայց ծերացած ու ազնիւ վարչապետ Միլիւտինի՝ համոզուած էին, որ պետական ղեկը պէտք է յանձնել մի մարդու, որ ամփոփէ իր մէջ եւ՛ պատերազմական քաջութիւն, եւ՛ վարչական *փորձառութիւն, և՛ բաւականին ժողովրդականութիւն, իբրև անկաշառ, համարձակ ու բարենորոգչական ձգտումներին համակրող:*

Աւելի պարզ ըմբռնելու համար Լօրիս-Մելիքեանին նոր ստանալիք դերի հիմնական պատճառները, անհրաժեշտ է մի պահ կանգ առնել թէ՛ ցար Ալէքսանդր Բ.-ի անձնաւորութեան վրայ և թէ՛ ռուս յեղափոխականների ահաբեկչական գործելակերպի և նպատակների վրայ:

(Շարունակելի)

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԻ ՄԷՋ

(1903–1909)

Գրեց՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆ

4. ՆՈՐԻՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ

1906 *թ. ամառը անցկացրի Թիֆլիսում՝ աշխատելով «Յառաջ» և «Ալիք» թերթերում:*

Թիֆլիսում էր այդ ժամանակ և՛ մեր աննըման Ռոստոմը:

Ասեմ նախօրօք, որ այդ երջանիկ օրերին Դաշնակցութիւնը ներկայացնում էր մի հսկայ ընտանիք, որի անդամների փոխյարաբերութիւնները պարզապէս հարազատների յարաբերութիւններ էին: Փոխադարձ սէր ու յարգանք, վստահութիւն և անկեղծութիւն, պատրաստակամութիւն ընդառաջելու մէկը միւսի կարիքներին, վշտակից լինել նրա ցաւերին և ուրախանալ ընկերոջ յաջողութիւնների համար ու նոյնիսկ պարծենալ նրանցով.— ահա՛ այն գեղեցիկ օրերը, որոնք յատկանշում էին այն ժամանակուայ ընկերական փոխյարաբերութիւնները:

Բայց կար և մի այլ չափազանց նշանակալից երևոյթ, որ Դաշնակցութիւնը վերածում էր իրօք մի մեծ ընտանիքի: Դա՝ մեծերի վերաբերմունքն էր դէպի կրտսերները: Այդ վերաբերմունքը միանգամայն մտերմական ու հայրական էր և երբեք չէր կրում մենտորական բնոյթ. մեծն ու կրտսերը կանգնած էին իրար կողքի որպէս հաւասարը հաւասարի հանդէպ: Ահա՛ թէ ինչո՛ւ մենք կրտսերներս, երիտասարդներս, կարող էինք շօշափել ամենալուրջ հասարակական-քաղաքական ու կուսակցական խնդիրներ և միշտ ստանալ բացատրութիւններ, որպէս հաւասարը հաւասա–

րից, երբեք չհանդիպելով ո՛չ հեղնանքի եւ՛ ոչ արհամարհանքի։

Ահա՛ եւ փաստեր ու դէպքեր Ռոստոմի կեանքից։ Ցաւում եմ միայն, որ չնայած իմ ունեցած բազմաթիւ հանդիպումներին Ռոստոմի հետ, շատ քիչ բան է մնացել իմ յիշողութեան մէջ, իսկ այն մի քանի դէպքերը, որ այսօր ես ուզում եմ գրի առնել, շատ պարզ եւ յստակ դրոշմուել են իմ յիշողութեան մէջ։

* * *

Յաճախ «Յառաջ»-ի խմբագրութիւնից Ռոստոմի հետ գնում էինք ճաշելու մի հանրամատչելի ճաշարանում Վելիամինովսկայա փողոցի վրայ։ Երբեմն մեզ միանում էր բժ. Զաւրիեւը։

Հայ-թրքական ընդհարումներին մասնակցած հայ կամաւոր զինուորների լուծարքի ժամանակներն էին։ Ռոստոմն էր վարում այդ պատասխանատու ու ծանր եւ անախորժ գործը։ Ճաշարանից մինչեւ խմբագրատուն՝ Ֆրէյլինսկայա փողոցը, ընդամէնը 5 րոպէի ճանապարհ էր։ Բայց Ռոստոմը հազիւ էր կարողանում մի ժամուայ մէջ հասնել։ Անընդհատ մօտենում էին զինուորները իրենց խնդիրքներով։ Եւ պէտք էր տեսնել Ռոստոմին այդ ժամանակ։ Ոմանց նա ընդունում էր սիրով, իր աննման ժպիտը երեսին, ուշադրութեամբ լսում խնդրատուին եւ անմիջապէս բաւարարում. տալիս էր ճանապարհածախս ու բարի ճանապարհ մաղթում։ Ոմանց ընդունում էր այսպէս ասած պաշտօնական ձեւով, բաւարարում նրանց խնդիրը եւ պատուիրում անմիջապէս վերադառնալ գիւղ ու նուիրուել գիւղական աշխատանքների։ Ոմանց էլ յանդիմանում էր, պատուիրում այլեւս չերեւալ իր աչքին եւ վերջին անգամ տալիս էր դրամական նպաստ։ Պարզ էր, որ սրանք մի քանի անգամ դիմում արել էին ու բաւարարուել, բայց կրկին ներկայացել էին... Այսպէս մի քանի ամսուայ մէջ գլխաւորէն պակասեց դիմողների թիւը։

* * *

Այդ օրերին, «Մշակ» օրաթերթում Համբարձում Առաքելեանը շարունակ գրում էր դրգռիչ յօդուածներ Դաշնակցութեան եւ Դաշնակցական գործիչների դէմ՝ համեմելով իր յօդուածները հայհոյանքներով եւ պրովոկացիաներով։

Մէկ օր խմբագրատնից Ռոստոմի հետ միասին դուրս եկանք եւ զրուցելով գնում էինք Երեւանեան հրապարակով։ Ես նոր էի կարդացել Համբ. Առաքելեանի այդ օրուայ զրպարտիչ գրութիւնը Դաշնակցութեան դէմ եւ խորապէս յուզուած էի։ Դարձայ Ռոստոմին եւ ասացի.

— Ռոստոմ, ա՛խր մենք մինչեւ ե՞րբ պիտի հանդուրժենք Համբ. Առաքելեանին եւ նրա զարշելի ելոյթներին։ Մի՞թէ հնարաւոր չէ լռեցնել այդ մարդուն։

Ռոստոմը հասկացաւ միտքս եւ ժպտալով ասաց.

– Սիրելիս, Համբ. Առաքելեանը իր ելոյթներով մեր դէմ վնաս չի տալիս մեզ. ընդհակառակը, նա մեր ջրաղացին ջուր է կաթում։ Եթէ Համբարձում Առաքելեանը չլինէր, մենք մի ուրիշ Համբ. Առաքելեան պիտի ճարէինք։

Եւ ապա աւելի պարզացնելով ու պարզաբանելով իր միտքը՝ նա միանգամայն ժխտեց որեւէ բռնութիւն գործ դնելու միտքն ու նպատակայարմարութիւնը նման դէպքերում։ Նա մի շարք օրինակներով ապացուցեց ինձ, որ բռնի միջոցները ամէն դէպքում եւ ամէն ժամանակ չեն կարող օգտակար լինել. ընդհակառակը, կարող են բացասական անդրադարձումներ ունենալ թէ հասարակական կեանքի բնականոն զարգացման եւ թէ՛ այդ միջոցները գործադրող կուսակցութեան կենսական շահերի վրայ։

Այդ օրուանից սկսած, ես սկսեցի կարդալ Համբ. Առաքելեանի յօդուածները ամենայն սառնասրտութեամբ։ Յիշում եմ, որ միայն մեր սիրելի Եղիշէ Թոփչեանն էր, որ միշտ շատ յուզւում էր եւ երբեմն խիստ պատասխաններ էր տալիս՝ հերքելով Համբ. Առաքելեանի ամբաստանութիւնները։

* * *

Մի դէպք էլ Ռոստոմի մասնաւոր կեանքից։

Մի օր Ռոստոմը առաջարկեց ինձ գնալ տուն միասին ճաշելու: Նրա բնակարանը գտնւում էր հեռու, քաղաքի մի համեստ թաղում: Բնակարանը 2–3 սենեակից էր բաղկացած, շատ աղքատիկ կահաւորումով եւ զուրկ ամեն լոյսից: Տանը միայն պառաւ մայրն էր: Ռոստոմը հարցրեց՝ ճաշ ունի՞ թէ ո՛չ: Մայրը շփոթւած պատասխանեց, որ նա չէր սպասում որդու գալուն, ուստի ոչինչ չի պատրաստել... Ռոստոմը ժպտաց եւ դրամ տալով մօրը, խնդրեց որ մի քիչ միս առնի, խորոված անի եւ մի շիշ գինի բերէ:

Հազիւ ճաշը վերջացրինք, Ռոստոմը ասաց, որ ժամադրութիւն ունի եւ պիտի գնայ: Հրաժեշտ տւեց մօրը եւ դուրս եկանք:

Ես վերադարձայ տուն խոր տպաւորութեան տակ... Ահա՛ թէ ինչպէս էր ապրում մեր անզուգական Ռոստոմը...

Պէտք է ասեմ, որ Ռոստոմը այդ կողմից մեր երեք ռահվիրաների մէջ միանգամայն բացառիկ էր: Քրիստափորը (Միքայէլեանը), իմ մօրեղբայրը, որի մօտ Թիֆլիսում 1895–1900 թթ. ամրան ամիսներին ես ապրեցի, նոյնպէս շատ համեստ էր ապրում, պարզապէս մի աղքատ ուսանողի կեանք էր վարում, սղմւած երկու փոքրիկ սենեակների մէջ՝ նոյնպէս շատ հասարակ կահաւորումով, բայց եւ այնպէս ապրում էր ընտանիքով, ընտանեկան կեանքով՝ իր կնոջ եւ մինուճար փոքրիկ աղջկայ՝ Ռուբիկի հետ: Սիմոնը (Զաւարեանը) համեմատաբար աւելի բախտաւոր էր այդ կողմից: Ճիշտ է, Սիմոնի բնակարանը եւս սովորական համեստ կահաւորումով էր, բայց նա շրջապատւած էր իր հարազատներով ու վայելում էր նրանց խնամքն ու գուրգուրանքը: Հայրը, մայրը եւ երեք քոյրերը պարզապէս աղօթում էին Սիմոնի վրայ, եւ Սիմոնն էլ շատ քնքուշ զգացումներ էր տածում դէպի նրանց: Նրա տունը իսկապէս մի նահապետական տուն էր, ուր իշխում էր փոխադարձ սէր, յարգանք ու նւիրում, եւ այնտեղ հիւրասիրութիւնը պարզ էր, ջերմ ու անկեղծ, իսկ հիւրերն էլ անպակաս:

Ռոստոմը չունէր նման ընտանեկան կեանք: Նա թափառական կեանք էր վարում, ամբողջովին նւիրւած «գործ»–ին...

Չափազանց բնորոշ է այն դէպքը, որ ես լսել եմ ընկերներից:

Պատմում էին, որ մի օր Թիֆլիսում, փողոցում, Ռոստոմը հանդիպում է իր կնոջ՝ տիկին Լիզային: Տիկինը զարմացած հարցնում է Ռոստոմին.

— Ե՞րբ ես եկել:

— Մի եօթ օր կը լինի,— պատասխանում է Ռոստոմը,— բայց շատ էի զբաղւած, չկարողացայ տուն անցնել:

— Լաւ,— ասում է կինը,— երբ ժամանակ ունենաս, մէկ տուն էլ հանդիպիր...

Եւ բաժանւում են:

Եթէ ենթադրելու լինինք, որ այս պատմութիւնը անեկդոտային բնոյթ ունի եւ իրականութեան չի համապատասխանում, այնուամենայնիւ միանգամայն ճիշտ կերպով ցոյց է տալիս Ռոստոմի վարած անձնական կեանքի բնոյթը՝ կատարեալ ինքնամոռացում— յանուն մի սուրբ ու վեհ գաղափարական գործի...

5. ԲԱԹՈՒՄՈՒՄ

1906 թ. ամրան վերջերին հրաւիրւեցի Բաթում հայոց ծխական դպրոցի տեսչի պաշտօնով: 1906–1907 թ. ուսումնական տարին անցկացրի Բաթումում:

Հոգաբարձութեան նախագահ Սարիբէկ Յարութիւնեանը (փաստաբան Սամսոն Յարութիւնեանի եղբայրը) մի շատ համակրելի ու կրթական գործին նւիրւած անձնաւորութիւն էր: Ճիգ չէր խնայում ապահովելու դպրոցը նիւթական միջոցներով: Բայց եւ այնպէս ուսուցիչներս յաճախ դրամական նեղութիւն էինք քաշում, կանոնաւոր ռոճիկ չստանալով...

Յիշում եմ 1907 թ. Զատկուայ թաթախման գիշերն էր վրայ հասնում, բայց ուսուցիչներիս գրպանները միանգամայն դատարկ էին... Առաւօտեան գնացի Սարիբէկի մօտ: Տեսնեմ, ինքն էլ խիստ ճնշւած է, որովհետեւ դպրոցի գանձարկղում ոչինչ չկար: Խնդրեց յետոյ կրկին գալ՝ խոստանալով մի գումար ճարել:

Ճաշից յետոյ նորից գնացի, բայց ստացայ

միայն 100 ռուբլի... բաժանեցի ուսուցիչներին՝ թողնելով ինձ միայն 5 ռուբլի:

Հոգաբարձութեան ամենագործօն անդամն էր Հայկ Սողոմոնեանը (զօկ), որ հետագայում 1920 թ. դեկտեմբերին զոհ գնաց իր հայրենի գիւղում՝ Ներքին Ագուլիսում, Գողթանի կոտորածի ժամանակ արիւնռուշ թուրքերի ձեռքով: Նա միաժամանակ Դաշնակցութեան տեղական կոմիտէի կարող և ամենաեռանդուն անդամն էր:

Իմ ուսուցչական խմբի մէջ այդ տարին ամենառաջաւոր դէմքն էր՝ Աւետիս Գուլոյեանը, որ, ի միջի այլոց, դասաւանդում էր կրօն, բայց ո՛չ ընդունուած շաբլոն ձեւով, այլ զուտ փիլիսոփայական—բարոյախօսական իմաստով: Դա այն Գուլոյեանն էր, որ հետագայում յայտնի եղաւ նաեւ գրական ասպարէզում՝ աշխատակցելով «Հասկեր»-ին եւ ուրիշ մեր պարբերականներին Սէյրի կեղծ անուան տակ:

Միհրանական շարժումը այստեղ էլ ծաւալուել էր եւ օրը օրին աւելի էր զգացւում նրա քայքայիչ ազդեցութիւնը հասարակական եւ մեր կուսակցական կեանքի վրայ...

1907 թ. գարնանը Միհրանը եկաւ Բաթում: Նրա գալը քաջալերեց տեղական Միհրանականներին, եւ ահա՛ ծայր առին մի շարք քստմնելի դէպքեր, որոնցից յիշում եմ երկուսը: Երկու դէպքերի հեղինակն էր Միհրանի աջ թեւը՝ Բաղիկ անունով մի գռեհիկ ու ապուշ մէկը:

Մեր դպրոցի շէնքը չէր տեղաւորել բոլոր աշակերտներին, հետեւաբար վարձել էինք մի մասնաւոր շէնք, որ դպրոցին շատ էլ մօտ չէր: Մի օր այդ շէնքում դաս էի լսում, երբ յանկարծ փողոցում մի սոսկալի գոռոց բարձրացաւ, օգնութեան կանչով... Դուրս թափուեցինք: Մեր ուսուցիչներից մէկի՝ Երուանդ Գալեանի վրայ յարձակուել էր յիշեալ Բաղիկը եւ ծեծել... Զոհի կանչի վրայ հաւաքւում է ժողովուրդը ու փրկում նրան սրիկայի ձեռքից...

Մի օր էլ քիչ էր մնացել, որ ես ենթարկուէի նոյն վիճակին:

Հայկ Սողոմոնեանի հետ միասին մտել էինք մի ծանօթ հայ կաթնավաճառի խանութ, գլխաւոր փողոցի վրայ: Քիչ անց, Հայկը մօտեցաւ ինձ եւ խորհրդաւոր կերպով եւ հրամայական շեշտով շշնջաց ականջիս.

— Հեռացի՛ր իսկոյն:

Խանութը երկու դուռ ունէր կողք կողքի. երկուսն էլ դուրս էին գալիս գլխաւոր փողոցը: Մէկ դռնով ես դուրս եկայ եւ գնացի տուն, մտատանջութեան մատնուած, թէ ինչո՞ւ Հայկը ինձ հեռացրեց: Շուտով նա եկաւ եւ փարատեց իմ մտահոգութիւնները: Պատմեց, որ Բաղիկը եկել էր ինձ ծեծելու...

Հետագայում, Միհրանական շարժման լուծարքի ժամանակ, այդ Բաղիկն էլ իր արժանի պատիժն ստացաւ:

Այս բոլորով հանդերձ ուսումնական տարին մենք բոլորեցինք՝ առանց որեւէ նոր ցնցումների եւ հեռացանք այդ ծովեզերեայ բանուկ եւ շքեղ բնութեամբ օժտուած քաղաքից՝ գոհ թողնելով հասարակութիւնը, որի արտայայտիչն եղաւ ոչ միայն հոգաբարձութիւնը, այլ եւ համբաւաւոր Մելեան քահանան, որ այդ ժամանակ Բաթում էր եւ ականատես մեր ուսուցչական խմբի գործունէութեան ամբողջ ուսումնական տարուայ ընթացքում:

6. ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(1907–1909)

Բաթումից վերադառնալով Թիֆլիս՝ վերսկսեցի իմ աշխատակցութիւնը մեր թերթերին եւ ապա ձեռնամուխ եղայ մի շարք գրական աշխատանքների:

Այդ երկու տարուայ ընթացքում լոյս ընծայեցի մի քանի գրական աշխատանքներ.

ա) Ի. Բելօկոնսկի — Ինքնավարութիւն և Զեմստվօ (թարգմ.)

բ) Ա. Նիկոլայեւ — Կոոպերացիա (Թարգմ.)

գ) Դոբրինինի — Հին Արեւելքի քաղաքակրթութիւնը եւ Հերոսական Յունաստանը (Ի. Յարութիւնեանի հետ, փոխադրութիւն, ինքնուրոյն յաւելումներով).

դ) Վ. Լունկեւիչ — Նախամարդու կեանքը (Թարգմ.):

1905 թ. արդէն լոյս էր տեսել իմ կազմած «Ֆրանսիական մեծ յեղափոխութեան» համառօտ պատմութիւնը։

1907 թ. ուսումնական տարուայ սկզբից սկսեցի պաշտօնավարել Թիֆլիսի Յովնանեան-Մարիամեան օրիորդաց դպրոցում, համբաւաւոր մանկավարժ Տիգրան Ռաշմաճեանի տեսչութեամբ, որպէս ռուսաց լեզուի եւ ընդհանուր պատմութեան դասատու։

Ուսուցչական խումբը ուժեղ էր իր կազմով։ Մի շարք աչքառու մտաւորականներ եւ փորձառու ուսուցիչներ կային նրա մէջ, ինչպէս էին՝ տիկին Լիզա Զօրեանը (Ռոստոմի կինը), Ռուբէն Մելիք-Մուսեանը, Սիմոն Ցախկերեանը, Լեւոն Մելիք-Օհանջանեանը, Արշակ Մեհրաբեանը եւ ուրիշներ։ Մեր մանկավարժական ժողովները, տեսչի հմուտ ղեկավարութեամբ, մի-մի կատարեալ գիտական խորհրդաժողովներ էին, ուր քննւում էին զանազան մանկավարժական տեսակէտներ եւ տեղի ունէր մտքերի չափազանց հետաքրքիր փոխանակութիւն։ Վիճաբանութեան նիւթն էլ անպակաս էր, որովհետեւ այդ տարի դպրոցը նոր էր բացել եւ հաւաքել էր մի աշակերտութիւն, որ չէր ուզում ենթարկուել դպրոցական կարգապահութեան, իր վարքով անձնահաճ էր, կոպիտ եւ յանդուգն։

Պէտք էր մշակել ու կիրառել միասնական մի ընդհանուր դաստիարակչական մեթոդ՝ աշակերտութիւնը կարգի բերելու համար։ Թէ՛ տեսուչը եւ թէ՛ խումբը դէմ էին խիստ պատիժների։ Տեսուչը առանձնապէս պնդում էր աշակերտութեան հետ մշտական շփման մէջ մտնելու կարեւորութեան վրայ, եւ յանձնարարում էր ուսուցիչներին դասամիջոցներին աշակերտութեան հետ լինել, ինքն էլ առաջին օրինակն էր տալիս։

Երբեք չեմ մոռանայ այն դէպքը, որ նա պատմեց մի մանկավարժական ժողովում —

— Մի օր դասամիջոցին, տարուայ սկիզբն էր, ես ըստ իմ սովորութեան ման էի գալիս աշակերտուհիների մէջ։ Իմ թիկունքում մի քանի հոգի աշակերտուհիներից ման էին գալիս եւ զրուցում իմ մասին։ Արա՝ նրանցից մէկը բաւական բարձր ձայնով ասաց. «էշ է՛, էշ է՛»… Ես, ի հարկէ, չլսելու տեղ դրի, բայց շուռ եկայ, որ տեսնեմ թէ ո՞վ է այդ ասողը։ Կարճ կապելով՝ ասեմ ձեզ, որ այդ աշակերտուհին այսօր ամենից շատ ինձ յարգողն է։

Չափազանց օգտակար եղան թէ՛ աշակերտութեան եւ թէ՛ մեզ՝ ուսուցիչներիս համար պարբերական այցելութիւնները, տեսչի առաջնորդութեամբ, ուսուցիչների դասերին եւ ապա քննադատութիւնները լսուած դասի։

Կարճ կապելով խօսքս Յովնանեան դպրոցի մասին՝ ասեմ, որ այդ երկու տարին անցան այնպիսի բեղուն աշխատանքների մէջ, որ հէնց առաջին տարուայ երկրորդ կիսամեակի սկզբին աշակերտութիւնը միանգամայն կերպարանափոխուեց եւ մեր դպրոցը իր ուսուցիչներով-աշակերտուհիներով դարձաւ մի ընտանիք, որի անդամների մէջ տիրում էին փոխադարձ սէր ու յարգանք։

* * *

Թիֆլիսում եղած ժամանակս, թէ՛ այդ տարիներին (1904 թ.—1909 թ.) եւ թէ՛ ուսանողութեան օրերին (1895–1900 թ.թ.) ես հանդիպումներ ու ծանօթութիւններ ունեցայ բազմաթիւ հասարակական ու գրական գործիչների հետ։ Սակայն, հասարակական արժէք ունեցող յուշեր չունիմ, բացի մի դէպքից, որ տպաւորուել է մտքումս, կարծես թէ երէկ տեղի ունեցաւ։

Ի նկատի ունեմ իմ մի հանդիպումը մեր հանճարեղ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի հետ, 1890-ական թուականների վերջերին։

Մի օր հանդիպեցինք փողոցում եւ զրուցի բռնուեցինք։ Նա մեծ ոգեւորութեամբ պատմում էր, որ մեծ հետաքրքրութեամբ կարդում է պաշտօնական փաստաթղթերը Կովկասի նուաճման մասին ռուսների կողմից։ Այսպէս զրուցելով՝ նա տարաւ ինձ իր մօտ։ Իսկապէս սեղանի վրայ բաց փռուած էին այդ պատմական փաստաթղթերի հսկայ հատորները։ Շարունակելով իր խօսքը՝ նա կարդաց ինձ մի քանի կտոր, որոնք վերաբերում էին ռուս-պարսկական պատերազմին 1826–1828 թ.թ.։

Ապա եզրափակելով՝ ասաց մտաւորականը հետեւեալը.

«Գիտե՞ս թէ ի՛նչ մեծ բարիք էր հայ ժողովրդի համար, որ ռուսները նուաճեցին Կովկասը: Ամբողջ հայութիւնը Անդրկովկասում կ'ոչնչանար, կը բնաջնջուէր եւ խաղաղ կ'այլասերուէր, եթէ ռուսները Կովկաս գային մի քանի տասնեակ տարի ուշ: Մի կողմից՝ պարսիկների աննկարագրելի կեղեքումները, կողոպուտները, դաժանութիւնները, իսկ միւս կողմից՝ հայ ժողովրդի տգիտութիւնը, քայքայուած վիճակը, աղքատութիւնը, բարոյալքումը պիտի անխուսափելիօրէն կործանէին ու փճացնէին ողջ կովկասահայութիւնը: Հայերի ազատագրութիւնը պարսից ասիական բռնակալ իշխանութիւնից ռուսների ձեռքով փրկեց մեր ժողովուրդը իր ֆիզիքական ու բարոյական մահից: Դեռ աւելին: Հայը ձեռք բերելով պաշտպանութիւն ռուսական իշխանութեան տակ, հնարաւորութիւն ստացաւ կուլտուրապէս զարգանալու եւ յառաջադիմելու, միաժամանակ նաեւ ստեղծելու իր համար տնտեսական բարգաւաճ վիճակ: Մենք երբեք չէինք ունենայ Խաչատուր Աբովեանին, եթէ ռուսների Կովկաս գալը ուշանար մի-երկու տասնեակ տարի եւս... Ճիշտ է, թէ ռուս ցարական բռնակալ իշխանութիւնը մեզ չի տալիս այն բոլոր ազատութիւնները, որոնք կազմում են մեր այսօրուայ բաղձանքները, ձգտումները եւ իդէալը: Բայց եւ այնպէս հայութիւնը պէտք է յաւէրժ երախտապէտ լինի ռուսներին եւ Ռուսաստանին, որ փրկեցին մեզ այն դժոխքից, որի մէջ դատապարտուած էինք մնալու եւ ապա աստիճանաբար ոչնչանալու... Եւ եթէ խորը մտնելու լինենք եւ ուզենանք որոշել մեր ազգի ապագան, նորից կը գանք այն եզրակացութեան, որ հայութեան եւ Հայաստանի ճակատագիրը անքակտելիօրէն կապուած է Ռուսաստանի եւ ռուսների հետ»...

Յիրաւի, մեր մեծ բանաստեղծը մեծապէս տպաւորուած էր իր կարդացած պատմական փաստաթղթերից:

Եւ երբ այս յիշում եմ ու նորից կարդում այն նամակները, որ նա գրել էր Սովետական Հայաստանի Ցեղկոմին եւ Երեւանում գտնուած իր զաւակներին 1920 թ. դեկտ. 18-ին, գալիս եմ այն եզրակացութեան, որ 1920-ին իր արտայայտած մտքերը նոր չէին, այլ բխած էին 1890-ական թուականների վերջերքին իր կազմած քաղաքական աշխարհհայեացքից:

Այսպէս, իր զաւակներին ուղղուած նամակների մէջ նա գրել էր.

«Հիմի էդտեղ, երեւի, ինձ շատ էք յիշում, այսինքն՝ իմ յօդուածները, որ գրում էի եւ ասում, որ մեր փրկութիւնը Ռուսաստանից է եղել եւ Ռուսաստանից էլ պիտի լինի»...

կամ՝

«Թէեւ առանց սրան էլ համոզուած եմ, բայց էլի ասում եմ,— իմացած եղէ՛ք, որ էդ կատարուած դէպքերը (*այսինքն՝ Հայաստանի խորհրդայնացումը՝ Ց. Թ.*) պատահական չեն, պատմութեան ուղիղ ընթացքն է, մեր ապագան, ինչպէս միշտ ասել եմ եւ դուք էլ գիտէք, կապուած է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն՝ ինչքան ազատ, էնքան լաւ, թէ՛ մեզ համար, թէ՛ աշխարհքի»... (*Տե՛ս* «Հոկտեմբեր-Նոյեմբեր Տարեգիրք», *Թեհրան*, 1932 *թ. էջ* 129):

* * *

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ

Գրեց՝ Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

Դ.

Մի առ ժամանակ Բագւում ծածուկ ապրելուց յետոյ, Վ. Մինախորեան Դաշնակցական ընկերների օգնութեամբ պարսկական անցագրով անցաւ Տաճկաստան ու հաստատուեց Բայազետում Դրօի մօտ):*

Մի տարի թէ աւելի նա այստեղ աշխատեց Դրօի առեւտրական գործերում՝ ապրելով միապաղաղ ու ըստ ամենայնի անհետաքրքիր մի կեանք: Թէ որքան էր տեւելու այդ կեանքը Բայազետում, Վահանն ինքն էլ չգիտէր, եթէ օգնութեան չգար իր ծանօթներից մէկը: Սիբերիայից նրա փախած ճանապարհով փախչում է Բագւի կոմունայի անդամներից մէկը՝ տիկին Կաստեան (ռուս) եւ նոյնպէս անցնում Բայազետ: Ծանօթանալով Բայազետի կեանքի տաղտկալի պայմաններին, տիկին Կաստեան անհանդուրժելի է համարում յեղափոխականի համար այդ կեանքը, համոզում է Վահանին ձգել այդ կեանքը եւ անցնել որեւէ տեղ, ուր կայ կենդանի ու յեղափոխականի համար վայել գործ: Սակայն, ո՞ւր եւ ինչպէ՞ս:

Այդ հարցերին էլ պատասխանում է տիկինը: Նա իր վրայ է վերցնում Վահանին այդ խաւար անկիւնից հանելու հոգը՝ մեկնելով Կ. Պոլիս ու համոզելով այնտեղի սոցիալիստ-յեղափոխական ընկերներին, կանչելու Վահանին իբր կարող երիտասարդ կուսակցականի, գործի դնելու նրան ու թոյլ չտալու, որ նա ժանգոտի Տաճկաստանի խորքերում:

Այդպիսով, այդ կնոջ թափած ջանքերի հետեւանքով, Վահանին կանչում են Կ. Պոլիս: Կուսակցական ընկերների յանձնարարութեամբ նա պիտի աշխատէր ներքին նաւագնացութեան նաւատէրերի կազմակերպութեան մէջ: Սակայն, նրա աշխատանքները այստեղ երկար կեանք չունեցան: Ռուս դեսպանատան շարունակական պնդում-պահանջների վրայ, թուրք իշխանութեան ձեռք առած միջոցների հետեւանքով այդ կազմակերպութիւնը քայքայուեց ու նրա հետ կապուած աշխատանքները դադարեցին: Այդպիսով Վահանը մնաց առանց գործի, ուրեմն, նաեւ առանց ապրուստի միջոցների:

Ինչպէս գրեթէ միշտ, այս անգամ էլ Դաշնակցական ընկերներն են, որ օգնութեան են հասնում նրան: Նախ՝ Խաժակը աշխատեց տեղաւորել նրան Պոլսի հայկական դպրոցներից մէկն ու մէկում: Սակայն, ուշ լինելու պատճառով, այդ բանը նրան չյաջողուեց.— Բոլոր տեղերն արդէն գրաւուած էին: Այդ օրերին Պոլսումն էր նաեւ Ռոստոմը, որ պատրաստւում էր Կարին մեկնելու: Հասկնալով Վահանի դրութիւնը, նրան առնում է իր հետ: Ճանապարհին մի քանի ժամ կանգ են առած Սամսոնում:

«Սկզբում մեր առաջին այցելութիւնը տուինք դպրոցին: Ծանօթանալով ուսուցիչների հետ՝ ես դուրս եկայ տեսնելու հայկական եկեղեցին, որը դպրոցից մի քանի քայլի վրայ էր: Երբ վերադարձայ, տնօրէնը յայտնեց թէ խիստ կարիք ունեն ուսուցչի եւ խնդրեց որ մնամ Սամսոնում... Մի քանի օր յետոյ հասկացայ, որ ուսուցչի ոչ մի «խիստ կարիք» չկար եւ Ռոստոմը պարզապէս ինձ տեղաւորել էր Սամսոնում:»

Ուսուցչութեան համար Վահանը բոլորովին պատրաստ չէր. ոչ մանկավարժութիւնից տեղեկութիւն ունէր, ոչ էլ մասնագիտօրէն տիրապետում էր որեւէ առարկայի։ Այդ պատճառով էլ նրա նշանակել էին վերակացու։ Բայց այստեղ Մխիթարեանը յաջողութիւն չի ունենում՝ անկարող լինելով յարմար լեզու ու վարուելակերպ գտնել երեխաների հետ։

---

*) Վ. Մինախորեանի յուշերի առաջին մասը վերջանում է այստեղ: Յուշերն այդ՝ «Մեր կեանքի օրերը»՝ գրուած են Բելգրադում 1940–1941 թ.թ.— Ա. Ա.

Անհաճոյ վիճակից դուրս գալու յուսով՝ նա խնդրում է իրեն յանձնել մարմնամարզութեան դասերը, որ թափուր էին։ Ու այդ ասպարէզում Վահանը թէ՛ իր եւ թէ՛ ընկեր ուսուցիչների համար անսպասելի յաջողութիւն է ունենում, գործը կանոնաւոր կազմակերպում է, աշակերտներին կապում է վարժութիւնների հետ, դպրոցի համար բերել է տալիս նուագի գործիքներ ու դպրոցում սկսւում են նուագածութեան դասեր։

Նրա կազմակերպած դաշտահանդէսները ընդհանուր հետաքրքրութիւն առաջ բերին ոչ միայն հայ, այլ եւ թուրք եւ յոյն հասարակութեան մէջ, ու այդ դաշտահանդէսներին ներկայ էին լինում քաղաքի ու շրջանի բարձրագոյն իշխանաւորները ու քաղաքի բոլոր երեւելիները՝ առանց ազգային խտրութեան։

Վահանի հեղինակութիւնը աճում է նաեւ դպրոցից դուրս ու նրան բոլորը ճանաչում են։

* * *

Յայտնի է, որ Առաջին Համաշխարհային պատերազմին Թուրքիան Գերմանիայի դաշնակիցն էր։ Իսկ հայերի համակրանքը դաշնակից պետութիւնների կողմն էր եւ թուրք ղեկավար շրջաններն այդ բանին տեղեակ էին։

Արդէն նախ քան պատերազմի մտնելը, թուրք իշխանութեան վերաբերմունքը դէպի հայերը միանգամայն փոխուել, վատացել էր։ Եւ Սամսոնում այդ նկատելի էր աւելի, քան որեւէ այլ տեղ, որովհետեւ այդ քաղաքում հայ-թրքական յարաբերութիւնները չէին աւրուել անգամ այն ժամանակ, երբ հայկական այլ շրջաններում խժդժութիւններ ու կոտորածներ էին տեղի ունեցել։ Սակայն, այժմ Սամսոնը բացառութիւն չէր կազմում։ Իսկ երբ Թուրքիան պատերազմի մտաւ, իշխանութեան վերաբերմունքը դէպի տեղական հայերը պարզապէս թշնամական դարձաւ. սկսուեցին բռպատանալիքներ, խուզարկութիւններ, ձերբակալութիւններ։

Քաղաքի հայութիւնը անակնկալի էր մատնուել՝ չգիտենալով իր անելիքը։ Հարկաւ, ոչ ոքի գլխով չէր անցնում այն, թէ ինչ սպասում էր նրանց, բայց շատերին ճնշում, մտահոգում էր կոտորածի, ջարդի մղձաւանջը։ Ու տեղի էին ունենում գաղտնի ժողովներ, խորհրդակցութիւններ, որոնց նպատակն էր փրկութեան ճանապարհներ գտնել։

Բայց ուշ էր։ Բոլորին էլ զբաղեցնում էր ինքնապաշտպանութեան հարցը, սակայն զէնք չկար։ Երիտասարդութիւնը, որ գիտակցում էր գալիքը, զէնքի պակասութեան հետեւանքով մատնուած էր յուսահատութեան։ 15–20 կտոր զէնքով ծիծաղելի էր մտածել ինքնապաշտպանութեան մասին, իսկ եղածն այդ էր ու ձեռք բերելու հնարաւորութիւն էլ չկար։

Քաղաքի հայութիւնը կծկուել էր ու սպասում էր վատ օրերի, որոնք արդէն ծայր էին առել։ Այստեղ-այնտեղ խուզարկութիւններ, ձերբակալութիւններ էին կատարուել։

Այդ օրերին Վահանը նոր էր վերադարձել Էրզրումի Դաշնակցական Ընդհանուր Ժողովից։ Այդ ժողովին նա մասնակցել էր իբր Դաշնակցականների ներկայացուցիչ՝ լինելով սոցիալիստ-յեղափոխական։ Սա բնորոշ էր Վահանի քաղաքական վարքագիծը հասկանալու տեսակէտից։ Վահանը կասկած չունէր, որ իրեն էլ են ձերբակալելու։ Նրա այդ կասկածն արդարացաւ աւելի շուտ, քան կարելի էր սպասել։ Մի երկու օր յետոյ նա ձերբակալուեց իր ընկերոջ՝ Վահան Աղաջանեանի հետ։ Սակայն, նա այս անգամ բանտում երկար չմնաց. պարսկական հպատակի պահանջմամբ եւ երաշխաւորութեամբ նրան ազատ արձակեցին՝ քաղաքից չհեռանալու պայմանով։

Այդ օրերին գերման զէնքի յաջողութիւնը ռուսների դէմ թուրքերի տրամադրութիւնը բարձրացրել էր եւ բանտարկութիւնները դադարել էին։ Բայց իշխանութեան վերաբերմունքը դէպի հայերը գնալով վատանում էր. զինուորական պէտքերի համար հայ վաճառականներից ապրանքները գրաւում էին՝ առանց այլ եւ այլի։ Հայկական թաղի մէջ մուհաճիրները իրենց պահանջները լկտիութեան էին հասցրել: Վերջապէս, թուրք երեխաները սկըսում էին երգել մեծերի հնարած երգը թէ՝ «գեաւուրների տները մեզ պէտք է մնան»:

Այլեւս վերահաս վտանգն անխուսափելի էր:

«Միտքս դառնում էր տեղական ջարդերի շուրջը», գրում է Վահանը՝ վերյիշելով անցած դարձածը: Ջարդի սարսափը ծանրանում է բոլորի սրտի վրայ ու մարդիկ այլեւս յուսահատ օրեր էին մթնացնում: Սակայն, այդ վիճակում անգամ պետութեան յայտարարութիւնը ապշութեան մատնեց բոլորին: Մի առաւօտ Սամսոնի հայութիւնը կարդաց պատերին փակցրած մի թուղթ, որով իշխանութիւնը հրամայում էր տեղական բոլոր հայերին տաս օրուայ ընթացքում պատրաստ լինել մեկնելու երկրի ներքին գաւառները՝ իշխանութեան պահակների հսկողութեան տակ:

Թաղը մատնուեց կատարեալ խուճապի: «Բոլորը իրար են անցնում, երբ պարզւում է, որ Թաղի բոլոր ելքերը բռնուած են ոստիկաններով: Փրկութեան ճանապարհ չկար: Պատասխանատու անձինք հէնց սկզբից ջանքեր էին թափում ստեղծուած կացութիւնից ելք գտնելու: Սակայն, ի՞նչ միջոցների մասին խօսք կարող էր լինել իրօք որ անել վիճակից: Պետրոսեանի (Հ. Յ. Դաշնակցութեան կենտր. կոմիտէի անդամ) հետ համախորհուրդ որոշել էինք երեխաներին եւ աղջիկներին յունաց Թաղը տեղափոխելու խորհուրդ տալ, մնացած բնակչութեան յանձնարարել բոլոր դէպքերում կառավարութեան որոշման չընդդիմանալ, Հ. Յ. Դ. կ. կոմիտէի կողմից ճշդուած ինքնապաշտպանութեան երեք դիրքերը բռնել, եւ աշխատել քաղաքային խորհրդի կարգադրութեան օրինական միջոցներ ձեռք առնելու գործում:»

Թաղի վաճառականութիւնը յատուկ պատուիրակութեան միջոցով դիմեց միւթէսարիֆին՝ խնդրելով բեկանել եղած կարգադրութիւնը: Միւթէսարիֆը, հակառակ սպասածի, պատուիրակութիւնն ընդունեց սիրալիր կերպով եւ հանգստացրեց նրան թէ տեղահանութեան կարգադրութիւնը ստացուած է Պոլսից, թէ ինքը՝ շատ լաւ կարծիք ունենալով Սամսոնի հայերի մասին, արդէն դիմում է արել կառավարութեան՝ հայերի դրութիւնը թեթեւացնելու խնդրով եւ յոյս ունի, որ իր դիմումը կը յարգուի, եւ թէ յամենայն դէպս, Սամսոնի հայերը վստահ պէտք է լինեն, որ նրանց հեռանները չեն ուղարկի եւ որ թէ՛ այդ տեղահանութեան ժամանակ եւ թէ՛ այնուհետեւ ոչ մի հայի քիթ չի արիւնոտի:

Այդ ամէնը հարկաւ, փափուկ բառեր էին, որ միւթէսարիֆը դնում էր միամիտների գլխի տակ՝ նրանց քնացնելու ու քնած ժամանակ նրանց գլխատելու ուզած ձեւով:

Ճակատագրական ու յուզմունքի այդ օրերին երիտասարդ ու եռանդուն Դաշնակցականներից մէկը՝ Բարունակ Քէոսօղլեանը այս խորհուրդն է տալիս.

— Ես կ'առաջարկեմ անմիջապէս հրդեհել Թաղը... Թո՛ղ արթնան (այդ ժամին Թաղը քնած էր. Ա. Մ.) եւ ով որ կարող է՝ թո՛ղ փախչի:

Այդ կարծիքի առթիւ Վ. Մինախորեանը իր յուշերում նկատում է.—

«Դէպքերից յետոյ կարող եմ ասել, որ միակ ելքը Բարունակի ասածն էր»:

Ով ծանօթ է այդ «դէպքերին», նա անխօս պիտի համաձայնի Վահանի դիտողութեան հետ: Ինքնայրումը ոչինչ բան էր համեմատած գալիք անլուր տանջումների հետ...

Իշխանութիւնը իրեն յատուկ նենգութեամբ, շարունակելով «փափուկ բառեր» քաղաքականութիւնը, նախ՝ ձերբակալեց Թաղի գրեթէ բոլոր տղամարդկանց, դրանց թւում նաեւ Վ. Մինախորեանին:

Թաղի հայերը բանտարկուած էին քաղաքապետարանում՝ Սամսոնի մեծագոյն շէնքում: Ապրելով դրանց հետ ու ծանօթանալով դրանց մտայնութեան՝ Վահանը հասկանում է, որ վայրկեանի յուզող խնդիրը դաւաճանութիւն է: Դեռ մի քանի օր առաջ, երբ նոր էր տեղի ունեցել տղամարդկանց բանտարկութիւնը, քաղաքի ականաւոր հայերի հետ բարեկամական յարաբերութեան մէջ եղող թուրքերը այցելել էին Թաղը ու սկսել համոզել աներում մնացած կանանց, որ փրկութեան միակ միջոցը հաւատափոխութիւնն է։

Վ. Մինախորեանը վկայում է, որ հինգ-վեց ընտանիք ընդունեցին իսլամութիւնը, որ դրանց մէջ մէկն էր միայն որ անկեղծութեամբ թուրքացաւ, իսկ մնացածին համար «այդ ծանր ողբերգութիւն» էր։ Սակայն, մնացածը աւել է բոլորը, որովհետեւ 800–900 տան մէջ 5–6–ի մեղանչելը ոչինչ է։

Այդ հարցի մէջ կանայք զարմանալի յամառ ու կայուն մնացին մինչեւ վերջ։

— Եղբայր, ի՞նչ բան է երեք անգամ ասել «Լա-իլահէ-իլ-Ալլահ, Մուհամմէտ Ռասուլ Ալլահ», որ դրա համար կեանքդ վտանգի տակ ես դնում,— ասել էր մի ազատամիտ թուրք Թաղում մնացած Հայրիկ-աղա Խրիմեանին։

Բայց երբ Հայրիկ-աղան տատանման մէջ էր ընկել, կինը— պատմում էին— սպառնացել էր պարզապէս խողխողել նրան, եթէ այդ խօսքերը արտասանէ»։

Բանտում տղամարդիկ, սակայն, թուլացած են լինում եւ իրենց կանանց արժանավայել դերը չեն պահում։

Հաջին, որ բանտարկեալների տրամադրութեան լաւ տեղեակ էր, պատմում է Վահանին·

— Բայց, դժբախտաբար, վատ է· մարդիկ քիչ-քիչ կ'ընկճուին ու կը փոխուին։

Հաջին մռայլուեց, գլուխը թեքեց կրծքին եւ՝ աւելի ցած նայելով՝ շարունակեց·

— Ոմանք կ'ուզեն թրքանալ։ Ա՛յս է ամենամեծ դժբախտութիւնը։ Թրքանալով կեանքերը փրկած կը լինեն։ Բայց, Վահան էֆէնտի, հաւատք ուրանալէ ետքը, այլ կեանքը ի՞նչ արժէք ունի։

Եւ յանկարծ՝ զուարճացած՝ շարունակեց·

— Երէկ, վարի յարկը, ծանօթ, բարեկամ թուրքեր են եկած, խօսած, պնդած են, որ թուրքանան։ Խոստացած են թուրքացածները ազատել տալ։ Բայց մէկ-երկու տատանուողներէն զատ, որեւէ համաձայնող չեն գտած։ Ոմանք ալ ժամանակ են խնդրել կիները համոզելու։ Գուլուճեանի կինը ուտելիք է բերած եւ ասած է· «Եթէ թուրքանաս եւ այդ տեղէն դուրս գաս, գիշերը քեզ եռացած ջուրով կը խաշեմ»։ Հիմա կ'ըսէ թէ միտք չունի թուրքանալու։ Մարդ հարցնէ· «ա՛յ, անհաւատ, ո՞ւր էր խելքդ առաջ»։

— Ովքե՞ր են ուզում թուրքանալ։

— Կան, բայց կ'ըսեն՝ ամէնքս միասին թուրքանանք։ Ե՞ս, Հաջի՞ն…

Քաղաքապետարանում հայերը մնացին չորս-հինգ օր, որից յետոյ բռնեցին աքսորի ճամբան։ Հեռանողներն էր եւ Վահանը, որը հիւանդ վիճակում էր — տառապում էր գլխացաւից։ Քաղաքից դուրս հայերին տրամադրեցին սայլեր։

«Դժուար թէ ես կեանքիս մէջ երբեւիցէ արտայայտած լինեմ այնքան անճարակութիւն, որքան այս դէպքում։ Չգիտէի թէ ո՞ր սայլը նստեմ, կամ աւելի ճիշտ, որո՞նց հետ կարող եմ ընկերանալ։ Անտեղեակ՝ գալիք պատուհասի չափերին, միշտ մտածում էի, որ իմ ընկերութիւնը սրան կամ նրան կարող է վնասել։»

Տարիներ աշխատելով-գործելով Սամսոնում՝ Վահան անուն էր հանել իբր հասարակական գործիչ ու, իբր այդպիսին, կրկնակի կասկածելի էր թուրք իշխանութեան աչքում։ Ուրեմն, ում որ ընկերակցէր, կասկածի տակ էին առնուելու ե՛ւ նրանք։

Վ. Մինախորեանն, այդպէս մտածելով, դեռ անտեղեակ էր Թալէաթի եւ ընկերութեան ծրագրին, այն է՝ հայը պիտի ոչնչանար եւ չկար աւելի կամ պակաս կասկածելի ու յանցաւոր հայ. բոլորը հաւասար չափով վտանգաւոր էին։

Եթէ Վահանին մնար, նա գուցէ որեւէ խմբի չմիանար։ Սակայն, ծանօթները նրան առան իրենց հետ սայլերից մէկը։

Ճանապարհին Վահանի առողջական վիճակն աւելի վատացաւ, եւ նա բոլորովին հիւանդ վիճակում էր, երբ հասան Զախալի, որ ընկած էր Սամսոնից 50 քիլոմեթր դէպի հարաւ։ Ինքը դրեթէ չի յիշում թէ ինչպէս են անցել ճանապարհը։ Ուշքի է գալիս Զախալիի քարվանսարաներից մէկում, որ տեղաւորուել էր Սամսոնի հայութեան մի մասը։ Այնտեղ նա իմանում է, որ Սամսոնում մնացած հայ կանայք եւ երեխաներն էլ են հասել Զախալի։ Ու հետեւանքը մանրամասնաբար պատմում է…

Մասամբ հիւանդութեան, մասամբ էլ հոգեկան ծանր ապրումների ազդեցութեան տակ Վահանն այդ օրերին երբեմն անկարող է լինում հաշիւ տալ շուրջը կատարուող անց ու դարձի մասին ու իրեն կորցնում է այն աստիճան, որ կարծում է թէ ստեղծուած պայմաններում հնարաւոր է փախչել ու ազատուել այդ դժոխքից:

«Յանկարծ ինձ մի միտ համակեց—փախչել: Ո՞ւր, ինչո՞ւ, ի՞նչպէս՝ չգիտէի: Փախչել»:

Տարուած այդ մտքով՝ նա պառկած տեղից վեր է կենում եւ դուրս գալիս բակ: Օգտուելով պահակ-ժամապահի անուշադրութիւնից՝ դուրս է նետւում քարվանսարայի բակից ու վազում հակառակ ուղղութեամբ, առանց հաշիւ տալու իրեն:

«Բաւականաչափ հեռացել էի քարվանսարայից, երբ, ինչ անելս չիմանալով՝ կանգ առի»:

Այդտեղ վրայ է հասնում իր ծանօթներից Տիգրան Բիւրատեանը, Հ.Յ.Դ. Կ. Կոմիտէի անդամ, ու յետ տանում նրան մի այլ քարվանսարա:

«Նոր քարվանսարայում մէկից ի մէկ ինձ համակած սարսափը չքացաւ»:

Այդտեղ էր նաեւ Բարունակը, որի օգնութեամբ Վահանն աստիճանաբար ուշքի է գալիս ու գտնում իրեն:

Նոյն քարվանսարայում էր ապրում Ե՛ւ Առաջնորդ Եաղլըեանը: Լսելով Վահանին պատահածի մասին՝ կանչում է նրան իր սենեակը (Առաջնորդին թուրքերը յատկացրել էին առանձին սենեակ) «ու խրատներով-խորհուրդներով ուզում է խաղաղեցնել նրա վրդովուած հոգին: Իր խորհուրդները վերջացնում է այս խօսքերով.

«Թողէք ձեր տարակուսանքները եւ ամէնէն առաջ խաղաղութիւն ձեզ բերէք: Այս թշուառութիւնէն խուսափելու համար, բոլոր հնարաւոր միջոցները սպառեցինք: Եւ երբ այս է Աստուծոյ կամքը, օրհնեալ ըլլայ թո՛ղ այն: Ողջ հայութիւնը փրփրած ծովու ալիքներու պէս կը ծփայ եւ հազարներ կան ձեզ հետ: Մի մոռնաք երբեք, որ դուք ալ ինձ պէս այդ ծովի մէջ մի կաթիլ էք միայն...»

Այդպէս էր անգամ արժէքաւոր հոգեւորականի մխիթարութիւնը՝ համբերութեամբ տանել ճակատագրի լուծը, որքան էլ անարդական լինի այն...» բոլոր հնարաւոր միջոցները եղել են պաշտօնական աղերսանք՝ ուղղած վալիին՝ չտարագրել իրեն: Եթէ «բոլոր միջոցները» մի կողմ թողնէին ու դիմէին այն միակ միջոցին, որին դիմեցին Վանը, Գարահիսարը, Մուսատաղը, այն ժամանակ Սամսոնի հայութեան բնաջնջումն անգամ պարծանքով էր արձանագրուելու:

Մութէսարիֆը Սամսոնի հայերին հաւատացրել էր, որ նրանց Ջախալիից այն կողմ չեն ուղարկի: Բայց Ջախալիում հայերը հասկացան, որ իրենց պարզապէս խաբած են, որ այդտեղից իրենց քշելու են հեռուները, ուր սպասում են աւելի մեծ դժբախտութիւններ: Ու մարդիկ տարւում էին իրենց վիճակը որեւէ կերպով թեթեւացնելու, վերահաս դժբախտութիւնը մեղմելու մտքով: Յատկապէս մտահոգուած էին ջահել աղջիկ ունեցողները եւ այդ պայմաններում անգամ փեսացուներ էին փնտրում:

Վահանը պատմում է երկու դէպքի մասին, որոնք կապուած են իր հետ:

Դպրոցի վարժուհիներից մէկի՝ օր. Սաթենիկի հայրը, պ. Առաքելեանը, սաստիկ մտահոգուած իր աղջկայ վիճակով, երկարօրէն խօսում է Վահանի հետ ու միտքը վերջացնում այս խնդրանքով.—

«Կ՚ուզէի որ քանի ողջ եմ, տէր կանգնէիք անոր...»

Այդ առաջարկ-խօսակցութիւնը տեղի ունէր գիշերը: Ծանրապէս ազդուած այդ խօսակցութիւնից՝ Վահանն անցնում է այն սենեակը, ուր քնելու էր: Մութի մէջ մի կերպ գտնում է իրեն յատկացուած բարձն ու վերմակը եւ պառկում:

«Որքան ժամանակ էր անցել՝ չգիտեմ, եւ յանկարծ զգացի, որ վրաս եղած վերմակը բարձրանում է եւ մէկը մտնում է տակը: Միաժամանակ լսեցի Բարունակի (Բէշտաղլեան) ձայնը.

— Աղջի՛կ, ի՞նչ կ՚ընես...

— Մայրիկը բռաւ,— անխառն դժգոհութեամբ պատասխանեց Բարունակի մեծ քոյրը, որ դպրոցի 6–րդ 7–րդ դասարանի աշակերտուհի էր:

— Հիմա՛ գնա տեղդ:

Գնաց, բայց ես չկարողացայ աչք փակել»:

Այս վերջին պատմութեան առթիւ կ'ուզէի մի երկու դիտողութիւն անել:

Վ. Մինախորեանի յուշերը սովորական յուշեր չեն, այսինքն՝ մերկ իրականութեան արձանագրութիւն չեն, ուր դեր են կատարում իրօք տեղի ունեցած դէպքերն ու փաստերը: Ոչ, այդ յուշերում դեր է կատարել նաեւ հեղինակի երեւակայութիւնը, որով՝ նրանք ստացել են մասամբ վէպի կերպարանք: Ասել է թէ՝ այդ յուշերում փաստական տուեալների քով կան նաեւ երեւակայական տուեալներ, ինչպէս այդ լինում են վիպական գործերում: Միայն վէպում երեւակայութեան վերապահուած է շատ աւելի ընդարձակ տեղ, քան նման յուշերում, որոնցում գերակշռողը կեանքում տեղի ունեցած տուեալներն են: Այնուամենայնիւ, այստեղ եւս երեւակայութիւնը իր ստեղծագործական փոքրիկ դերն ունի: Սակայն, ի՞նչ ասել է ստեղծագործել: Ստեղծագործել նշանակում է հնարել այնպիսի դէմքեր, դէպքեր, փաստեր, մի խօսքով՝ պատմութիւններ, որոնք թէեւ իրօք գոյութիւն չեն ունեցել, բայց տուեալ պայմաններում միանգամայն հնարաւոր էին: Ստեղծագործութիւնն այդպիսով հիմք պիտի ունենայ իրականութիւնն ու նրանից բղխող պայմանները:

Այս հիմքից մեկնելով է, որ ես մօտենում եմ Վահանի վերը բերած դէպքին: Ես հարցնում եմ: Հնարաւո՞ր բան է, որ արեւմտահայ մայրը իր դպրոցական աղջկան քշէր մի երիտասարդի գիրկ՝ հեղինակի նկարագրած պայմաններում: Իմ ամբողջ էութիւնը բողոքում է այդ հարցի դէմ: Ո՛չ, դա անհնարին բան է: Հայ մայրը ընդհանրապէս եւ արեւմտահայ գաւառացի մայրը մասնաւորապէս անընդունակ է նման վարմունքի. նրա աւանդական սովորութիւնները, նրա բարոյական հասկացողութիւնները, ընտանեկան մաքրիմ կեանքի մասին նրա ունեցած ըմբռնումները որեւէ կերպ չեն հաշտւում նման վարմունքի հետ: Ուր մնաց որ, Վահանի հայ մօրը վերագրած այդ վարմունքի հիմնաւորումը քննադատութեան չի դիմանում:

Եւ, իրօք, ըստ նրա, տիկ. Բէգտօղլեանը, իր աղջկան նրա գիրկը մղելով, մի նպատակ է ունեցել՝ փրկել իր աղջկայ պատիւը վերահաս վտանգից, այսինքն՝ պղծումից թուրքերի ձեռքով: Մնում է անհասկանալի թէ ինչո՞ւ է Վահանը տիկ. Բէգտօղլեանին նման միտք վերագրում, այսինքն՝ որ վտանգի տակ է միայն աղջիկների պատիւը եւ ոչ ջահել կիների պատիւը ընդհանրապէս: Եւ եթէ անգամ մի վայրկեան ենթադրաբար հաշտուենք այդ մտքի հետ, այսինքն՝ որ աղջիկն ամուսնանալով ազատւում է վտանգից, դարձեալ անթոյլատրելի է ենթադրել, որ աղջկայ մայրը այնքա՞ն միամիտ էր, որ չհասկանար թէ իր աղջկայ նման վարմունքը որեւէ կերպ նրան օրինական կնոջ իրաւունք չպիտի տար ոչ շրջապատի, ոչ էլ «պղծողի» աչքում: Այդ դէպքում շատ աւելի բանաւոր կը լինէր, եթէ աղջկայ մայրը պ. Առաքելեանի օրինակին հետեւէր, այսինքն՝ անձամբ Վահանին համոզէր, որ «տէր կանգնի» իր աղջկան...

Կարծում եմ, որ Վահանի երեւակայութիւնն այս դէպքում պարզապէս անյաջող, մինչեւ իսկ վատ խաղ է արել, որի իմաստն է՝ գաղափար տալ «համատարած թշուառութեան ահռելի չափերի մասին»:

Գիտենք, որ այն սեւ օրերին Սամսոնի հայութիւնը բազմաթիւ այլ վայրերի հայութեան հետ միասին անօրինակ թշուառութիւնների ենթարկուեց, եւ գալիքից ազատուելու կամ այն մեղմելու նպատակով մարդիկ, ընդհանրապէս, միջոցների մասին էին խորհում, ելք էին փնտռում: Սակայն, այդ մարդկանց մտածումներն ու փնտռումները նախ պիտի ներդաշնակէին նրանց նկարագրին եւ ապա՝ պիտի լինէին բանաւոր, նպատակայարմար: Օրինակ, Սամսոնի հայութիւնը վերահաս վտանգից կ'ազատուէր, եթէ իսլամութիւն ընդունէր, որպիսի առաջարկ եւ արուել էր նրան: Սակայն, այդ առաջարկը մերժուել էր, որովհետեւ դաւանափոխութիւնը անհարազատ է հայի նկարագրին ընդհանրապէս։ Իսկ Վահանի բերած «փառքը» ոչ միայն չէր ներդաշնակում հայ կնոջ նկարագրին, այլ և՛ ինչպէս տեսանք, աննպատակ, անիմաստ էր։

Սակայն ի դէպ, որ ժամանակին, այսինքն՝ երբ Վ. Մինախորեանի յուշերի այդ մասը լոյս տեսաւ «Վէմ»-ում, ես խօսեցի նրա հետ վերոյիշեալ իմաստով։ Ուշադրութեամբ լսելով ինձ՝ Վահանը՝ անակնկալի եկած՝ բողոքեց իմ վերաբերմունքի դէմ։

— Սխալւում ես, Արշալոյս։ Հենց մի երկու օր առաջ նամակ առի Արշամից (Մանդակարեան)։ Նա ի միջի այլոց գրում է, որ յուշերիս այդ մասը շատ է ազդել Բէկզադեանի վրայ։

— Չգիտեմ թէ ինչո՞ւ է ազդել Բէկզադեանը, բայց ես անկարող եմ հաւատալ քո գրածին, այսինքն՝ այն համարում եմ հնարած եւ ոչ իրական։

Վահանը նորից բողոքեց՝ առնուելով իմ նման վերաբերմունքից։ Ինքս ինձ ստուգելու նպատակով ես այդ առթիւ խօսեցի արեւմտահայ մի քանի անձանց հետ։ Նրանք եւս անհնարին էին համարում Վահանի այդ պատմութիւնը։

* * *

Երբ Զախուլիում կուտակուած տարագիրները հրաման են ստանում պատրաստուել ճանապարհը շարունակելու համար, Վահանն իրեն լաւ չէր զգում։

«Առողջական վիճակս այնպէս էր, որ բոլորի ճակատագիրը բաժանելու ֆիզիքական հնարաւորութիւնն արդէն իսկ մեծ բարեբախտութիւն էր։ Երեք տարուայ ընթացքում այնքան էի ընտելացել Սամսոնի հայութեան, որ յետ մնալը կամ նրանցից բաժանուելը մեծագոյն թշուառութիւնը պիտի լինէր ինձ համար։ Սրա հետ միասին, ուրիշներին ինձնով «չվտանգելը»,— մի անմիտ նախազգացում, որ հալածում էր ինձ դեռ քաղաքապետարանում,— այժմ սրուել էր։ Զգում էի, որ Զախուլիի իշխանութիւնների կողմից յատուկ հաշուի առնուած եմ։ Եւ որովհետեւ թւում էր թէ՝ Այթունեաններին ընկերանալս արտաքնապէս մեղմանում է երկուսիս ուսուցչութեան հանգամանքով, որոշել էի՝ հակառակ Բարունակի իրենց ընկերանալու պնդումներին՝ մեկնել Այթունեանների սայլով։»

Հրամանը ստանալու հետեւեալ օրը արեւի լոյսի հետ հայերի կարաւանը շարժւում է Զախուլիից։ Անցնում էին Թուրքաբնակ վայրերով։ Թուրք «ամբոխը» դիտում էր մեզ այնպիսի թշնամական ու վրէժխնդիր ձեւով, որ զարհուրելի եւ միաժամանակ անհասկանալի էր մեզ համար։ Երբեմն թւում էր, որ այս կամ այն թուրքը ուզում էր ձեռքը մեկնել, վայր քաշել ինձ սայլից եւ տեղն ու տեղը բզկտել։ Երբեմն էլ այնքան շատ սպառնալից դէմքեր էին անցնում-դառնում բիբերիս մէջ, որ գլուխս պտտւում էր»։

Այդպիսի ապրումներ ունեցել էր, հարկաւ, ոչ միայն Մինախորեանը, բայց ստեղծուած պայմաններում ամէն ոք մտահոգուած էր եղել միայն իրմով։ Ու քանի քանի՛ քանի անգամ մարդիկ հարցրել էին իրենք իրենց թէ՝ ո՞ւր էին տարւում, ի՞նչ էր լինելու իրենց վերջը։ Հարցրել էին՝ համոզուած լինելով, որ ուր էլ որ տարուէին, վերջը վատ է լինելու... Ու մանր-մանր երեւոյթները արժէք էին ստանում անխուսափելի ու ցաւալի հարցը լուծելու համար։ Մարդիկ դրեթէ կասկած չունէին, որ վիճակները յուսահատական է, եւ որ կոտորածն անխուսափելի է։ Բայց եւ այնպէս, մտածում էին, որ գուցէ լաւ լինէր, եթէ ձերբակալուած չլինէին այս վիճակում, այլ մի ուրիշ դրութեան մէջ։

Սարսափը կաղապարի պէս ծանրացել էր բոլորի հոգու վրայ ու կապել նրանց թեւերը։ Բանականութիւնը կորցրել էր իր կարողութիւնը, տեղի տալով անհեթեթութեան։ Բանտը, ճանապարհը, քարվանսարաների կեանքը, հիւանդութիւնը,— այդ ամէնը լի յուսահատական ապրումներով Վահանին դուրս էին նետել կեանքի առօրական ուղիից ու նրա միտքը դարձրել մշուշոտ, ինքը՝ երկչոտ։

«Ես ինքս ինձ ասում եմ. «մտածիր, լաւ մտածիր»։ Ու գտնում եմ թէ՝ լաւ չեղաւ, որ դեղնագոյն հագուստներով ձերբակալուեցի, որովհետեւ բոլորից զատւում եմ։ Առաջին պատահած ճորտարար կարող է ինձ ասել. 'Դու, դու որ հագել ես դեղին զգեստ',— եղրակացնում եմ ես, ու մնացած հարցերը մնում են առկախ»:

Աքսորի երկրորդ թէ երրորդ օրը Վ. Մինախորեանին ու Գարեգին Ալթունեանին (որի ընտանիքին միացել էր Վահանը եւ որով, ըստ իր ենթադրութեան, վտանգել էր ե՛ւ նրան) ձերբակալում եւ առանձնացնում են մի միջադէպի պատճառով, այն է՝ հեգնական վերաբերմունք ցոյց տալու պատճառով դէպի ժանդարմների պետը: Վերջինի հրամանով նրանց ձեռքերը շղթայում են, եւ այդ վիճակում սպան նրանց չարաչար գանակոծում է՝ վնասելով Վահանի մի աչքը: Ապա նրանց ծեծի վայրից տանում են հարցաքննութեան: Հարցաքննողն էր Սամսոնի Իթթիհատականների պետ դոկտոր Սրակին.

«Հայկական շրջաններից իրեն կղզիացած էր պահում,— գրում է նրա մասին Վահանը.— Բայց, ինչպէս ժամանակի բոլոր Իթթիհատականները, համարւում էր «հայասէր»: Լուրջ, խոհուն, իրազեկ մարդու համբաւ ունէր: Ես նրա հետ ընդամէնը մի անգամ էի պատահել Երզրումի Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին մեկնելու նախօրեակին: Այն ժամանակ նա խօսում էր հայ-թրքական համագործակցութեան մասին. բարենորոգումների խնդիրը համարում էր հասունացած մի հարց, բայց դժգոհ էր դրսի միջամտութիւնից: Իրազե՞կ էր արդեօք, որ Երզրումի ժողովը մի ծուղակ էր հայ յեղափոխականներին ամէն տեղից ի մի հաւաքելու եւ գլխատելու, չգիտեմ: Ամէն պարագայի տակ, արդարութեամբ վերյիշելով Երզրումի մէջ անցած-դարձածը՝ հակացայ, որ իմ 'հաշիւը' փակուած է ու դրա հետ միասին աննախընթաց խաղաղութեան ու բացարձակ անտարբերութեան մէջ ընկայ:»

Ահա այդ մարդն է, որ հարցաքննում է Վահանին: Սխալ արտայայտուեցի. դոկտոր Սրակինի արածը հարցաքննութիւն չէր, այլ դատապարտութիւն: Եւ դատապարտութեան նրա խօսքը ուղղուած էր ոչ միայն Վ. Մինախորեանին:

Դոկտոր Սրակին, ըստ երեւոյթին, Վ. Մինախորեանին համարում էր Դաշնակցական եւ, իր խօսքը նրան ուղղելով, իրականին ուղղում էր այդ կուսակցութեան ղեկավարութեան: Հետաքրքրական ու բնորոշ է նրա մեղադրականը: Նա գիտակցում էր, որ Իթթիհատականների ծրագիրը՝ բնաջնջել մի ամբողջ ժողովուրդ, անօրինակ ոճիր էր: Եւ ուզում էր արդարացնել այդ ոճիրը մի մարդու առաջ, որ թէեւ ոճիրի մասին դեռ գաղափար չունէր, բայց որին կարելի էր նման բաներ ասել ու սիրտ թեթեւացնել, խիղճ հանդարտացնել:

— Այսօր այստեղից անցան հարիւրաւոր մարդիկ,— ասում էր Սրակին՝ ակնարկելով տարագիրներին.— Ինչ էր այդ... Սրա՞ համար էր մեր բարեկամութիւնը, սրա՞ համար էին մեր անվերջ ընդառաջումները... Ամենից բարեկիրթ ու յառաջադէմ ժողովուրդը համարեցինք մենք ձեզ եւ աւելի յառաջադիմելու բոլոր հնարաւորութիւնները տուինք: Ձեր դպրոցները, վանքերը, եկեղեցիները, ընթերցարաններն ու ակումբները թիւ ու համար չունէին մեր երկրում: Պետական ամենաբարձր պաշտօնների տէր դարձրինք ձեզ: Երկրի ղեկն անգամ վստահեցինք ձեզ եւ ի՞նչ... Դրամ, արհեստ, առեւտուր, գիտութիւն, ամէ՞ն բան ձեզ տուինք: Ո՞ր երկրի մէջ այդքան իրաւունքներ ունէիք... Ռուսաստանո՞ւմ... Անտես արիք ձեզ տրուած բոլոր բարիքները, որովհետեւ առաջին մէկ օրից միտք չունէիք մեզ հետ իբրեւ բարի դրացիներ ապրելու. միտք չունէիք հաւատարիմ ընդհանուր հայրենիքի շահերին ծառայելու: Յեղափոխութեան մեղրալուսնին հազար ու մի բարի ցանկութիւններ յայտնեցիք, ընդհանուր շահերին ծառայելու հանդիսաւոր երդումներ արիք: Թէեւ գիտէինք, որ այդ բոլորը կեղծ էին, բայց կարեւորութիւն չտուինք. երկիրն այնքա՜ն մեծ վտանգի մէջ էր դեռ եւ: Միւս կողմից՝ խորհեցանք թէ դուք էլ վերջ ի վերջոյ խելքի կը գաք: Բայց ի՜նչ միամտութիւն... Ամէն տեղ սկսեցիք դաւել: Բարենորոգումների պատրուակով Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսայում սկսեցիք արտաքին միջամտութիւններ առաջ բերել: Փորձեցիք օտար հակակշռի տակ առնել մեր պապերի երկիրը... Դարերի հարեւաններ էինք, բայց անցեալը, պատմութիւնը, ապրած դառն օրերը, թէ՛ ձեր եւ թէ՛ մեր քաշածները արժէք չունեցան ձեզ համար… Ու հիմա ժամանակը հասած համարեցիք մեզ վերջնականապէս կործանելու… Դաւաճանեցի՛ք… Վանում, Գարահիսարում ապստամբութիւններ սարքեցիք. Կովկասում ռուս զօրքին թեւ ու թիկունք եղաք. Էրզրումում համաձայնութեան գալու բոլոր հնարաւորութիւնները ժխտեցիք՝ անմիտ, աղայական պահանջներ բերելով: Ադանա՞ն: Ո՞ր երկրում տեղի չեն ունեցել նման յետադիմական շարժումներ: Բարենորոգութիւնների ձգձգո՞ւմ: Ե՞րբ ժամանակ եղաւ գործադրելու: Գաւառում տխուր դժգոհութիւննե՞ր: Ո՞վ էր նրանց սնունդ տալիս… Ու դաւաճանեցիք այնպիսի մի շրջանում, երբ Դարդանելից, Միջագետքից, Պաղեստինից, Կովկասից, ամէն կողմից ազգերը մեզ վրայ թափուած՝ ուզում են մեզ բզկտել, «հիւանդ մարդու» ժառանգութիւնն իրենց մէջ բաժանել… Ո՛, ինչպէս չէ, անշուշտ, նաեւ ձեզ բաժին հանել…

Այստեղ դոկտոր Սրապին գրպանից հանում է մի փաստաթուղթ, որի վրայ նկարած էր «Հայկական Ազատամարտը» ու ցոյց է տալիս Վ. Մինախորեանին.

— Ծանօթ է, չէ՞… Այս չէ՞ ձեր ուզածը: Է՛, ինչ կայ որ, երկիրը մե՛ծ, հողը շատ… Գնացէք հիմա ձեր «Էրմէնիստանը» ստեղծեցէք Մուսուլի մէջ…

Մինչ այդ Վահանը, որ կարծես հաշտուել էր մահուան ուրուականի հետ, դիտակից «դատապարտեալին» յատուկ սառնասրտութեամբ լսում էր Սրապինին: Սակայն, սրա վերջին խօսքերը նրան ցնցում են. «Կարծես թէ փայտով հարուած տուին գլխիս… ‘Մուսո՛լ…»

Այժմ նրա համար հարցը պարզ էր, տեղահանութեան հանելուկը լուծուած էր…

Իսկ դատախազը ոգեւորուած ու տարուած իր մտքով, շարունակում էր.

— Իսկ եթէ այնտեղ էլ անյաջողութեան հանդիպէք, մեղադրեցէք ձեզ: Մենք այլեւս մեր կրծքի վրայ օձեր պահելու պէտք չունինք… Դուք, ի հարկէ, յոյս ունիք, որ ռուսները պիտի գան: Բայց մինչեւ այդ՝ քարը քարի վրայ չի մնայ… կը փլի, կը ջախջախէ ամէն բան… Ու ձեր ոսոխները լաւագոյն դէպքում կ՚անցնէին այնպիսի ատեանների միջով, որոնց անունը սարսափ կ՚ազդէ նրանց՝ անգամ երազի մէջ…

Այս մեղադրանքի հեղինակը հայ ժողովուրդի տիպիք դահիճներից մէկն էր: Այդպէս էին դատել նրանք բոլորը՝ արդարացնելու համար նորագոյն պատմութեան անծանօթ իրենց կատարած ոճիրը: Մեր օրերին, այս երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, նման ճակատագիր ունեցաւ հրեայ ժողովուրդը: Սակայն, այդ ժողովուրդն աւելի բախտաւոր եղաւ: Հայ ժողովրդի համար դատ ու դատաստան չեղաւ. եղածը խօսքի սահմաններից այն կողմը չանցաւ: Տարբեր է, սակայն, պարտուած հրեայ ժողովրդի համար:

Դոկտոր Սրապին մի առանձին հաճոյքով էր իր թոյնը թափել Վ. Մինախորեանի գլխին: Գիտէր, ճանաչում էր նրան՝ հայ ժողովուրդի լաւագոյն զաւակներից մէկին, որը եթէ անգամ տաս գլուխ ունենար, բոլորը կը տար՝ այդ ժողովուրդը Գողգոթայի ճամբից փրկելու համար:

Դոկտոր Սրապին, ոգեւորուելով, չափի ու սահմանի գիտակցութիւնը կորցնում է: Տուեալ պարագաներում նրան կարող էր զսպել միայն պատասխանատուութեան ներքին զգացումը, խղճի ձայնը: Բայց դահիճը խիղճ չունի: Նա, վկայեալ այդ համալսարանականը, կասկած չունէր, որ իր զոհը հարկադրուած է լռել ու այդպէս տանել ամէն մի նախատինք…

Ու շարունակում է դեւին յատուկ չարութեամբ.

— Այս բոլորը ձեզ համար ոչինչ են, այնպէս չէ՞… Ձեզ համար այժմ ամէն բան միեւնոյն է, այնպէս չէ՞… Իսկ հազարաւոր մարդի՞կ, որոնք ձեզ նմանների պատճառով այժմ տառապում են ճանապարհին: Կանա՞յք, աղջիկնե՞ր, որոնք յանցանք չունեին: Երեխանե՞ր…

— Հերի՛ք է,— գոչում դահճի երեսին Վահանը՝ անկարող լինելով այլեւս զսպել իրեն այրող կրակի ձայնը ու ապշանքի մատնելով թուրքին:

Սա, չանթահար եղած, ականջներին չի

հաւատում: Այնքա՛ն արտասուալից էր պատահածը:

— Ի՞նչ ասացիք,— ուզում է առարկել ապշահար գազանը.— Դուք ասացիք «հերի՞ք» է, զսպուած կատաղութեամբ ատամների միջից շշնջում է նա:

Վ. Մինախորեանը չի ընկնում դահիճի ոտքերը, ներում չի աղերսում մինչեւ անգամ այն ժամանակ, երբ նա սպառնում է իր «հաշիւը» մաքրել տեղն ու տեղը եւ իր այդ կեցուածքով շփոթում է դահիճին այն աստիճան, որ նա… տեղի է տալիս.

— Շատ լաւ… հերիք է… այս անգամ հերիք է…

Նրանց՝ Վահանին ու Գարեգինին՝ նետում են մի ախոռ: Քիչ անց ներս է մտնում փոքրը, պարանը ձեռքին. հրամայում է չոքել, ապա կապկպում է նրանց թեւերը: Յատուկ ուշադրութիւն է դարձնում Վահանի վրայ. ծունկը դնում է ուսին ու կատաղութեամբ քաշում, թոթվում, պրկում հանգոյցը՝ միաժամանակ հայհոյանք թափելով նրա գլխին: Վերջացընելով գործը՝ հեգնում է.

— Հիմա ջանդ ազատիր, տեսնեմ, Կոմիտէ բաշի՛:

Երկուսին կապում են իրար: Եւ այդ վիճակում դուրս են բերում ախոռից ու հրամայում, որ նստեն ձին լծած երկանիւ սայլը:

«Իրար հրմշտկելով մօտեցանք, բայց մի կատարեալ տառապանք եղաւ մեր բարձրանալը: Երկուսով միասին եւ այն էլ յետ պրկուած թեւերով չէինք կարող վեր ելնել»:

Վերջապէս, ժանդարմի օգնութեամբ, մի կերպ տեղաւորւում ենք սայլում:

Ճանապարհին Վ. Մինախորեան հասկանում է, որ գնում են կարաւանն անցած ճանապարհով, միայն հակառակ ուղղութեամբ, այսինքն՝ վերադառնում են յետ:

Անցնելով ծանօթ վայրերով՝ նա վերյիշում է անցած-դարձածը: Նրա ապրումներն աւելի են ծանրանում, երբ նոյն ճանապարհին հանդիպում է նորանոր տարագիրների: Սրանք իրենց փոխուած արտաքինով զարմանք են պատճառում Վահանին, որովհետեւ արդէն թալանուած-պլոկուած էին. եւ ապա նրանց մեծագոյն մասը կանայք ու երեխաներ էին… Քիչ հեռանալով՝ նա հանդիպում է առանձնացրած աղջիկների ու երիտասարդ կանանց խմբերի: Նրանք «մեռելաթաղի հաւաքուած կանանց նման էին»: Գիտէին թէ ինչ է սպասում իրենց, բայց պաշտպանուելու այլ միջոց չունէին, բացի արտասուքն ու լուռ տառապանքը…

«Սարսուռը ցնցում է ինձ…»:

(Շարունակելի)

ԿԵԱՆՔԻՍ ԴՐՈՒԱԳՆԵՐԻՑ*)

Գրեց՝ ՏԻԳՐԱՆ ԴԵՒՈՅԵԱՆՑ

XII

ՎԵՏԻ ԲԱՍԱՐԻ ԵՒ ՇԱՐՈՒՐԻ ԴԷՊՔԵՐԸ

ԱՊՐԻԼ 27–28–ի Բաղուի դէպքերից յետոյ անգամ, թաթարները չհրաժարուեցին իրենց ձգտումից Վեդի–Բասարի եւ Շարուր–Նախիջեւանի շրջաններից ստեղծելու Ադրպէյճանի հարաւարեւմտեան նահանգապետութիւն:

Միւս կողմից՝ Տաճկաստանից նոր սպաների ու ասկեարների գալը ցոյց էր տալիս, որ Մուսթաֆա Քեմալ փաշան ձգտում է Նախիջեւանի վրայով միանալ ռուս բոլշեւիկների հետ:

Յունիսի վերջերը Հայաստանի քաղաքական վիճակը խիստ կերպով փոխուեց: Ղարաբաղը եւ Զանգեզուրը գտնւում էին Սովետական Ռուսաստանի ձեռքը: Ղազախի կողմից թաթարներն էին գործում, կարմիր դրօշակներով, իսկ Կարսի նահանգի սահմանի վրայ տաճիկները սպասում էին յարմար վայրկեանի՝ Բրեստ–Լիտովսկի դաշնագրութիւնը գործադրութեան դնելու համար:

Միեւնոյն ժամանակ, Հայաստանում գտնուող բոլշեւիկները, իրենց ապստամբութեան ձախողանքից յետոյ Կարսում, Սարիղամիշում, Ալեքսանդրապոլում, Նոր–Բայազէտում եւ Դիլիջանում, շարունակում էին իրենց գաղտնի աշխատանքները, որոնք ստիպում էին մեր կառավարութեանը միշտ պատրաստ գտնուելու ամէն տեսակ գործողութիւնների համար թէ՛ ճակատի վրայ եւ թէ՛ թիկունքում:

Հասկանալով կացութեան լրջութիւնը եւ ռուս բոլշեւիկների ու տաճիկների միացման ծանր հետեւանքները Դարալագեազի եւ Նախիջեւանի վրայով, մեր կառավարութիւնը որոշեց զինուորական ուժով գրաւել Վեդի–Բասարի ու Շարուրի ապստամբ շրջանները: Այդ նպատակով յուլիս 11–ի լուսաբացին Ղամարլուի զօրաբանակը ամբողջ ճակատի վրայ անցաւ յարձակման եւ ժամի 5–ի մօտերը, պըզտիկ կռիւներից յետոյ, գրաւեց երկաթուղու գծի ձախ կողմի գիւղերը եւ նոյնպէս Կոթուղ, Աղասի–Բէկլու եւ Կարաբաղլար գիւղերը:

Աւելի կատաղի կռիւ տեղի ունեցաւ Բէյուկ Վեդի գիւղից մէկ մղոն հեռու գտնուող Դաւալ–Կալայի լեռը գրաւելու ժամանակ: Երեք անգամ մեր զօրքերի ցերեկուայ գրոհը այդ լերան վրայ մատնուեց անյաջողութեան: Միայն գիշերուայ գրոհով, կատաղի դիմադրութիւնից յետոյ, մեր հրետանիի օգնութեամբ, կարելի եղաւ գրաւել այդ լեռը, որի շնորհիւ որոշուեց Բէյուկ Վեդիի բախտը:

Յաջորդ երկու օրերի ընթացքին մեր զօրքերը գրաւեցին մինչեւ Գայլի Դրունքը գտնուող բոլոր գիւղերն եւ անցքը, ու այդպիսով մաքրուեց ամբողջ Վեդի–Բասարի շրջանը:

Միաժամանակ Եայիջիից շարժուեց Դարալագեազի մեր բանակը: Այդ պատճառով Շարուրի զօրամասի հրամանատարը ստիպուեց իր զօրամասերը յառաջացնել Գայլի Դրունքի միւս կողմը եւ գրաւել Շարուրը, որի ժողովրդի մէկ մասը նախօրօք փախել էր Արաքսի աջ ափը, իսկ միւս մասը Նախիջեւան եւ այնտեղից էլ դէպի պարսկական սահմանը:

Յուլիս 16–ին, երեկոյեան դէմ, երբ գրաւեցին Կուչչի–Դեմուրչի եւ Բաշնորաշէն եւ Ուլիա–Նորաշէնի վրայով անցնող գիծը, Արաքսի ափից մինչեւ Ախուր գիւղը, դադարեց մեր զօրքերի յառաջխաղացումը, որովհետեւ Նախիջեւանի Մահմեդական Ազգային Խորհուրդը պատուիրակութիւն էր ուղարկել մեր կառավարութեան՝ հնազանդութիւն յայտնելու համար: Բայց Նախիջեւանի թաթարները չընդունեցին Հայաստանի կառավարութեան թե–

---

*) Տե՛ս այս տարուայ Մարտ–Ապրիլի թիւը:

լաղրած պայմանները։ Որով՝ յուլիս 22-ին վերսկսուեցին զինուորական գործողութիւնները։

Ստանալով օգնութիւն յանձին տաճկական կանոնաւոր զօրքերին՝ թաթարները 3 օր ուժեղ դիմադրութիւն ցոյց տուին Գուսխանի, Կաւրալի լեռների ու Շախթախթիի մօտ, բայց յուլիս 25-ին չդիմացան մեր հարուածներին եւ դիմեցին փախուստի՝ թողնելով մեր զօրքերին մեծ աւար։

Այս վերջին ճակատամարտը ստիպեց թաթարներին նորից մեզ մօտ ուղարկելու իրենց ներկայացուցիչներին՝ հնազանդութիւն յայտնելու եւ խնդրելու համար, որ մեղմացուին անձնատուութեան պայմանները։

Երեւանը թելադրեց նոր պայմաններ, աւելի ընդունելի թաթարների համար։ Բայց այս անգամ պատասխանը ստացուեց ոչ թէ Մուսաւաթական Ազգային Խորհրդի կողմից, այլ Նախիջեւանի Ռեւկոմի (Բոլշեւիկեան Յեղափոխական Կոմիտէ) կողմից, որը առաջարկում էր կանգնեցնել յառաջխաղացումը...

Որպէսզի պարզ լինի Նախիջեւանի Բոլշեւիկեան Ռեւկոմի կազմութեան հարցը, այստեղ պէտք է նկատել, որ Երեւան պատգամաւորներ ուղարկելու հետ միասին թաթարները մէկ ուրիշ պատգամաւորութիւն էլ ուղարկած էին Բաքու-չայ ռուս բոլշեւիկների մօտ՝ խնդրելով նրանցից օգնութիւն։ Եւ այն միջոցին, երբ տեղի էին ունենում բանակցութիւններ առաջին եւ երկրորդ պատգամաւորութիւնների հետ, Կարմիր Բանակի մէկ մասը անցնում է Նախիջեւան, եւ այդպիսով յուլիս 29-ին մեր յառաջացած զօրամասերի դէմ կանգնում են ոչ թէ թուրք-թաթարները այլ կարմիր ռուսները։ Դրա շնորհիւ մեր զօրքերի յառաջխաղացումը դադարեց, մինչեւ որ դիւանագիտական բանակցութիւնները մեր կառավարութեան եւ Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանի հետ մի որոշ եզրակացութեան յանգէին։

Օգոստոս 10-ին համաձայնութիւն գոյացաւ։ Դրա հիման վրայ հայկական զօրքերին հրաման արձակուեց դադարեցնել զինուորական գործողութիւնները Շարուրի մէջ եւ ամրանալ Շախթախթիի գծի վրայ, Կաւրալի բարձունքներում։

Բէյուկ-Վեդիի եւ Շարուրի այս կռիւների ընթացքում Հայաստանի ձեռքը անցաւ մեծ պատերազմական աւար, 2 գործածելի թնդանօթներ, 5 գնդացիրներ եւ մեծ քանակութեամբ թնդանօթի գնդակներ։

ԴԻԼԻՋԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

Ապրիլին, 1920 թ. Անդրկովկասեան Հանրապետութիւնների խորհրդաժողովը Թիֆլիսի մէջ որոշեց դադարեցնել պատերազմական գործողութիւնները Ադրբէյճան-Հայաստանի սահմանների վրայ։ Բայց, հակառակ դրան, ընդհարումները Ղազախի գաւառի սահմանին վրայ շարունակուեցին մինչեւ ապրիլ 16ը, այսինքն՝ մինչեւ խառն յանձնաժողովի գալը։ Վերջինս միայն յաջողեց ժամանակաւորապէս հաշտեցնել թշնամի կողմերը։ Բայց ապրիլի վերջը, երբ Բաքուի նախարարական կազմը փոխուեց, փոխուեց եւ երկրի վիճակը։ Թէեւ Մուսաւաթական կառավարութիւնը փոխարինուեց բոլշեւիկեան կառավարութեամբ, բայց այս վերջինը իր քաղաքականութիւնը հանդէպ Հայաստանի չփոխեց, այլ շարունակեց նախորդի յարձակողական քաղաքականութիւնը, այս անգամ «Կարմիր Ատրպէյճանի» եւ Սովետական Ռուսաստանի դրօշակի տակ։

Բոլշեւիկների առաջին պոռթկումները տեղի ունեցան Շամշադինի շրջանում, ուր Կարմիր Ատրպէյճանի գործակալները, առատ դրամի շնորհիւ, կարողացան Հայաստանի կառավարութեան դէմ մայիս 17-ին ապստամբեցնել տեղական հայ բնակչութիւնը։ Դրան շատ նպաստեցին սահմանի բաց լինելը եւ Ղազախի շրջանից շատ աժան գնով անհրաժեշտ մթերքներ բերելը եւ նոյնպէս ռուս-ատրպէյճանեան զօրքերի մօտիկ գտնուելը։

Առաջին ապստամբութիւնը ճնշուեց։ Դրանից յետոյ, ծագեց երկրորդ ապստամբութիւնը, որին միացան հայկական միլիցիոներների գունդը եւ 2 վաշտ 6-րդ գնդից։

Մայիս 20-ին, ապստամբները, ռուսների օգնութեամբ, գրաւեցին Քարվանսարայը, իսկ մայիս 21-ին Դիլիջանը. Քարվանսարայի մէջ կարմիրները ձերբակալել էին Դիլիջանի զօրամասի հրամանատար զօր. Բաղդասարեանը, ներքին գործոց նախարարի օգնական Մանասեանը, գաւառային քաղաքապետութեան նախագահ Զաքեթեանը եւ ուրիշներ, իսկ Դիլիջանում էլ բաւական թուով սպաներ:

Ապստամբութիւնը ճնշելու համար, Ելենովկայի կողմից ուղարկւում է մի զօրամաս զօր. Խանկալամեանի հրամանատարութեամբ, իսկ Ղարաքիլիսէի կողմից մի ուրիշ զօրամաս Սեպուհի հրամանատարութեամբ: Սրանք մայիս 23-ին, առանց դիմադրութեան, մտնում են Դիլիջան: Ապստամբները յետ էին նահանջում իրենց հետ տանելով 75 հրացան եւ 35,000 փամփուշտ:

Ապստամբների ղեկավարներին հետապնդելու միջոցին հայկական զօրամասը Քարվանսարայի մօտ կռուի են բռնւում բոլշեւիկների կողմը անցած միլիցիոններների մի զօրամասի եւ 3-րդ բատարէայի մէկ մասին հետ:

Պզտիկ ընդհարումներից յետոյ, Քարվանսարայի, Ուզունթալի, Կարավանչի եւ Թախլուի մօտ մայիս 25-ից մինչեւ յունիս 2-ը, ապստամբներ ճնշւում են, իսկ թաթարներն ու բոլշեւիկ ղեկավարները հեռանում են Հայաստանի սահմաններից:

Ապստամբների յարձակման միջոցին Դիլիջանի վրայ՝ Միխայլովկա գիւղի մոլոկանները եւս ապստամբում են նոյն շրջանի թաթարների հետ եւ զինաթափ անում 6-րդ գնդի մէկ գումարտակը, որը կանգնած էր այդ գիւղի մէջ:

Ապստամբներին ճնշելու համար, Դիլիջանից Զիմբորանի վրայ ուղարկւում է մի զօրամաս գնդապետ Տիմչենկոյի հրամանատարութեամբ, որը կատաղի կռիւներ է ունենում Գալայ-Այրում, Սուլու-Բուլախ եւ Ծիչթափա գիւղերի մօտ, եւ ոչ միայն վերահաստատում է հին սահմանները ու հնազանդեցնում ապստամբներին, այլ եւ հարաւից եկած Բասարգեչարի զօրամասի օգնութեամբ գրաւում է Սեւանայ լճի արեւելեան ափը՝ յետ շպրտելով թաթարներին դէպի Ազերբէյճանի հողը:

ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ ԵՒ ՆՈՐ ԲԱՅԱԶԻՏԻ ԴԷՊՔԵՐԸ

Ապրիլ 1-ից մինչեւ 29-ը յունիսի այս շրջանի խաղաղութիւնը չխանգարուեց, եթէ հաշուի չառնենք փոքր ընդհարումները թափառական թաթարների հետ եւ Կարապալուղի ապստամբութիւնը:

Կարապալուղի մէջ գտնուող զօրամասերը, ղեկավարութեամբ բոլշեւիկ Սարուխանովի, ապստամբուել էին մայիս 12-ին, ձերբակալել զօր. Սիլիկեանը եւ ուրիշ սպաներ ու, առանց դիմադրութեան, գրաւել էին Նոր Բայազիտը: Սակայն ձեռք առնուած կտրուկ եւ արագ միջոցների հետեւանքով ապստամբութիւնը ճնշուեց եւ ղեկավարները ձերբակալուեցին:

Ամառը սկսուելու պէս Զոլաֆի շրջանի թափառական թաթարները միշտ անհանգստացնում էին Դարալագեազի շրջանի հայերին ու սպառնում կտրել Զանգեզուր տանող ճանապարհը: Այդ պատճառով, որպէսզի այս շրջանը մաքրուի ու ապահովուի ճանապարհը դէպի Զանգեզուր, հայկական զօրքերը յունիս 29-ին, փոքր դիմադրութիւնից յետոյ, գրաւեցին Զոլ գիւղը եւ Կիւկի դաղու Սիզօրդաղ լեռները: Դրանից յետոյ զօրամասի մեծ մասը ուղարկուեց Շարուր՝ Ղամարլուի զօրամասերին օգնութեան: Յուլիս 14-ին գրաւուեցին Զիվա, Դոնղիկ Իւխարի, Արմիկ, Ախխա գիւղերը, իսկ հետագայ օրերին գրաւուեցին Եայջի, Բաշնորաշէն ու Ուլխանորաշէն գիւղերը, ուր Ղամարլուի եւ Դարալագեազի զօրամասերը իրար միացան եւ կազմեցին Շարուրի զօրամասը:

ՂԱՐԱԲԱՂԻ ԵՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԴԷՊՔԵՐԸ

Երբ Ազերբէյճանի զօրքերը գրաւեցին Ասկերանը, Շուշին եւ Խանկենդը, Ղարաբաղի հայերի վիճակը վատթարացաւ: 30 հայկական գիւղեր քարուքանդ եղան, իսկ ժողովուրդը կոտորուեց: Նրանցից շատ քիչերին յաջողուեց թաքնուել լեռների մէջ եւ այդպիսով փրկել իրենց կեանքը:

Ղարաբաղ եկած ռուսական զօրամասերը ոչ միայն չլաւացրին հայերի վիճակը, այլ ընդհակառակը, աւելի վատթարացրին՝ խլելով ժողովրդից նրա վերջին ունեցածը: Եթէ կարելի էր կռուել քանակութեամբ քիչ անկանոն ատրբէյճանեան զօրքերի դէմ, անմտութիւն պիտի լինէր հայերի կողմից զէնք բարձրացնել ռուսների դէմ, որոնց թիւը Ղարաբաղի մէջ հասնում էր 15,000-ի, բոլորն էլ մարզուած եւ կռիւների մէջ եփուած զինուորներ: Հայերին մնում էր միայն հնազանդուել ու յանձնուել ճակատագրին:

Բայց ռուսական զօրքը չբաւականացաւ Ղարաբաղով, այլ փորձեց անցնել ե՛ւ Զանգեզուր, ուր տեղական ժողովուրդը ուժեղ դիմադրութիւն ցոյց տուեց: Ռուսները այդտեղ մեծ ուժ կեդրոնացրին: Այսպէս այդտեղ եկան 28-րդ զօրամասի մի գունդը, 281 եւ 299-րդ հետեւակ գնդերը, Ա. եւ Բ. ձիաւոր գնդերը ու 12 թնդանօթ:

Նախ՝ Կարմիրներն ամէն կողմ գործակալներ ուղարկեցին, ապա իրենց բանակը անցաւ յարձակման:

Հայերը սկզբները ուժեղ դիմադրութիւն ցոյց տուին, բայց ռազմամթերքի, պարէնի եւ պահեստի ուժի բացակայութեան պատճառով, ի վերջոյ անձնատուր եղան: Միայն նրանց մէկ մասը, չուզենալով ճանաչել ատրբէյճանեան կարմիր իշխանութիւնը, յետ քաշուեց դէպի Դարալագեազի սահմանները եւ, միանալով հայկական պետական զօրքերի հետ, գրաւեց գիւղեր Կուչչի-Բիլեակից մինչեւ Կուրչեակի լեռանցքը:

Զանգեզուրի եւ Սիսիանի գրաւումը կարմիր բանակի կողմից սպառնում էր կտրել Դարալագեազը Հայաստանից եւ միանալ Շարուր-Նախիջեւանի թաթարների հետ, ինչ որ աւելի պիտի վատթարացնէր եւ բարդացնէր Հայաստանի վիճակը:

Նկատի ունենալով այս, Կուչչի-Բիլեակում գտնուող մեր զօրամասի հրամանատարը օգոստոս 1-ին անցնում է յարձակման եւ երեք օրուայ մէջ գրաւում է Զանգեզուրը, յետ է շրջում Կարմիր բանակը եւ թաթարներին դէպի Զարուզի շրջանը: Բայց այդ փոքր զօրամասը, կտրուած լինելով իր յենարանից, առանց ունենալու բաւական քանակութեամբ ռազմամթերք, պարէն եւ պահեստի ուժ, չէր կարող երկար դիմանալ իր դէմ գտնուող թուով գերազանց ռուս բանակի եւ թաթարների դէմ եւ այդ պատճառով օգոստոս 8-ին, նորից յետ քաշուեց Դարալագեազի սահմանների մօտ եւ գրաւեց իր հին դիրքերը:

Այնուհետեւ բոլշեւիկների մի քանի փորձերը ճեղքելու Դարալագեազը՝ յաջողութիւն չունեցան: Շուտով դրանից յետոյ համաձայնութիւն կայացաւ Հայկական կառավարութեան ու Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ՝ Լեգրանի հետ, որով ժամանակաւորապէս Ղարաբաղ եւ Զանգեզուրը անցան բոլշեւիկների հսկողութեան տակ:

* * *

Ձեռքիս տակ ունեմ մի պաշտօնական փաստաթուղթ, որ ամփոփ կերպով նկարագրում են Հայաստանի մէջ տեղի ունեցած զինուորական դէպքերը 1920 թուի ապրիլ մէկից մինչեւ սեպտեմբեր 1: Թէեւ որոշ բաներ կրկնւում են այնտեղ, բայց ի նկատի ունենալով այդ փաստաթղթի թիւը՝ աւելորդ չեմ համարում տալ նրա բովանդակութիւնը ամբողջութեամբ:—

— 1920 թուի Հայաստանի արտաքին սահմանների վիճակը ներկայանում էր հետեւեալ ձեւով —

Թուրքիան, չուզենալով ենթարկուել Դաշնակից մեծ պետութիւնների սպառնացող որոշումներին, արագ եւ ուժեղ կերպով կազմակերպում է իր ազգային ուժերը Մուստաֆա Քեմալի ղեկավարութեան տակ: Վերջինը կեղծ կերպով իբր թէ չի ճանաչում Սուլթանի կառավարութիւնը եւ համաձայնութեան մէջ է մտել Մոսկուայի բոլշեւիկների հետ:

Բոլշեւիկների եւ Քեմալի ծրագիրն էր սովետական զօրքերի միացումը Թուրքիոյ հետ Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրայով: Այս ծրագիրը համապատասխանում էր լիովին համիսլամականների ծրագրին եւ այդ պատճառով Ատրբէյջանը համակրում էր նրան: Մանաւանդ, որ սովետական զօրքերի մտնելը ապահովում է Ատրբէյջանի անկախութեան գոյութեան, Ատրբէյջանի կառավարութիւնը դեռ մարտի վերջերքին իր բոլոր զօրքերը տարաւ

Ղարաբաղի սահմանը եւ սկսեց պատերազմական գործողութիւններ հայկական Ղարաբաղի ու Զանգեզուրի դէմ:

Հայաստանի Հարաւային ճակատի վիճակը շատ էր նպաստում այդ յարձակման, որովհետեւ 1919-ի ամառուանից ամբողջ շրջանը, Նախիջեւանից մինչեւ Վեդի-Բասար (վերջինն էլ մէջը լինելով), փաստօրէն գտնւում էր Ադրբէջանի ձեռքը՝ կազմելով այսպէս կոչուած «Հարաւ-Արեւմտեան Ադրբէջան»: Մընում էր միայն հայկական նահանգներով բաժանուած այս մասը միացնել Ադրբէջանին:

Թուրքիայ օգնութեամբ Նախիջեւանի, Շարուրի ու Վեդիբասարի այս շրջանը եռանդով կազմակերպւում էր զինուորական ուժ, որի մէջ մտնում էին, բացի տեղական մահմեդական ազգաբնակչութիւնից, նաեւ 800 տաճկական ասկեարներ տաճկական սպաների հետ միասին: Այս շրջանը Բայազէթի վրայով Թուրքիայից էր մատակարարւում զէնքերով ու ռազմամթերքով:

Բացի այդ, Հայաստանի սահմանների ներսում գտնուող առանձին մահմեդական շրջանները Ադրբէջանի գործակալների կողմից շարունակ գրգռւում էին Հայաստանի դէմ. նրանք չէին ճանաչում հայկական կառավարութիւնը եւ, Թուրքիայ եւ Ադրբէջանի կողմից օգնութիւն ստանալով դրամով եւ ռազմամթերքով, յարձակւում էին մեր զօրքերի եւ ազգաբնակչութեան վրայ:

Ամէն անգամ, երբ մեր զօրքերը կռուի մէջ էին, այս շրջանների մահմեդականները փորձեր էին անում զարնելու մեզ թիկունքից:

Այս վիճակը չէր կարելի տանել, եւ այդ պատճառով դեռ 1920 թուի սկիզբները Հայաստանի կառավարութիւնը ստիպուած եղաւ զինաթափ անել եւ իրեն հնազանդեցնել այս շրջանների ժողովուրդը:

Այսպէս մենք հնազանդեցրինք Ղարսի նահանգի մէջ Զարուշադի, Ագբաբայի եւ Շայնալարի շրջանները: Մնում էր հնազանդեցնել միայն Երեւանից մօտ 5 մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Զանգիբասարի շրջանը:

Թէ՛ անմիջական կերպով եւ թէ՛ ամերիկեան կոմիտէի ներկայացուցիչների միջոցով Հայաստանի կառավարութիւնը շատ անգամներ աշխատեց խաղաղ ճանապարհով լուծել Զանգիբասարի հարցը: Բայց, օգտուելով Երեւանի Ադրբէջանեան դիւանագիտական ներկայացուցիչի գաղտնի օգնութիւնից եւ ունենալով մշտական հաստատուն կապ Թուրքիայ հետ, Զանգիբասարը կազմակերպեց զինուորական ուժ, թւով մինչեւ 5000 կռուող, զինուած գնդացիրներով ու թնդանօթներով, ղեկավարութեամբ տաճկական սպաների, եւ սկսեց սպառնալ Երեւանին՝ ստիպելով Հայաստանի կառավարութիւնը Երեւանի մէջ միշտ պահել բաւական զօրք:

Այն միջոցին, երբ Ադրբէջան իր զօրքերը քաշել էր Ղարաբաղ եւ Զանգեզուր, բոլշեւիկները ապրիլ 27-ին, համեմատաբար շատ փոքր ուժերով, գրաւեցին Բաքուն, հեռացրին Ադրբէջանի Մուսաւաթական կառավարութիւնը եւ հաստատեցին այնտեղ սովետական իշխանութիւն:

Այս յեղաշրջումը քայքայեց Ադրբէջանեան զօրքերը, եւ նրանք հեռացան Զանգեզուրից:

Սովետական զօրքերի Ադրբէջանի մէջ հաստատուելուց յետոյ, հերթը Հայաստանինն էր, անկասկած: Սակայն այն էլ Հայաստանը գտնւում էր շատ ծանր պայմանների մէջ: Նա կռուի մէջ էր շրջապատող թշնամի երկիրների հետ Մայիս, Յունիս եւ Յուլիս ամիսներին: Այժմ պէտք էր, ուրեմն, տանել նաեւ բոլշեւիկների ճնշումը ոչ միայն ներսից, այլ եւ դրսից:

Դիւրութեամբ գրաւելով Ադրբէջանը՝ բոլշեւիկները իրենց քանդիչ պրոպագանդը ուղղեցին Հայաստանի դէմ, ներսէն, ձգտելով տապալել Հայաստանի օրինական կառավարութիւնը եւ հաստատել այնտեղ սովետական կարգեր՝ առանց զինուորական ուժի դիմելու:

Բոլշեւիկների պրոպագանդի համար Հայաստանը նպաստաւոր հող էր ներկայացնում հետեւեալ պատճառներով: Բոլշեւիկների հաստատուելուց առաջ Ադրբէջանում հայ ազգաբնակչութիւնը կրել էր ամէն տեսակ հալածանք եւ, համեմատած մահմեդականների հետ, միանգամայն իրաւազուրկ էր: Զինուորական ռազմակայանի պետի կարծիքով՝ բոլշեւիկները երբ գրաւեցին Ատրպէյճանը, վարպետօրէն օգտուեցին Հայերի ու մահմետականների ազգային թշնամութիւնից եւ, իրենք իրենց ներկայացնելով որպէս պաշտպան Հայերի, գրաւեցին վերջինների համակրութիւնը։ Այդ պատճառով Հայաստանի բնակչութեան անդիմակից մէկ մասը յանձին բոլշեւիկների տեսան հովանաւոր եւ պաշտպան մի ուժ՝ թաթարների դէմ։ Ուստի այս Հայերը համակրութեամբ էին նայում բոլշեւիկների Հայաստան մտնելուն վրայ։

Ամբողջ Հայաստանի չորս կողմերը բոլշեւիկները ուղարկել էին իրենց գործակալներին, որոնց քարոզի նշանաբանն էր՝ վերջ տալ ամէն տեսակի կռիւներին ազգութիւնների միջեւ։

Այս պրոպագանդի հետեւանքը եղաւ այն, որ Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր-Բայազէտում ու Դիլիջանի շրջանում գրեթէ միաժամանակ տեղի ունեցան բոլշեւիկեան ցոյցեր։ Բոլշեւիկները յաջողեցին իրարանցում յառաջ բերել նաեւ մի քանի զօրամասերի մէջ, բայց միայն տնտեսական հողի վրայ։

Բոլշեւիկեան բոլոր ապստամբութիւնները, սակայն, դիւրութեամբ ճնշուեցին Հայաստանի կառավարութեան հաւատարիմ մնացած զօրամասերի կողմից, եւ կարգը վերահաստատուեց եւ զօրամասերի մէջ չմնաց բոլշեւիկեան ոչ մի հետք։ Իսկապէս յաջորդ կռիւների միջոցին այդ զօրամասերը ցոյց տուին իրենք իրենց բարձրութեան վրայ։

Բայց բոլշեւիկեան շարժումների միջոցին երեւան եկաւ Զանգիբասարի, Շարուրի ու Վեդի Բասարի մահմետականների դաւաճանութեան դերը։ Երբ Երեւանից Ալեքսանդրապոլ զօրամասեր էին ուղարկւում՝ ճնշելու բոլշեւիկեան ապստամբութիւնը, թաթարները շատ անգամներ փորձեցին փչացնել երկաթուղու գծերը եւ շարունակ յարձակւում էին երկաթուղիների վրայ... Նոյն միջոցին Վեդի-Բասարի (Բէյուկ Վեդի) կողմից թաթարները յարձակւում գործեցին մեր գիւղերի վրայ Ղամարլուի շրջանի մէջ։ Ընդհանրապէս, մահմետականները, թէ՛ երկրի ներսում եւ թէ՛ ճակատի վրայ, բաց կերպով նպաստում էին բոլշեւիկների ապստամբութեան եւ միայն յարմար վայրկեանի էին սպասում յարձակուելու համար։

Այդպիսով, բոլշեւիկները, թաթարների հետ միասին, հետապնդում էին մէկ ընդհանուր նպատակ։

Այսպիսի վտանգի դէմ ապահով լինելու համար, Հայաստանի կառավարութիւնը որոշեց ուժով գրաւել ու գրաւեց Զանգիբասարը, Վեդի-բասարը, ապա Շարուրը մինչեւ Շախթախթի կայարանը։ Այդ կարեւոր գործողութիւնը տեղի ունեցաւ 1920-ի յունիս 18-ից մինչեւ յուլիս 25ը։

Երբ բոլշեւիկներն անյաջողութեան հանդիպեցին ներքին ապստամբութեան միջոցով գրաւելու Հայաստանի իշխանութիւնը, դիմեցին ակտիւ զինուորական գործողութեան՝ ուղղելով իրենց ուժերը Ղազախի կողմից Դիլիջանի եւ Եւլախի կողմից Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայ։

Այս վերջին շրջանները, որպէս վիճելի Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ, չէին մտնում Հայաստանի պետութեան մէջ, եւ հարցը թէ որի՞ն պէտք է վերջնականօրէն պատկանէին այդ շրջանները, պէտք է որոշուէր երկու պետութիւնների սահմանների ճշտման միջոցին։ Բայց Ղարաբաղի ու Զանգեզուրի ամբողջ բնակչութիւնը, բաղկացած լինելով Հայերից, կը բաղձար միանալ Հայաստանին եւ, իր նպատակին հասնելու համար, կազմակերպած էր իր սեփական զինուորական ուժը։

Ղազախի կողմից Դիլիջանի վրայ եղած յարձակումը յետ է մղւում, բայց սահմանային ընդհարումները եւ փոքր խմբերի գործողութիւնները շարունակւում են անդադար։

Այս յարձակումներին մասնակցում էին գլխաւորապէս Սովետական Ռուսաստանի զօրքերը, որոնց օգնում էին տեղական թաթարները։

Զանգեզուրի վրայ յարձակուելու համար, բոլշեւիկները, Շուշին եւ Ղարաբաղը գրաւելուց յետոյ, յուլիսի սկիզբները շարժուեցին դէպի առաջ։ Զանգեզուրի թոյլ զինուորական մեր ուժերը ի վիճակի չեղան կանգնեցնելու բոլշեւիկների առաջխաղացումը, որովհետեւ վերը յիշուած պատճառով ժողովուրդի մէկ կարեւոր մասը իրեն «չէզոք» էր պահում եւ չէր ցոյց տալիս դիմադրութիւն:

Ցուլփայի մէջ բոլշեւիկները գրաւեցին Ջանգեզուրը, բայց Դարալագեազի մէջ գտնուող մեր զօրամասերի կողմից յետ քշուեցին ժամանակաւորապէս: Սակայն, օգոստոս 7-ի մօտերը, օգտուելով իրենց գերակշիռ ուժերից՝ նրանք նորից գրաւեցին Ջանգեզուրը, բացառութեամբ նրա հարաւային մասի՝ Ղափանի, որտեղ տեղական ժողովուրդը, ունենալով աւելի լաւ ղեկավարներ, չթողեց, որ ներս մտնեն բոլշեւիկները:

Ջանգեզուրը գրաւելուց յետոյ, բոլշեւիկները անցան Նախիջեւան, որտեղից նրանց մօտ էր եկել յատուկ պատգամաւորութիւն. Թաթարները ուղարկել էին պատգամաւորներ Շարուրը գրաւող մեր զօրքերի հրամանատարի մօտ:

Հակառակ այն բանին, որ Հայաստանի կողմից առաջարկուել էր Նախիջեւանցիներին լրիւ ինքնավարութիւն, նրանք գերադասեցին բոլշեւիկների իշխանութիւնը, որովհետեւ բոլշեւիկների ծրագիրը համանման էր Թուրքերի ցանկութեան, այն է՝ միանալ Ատրբէյջանի եւ Տաճկաստանի հետ:

Նոյն միջոցին Կարսի նահանգի Օլթիի գաւառի մէջ մեր զօրքերը ընդհարումներ ունեցան տաճկական կանոնաւոր զօրքերի հետ, իսկ Դիլիջանի շրջանում շարունակւում էր կռիւը բոլշեւիկների դէմ:

Այդպիսի պայմանների մէջ, հնարաւորութիւն չկար կեդրոնացնելու բաւական քանակութեամբ զինուորական ուժ. բոլշեւիկներին հեռացնելու համար Ջանգեզուրից ու Նախիջեւանից, որտեղ նրանք գրաւել էին իրենց կողմը ամբողջ մահմեդական բնակչութիւնը եւ կապ էին հաստատել տաճիկների հետ: Ուստի Հայաստանի կառավարութիւնը որոշեց բանակցութեան մէջ մտնել Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի հետ՝ պատերազմական գործողութիւններին վերջ տալու համար:

Համաձայնութիւնը ստորագրուեց օգոստոս 10-ին: Բայց փաստօրէն զինուորական գործողութիւնները պզտիկ խմբերով շարունակուեցին թէ՛ Դիլիջանի շրջանի մէջ եւ թէ՛ Ջանգեզուրի ու Նախիջեւանի շրջանների սահմանների վրայ:

Հայկական սպայակոյտի հաստատ աղբիւրներից ստացած տեղեկութեանց համաձայն, այդ միջոցին Նախիջեւանի մէջ բոլշեւիկներն ունէին 28-րդ հեծելազօրքի երկու գունդ, եւ մէկ բատարէա (հրետանի), իսկ Ջանգեզուրից սպասում էին մէկ հետեւակ գունդ եւս: Բացի դրանից, կային տաճկական մարզիչների ղեկավարութեամբ տեղական մահմեդական ժողովրդից կազմուած զօրամասերը:

Մակուի խանութեան մէջ, Շախթախթիի կայարանից եւ Նախիջեւանից դէպի արեւմուտք առ այժմ գտնւում էին փոքր զօրամասեր («կարմիր» Տաճկաստանի)... Նախիջեւանի եւ Բայազէտի միջեւ գտնուող ամբողջ շրջանը Խալիլ փաշայի հրամանի տակ էր, իսկ ինքը՝ Խալիլ փաշան իր սպայակոյտի հետ գտնւում էր Նախիջեւանի մէջ:

Օգոստոսի 24-ին Մակուի վրայով Անգարա անցան Մուստաֆա Քեմալ փաշայի մօտ նշանակուած սովետական պատուիրակութեան լիազօր քարտուղար «ընկ.» Ու. Անդրոնիկին եւ զինուորական կցորդ Բադերովը, իսկ շուտով նրանց միացաւ նաեւ գլխաւոր ներկայացուցիչը՝ Էլիաւան:

Այդ ժամանակ Նախիջեւանի եւ Պարսկաստանի (Մակու) մէջ լուրեր էին տարածուած, որ ամենաշուտը մէկ ամսուայ ընթացքում բոլշեւիկները պիտի գրաւէին Շախթախթին, Երեւանը եւ Թիֆլիսը:

* * *

Այժմ անցնեմ Ղարաբաղի դէպքերին:

Տաճիկ-թաթարների ակտիւ գործողութիւնները Բէյուկ-Վեդիի, Իգդիրի, Զանգիբասարի եւ այլ շրջանների մէջ հետապնդում էին մի ընդհանուր նպատակ, որի հետ կապ ունէին եւ վերջին դէպքերը Ղարաբաղի մէջ:

Երբ Ատրբէյջանը վերջացրեց իր կանոնաւոր եւ անկանոն ուժերի կեդրոնացումը Ղարաբաղի ու Զանգեզուրի մէջ, վերջնագիր ներկայացրեց Ղարաբաղի հայ բնակչութեան, որպէսզի հպատակուեն եւ զինաթափ լինեն: Հա–

յերը մերժեցին այդ վերջնագիրը՝ նկատի ունենալով, որ դրանով միանգամայն խախտւում էր 1919-ի օգոստոս 22-ի համաձայնութիւնը Ղարաբաղի եւ Ատրբէյջանի միջեւ, (որի հիման վրայ Ատրբէյջանը պարտաւորւել էր չկատարել զօրքերի փոխադրութիւն այդ շրջանի մէջ եւ զինաթափ չանել հայ ժողովուրդը), նոյնպէս նկատի ունենալով, որ վերջնագիրը նախանշանն էր նախօրօք որոշւած կոտորածի:

Մարտի 20-ի մօտերը Ատրբէյջանը ձեռնարկում է հայերի զինաթափման բանի ուժով: Եւ Ղարաբաղի ու Զանգեզուրի հայութիւնը ստիպւած է լինում դիմելու ինքնապաշտպանութեան:

Առաջին տեղեկութիւնը խռովքի մասին ստացւեց Գորիսից հեռագրով, որ ասում էր.

«Ատրբէյջանը, իր վերջնագրի համաձայն, անցաւ Ղարաբաղի զինաթափութեան ու սկսեց ընդհանուր յարձակողական Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայ: Ղարաբաղի ամբողջ հայութիւնը ապստամբւեց»:

Ղարաբաղի դէպքերի մասին Ղարաբաղի Հայրենակցական միութեան նախագահները Լէօ-ն եւ Բալայեանը, հեռագրում էին Թիֆլիսից միաժամանակ —

«Մօտաւորապէս Մարտի 20-ից գեներալ (զօրավար) Նովրուզովի բազմաթիւ զօրքերը ու Խալիլ փաշայի եւ Սուլթանովի բազմաթիւ բանդաները (հրոսախմբերը) ուժեղ հրետանիով ու գնդացիրներով զինաթափ անելու նպատակով յարձակւել են առաջին գծի վրայ գտնւող հայկական գիւղերի վրայ ամբողջ ճակատով եւ ուժեղ հրետանիի կրակով հողի հետ են հաւասարեցնում՝ միաժամանակ կրակի տալով հայ գիւղերը: Ժողովուրդը կոտորել են եւ կայքերը թալանել: Ժողովրդի մէկ մասը ապաստանելով՝ անցել է լեռները, բայց զոհ է դնում անօթութեան եւ ցրտին: Մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, կոտորածը հրահրւել է Գիւլիստանից մինչեւ Զանգեզուր: Անդէն ժողովուրդը խուճապի մէջ է: Ղարաբաղը նահատակւում է: Նրան սպառնում է Աղուլիսի բախտը... Ատրբէյջանի մամուլի տեղեկութիւնները հայերի յարձակումների մասին միանգամայն սուտ են եւ նպատակ ունեն շահելու հասարակական կարծիքը, նաեւ շփոթութիւն մտցնելու Դաշնակիցների շրջանակների մէջ: Ընդհակառակը, ճիշտ յայտնի է, որ յարձակումը ամէն տեղ հայերին յանկարծակիի է բերել: Այստեղ ապրող բազմահազար Ղարաբաղցիների կողմից, որոնց ընտանիքները կոտորւում են, խնդրում ենք, որ Հայաստանի Խորհրդարանն եւ կառավարութիւնը հնարաւոր կտրուկ եւ արագ միջոցներ ձեռք առնեն՝ փրկելու համար Ղարաբաղի ժողովուրդը»:

Նոյն դէպքերի առթիւ Ատրբէյջանի արտաքին գործոց նախարարը հեռագրում էր հետեւեալը.

«Մարտ 22-ին, գիշերւայ ժ. երեքի մօտ, Նովրուզ Բայրամի առաջին օրը տօնելուց յետոյ, Ղարաբաղի շրջանի մէջ հայերի զինւած ուժերը ուժեղացւած Հայաստանի կանոնաւոր զօրքերով եւ հրետանիով, օգտւելով մթից (Ղարաբաղի շրջանում տեղաւորւած էին միայն աննշան թւով ատրբէյջանեան զօրքեր՝ ներքին կարգը պահպանելու համար) նախօրօք գծւած ծրագրով յանկարծ յարձակումներ գործեցին միաժամանակ Ատրբէյջանի զօրամասերի վրայ, որոնք դասաւորւած էին Շուշիի, Խանքենդի, Ասկերանի, Խոջալուի, Տէրտէրի եւ ուրիշ կէտերի վրայ, նախօրօք կտրած լինելով հեռագրական եւ հեռախօսի հաղորդակցութիւնը: Ասկերանը, որ պաշտպանւում էր միայն 50 ասկերներով, թէեւ ուժեղ կերպով դիմադրեց, բայց գրաււեց հայերի կողմից Մարտ 22-ին, իսկ մեր ասկերները ենթարկւեցին սպառ ոչնչացման: Մնացած բոլոր կէտերի վրայ այս յանդուգն յարձակումները յետ մղւեցին մեր զօրքերի կողմից՝ մեծ կորուստ պատճառելով հայերին: Շուշիի եւ Ասկերանի դրսի անցքերը հայերի կողմից ենթարկւեցին ուժեղ հրետանիի կրակի: Հետեւեալ օրը նկատւեցին յարձակումները մեծաքանակ հայկական զինւորական ուժերի կողմից մահմեդական գիւղերի վրայ Ջիբրայէլի եւ Զանգեզուրի գաւառների մէջ, որոնց մէկ քանի գիւղերը հողին էին հաւասարեցրել: Տեղեկութիւններ են ստացւած, որ ապստամբ

Հայերին օգնելու համար՝ Երեւանեան նահանգի Նոր-Բայազէթ գաւառից շարժւում են օգնական ուժեր, որոնք Տօֆլուջա գիւղն են հասել (Ղազախի գաւառի մօտերը): Ղարաբաղի մահմեդականները, յանկարծակիի գալով, սպառնացող ոչնչացումից խուսափելու համար, առանձին խմբերով սկսեցին պաշտպանուել եւ առաջին օրն իսկ կարողացան յետ մղել դաւադրական Հայկական յարձակումները, իսկ միւս կէտերի վրայ շարունակեցին իրենց հոգեվարքի ինքնապաշտպանութիւնը: Ատրբէյջանի կառավարութիւնը շտապ միջոցներ ձեռք առաւ կարգը վերականգնեցնելու համար Ղարաբաղում, ինչպէս եւ միջոցներ ձեռք առաւ կարելի նոր նման յարձակումների դէմ:»

Ղարաբաղի մէջ տեղի ունեցող այս արիւնալի դէպքերի մասին Հայաստանի կառավարութիւնը մարտ 28-ին Դաշնակից պետութիւնների բոլոր ներկայացուցիչներին ուղարկեց հետեւեալ հեռագիրը.—

«Հայաստանի Հանրապետութեան կազմըւելու առաջին րոպէից, Ատրբէյջանի կառավարութիւնը Թուրքիայ հետ համախորհուրդ ամէն հնարաւոր միջոցներով ձգտեց գրաւել Հայաստանին պատկանող Ղարաբաղի եւ Զանգեզուրի հողամասերը: Ղարաբաղի հայ ժողովուրդը, անցեալ տարի օգոստոս 22-ին, գործնականապէս կտրուած լինելով իր մայրենի կեդրոնից՝ Հայաստանից, ստիպուած եղաւ համաձայնութեան գալ Ատրբէյջանի կառավարութեան հետ եւ ժամանակաւորապէս ճանաչել վերջինի իշխանութիւնը, պայմանով որ, Ատրբէյջանը ոեւէ զինուորական փոխադրութիւններ չկատարէ Հայկական Ղարաբաղի շրջանների մէջ եւ զինաթափ չանի այնտեղի բնակչութիւնը: Բայց Ատրբէյջանը, շատ անգամներ չյարգելով իր վրայ վերցրած պարտաւորութիւնը, այնտեղ կեդրոնացրեց կանոնաւոր եւ անկանոն մեծ ուժեր եւ վերջերս էլ վերջնագրով պահանջել է Ղարաբաղի հայ բնակչութեան զինաթափումը: Ժողովուրդը յետ է մղած այդ վերջնագիրը՝ նկատի ունենալով, որ նա խախտում է օգոստոս 22-ի համաձայնութիւնը եւ նկատելով, որ նա հայկական ընդհանուր կոտորածով է սպառնում: Ատրբէյջանի կառավարութիւնը, ստանալով մերժումը, մարտ 20-ին դիմում է ուժի՝ զինաթափ անելու համար Ղարաբաղի հայութիւնը եւ շարժում է իր զօրքերը մի քանի ուղղութիւններով՝ Հայկական Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրայ: Կատաղի կռիւները շարունակւում են: Հայաստանի կառավարութիւնը, կտրուկ կերպով բողոքելով Ատրբէյջանի կողմից օգոստոս 22-ի համաձայնութեան կոպիտ խախտման դէմ, ձգում է այս դէպքերի հետապայ ծաւալման պատասխանատուութիւնը Ատրբէյջանի վրայ եւ խնդրում ձեզ չմերժել Ատրբէյջանի այս գործողութեանց մասին (որոնք յառաջ են բերել նոր դաժան արիւնհեղութիւն) շտապ կերպով տեղեկացնել ձեր կառավարութեան եւ ամէն միջոց ձեռք առնել՝ բաւարարելու հայ ժողովուրդի օրինական պահանջները, ինչպէս եւ միջոցներ ձեռք առնել Ատրբէյջանի հետապայ ճնշումների դէմ:»

Ապրիլ 30-ին նոյն Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներին Հայաստանի կառավարութեան կողմից ուղարկուեց հետեւեալ հեռագիրը.—

«Ի լրացում 1920 մարտ 28-ի իմ հեռագրի Ատրբէյջանի կողմից սկսուած ընդհանուր յարձակման մասին Ղարաբաղի ու Զանգեզուրի դէմ, պատիւ ունեմ հաղորդելու ձեզ հետեւեալ նոր տեղեկութիւնները.— Ատրբէյջանեան զօրքերը եւ մահմեդականների զինուած հրոսախումբերը, ամբողջ ճակատով յառաջացած Զանգեզուրի եւ Ղարաբաղի վրայ, քարուքանդ են անում գիւղերը, կոտորում են խաղաղ հայ բնակչութիւնը: Շուշիի մէջ կոտորուել է ամբողջ հայութիւնը: Նախօրօք պատրաստուած այս յառաջխաղացման մասին հայկական կառավարութիւնը յայտնել է Ձերդ Գերազանցութեան շատ անգամներ: Ատրբէյջանի նպատակն է զէնքի ուժով միանգամայն իրեն ենթարկել Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայութիւնը, հակառակ ժողովրդի բաղձանքին, հակառակ խաղաղարար քոնֆերանսի ցուցմունքներին եւ հակառակ Լորդ Կըրզընի վերջին հեռագրին: Օգտուելով Հայկական կառավարութեան խաղաղասիրութիւնից եւ որոշումից՝ չընդդիմանալ Դաշնակիցների որոշումներին, Ատրբէյջանի կառավարութիւնը, Թիֆլիսի մէջ ապրիլ 1-ին կայանալիք երեք Անդրկովկասեան Հանրապետութիւնների խորհրդաժողովի նախօրեակին, գործադրութեան է դնում տաճիկների կողմից թելադրուած նպատակը, այն է՝ ոչնչացնել Ղարաբաղի եւ Զանգեզուրի 300,000 հայ բնակիչները եւ Նախիջեւանի վրայով կապուել Թուրքիայի հետ՝ այդ կերպով Թշնամի տաճկա-թաթարական շղթայով շրջապատելով Հայաստանը: Կիլիկիոյ դարհուրելի ջարդից յետոյ, այժմ նոյն վտանգն է սպառնում հայ բնակչութեան ոչ միայն Զանգեզուրի եւ Ղարաբաղի, այլ եւ Բաքուի, Գանձակի եւ Ատրբէյջանեան Հանրապետութեան ուրիշ մասերի մէջ: Հայաստանի կառավարութիւնը չի կարող անտարբեր վերաբերուել հայերի այդ սիստեմատիկ ջարդերին, բուռն կերպով բողոքում է Ատրբէյջանի յարձակողական քայլերի դէմ եւ խնդրում է Ձեզ՝ յանուն Խաղաղարար Յանձնաժողովի յայտարարած սկզբունքների եւ արդարութեան՝ ձեռք առնել ամենակտրուկ եւ չափ միջոցներ՝ կանգնեցնել տալու համար Ատրբէյջանի կողմից սկսուած յառաջխաղացումը ու արգիլելու համար Ատրբէյջանի փորձերը զինու ուժով լուծելու Ղարաբաղի հարցը, եւ այդ բոլորի մասին խնդրում է զեկուցել ի գիտութիւն ձեր կառավարութեան: Ձեր Գերազանցութեան կողմից ձեռք առած միջոցների մասին մի՛ մերժէք անհապաղաբար տեղեակ պահել Հայկական կառավարութիւնը՝ հանգըստացնելու համար Հայաստանի հասարակական կարծիքը:»

Միեւնոյն օրը Բաքու, արտաքին գործոց նախարարին ուղարկուեց հետեւեալ հեռագիրը:

«Ի պատասխան ձեր մարտ 28-ի թիւ 2028 հեռագրին, պատիւ ունեմ հաղորդելու ձեզ, որ ձեր փաստարկութիւնը թէ՝ Ղարաբաղի մէջ կան կանոնաւոր հայկ. զօրքեր բացարձակապէս չի համապատասխանում իրականութեան: Ոչ մէկ տեսակի հետեւակ կամ թնդանօթաձիգ հայկական կանոնաւոր բանակի զօրամաս չկայ Ղարաբաղի մէջ: Նոյնպէս Նոր-Բայազէտի կամ ուրիշ շրջաններից Հայաստանի կառավարութեան կողմից ոչ մէկ տեսակ օգնութիւն չէ ուղարկուած Ղարաբաղ եւ ոչ մէկ զօրամասի փոխադրութիւն կամ ուժեղացում չէ կատարուած: Իրականութիւնը ձեր զեկուցած տեղեկութիւններին կատարելապէս հակառակն է: Ղարաբաղի հայ բնակչութիւնը չէ յարձակուել Ատրբէյջանի զօրքերի վրայ: Հայաստանի կառավարութիւնը այդ մասին իր տրամադրութեան տակ ունի ճիշտ տուեալներ, որոնց համաձայն Ատրբէյջանի կառավարութիւնն է խախտել նախօրդ տարուայ օգոստ. 22-ին կայացուած իր համաձայնութիւնը Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի հետ՝ կենտրոնացնելով իր կանոնաւոր եւ անկանոն ուժերը ու վերջնագիր ներկայացնելով Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան զինաթափ լինելու մասին: Ստանալով իրաւական մերժումը՝ մարտ 20ին Ատրբէյջանն է որ ձեռնարկել է բռնի ուժով հայերի զինաթափման՝ սկսելով միաժամանակ շատ ուղղութիւններով յառաջ խաղալ Հայկական Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայ: Համաձայն մեր ստացած վերջին լուրերին, Ատրբէյջանի կանոնաւոր եւ անկանոն ուժերը ամբողջ ճակատի վրայ քարուքանդ են անում հայկական գիւղերը եւ կոտորում հայ խաղաղ բնակչութիւնը, ինչպէս որ այդ տեղի է ունեցել Շուշիի մէջ: Ղարաբաղի մէջ տեղի ունեցող դէպքերի պատճառով, երկրի հասարակական կարծիքը գայրացած պահանջում է կառավարութիւնից ձեռք առնել անհապաղական եւ կտրուկ միջոցներ: Իմ կառավարութիւնը, յայտնելով կտրուկ բողոք Ատրբէյջանի կառավարութեան՝ օգոստոս 22-ի համաձայնութիւնը խախտելու եւ յարձակողական գործողութիւնների դիմելու դէմ յոյս է յայտնում, որ նա (Ատրբէյջանի կառավարութիւնը) Խաղաղարար Յանձնաժողովի գումարման նախօրեակին, պիտի չուզէ աւելի եւս բարդացնել կացութիւնը, պիտի հրաժարուի Ղարաբաղի հարցը բռնի ուժով լուծելու փորձից եւ պիտի դադարեցնէ անմիջապէս Ղարաբաղի վրայ յարձակումը:»

Վրացական Արտաքին գործոց նախարարին միաժամանակ ուղարկուեց հետեւեալ հեռագիրը.

«Մօտ օրերս ընդհանուր համաձայնութեամբ երեք Անդրկովկասեան Հանրապետութիւնների միջեւ Թիֆլիսի մէջ պիտի գումարուէր համաժողով, որի նպատակն է խաղաղ կերպով լուծել բոլոր վիճելի հարցերը. նոյն հարցերի թւում նե՛ւ հողային հարցերը: Հակառակ դրան, Ատրբէյջանի կառավարութիւնը, խախտելով անցեալ տարուայ օգոստոս 22-ի համաձայնութիւնը Ղարաբաղի Ազգային Խորհրդի հետ, որոշել է զէնքի ուժով գրաւել Հայկական Ղարաբաղն ու Զանգեզուրը: Այս ամսոյ 20-ին Ատրբէյջանի կառավարութիւնը, կեդրոնացնելով կանոնաւոր զօրքերն ու զինուած ամբոխը, վերջնագրով պահանջել է Ղարաբաղի հայ բնակչութիւնից զինաթափ լինել: Ժողովուրդը մերժած է այդ հակաօրինական պահանջը՝ գտնելով, որ այդ վերջնագրով Ատրբէյջանի կառավարութիւնը խախտում է օգոստոս 22-ի համաձայնութիւնը եւ սպառնում է առաջ բերել ընդհանուր կոտորած: Մերժումի հանդիպելուն՝ Ատրբէյջանը անցել է յարձակման՝ հայերը զինաթափ անելու համար Ղարաբաղում եւ Զանգեզուրում: Ստացուած վերջին լուրերի համաձայն, Ատրբէյջանեան կանոնաւոր զօրքերը եւ զինուած Թուրք ամբոխը, յառաջանալով ամբողջ ճակատի վրայ, ոչնչացնում են հայ գիւղերը եւ կոտորում խաղաղ հայ բնակչութիւնը: Շուշի քաղաքի մէջ ամբողջ ժողովուրդը կոտորուել է: Այս յարձակման նպատակն է, նախօրօք մտածուած, բոլորովին հպատակեցնել Ատրբէյջանին Հայկական Ղարաբաղն ու Զանգեզուրը, հակառակ ժողովրդի ցանկութեան, հակառակ խաղաղարար քոնֆերանսի ցուցմունքներին եւ հակառակ Լորդ Կըրզընի վերջին հեռագրին: Օգտուելով հայկական կառավարութեան հաշտարար տրամադրութիւններից եւ ձգտումից՝ խաղաղ կերպով լուծելու Անդրկովկասեան երեք Հանրապետութիւնների միջեւ եղած բոլոր վէճերը, Ատրբէյջանի կառավարութիւնը նորից հրդեհ է առաջ բերում Անդրկովկասի մէջ, ինչ որ կարող է ճակատագրական հետեւանքներ ունենալ իրեն համար: Իմ կառավարութեան անունից, յանուն ամբողջ Անդրկովկասին սպառնացող դժբախտութեան առաջքը առնելուն, խնդրում եմ ձեզ ցոյց տալ հնարաւոր աջակցութիւն, որպէսզի Ատրբէյջանի կառավարութիւնը անմիջապէս դադարեցնէ հետագայ յառաջխաղացումը Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրայ եւ հրաժարուի Ղարաբաղի հարցը զէնքի ուժով լուծելէ:»

Անգլիոյ բարձրագոյն կոմիսար Ուօրդրոպից մարտ 30-ին Ղարաբաղի դէպքերի կապակցութեամբ ստացւում է հետեւեալ հեռագիրը.

«Լորդ Կըրզընը հրահանգեց ինձ ամենապարզ խօսքերով յայտնել եւ լուրջ կերպով նախազգուշացնել Անդրկովկասեան Հանրապետութիւններին, որ ամէն մէկ փորձ Դաշնակիցների համաժողովի վրայ ազդելու կամ դնելու համաժողովը կատարուած իրողութեան առջեւ, ամենակտրուկ կերպով պիտի մերժուի եւ պիտի պակասեցնի Բրիտանիայի համակրանքի այն ապացոյցները, որոնք նախօրօք արդէն տրուած են: Նոյն բովանդակութեամբ հեռագիրներ ուղարկուած են Ատրբէյջանին եւ Վրաստանին:»

* * *

Ղարաբաղի ու Զանգեզուրի այս դէպքերը գալիս էին լրացնելու հայկական ապայակոյտի՝ ուրիշ աղբիւրներից ստացած տեղեկութիւններով միասին, որ Հայկական Հանրապետութիւնն ապրում էր իր վերջին ճգնաժամի շրջանը:

Երբ ես Պոլսից մեկնեցի Երեւան 1919 թ. վերջերը, Պոլսոյ մէջ կազմեցի մի մարմին Ժ. Ա.-ի գլխաւորութեամբ, որը անձնուիրաբար շարունակում էր հաղորդել ինձ կարեւոր տեղեկութիւններ, որոնք ստացւում էին Պոլսոյ Պատերազմական եւ այլ նախարարութիւններից:

Միւսնում Ղազարոսեան Հայկ եւ Թորգոմ եղբայրներ կազմել էին իտալական ընկերութիւն՝ նպատակ ունենալով Երեւանի մէջ հաստատել անթելի մի մեծ կայան:

Այդ միջոցներին էր որ Երեւան եկել էր պ-նդ. Մորելի կամ Կօլիի (ճիշտ չեմ յիշում անունը), որպէս իտալական ներկայացուցիչ, որ ունէր իր փոքր ձեռքի ռադիօ գործիքը: Այդ գործիքով նա Իտալիայից եւ Պոլսից տեղեկութիւններ էր ստանում եւ հաղորդում էր մեզ, ինչ որ շահագրգռում էր մեզ: Այսպէս, նրա միջոցաւ իմացանք ռուսական զօրքերի դառա-

ւորումը եւ յարձակման օրը Իզմիրի ճակատի վրայ։

Այդ միջոցին էր, որ Կարաբեկիր Քեազիմ փաշա Էրզրումից ծածկագիր հեռագրով յայտնում էր Պոլսոյ Պատերազմական Նախարարին Ռուս–Տաճկական համաձայնութեան մասին Հայաստանի վրայ յարձակւելու համար եւ տալիս էր բոլոր մանրամասնութիւնները, թէ ինչպէս Ատրպէյջանը, սովետական դառնալէ յետոյ, վերջնագիր պիտի ներկայացնի Հայաստանին եւ թէ ինչպէս սովետական զօրքերը հիւսիսից, իսկ տաճիկները հարաւից պիտի արշաւեն Հայաստանի վրայ։

Կարաբեկիրի հեռագիրն ասում էր նաեւ, թէ ի՞նչ թիւ դիւիզիաներով, ի՞նչ թիւ գնդերով եւ ի՞նչ ուղղութեամբ պիտի արշաւեն տաճկական զօրամասերը Հայաստանի վրայ

Այդ ծածկագիր հեռագրի ամբողջ պատճէնը Ժ. Ա.-ն Պոլսից յունական «Աւերոֆ» զրահաւորի սպայի կողմի միջոցով եւ «Աւերոֆ»ի ծածկագրով, յաջողել էր հեռագրել Երեւան գնդ. Խօլթիսին։ Այդ հեռագրի բովանդակութիւնը տպւեց ապրիլ ամսուայ հետախուզական բաժանմունքի թիւ 14 հրահանգի մէջ, որը տրւեց թէ՛ նախարարներին եւ թէ՛ զինւորական հրամանատարութեան (1920 թ)։

Ղազարոսեան եղբայրները կը շարունակէին Պոլսոյ մէջ բաժնեթէրեր հաւաքել իրենց ընկերութեան համար, բայց Հայաստանի անկումը վիժեցրեց այդ ձեռնարկը։

Դժբախտաբար, ձեռքիս տակ ունեմ միայն Հայաստանի Հանրապետութեան Հետախուզական բաժանմունքի Հայաստանի գրաւման նախօրեակին տուած երկու գաղտնի հետախուզական ամփոփումները (թիւ 15, տպուած 1920 թ. ապրիլ 23-ին, եւ թիւ 17, տպուած 1920 թ. մայիս 23-ին) եւ զեկուցումը Թուրքերի արշաւանքի մասին Հայաստանի վրայ։

(Շարունակելի)

Ա. ՊԱՐՏԻԶԵԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ա. Պարտիզեանը «Հ.» Ամսագրի այս տարուան Մայիս–Յունիս համարում թարգմանաբար զետեղել է «Բրիտանական Պաշտօնական Տեղեկագիրներ» *Վանի 1896–ի դէպքերի առթիւ, գրուած Պոլսի բրիտանական դեսպանութեան՝ Վանի եւ Թուրքիոյ բրիտանական հիւպատոսների — Մէյջըր Ուիլեըմսի եւ Սըսիլ Վուդի — կողմից։*

Անտես առնելով երկու հիւպատոսների տեղեկագրութեան սխալ կողմերը խմբերի կոտորածի մասին՝ ես ուզում եմ երկու խօսք ասել Ա. Պարտիզեանի ընդգծած ծանօթութեան սխալ տեղեկութեան մասին, որ վերագրւում է իմ հանգուցեալ եղբօր՝ Ասքանազ Զթչեանի «Ահաւոր խոստովանութեան»*։*

Նախ ասեմ, որ մենք 4 եղբայրներով (ես էլ մէջը) դէպի Պարսկաստան մեկնող Աւետիսեանի խմբի հետ էինք Զուխի (Գիւզէլ Դէրէ–յի) կռւի օրը։ Երեկոյեան գիշերային մթում ես կանգնել էի եղբօրս կողքին եւ խօսում էի նրա հետ, ուրեմն չկար «կարօտի» *հարց։*

Երկրորդ՝ մենք վերադարձանք դէպի Վան 24 ժամ Զուխ լեռան բարձունքներում պահւելուց յետոյ։

52 հոգի էինք։ Խմբապետն էր եղբայրս՝ Ասքանազը։ Ունէինք 7 հրացան եւ ընդամէնը 3–400 փամփուշտ։

Եղբայրս վերադարձից յետոյ, յաճախ ընկերների ներկայութեան, ցաւ է յայտնել, որ 52–ի փոխարէն՝ 100 հոգի իր հետ չվերցրեց Վան վերադարձին։

Երրորդ՝ Սըսիլ Վուդի նման Ա. Պարտիզեանն էլ կարծում է, որ 800 հոգի լեռների զառիթափներով մագլցելով կարող էին Պարսկաստան անց կենալ, առանց սովորական ճանապարհից անցնելու։

Եղբայրս այնքան թեթեւամիտ եւ այնքան անապարծ չէ եղել, որ յայտնէր Պարտիզեանին, որ իր 7 հրացանով, Աւետիսեանի յետեւից գնալով, խումբը կարող էր փրկել թրքօքրդական միացեալ ուժերից։

«Ահաւոր խոստովանութիւնը (քերթւա–

ռաջին եւ վերջին անգամ կատարուած (Ա. Պ.)» Ա. Պարտիզեանի մասին ասուել է «անհաւատարմութիւն», որ վերագրւում է մի մահացած անհատի հասցէին, որ զուրկ է իրականութիւնից, որ դիտումնաւոր է երեւում։

1896-ի Վանի դէպքերի պատմութիւնը ես յոյս ունեմ հրատարակելու «Հայրենիք» ամսաթերթում շուտով իր մանրամասնութիւններով, ուր եւ կը տամ եղբօրս եւ մեր վերապրած պատմութիւնը։

ՍԱՀԱԿ ՁԹՋԵԱՆ

Ա. ՊԱՐՏԻԶԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ Ս. ՁԹՋԵԱՆԻՆ

Եթէ Ս. Ձթչեան ընտրէր աւելի դիւրին կերպը եւ յայտարարէր թէ՝ իր եղբայրը չէ ըրած ինծ այն խոստովանութիւնը, զոր ես յարմար նկատած էի հրապարակելու Վանի 1896-ի դէպքերուն վերաբերեալ «Բրիտանական Պաշտօնական Տեղեկագիրներ»ը թարգմանելու առիթով, ես պիտի չկրնայի գտնել երրորդ անձ մը, որ հաստատէր իմ յայտնութիւնը, որովհետեւ, այդ խոստովանութեան ժամանակ, Ասքանազն ու ես մինակ էինք։ Բայց, Ս. Ձթչեան դիմած է երկար միջոցի մը, եւ հերքելու համար իմ վկայութիւնը, հարկադրաբար հաստատած է իր եղբօր ինծ ըրած խոստովանութիւնը։

Ան կը հաստատէ, որ իր եղբայրը խմբապետն *էր Աւետիսեանի գլխաւորութեամբ դէպի Պարսկաստան մեկնող խմբերուն։ Ան կը հաստատէ նաեւ այն, որ Ասքանազ Ձթչեան փոխանակ հետեւելու Աւետիսեանի խմբին,* «24 ժամ Ձուլս լեռան բարձունքներում պահւելուց յետոյ» *վերադարձած է Վան»։*

Այս երկու կարեւոր կէտերուն մէջ, ուրեմն, հանգուցեալ Ասքանազ եւ իր եղբայրը Սահակ համաձայն են։ Բացատրութեան մէջ, սակայն, անոնք կը տարբերին։

Ո՞րքան հիմնական է այդ տարբերութիւնը, եւ ո՞րն է աւելի ճիշդն ու հաւանականը։ Տուած ենք Ասքանազ Ձթչեանի բացատրութիւնը թէ՝ ինք առած էր իր խումբն ու վերադարձած էր Վան, որովհետեւ, իր փոքր եղբայրը, Սահակ, այնտեղ կը գտնուէր եւ անոր կարօտէն մղուած առած էր այդ քայլը։ Սահակ Ձթչեան լուռ կը մնայ եւ բացատրութիւն չի տար վերադարձին մասին, միայն կ՚ուզէ հերքել «կարօտ»*ի պարագան, ըսելով թէ ինք իր եղբօր հետն էր, հետեւաբար* «կարօտ»*ի խնդիր չէր կրնար ըլլալ։ Քիչ յետոյ կը խօսինք այդ* ամէնէն զօրաւոր *կէտին մասին, բայց կան մէկ երկու կէտեր, որոնք լոյս կը սփռեն դէպքին վրայ։*

Իր երկրորդ պատճառաբանութեան մէջ Ս. Ձթչեան կ՚ըսէ —

«Եղբայրս վերադարձից յետոյ, յաճախ ընկերների ներկայութեան, ցաւ է յայտնել, որ 52-ի փոխարէն՝ 100 հոգի իր հետը չվերցրեց Վան վերադարձին»։

Հասկնալի ցաւ, որ կրնայ տարածուիլ Աւետիսեանի ամբողջ խմբին վրայ— 800 *երիտասարդներուն համար։ Բայց ո՞րո՞նք էին այն միւս* 48 *երիտասարդները, զորս Ասքանազ վերցուցած չէր, կամ չէր կրցած վերցնել իր հետ։ Իր խմբի անդամնե՞րն էին։ Արդեօ՞ք անոնք չէին այն երիտասարդները, որ չանսացին Ասքանազին, չվերադարձան Վան, այլ մնացին իրենց դիրքերուն վրայ եւ ինկան փառաւոր մահով։*

Իր երրորդ նկատողութեան մէջ Ս. Ձթչեան Սրբիլ Ռուսաի եւ ինծի կը վերագրէ այն ենթադրութիւնը թէ՝ «800 հոգի լեռների գագաթներով մագլցելով կարող էին Պարսկաստան անց կենալ, առանց սովորական ճանապարհից անցնելու»։

Ս. Ռուստամի գրածէն ինծ հետ շատ ուրիշներ ալ պիտի հասկնան, որ ան դիտել տուած է թէ Աւետիսեան ու իր խումբը անցած են վտանգաւոր ճանապարհով մը, առանց պաշտպանուելու քիւրտերուն դէմ, որ կրնային սարերէն պաշարել զիրենք:

Ես յիշեցի Ասքանազի խոստովանութիւնը միմիայն ցոյց տալու որ Աւետիսեան ու իր անմիջական զինակիցները այնքան միամիտ չէին, որ առանց իրենք զիրենք ապահովելու սարերէն եկող քիւրտերուն դէմ, բռնէին սովորական ճամբան: Եւ այդ պաշտպանութիւնը, ըստ Ասքանազ Զթչեանի՝ յանձնուած էր իրեն:

«Թեթեւամի՞տ» «անտարբե՛ր» թէ խղճահար էր Ասքանազ Զթչեան, թէ բոլորը մէկ: Ես ուզած էի տեսնել խղճահար: Ս. Զթչեան կ'ուզէ ժխտել, այդ իր գործն է: Ընթերցողն է վերջին դատաւորը:

Ս. Զթչեանի բացատրականին մէջ միակ կէտը որ ուժ կը ներկայացնէ, առաջին նկատողութիւնն է, այն որ ինք՝ Սահակ Զթչեան այդ դէպքի ժամանակ Վան չէր գտնուեր, այլ իր եղբօր ընկերացած էր դէպի Պարսկաստան, իր միւս երկու եղբայրներուն հետ, հետեւաբար իր եղբայրը՝ Ասքանազ չէր կրնար իրեն համար ըղձացած կարօտէն վերադառնալ Վան իր խմբով, փոխանակ հետեւելու Աւետիսեանի դէպի Պարսկաստան:

Ասքանազ բան մը չըսաւ ինծ իր միւս երկու եղբայրներու մասին, այլ միայն ՍԱՀԱԿԻ որ Վան կը գտնուէր եւ անոր կարօտէն մղուած իր խումբն առեր Վան վերադարձեր էր:

Եթէ չըլլէր երրորդ անձ մը, որ հաստատէր Ասքանազի խոստովանութիւնը, ես տակաւին պիտի հաւատայի Ասքանազի ինծ ըրածին քան Սահակի գրածին: Բայց, կայ երրորդ վկայ մը, մտերիմ բարեկամը Զթչեաններու, թէ Ասքանազին եւ թէ Սահակին, որ կը հաստատէ ոչ միայն Ասքանազի խոստովանութիւնը Սահակի ուր գտնուելու մասին, այլ եւ կը հերքէ Սահակի գրածը իր եւ իր միւս երկու եղբայրներու մասին: Այդ անձն է Փրէզնոյաբնակ վանեցի Պաղտասար Փէօթիկեանը, որ ահա թէ ինչ գրած է Պաղտիկ Խաչկանց *գրչանունով «Ասպարէզ»ի մէջ— 1946, յունիս 14-ին, Թիւ 2244-ի մէջ (էջ Բ, սիւնակ Գ):*

«... Մոտ 800 հոգի, Մ. Աւետիսեանի առաջնորդութեամբ՝ կը մեկնին Պաշքալէի ուղղութեամբ: Երկու օր վերջ կռուի կը բռնուին Կիւզէլ Տէրէյի կիրճին մէջ՝ տալով մի քանի զոհեր: Հոս Ասքանազ Զթչեան, 60 հոգի, մեծ մասն անզէն պատանիներ հետն առած ետ կը վերադառնայ դէպի Վան, ուր ԿԸ ԳՏՆՈՒԷԻՆ ԻՐ ԵՐԵՔ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ, ՈՐՈՆՑՄԷ ՄԻՆ Ս. ԶԹՉԵԱՆ:»

Ս. Զթչեանի կարծիքով՝ Ասքանազի խոստովանութիւնը իմ «մտքում ստացել է ահաւորութիւն»*: Ո՞վ կրնայ այդ ածականով որակել խոստովանութիւնը մարդու մը, որուն յանձնուած է եղեր 800 երիտասարդներու թիկունքի պաշտպանութիւնը. բայց ան փոխանակ իր դիրքերուն վրայ գտնուելու, եղբօր մը կարօտէն մղուած կը լքէ իր դիրքերը եւ կը վերադառնայ Վան: Լաւ բան է կանգնիլ եղբօր կողքին, անշուշտ, բայց պակա՞ս լաւ բան է կանգնիլ վտանգուած ընկերներու կողքին: Ինչ պիտի ըսէր ինքը՝ Ս. Զթչեան, եթէ իր եղբօր Ասքանազի տեղ մէկ ուրիշը ըրած ըլլար նոյն բանը:* «Կորա Մարշալ»*, պիտի գոռար, կասկած չունիմ: Յիշե՛նք իր յայտարարութիւնները Անդրանիկի մասին:*

Ահա՝ Զթչեան կը գտնէ, որ իր եղբօր խոստովանութիւնը «զուրկ է իրականութիւնից», *եւ* «դիտումնաւոր է հիւսուած»*: Ցոյց տուինք, որ Սահակ Զթչեան ինք հաստատած է ինչ որ իր եղբայրը խոստովանած էր ինծ, գալով* «դիտումնաւոր» *կէտին, այնքան ըսեմ որ* «դիտում» *մը, ինչպէս ինք կ'երեւակայէ, պիտի չսպասէր 26 տարի արտայայտուելու համար, առիթ ըլլէր թէ ոչ, եւ Սահակ Զթչեան շատ լաւ գիտէ որ եթէ իմ մօտ ամէնափոքր նման* «դիտում» *գտնուէր, 1921-ի փետրուարէն ի վեր, եւ նոյնիսկ այն օրերուն երբ «Մուսթաֆա Քէմալն էր գալիս», Սահակ Զթչեան եւ իր եղբայրը ոչ միայն առիթներ, այլ եւ պատճառներ ունէին ոչ միայն նման խոստովանութիւն մը, այլեւ գրութիւններ հրապարակելու:*

Ա. ՊԱՐՏԻԶԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ.— Բողոքագիրն ու դռան շղթան 1
2. ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻ.— Յուլունք 21
3. ԶԱՊԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.— Անդարձ գարուն 25
4. ՎԻԿՏՈՐԻԱ ԿՈՍՏԱՆԵԱՆ.— Քաղցրիկ հայրենիք 26
5. ՄԱՐԻ Պ. ԳԱԼԱՅՃԵԱՆ.— Պուլքըլէի բարտիին 28
6. ԱՂ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.— Նազիկ հարսը 29
7. ՄԱՐԲՐՈՒՀԻ ԱՂԱՄԵԱՆ.— Ձմրան մի անքուն գիշեր 35
8. ԱՐՄԱՆՏ.— ա) Գէր իմ երազում... բ) Տես իմ հոգին 37
9. Ա. ԱՐՓԻՆԷ.— Մեծ քաղաքի մը մէջ 38
10. ՍՕՍ-ՎԱՆԻ.— Արտը 42
11. Գ. ՔԵԱԼԱՇԵԱՆ.— Այս լուռ գիշերին 44
12. ԺԵՆԵԱ ԱՐԻՍՏԱԿԵԱՆ-ՊՈԼԵԱԿԻՆ.— Մարի-Մադլէն 45
13. Գ. ՔԵԱԼԱՇԵԱՆ.— Քո հայեացքը պաղ 57
14. Ս. ՎԷՅԼՈՒՆԻ.— Երգ ներգաղթի 57
15. ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻ.— Բալտին 58
16. Յ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ.— Այգետօնը 58
17. ՄԱՐԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ.— Մահուան ճամբուն վրայ 59
18. Ս. ԹԱՓԱՌԱԿԱՆ.— Կարօտներ եւ թախիծներ գրքից .... .67
19. ՌՈՒԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ.— Հայազգի դիկտատորը (Կոմս Մ. Լորիս-Մելիքեան) 68
20. ՅՈՎՍԷՓ ԹԱԳԷՈՍԵԱՆ.— Թափառումներ անցեալի յուշերի մէջ 83
21. Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ.— Վահան Մինախորեան 89
22. ՏԻԳՐԱՆ ԳԵՒՈՅԵԱՆՑ.— Կեանքիս դրուագներից 99
23. ՍԱՀԱԿ ՋԹՋԵԱՆ.— Ա. Պարտիզեանի նկատողութեան առթիւ 110
24. Ա. ՊԱՐՏԻԶԵԱՆԻ պատասխանը Ս. Ջթջեանին 111

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ԵՒ

ՅՈՒՆՈՒԱՐ 18-ԻՆ, ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԷ

1947-Ի
ՀԱՅՐԵՆԻՔ ՏԱՐԵԳԻՐՔ - ՏՕՆԱՑՈՅՑ-Ը

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԽՄԲ. Ս. ՎՐԱՑԵԱՆԻ

ԱՒԵԼԻ ՔԱՆ 250 ԷՋ, ՃՈԽ ԵՒ ԱՅԼԱԶԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

Ընտիր թուղթ, մաքուր տպագրութիւն եւ բազմաթիւ պատկերներ, հիներէն եւ նորերէն: ՎԵՑ ՆԿԱՐՆԵՐ Հ. Ե. Դ. Ողիմպիական խաղերէն:

ԳԻՆ ԹՂԹԱԿԱԶՄ $1.50 **ԼԱԹԱԿԱԶՄ $2.00**

ՄԻԱՅՆ ԿԱՆԽԻԿ ԱՊՍՊՐԱՆՔՆԵՐԸ ՆԿԱՏԻ ՊԻՏԻ ԱՌՆՈՒԻՆ

Աճապարեցէք ղրկել ձեր յանձնարարութիւնները

ԼՈՅՍ ՏԵՍՆԵԼԷՆ ՅԵՏՈՅ ԳԻՆԸ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱՅ

1947-ի Հայրենիք ՕՐԱՑՈՅՑ

ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԿԱՐՈՎ

Սպառելու մօտ է, անպայման ապահովել օրինակ մը

ԳԻՆ 50 ՍԷՆԹ

Դիմել՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
212 STUART ST., BOSTON 16, MASS.